

Տ. ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՌԻԿԵԱՆ

ԻԹ ԱՄԻՍ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՅՐԵՐՈՒՄ (Յուշեր)

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ - 2018

Որ եւ այժմ ելեր ի յայցելութիւն փոքու հօրիդ քո Ազգիս Հայոց՝ եւ ի ցուցումն յաւրկականի սիրոյդ եւ մեծի ողորմութեանդ հաստատեցեր ի Հայաստան աշխարհի զՀանրապետութիւն Հայոց:

(Հանրապետական մաղթանք)

ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8(092)
Ս-21
հշ
Գր-ա
5939

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՌԻԿԵԱՆ

ՈՒԹ ԱՄԻՍ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՅՐԵՐՈՒՄ
(Յուշեր)

Հրատարակութեան պատրաստեց՝
Էդգար Յովհաննիսեանը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
2018

ՀՏԴ 93/94:82-94
ԳՄԴ 63.3
Ս 212

Տպագրում է երաշխաւորութեամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

Տպագրում է մեկնաւորութեամբ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՍԱՌԻԿԵԱՆ ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ

Ս - 212 Ութ ամիս մեծ պատերազմի արեւմտեան ռազմավայրերում (Յուշեր)/ Յակոբ քահանայ Սառիկեան; Հրատ. պատրաստեց՝ Էդգար Յովհաննիսեանը.- Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2018.- 152 + 3 ներդիր էջ:

Յակոբ քահանայ Սառիկեանի յուշերը վերաբերում են առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1914-1915 թթ., շուրջ ութ ամիս հեղինակի կողմից Հարաւ-արեւմտեան եւ Հիւսիս-արեւմտեան ռազմաճակատներում որպէս զինուորական քահանայ անցկացրած շրջանին: Հեղինակը օրագրութեան ձեւով ներկայացնում է իր տեսածը, անդրադառնում իրեն հանդիպած յայտնի անձանց, հայ զինուորականներին, բժիշկներին, ներկայացնում ռազմաճակատում տիրող իրավիճակը, պատերազմի թողած ահասարսուռ հետեւանքները:

Հաշուի առնելով, որ բաւականին քիչ են համաշխարհային առաջին պատերազմի՝ արեւմտեան ռազմաճակատում հայերի ունեցած մասնակցութեանը վերաբերող նիւթերը, սոյն աշխատութիւնը կարող է կարեւոր սկզբնաղբիւր ծառայել առաջին աշխարհամարտի, յիշեալ հարցերով հետաքրքրուող մասնագէտների, պատմաբանների, քաղաքագէտների եւ ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 93/94:82-94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-59-195-7

© Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2018

Յակոբ քինյ Սառիկեան

ՆՈՒԻՐՎՈՒՄ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՌՉԱԿՄԱՆ
100-ԱՄԵԱԿԻՆ
1918-2018

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՌԻԿԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ՖԻԴԱՅԻ, ԴԻՒԱՆԱԳԷՏ, ՄՏԱՒՈՐԱԿԱՆ
(ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ ԵՒ ՅՈՒՇԵՐԸ)

Մարդիկ իրենց յուշերն ու մտքերը իրենց անցած կեանքի վերաբերեալ սկսել են գրի առնել դեռեւս հարիւրամեակներ առաջ: Աստիճանաբար յուշագրութիւնը դարձել է գեղարուեստավաւերագրական գրականութեան ժանր՝ իր կարեւոր տեղը հաստատելով այդ բնագաւառում: Յուշագրութիւնների, այսպէս ասած, «ոսկէ դարը» համարւում է Վերածննդի դարաշրջանը: Հայ իրականութեան մէջ եւս քիչ չեն գործիչներն ու մտաւորականները, որոնք գրառել են անցած կեանքի, կարեւոր իրադարձութիւնների վերաբերեալ իրենց յուշերը: Յուշագրութեան շատ տեսակներ ունեն աղբիւրագիտական նշանակութիւն: Պատմաբանները դրանք օգտագործել են այլեւայլ իրադարձութիւնների լուսաբանման, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչների կեանքն ու գործունէութիւնը ներկայացնելու, առանձին դրուագների շուրջ ճշգրտումներ, լրացումներ կատարելու նպատակով: Յուշագրութիւններն ունեն մի առանձնայատկութիւն. դրանք յաճախ աչքի են ընկնում իրենց կողմնակալութեամբ: Յուշագրութեան հեղինակների աշխարհընկալումներով, առանձին անհատների նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքով պայմանաւորուած՝ յուշերում ներկայացուած առանձին դէպքերի եւ անձանց նկատմամբ հնարաւոր են կողմնակալ մօտեցումներ: Սակայն, նման աշխատանքների նկատմամբ քննական մօտեցման պայմաններում յուշագրութիւնները կարող են պատմութեան համար անփոխարինելի սկզբնաղբիւր լինել:

* * *

Յակոբ քահանայ Սառիկեանը կեանքի ընթացքում գրի է առել իր յուշերը՝ դէպքերը ներկայացնելով իր ժամանակի հասարակական-քաղաքական իրադարձութիւնների հէնքին: Դրանք նա ամփոփել է տարբեր տարիներին գրուած չորս յուշագրութիւններում, որոնք աղբիւրագիտական կարեւոր նշանակութիւն ունեն հայոց

պատմութեան ԺԹ. հարիւրամեակի վերջի եւ Ի. դարի առաջին երկու տասնամեակների պատմութեան լուսաբանման համար: Յակոբ քահանայ Սառիկեանի հեղինակած յուշագրութիւնները ներկայումս պահպանւում են Հայաստանի ազգային արխիւում[1] եւ Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում:

Վերը նշուած յուշագրութիւններից երկուսը, որոնք պահպանւում են Հայաստանի ազգային արխիւում, մէկ ընդհանուր «Յիշողութիւններ. 1878-1924» վերնագրով եւ համապատասխան նախաբանով ու ծանօթագրութիւններով հրատարակուել են 2015 թուականին[2]: Սառիկեանն այն գրի է առել 1934 թուականին, Երեւանում: Հարկ է նշել, որ այս հրատարակման մեջ ներառուած՝ Հայաստանի ազգային արխիւում պահուող Սառիկեանի յաջորդ յուշագրութիւնը[3] վերաբերում է 1912 թուականի դաշնակցութեան դատավարութեանը, որին Սառիկեանը մասնակցել է որպէս մեղադրեալ:

Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի Յակոբ Սառիկեանի ֆօնդում, բացի վերջինիս հեղինակած չափածոյ եւ արձակ գեղարուեստական բնոյթի ստեղծագործութիւններից, պահւում է նաեւ երկու յուշագրութիւն[4]: Դրանցից առաջինը վերնագրուած է «Իմ յիշատակարանը»: Այն 155 մեծադիր թերթերի վրայ գրուած ձեռագիր մի աշխատութիւն է, որը հեղինակը շարադրել է 1922 թուականին՝ սկսելով մանկութեան տարիներից եւ այնուհետեւ օրագրութեան ձեւով շարունակելով մինչեւ 1940 թուականը: Այս անձնական յիշատակարանը Սառիկեանի վկայութեամբ յետագայում հիմք է հանդիսացել նաեւ վերջինիս կողմից գրի առնուած՝ վերը յիշատակուած Յիշողութիւնների շարադրման համար: «Իմ յիշատակարանը» անգնահատելի աղբիւր է ոչ միայն հեղինակի՝ մինչ այժմ յանիրաւի մոռացութեան մատնուած կեանքն ու գործունէութիւնը ուսումնասիրելու, այլ ընդհանրապէս ժամանակաշրջանը հետազօտելու համար:

Յակոբ քահանայ Սառիկեանի յաջորդ յիշատակարանը կամ աւելի ճիշտ՝ օրագրութիւնը, որը ներկայացւում է ընթերցողին, վերաբերում է առաջին աշխարհամարտի տարիներին, երբ պատերազմի ընթացքում ութ ամիս որպէս հոգեւորական սպասաւորել է Հարաւ-արեւմտեան եւ Հիւսիս-արեւմտեան ռազմաճակատներում: Սառիկեանն իր կեանքի այս ժամանակահատուածի իրադարձութիւններն ամփոփել է «Ութ ամիս Մեծ պատերազմի արեւմտեան ռազմավայրերում» վերնագիրը կրող յիշատակարանում: Այս օրագիրը, բաղկացած 84 ձեռագիր թերթերից, գտնւում է Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում[1]:

1915 թուականի սկզբներին ռուսական բանակի գլխաւոր հրամանատարութիւնը կազմում է «Հրահանգներ զինուորական քահանաների համար»[2] ուղեցոյցը, որով պէտք է առաջնորդուէին գործող բանակում ծառայող հոգեւորականները: Ըստ այդ «Հրահանգների» հոգեւորականներից պահանջւում էր ունենալ մատեան, որտեղ պէտք է ցուցակագրուէին գնդի զինուորները, ինչպէս եւ նրանց վերաբերեալ այլ տեղեկութիւններ: Յակոբ քահանայ Սառիկեանն այս մատեանից բացի ունեցել է նաեւ նոթատետր, ուր ամփոփել է իր տպաւորութիւնները եւ այն ամէնը, ինչին ականատես է եղել: Սա ուշագրաւ սկզբնաղբիւր է ոչ միայն հայ զինուորական քահանայութեան պատմութեան առանձին հարցեր լուսաբանելու, այլեւ առաջին աշխարհամարտի արեւմտեան ռազմաճակատում հայերի մասնակցութեան հարցի ուսումնասիրման համար, որի մասին անդրադարձները հայ պատմագրութեան մէջ աւելի քիչ են եղել, քան ասենք կովկասեան ռազմաճակատում հայերի մասնակցութեանը: Նշենք, որ տետրակում բաւական հետաքրքիր տեղեկութիւններ կան ոչ միայն հայազգի զինուորների եւ սպաների, այլեւ ռազմաճակատում գտնուող հայազգի ռազմական բժիշկների վերաբերեալ: Հեղինակն օր առ օր նկարագրում է իր տեսածը, հանդիպումները հայ զինուորների, սպաների, ինչպէս նաեւ ռուսական բանակի հրամանատարական կազմի ներկայացուցիչների հետ, արտայայտում իր կարծիքը նրանց մասին: Սառիկեանը չափազանց հետաքրքիր տեղեկութիւններ է յայտնում նաեւ բանակում տիրող բարոյահոգեբանական վիճակի, գերմանական եւ աւստրիական զօրքերի ու գերիների վերաբերեալ, ինչպէս նաեւ ռուսական կայսրութեան լեհ եւ հրէայ բնակչութեան՝ պատերազմի եւ ռուսական իշխանութիւնների նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Օրագրութեան հրա-

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գգ. 10, 11, 12:
[2] Մանրամասն տես Յակոբ Սառիկեան, Յիշողութիւններ. 1878-1924, Երեւան, 2015, հրատ. պատրաստեցին պ.գ.դ. Ա.Վիրաբեանը եւ պ.գ.թ. Է. Յովհաննիսեանը:
[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 10:
[4] Անդ, համար 3 ա, բ, գ եւ համար 4:

[1] Անդ, համար 3 ա, բ, գ:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 513, թ. 18, նաեւ ֆ. 56, ց. 16, գ. 603, թ. 42:

տարակութիւնը նպատակ ունի ոչ միայն հանրահռչակել կարեւոր եւ հետաքրքիր այդ սկզբնաղբիւրը, այլեւ հայ հասարակութեանը ներկայացնել Յակոբ քահանայ Սառիկեանի կեանքի եւ գործունէութեան առանձին մանրամասներ՝ մի հոգեւորական գործչի, որն իր ազգանուէր պայքարում հաւասարապէս օգտագործեց թէ՛ սուրը, թէ՛ խաչը, թէ՛ գրիչն ու միտքը, չյապաղելով անհրաժեշտութեան դէպքում մէկը փոխարինել միւսով:

Յուշագրութիւնը հրատարակւում է ծանօթագրութիւններով եւ նախաբանով: Շարադրանքում կատարուել են չնչին շտկումներ: Աշխատութեան ձեռագիր օրինակում առկայ են որոշ ռուսերէն հատուածներ[1], սակայն մեքենագիր տարբերակում[2] հեղինակն դրանք թարգմանել է հայերէն, որ եւ կիրառել ենք հրատարակութեան մէջ:

Անհրաժեշտ ենք համարում նաեւ նշել, որ Յակոբ քահանայ Սառիկեանը թղթակցել է ժամանակի մամուլին՝ «Հորիզոն», «Դրօշակ», «Արեւ», «Մշակ», «Արծագանք», «Խորհրդային Հայաստան», անգամ մանկական թերթերին, արտայայտել է իր տեսակէտները հասարակական հնչեղութիւն ունեցող զանազան հարցերի վերաբերեալ: Մամուլում Սառիկեանը յաճախ հանդէս է եկել մի շարք կեղծանուններով՝ Արտաւազդ, Արզուման եւ այլն: Սրանից բացի, ինչպէս նշեցինք, Սառիկեանն իր ուժերը փորձել է նաեւ գրականութեան ոլորտում, հանդէս եկել արձակ եւ չափածոյ ստեղծագործութիւններով: Սակայն, ինչպէս յայտնի գրականագէտ Էդ. Ջրբաշեանն է նշում. «...մեր գրականութեանը Յակոբ քահանայ Սառիկեանի մատուցած ամենամեծ ծառայութիւնը պէտք է համարել նրա թարգմանութիւնները»[3]: Սառիկեանը թարգմանել է երկու տասնեակից աւելի գրական եւ գիտամանկավարժական բնոյթի գրքեր, որոնց մասին, ցաւօք սրտի, քչերն են տեղեակ: Նշենք, որ Յակոբ քահանայ Սառիկեանը եղել է Էդ. Ջրբաշեանի հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչը դպրոցում, եւ յետագայում երախտապարտ աշակերտը արտայայտուելով իր ուսուցչի մասին, գրել է.

[1] Անդ, համար 3ա, թ. 73, 80 շրջերես եւ այլն:

[2] Յ. Սառիկեանն անձամբ մեքենագրել է այս օրագրութեան երկու տարբերակ, որոնք եւս պահպանւում են ԳԱԹ-ում, տես ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆոնդ, համար 3բ եւ 3գ:

[3] Ջրբաշեան Էդ., Փաստերի հետքերով. մի արժանաւոր, բայց մոռացուած անուն, Երեւան, 2001, էջ 291: Այս յօդուած-ակնարկում Էդ. Ջրբաշեանը ներկայացնում է նաեւ Յակոբ Սառիկեանի թարգմանութիւնների մատենագիտական ցանկը, շուրջ քսան անուն, տես էջ 291-292:

«Նրա դասերը ոչ միայն մեզ օգնեցին աւելի լաւ հասկանալու մայրենի լեզուի եւ գրականութեան հմայքը, այլեւ բարոյականութեան դաստիարակութեան իսկական դպրոց եղան մեզ համար»[1]: Յետագայում Սառիկեանի երախտապարտ աշակերտը՝ Էդ. Ջրբաշեանը, առաջիններից մէկն էր, որ փորձեց մոռացումից փրկել իր սիրելի ուսուցչին՝ գրելով ակնարկ-հետազօտութիւն վերջինիս մասին, որտեղ գրականագէտը պատմում է իր յուշերը Սառիկեանի մասին, ներկայացնում է վերջինիս կենսագրութեան որոշ դրուագներ եւ հիմնականում անդրադառնում է Յակոբ քահանայ Սառիկեան - Յովհաննէս Թումանեան յարաբերութիւններին: Իր այս յօդուած-ակնարկը, յարգարժան գրականագէտը եզրափակում է հետեւեալ տողերով. «Առանց չափազանցնելու պէտք է ասեմ, որ ծաւալով ոչ այնքան մեծ այս յօդուած-դիմանկարը ինձնից մի ամբողջ մենագրութեան ջանք ու ժամանակ պահանջեց: Բայց ես բաւականութեան խորին զգացումով եմ փակում այս գործի վերջին էջը, քանի որ սրանով ես մարում եմ մի հոգեկան մեծ պարտք՝ տասնամեակների մոռացութիւնից հանելով անուն, որն ըստ ամենայնի արժանի է սերունդների երախտագիտութեանը եւ յարգանքին»[2]: Յիրաւի, ծանօթանալով Յակոբ քահանայ Սառիկեանի կեանքի ուղուն եւ բուռն հայրենանուէր գործունէութեանը, պարզ է դառնում, որ այս գործիչը յանիրաւի մոռացութեան է մատնուել ժամանակի եւ մարդկանց կողմից:

* * *

Յակոբ Սառիկեանը ծնուել է 1872 թուականի դեկտեմբերի 20-ին՝ նոր տոմարով 1873 թուականի յունուարի 1-ին, Վերին-Աղտան գիւղում՝ ներկայիս Իջեւանի տարածաշրջանի Գանձաքար գիւղում[3], գիւղացի Արզումանի ընտանիքում: Յակոբը 7-8 տարեկան է լինում, երբ մօրեղբայրը՝ Սարգիս Բէգնազարեանը, որը Երեւանի թեմա-

[1] Ջրբաշեան Էդ., նշ. աշխ., էջ 272:

[2] Ջրբաշեան Էդ., նշ. աշխ., էջ 302:

[3] ՀԱԱ, ֆ. 59, ց. 2, գ. 2058, թ. 156 շրջերես-157: Գիւղի եկեղեցու չափաբերական մատեանի համաձայն Յակոբ Սառիկեանի անունը եղել է Կիրակոս: Իսկ Ներսիսեան դպրոցի փաստաթղթերում, ուր ուսանել է նա, հանդիպում ենք արդէն ե՛ւ Յակոբ Սառիկեան, ե՛ւ Կիրակոս Սառիկեան անուններին: Յաճախ այս Կիրակոս կամ Յակոբ անուններից մէկը գրուած է փակագծերի մէջ: Տես Ֆ. 2, ց. 1, գ. 1114, թ. 182, Ֆ. 2, ց. 1, գ. 1121, թ. 47: Յետագայում Սառիկեանը հանդէս է գալիս միայն Յակոբ անունով:

կան դպրոցի տեսուչն էր, որոշում է քրոջ որդուն իր հետ տանել քաղաք: Այսպէս պատանի Յակոբը յայտնւում է Երեւանում եւ սկսում է սովորել Երեւանի թեմական դպրոցում: Երեւանում Յակոբն ապրում է մօրեղբօր՝ Սարգիս Բէգնազարեանի (1849 Այգեհովիտ-1903 Թիֆլիս) տանը, որը ժամանակի առաջադէմ մտաւորականներից էր, սովորել էր Ներսիսեան դպրոցում, այնուհետեւ աւարտել Ցիւրիխի համալսարանը, հիմնել Ալեքսանդրապոլի եւ Երեւանի Սահականոյշեան օրիորդաց դպրոցները: Յակոբը Երեւանում ուսանում է չորս տարի: Շուտով Սարգիս Բէգնազարեանն առաջարկ է ստանում աշխատելու Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում: Թիֆլիս է տեղափոխւում նաեւ Յակոբը, որը հնարաւորութիւն է ստանում ուսումը շարունակելու Ներսիսեան դպրոցի երրորդ դասարանում: Սակայն, մի օր Յակոբը որոշում է ինքնուրոյն հարթել իր ուղին, սեփական ուժերով վաստակել իր ապրուստը: Աշխատանքի է անցնում կօշկավաճառի մօտ, սկսում է նաեւ մասնաւոր դասեր տալ թիֆլիսահայ ընտանիքների պատանիներին: Ի թիւս այլոց՝ մասնաւոր դասեր է տալիս նաեւ արդէն հանգուցեալ Ռաֆֆու երկու տղաներին: Սառիկեանը յետագայում յիշում է, որ գրողի մահից յետոյ վերջինիս ընտանիքը լաւ չէր ապրում եւ գոյատեւում էր նրա գրադարանը մասմաս վաճառելով: Իր յիշատակարանում, մտաբերելով այս ամէնը, Սառիկեանն անդրադառնում է Ռաֆֆու շքեղ, կազմակերպուած թաղմանը, դրոշմում հայ հարուստների հնչեցրած խոստումները, թէ կհոգան նրա ընտանիքի կարիքները, եւ դրանից յետոյ յուզմունքով բացականչում. «Ա՜խ, հայ հասարակութիւն, որ միայն թաղել գիտես»[1]:

Ներսիսեան դպրոցը Յակոբ Սառիկեանն աւարտում է 1890-ին՝ գերազանց առաջադիմութեամբ[2]: Նշենք նաեւ, որ դեռեւս ուսման տարիներին Սառիկեանը դրսեւորել է որոշակի հասարակական աշխուժութիւն: «Զուտ դպրոցական կեանքն ինձ չէր բաւարարում»[3],- այսպէս է Սառիկեանը բնութագրում Ներսիսեան դպրոցի ուսումնառութեան տարիները: Նա մի խումբ ընկերների հետ գաղտնի սկսում է հրատարակել ձեռագիր «Յոյս» շաբաթաթերթը, որտեղ արտացոլւում են Ներսիսեան դպրոցի աշակերտների այդ ժամանակներում խիստ տարածում ստացած յեղափոխական եւ նարոդ-

[1] Ե. Չարենցի անուան ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆօնդ, համար 4, թ. 9:
[2] ՀԱԱ, Ֆ.2, ց. 1, գ. 1121, թ. 47:
[3] Ե. Չարենցի անուան ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆօնդ, համար 4, թ. 8:

նիկական գաղափարները: 1890 թուականի գարնանը Ներսիսեան դպրոցի մանկավարժական ժողովի նիստերից մէկի ժամանակ, երբ քննարկուել է աշակերտների վարքը, Զ. դասարանի բոլոր 20 աշակերտներն ստանում են հինգ, միայն Յ. Սառիկեանի վերաբերեալ ժողովը որոշում է, որ. «դաստիարակ Յ. Յարութիւնեանը առանձին յանդիմանէ նրան, իբր անկարգապահ աշակերտի»[1]: Խուսափելու համար յետագայ խնդիրներից Սառիկեանը եւ իր ընկերները դադարեցնում են թերթի հրատարակումը: Ներսիսեան դպրոցի փաստաթղթերից պարզ է դառնում, որ Յակոբ Սառիկեանն ուսման վերջին տարիներին եղել է Կովկասեան հայոց բարեգործական ընկերութեան թոշակառու եւ ստացել է 5 ռուբլի թոշակ[2]:

1890 թուականին սկզբնաւորուեց «հայ յեղափոխութիւն» որակուած ազգային-քաղաքական շարժումը»[3], որի արդիւնքում էլ ստեղծուեց Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, որը համախմբեց իրարից անկախ գործող յեղափոխական ազգային զանազան կոմիտէները՝ որակական նոր փուլի բերելով ազգային ազատագրական պայքարը: Դա այն շրջանն էր, երբ Յակոբ Սառիկեանի դիպուկ բնորոշմամբ. «Սէր, ընտանեկան ողբերգութիւն, ալան-թալան արտայայտող երգերին եւ լելէներին փոխանակեցին՝

«Կռացիր, Մասիս, կռացիր,
Վերովդ անց կենամ,
Այնալու հրացանս ձեռքումս ունենամ,
Հայրենիքս ազատեմ, ապա տուն դառնամ»,-պարզամիտ, ռոմանտիկ, բայց ըմբոստ, ռազմատենչ պոռթկումները»[4]:

Ներսիսեան դպրոցն աւարտելուց յետոյ Սառիկեանը 1891 թուականի յունուարից անցնում է ուսուցչական աշխատանքի Սարդարապատի Մրգաշատ գիւղում: Սառիկեանը մանկավարժական գործունէութեանը զուգահեռ ղեկավարում էր դաշնակցութեան այդ շրջանի ենթակոմիտէն: Յակոբ Սառիկեանն այնուհետեւ ուսուցչական գործունէութիւնը շարունակում է Սուրմալու գաւառի Կողբ գիւղում: Ուսուցչութեան այս շրջանը կարեւոր փուլ էր Սառիկեանի կեանքում: Այդ տարիներին էր, որ նա առաջին առընչութիւններն

[1] ՀԱԱ, Ֆ. 2, ց. 1, գ. 1115, թ. 31:
[2] Անդ, Ֆ.2, ց. 1, գ. 1114, թ. 182:
[3] Խուդինեան Գ., ՀՅ Դաշնակցութեան քննական պատմութիւն, Երեւան, 2006, էջ 154:
[4] ՀԱԱ, Ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 49:

ունեցաւ ազգային-ազատագրական գործիչների, Էրգիր անցնող ֆիդայիների հետ, մասնակցութիւն ունենալով զանազան գաղտնի միջոցառումների: Այդ ամէնը գաղափարապէս թրծեցին Սառիկեանին եւ հնարաւորութիւն տուեցին կուտակել անհրաժեշտ փորձ յետագայ գործունէութեան համար: Շուտով ազգային-ազատագրական գաղափարներով տոգորուած մտաւորականը դարձաւ ազատագրական պայքարի գործունեայ եւ անմիջական մասնակիցը:

1890-ական թուականների սկզբներին Ատրպատականը դառնում է դաշնակցութեան գործունէութեան կարեւոր կենտրոններից մէկը: Ատրպատականը կարեւոր էր նախ իր Էրգիր անցնելու համար նպաստաւոր դիրքի պատճառով: Յետոյ դաշնակցական, ինչպէս նաեւ հնչակեան եւ արմէնական, ուժերի Ատրպատականում կենտրոնացնելը պայմանաւորուած էր պարսկական իշխանութիւնների համեմատաբար բարեացակամ վերաբերմունքով դէպի հայերը: Սկիզբ է առնում կուսակցական, մարտական գործիչների, ինչպէս նաեւ մտաւորականների, ուսուցիչների հոսք դէպի Ատրպատական: Շուտով Թաւրիզը դառնում է Թիֆլիսից յետոյ երկրորդ խոշոր կենտրոնը դաշնակցութեան համար: Դրանով պայմանաւորուած 1892 թուականին կայացած ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը Թաւրիզի կուսակցական մարմնին շնորհում է բիւրոյի կարգավիճակ: Այդ թուականներին սկսում է գործել նաեւ Ատրպատականի՝ անմիջապէս թուրք-պարսկական սահմանին գործող Դերիկի վանք-ամրոցը[1]: Թաւրիզում իր գործունէութիւնն է մեկնարկում նաեւ «Խարիսխ» զինագործարանը, որը պէտք է զէնքով ապահովեր հայկական խմբերին:

1895-ի սեպտեմբերին Յակոբ Սառիկեանը եւս իբրեւ ուսուցիչ անցնում է Թաւրիզ՝ ստանձնելով տեղի Թամարեան դպրոցի հայոց լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցչի պաշտօնը: Այստեղ Սառիկեանը, ուսուցչութիւնից բացի, լծւում է յեղափոխականի գաղտնի եւ վտանգներով լի աշխատանքին՝ կազմակերպելով զէնքի գաղտնի տեղափոխութիւններ, նորեկ կամաւորների համար զինավարժութիւններ եւ այլն: Սառիկեանն այս աշխատանքները հիմնականում կատարում է իր ընկերոջ՝ Մկրտիչ Ջալալաբեկեանի (Ջալալի) հետ: Յետագայում 1895-1896 թթ. այս իրադարձութիւնները Յակոբ Սառիկեանը նկարագրում է իր ընկերոջը ձօնուած «Ջալալ» պատմուածքում[1]: Ատրպատականում Սառիկեանին էր վստահուած նաեւ հայկական երկրորդ քաղաքական ուժի՝ հնչակեանների հետ բանակցելու եւ յարաբերութիւններ պահպանելու գործը: Յետագայում՝ Խանասորի արշաւանքից առաջ, Յակոբ Սառիկեանն է, որ Ատրպատականի դաշնակցական «Վրէժ» կոմիտէի կողմից ուղարկւում է բանակցելու Սալմաստ ժամանած Վանի անգլիական հիւպատոսի հետ, որը եկել էր հայերին համոզելու հրաժարուել մարտական գործողութիւններից: Նման բանակցութիւնների մասնակցութիւնն էր, որ Յակոբ Սառիկեանին տուեց որոշակի փորձառութիւն այս ասպարէզում, ինչը յետագայում պէտք եկաւ նրան Հիւսիսային Կովկասում հիւպատոսական գործունէութեան տարիներին:

Ատրպատականում արդէն կենտրոնացել էին մի քանի հարիւր կամաւորներ: Արդէն ժամանակն էր վճռական գործողութիւնների դիմելու: Յատկապէս, երբ տագնապալի լուրեր էին ստացւում Արեւմտեան Հայաստանից, սուլթան Աբդուլ Համիդն էլ ձեռնամուխ էր եղել իր հայաջինջ «խրախճանքին»: Ինչպէս Սառիկեանն է գրում՝ Մեծ քաղաքը, այսինքն՝ Թիֆլիսը հեռագրում է Սալմաստ. «Հարսանիքն սկսուեց, հիւանդից արիւն առէք»[2]: Դաշնակցութեան ղեկավարութիւնը Ատրպատականի «Վրէժ» կոմիտէից այլեւս պահանջում էր վճռական գործողութիւններ: Ատրպատականում գտնուող դաշնակցական ընկերները տարակարծութիւն ունէին ձեռնարկուելիք ռազմական գործողութեան հարցում: Սառիկեանի վկայութեամբ նրանց մի մասը, ի թիւս այլոց եւ Սառիկեանն ինքը, կողմնակից էին, որ հայկական խմբերը անցնեն Շատախի լեռները, գրաւեն հայաբնակ բնակավայրը եւ այնտեղ կենտրոնացնելով ուժերը՝ ապստամբութեան դրօշ պարզեն: Իսկ միւս խումբը՝ Նիկոլ Դումանի գլխաւորութեամբ, հակուած էր պատժիչ գործողութեան իրականացմանը մազրիկ ցեղի դէմ, որի ներկայացուցիչներն իրենց ցեղապետ Շարաֆ բեկի գլխաւորութեամբ, 1896 թուականին յարձակուել եւ կոտորել էին Աւետիսեանի՝ Վանից վերադարձող հայ կամաւորների եւ գաղթականների խմբին: Հետաքրքիր է, որ, ինչպէս Սառիկեանն է վկայում, Կովկասից ժամանած կամաւորները կողմ էին պատժիչ արշաւանքին, իսկ այն կամաւորները, որոնք ժամանել էին Էրգրից, կողմ էին Վասպուրական կամ Շատախ անցնելու ծրագրին: Դաշ-

[1] Մանրամասն տես Վարանդեան Մ., ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 107-117:

[1] Բաղալեան Ա., Յակոբ Սառիկեան (1872-1945), Լրաբեր հասարակական գիտութիւնների, Երեւան, 1993, համար 3, էջ 32:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 72:

նակցութեան՝ Թիֆլիսի բիւրոյի պնդմամբ որոշուեց կազմակերպել մազրիկների դէմ ուղղուած պատժիչ գործողութիւնը: 1897 թուականի յուլիսի 25-ին իրականացուեց յայտնի Խանասորի արշաւանքը: Մինչ այդ տեղի էին ունեցել հրամանատարական կազմի ընտրութիւններ: Հրամանատար էր ընտրուել Յովսէփ Արղութեանը, իսկ վերջինիս օգնական՝ Վարդան Մեհրաբեանը: Սակայն, դաշնակցութեան կենտրոնական կոմիտէի որոշմամբ Վարդանը նշանակւում է հրամանատար, իսկ Յովսէփ Արղութեանը՝ նրա տեղակալ: Յակոբ Սառիկեանն ընտրւում է որպէս յիսնապետ եւ մասնակցում Խանասորի պատժիչ արշաւանքին: Յիսնապետ Սառիկին է վստահւում Արցախի հայուհիների կողմից կարուած արշաւանքի մայր դրօշը, որի վրայ ասեղնագործուած էր «Վրէժ-վրէժ» մարտակոչը: Հայ կամաւորներից զոհուեցին 19 հոգի, մազրիկ ցեղի կորուստն անհամեմատ մեծ էր՝ 1500 եւ աւելի սպանուած, չնայած ցեղապետ Շարաֆ բեկին յաջողուել էր խոյս տալ եւ փրկուել: Սառիկեանը յիշում է, որ Խանասորի արշաւանքից 5-6 օր անց Ղոթուրի քրդերը հայերից վրէժ են լուծում մազրիկ ցեղին պատժելու համար եւ յարձակուելով Խոյի մօտ գտնուող հայկական Վառ գիւղի վրայ՝ սրի են քաշում մօտ 60 հոգու: Նկարագրելով Խանասորի արշաւանքը՝ Սառիկեանն իր յուշերում մէջ է բերում Խանասորին նուիրուած մի երգ, որի հեղինակը Խանասորի արշաւանքի մասնակից Գալուստ Ալոյեանն է.

«Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը
Դաշնակցական ֆիդայինները վրէժ առան հովտումը...
-Ամա՛ն Աստուած, ֆիդային եկաւ, ուր փախչիմ.
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին:
-Մի վախենար, հանգիստ կացիր, բաջի ջան.
Կանանց երբէք ձեռ տալու չէ վրէժխնդիր քաջ ֆիդան:
Չանցաւ մի ժամ, մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր արեամբ ներկուեցաւ:
Հայե՛ր, յիշէ՛ք նուիրական այն օրը
Յուլիս ամսի 25-ին կատարեցէք մեր տօնը...»:

Յետագայում այս երգը մեծ ցնծութեամբ երգւում էր ժողովրդի կողմից, որը լաւագոյնս արտայայտում է այն բարոյահոգեբանական մեծ նշանակութիւնը, որն ունեցաւ Խանասորի արշաւանքը ժողովրդի համար: Այս արշաւանքը շատերի մօտ պարտուողական տրամադրութիւնների փոխարէն հաւատ ներշնչեց յաղթանակի եւ սեփական ուժերի նկատմամբ:

Խանասորի արշաւանքից յետոյ պարսկական իշխանութիւնները՝ թուրքական եւ ռուսական կողմերի դրդմամբ, հալածանքներ են սկսում Ատրպատականում կենտրոնացած հայկական ուժերի նկատմամբ: Հայ կամաւորներն ստիպուած էին հեռանալ Պարսկաստանից: Յակոբ Սառիկեանը եւս 1897 թուականի օգոստոսի վերջին, կազմակերպելով կամաւորների անվտանգ անցումը Ռուսահայաստան, ինքն էլ ամենավերջում՝ «Վարդանի, Սաքոյի եւ Բեկի» հետ միասին հեռանում է Պարսկաստանից[1]: Խանասորի արշաւանքը Սառիկեանը նկարագրում է իր յուշերում, ինչպէս նաեւ Խանասորին նուիրուած յօդուածաշարով է հանդէս գալիս Բաքւում լոյս տեսնող «Արեւ» թերթում[2]:

Պարսկաստանից վերադառնալուց յետոյ Սառիկեանն, «ընտանեկան պայմաններից» ելնելով, աշխատանքի է անցնում Էջմիածնի Սինոդում, սկզբում՝ որպէս գրագիր, ապա՝ տնտեսական բաժնի կառավարչի քարտուղար: Եկել էր զէնքը գրիչով փոխարինելու ժամանակը: Իսկ 1898 թուականին, ինչպէս ինքն է նշում, քանի որ «..հայոց դպրոցները փակ էին, եւ հայ ուսուցիչը աշխատելու ասպարէզ չունէր»[3], որոշում ձեռնադրուել է քահանայ[4]: Յակոբ Սառիկեանը ձեռնադրւում է 1898 թուականի սեպտեմբերի 23-ին՝ Թիֆլիսում, Վիրահայոց թեմի այդ ժամանակուայ առաջնորդ, ապագայ Կաթողիկոս Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցի ձեռամբ[5]: Քահանայ ձեռնադրուելուց յետոյ, Սառիկեանը մեկնում է իր հայրենի գիւղ եւ որոշ ժամանակ փորձում իր նպաստը բերել գիւղում կրթական գործի կազմակերպմանը:

Հայրենի գիւղում նորընծայ քահանան երկար չի մնում: 1899 թուականի վերջին Յակոբ Սառիկեանը «մոզդոկցիների ընտրութեամբ» հոգեւոր ծառայութեան է անցնում Մոզդոկում, ապա կարճ ժամանակ յետոյ հաստատւում է թեմական կենտրոն Աստրախանում: 1902 թուականի դեկտեմբերին Սառիկեանը հոգեւոր ծառայութեան է անցնում Թերեքեան շրջանի եւ Թերեքեան կազակութեան մայրաքաղաք Վլադիկավկասում՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում: Սկսում է Յակոբ քահանայ Սառիկեանի հոգեւոր

[1] «Արեւ», Բաքու, 1914, համար 178:
[2] «Արեւ», Բաքու, 1916., թիւ 176, 177, 178: Այս յօդուածաշարը Յակոբ Սառիկեանն ստորագրել է Արտաւազդ կեղծանունով:
[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 90:
[4] Անդ, ֆ. 56, ց. 14, գ. 227, թ. 25:
[5] Հնդ, ֆ. 56, ց. 14, գ. 227, թ. 25, շրջերես, 33:

եւ մանկավարժական գործունէութեան նոր փուլը: Այսուհետ, շուրջ երկուսուկէս տասնամեակ, մինչ Սառիկեանի արդէն Խորհրդային Հայաստան վերադառնալը, վերջինիս գործունէութեան ասպարէզը դառնում է Հիւսիսային Կովկասը: Վլադիկավկասում Սառիկեանն աշխույժ գործունէութիւն է իրականացնում քաղաքի հայկական համայնքը կազմակերպելու ուղղութեամբ: Այդ ամէնը վերջինս մանրամասն նկարագրում է իր յուշերում[1]: Շուտով իր հոգեւոր գործունէութեան համար Յակոբ քահանայ Սառիկեանը պարգեւատրւում է ծաղկեայ փիլոնով եւ լանջախաչով, իսկ 1906 թուականին Աստրախանի Հայոց թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսի միջնորդութեամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմեանը Յակոբ քահանայ Սառիկեանին կամելավկայ՝ թաւշեայ գլխարկ կրելու արտօնութիւն է շնորհում[2]: Վլադիկավկասում Տէր Յակոբն սկսում է աշխուժօրէն զբաղուել նաեւ մանկավարժական գործունէութեամբ՝ փորձելով իր նպաստը բերել նոր սերնդի հայեցի դաստիարակմանը եւ հնարաւորինս կանխել օտար հողում ապրող հայերի ուծացումը: Յակոբ Սառիկեանը ուսուցչութիւն էր անում ոչ միայն հայկական եկեղեցական-ծխական դպրոցում, այլեւ տեղի արքունական միջնակարգ դպրոցում[3], կադետական դպրոցում, օրիորդաց վարժարանում եւ ռէալական դպրոցում: Սառիկեանին յաջողւում է կանոնակարգել հայոց լեզուի դասաւանդումը եւ այն պարտադիր դարձնել ոչ միայն Վլադիկավկասում գործող երեք գիմնազիաներում, այլեւ «կադետների կորպուսում»[4]: Նա ստանձնում է նաեւ տեղի աղքատախնամ ընկերութեան ղեկավարութիւնը[5]: Շուտով քաղաքում ստեղծում է թատերական խմբակ, բացում է Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան մասնաճիւղ: Մի խօսքով, կարգաւորում է Վլադիկավկաս քաղաքի հայկական համայնքի հասարակական-մշակութային կեանքը: Իսկ քիչ անց գաղտնի գործող թուով ութ «հայկական դպրոցների», այսինքն՝ խմբակների, հիման վրայ ստեղծում է դաշնակցութեան կոմիտէն, որը որոշ ժամանակ անց դառնում է Հիւսիսային Կովկասի կենտրոնական կոմիտէն՝ «Ժլատ» անուանումով[6]: Այս աշխատանքների

[1] Յակոբ Սառիկեան, Յիշողութիւններ 1878-1924, Երեւան, 2015, էջ 209-276:
[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 227, թթ. 19, 29, շրջերես:
[3] Անդ, ֆ. 56, ց. 14, գ. 227, թ. 25, շրջերես, 33:
[4] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 100:
[5] Անդ, ֆ. 56, ց. 14, գ. 227, թ. 25, շրջերես, 33:
[6] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 101:

կազմակերպման առանցքային դերակատարումը Յակոբ քահանայ Սառիկեանն էր: Ծանրաբեռնուած ու լարուած աշխատանքի արդիւնքը եղաւ վերջինիս հիւանդանալը «ջղային յոգնածութեամբ»՝ հաւանաբար նեարդերի բորբոքմամբ:

1903 թուականի յուլիսի 12-ին Նիկոլայ կայսրն ընդունում է իր յայտնի հրամանը հայկական եկեղեցական գոյքը բռնագրաւելու վերաբերեալ: Այս հակահայկական հրամանը դժգոհութեան ալիք է առաջացնում ողջ հայութեան շրջանում: Հասկանալի էր, որ այդ չարաբաստիկ հրամանը ուղղուած չէր միայն Հայոց Եկեղեցու դէմ, այլեւ նպատակ ունէր խալխալելու հայութեան ազգային կազմակերպական կառոյցները եւ նպաստել հայերի արագ ձուլմանը: Ընդվզումների բացայայտ թէ գաղտնի ալիքը տարածուեց բոլոր հայկական համայնքներում եւ Արեւելեան Հայաստանում: Յակոբ քահանայ Սառիկեանի պէս հայրենասէր եւ նուիրեալ հոգեւորականը եւս չէր կարող ենթարկուել այդ հրամանին եւ շուտով իր բռնած դիրքի պատճառով Վլադիկավկասից վարչական աքսորի է ենթարկւում նախ Աստրախան, ապա՝ Պեատիգորսկ: Այստեղ Սառիկեանը գտնւում է շուրջ մէկ տարի եւ այդ ընթացքում իր խառնուածքի համաձայն, շարունակում է իր ակտիւ կազմակերպչական գործունէութիւնը, որի արդիւնքում Կիլսաւոդսկում կազմակերպւում է հայկական համայնք, որը շուտով ունենում է հայկական համայնքի առանցքն հանդիսացող սեփական եկեղեցին եւ դպրոցը:

1904 թուականին սկսուեց ռուս-ճապոնական պատերազմը, որի անյաջող ելքը Ռուսաստանի համար առիթ հանդիսացաւ երկրում առկայ սոցիալ-տնտեսական եւ քաղաքական խնդիրների հրապարակ գալուն: Այս ամէնը 1905 թուականին Ռուսաստանում յանգեցրին յեղափոխութեան բռնկմանը: Յեղափոխական իրադարձութիւնները ընդգրկեցին կայսրութեան ողջ տարածքը: Ցարական իշխանութիւնները, ելնելով ներքաղաքական լարուած իրավիճակից, կարծես թէ մոռացութեան մատնեցին ցարական յուլիսեան հակաեկեղեցական հրամանը: Սակայն, սկսուած յեղափոխութիւնը եւ երկրի ներքին խառնակ դրութիւնը անհետեւանք չանցան հայութեան համար: Զանազան հրահրումների արդիւնքում բռնկուեցին հայաթաթարական կռիւները: Քահանայ Սառիկեանն արդէն վերադարձել էր վարչական աքսորից: Անհրաժեշտ էր Հարաւային Կովկասով մէկ ծաւալուող բախումների ժամանակ օգնութիւն ցուցաբերել հայրենակիցներին եւ «ոչ միայն նամակով, այլեւ զէնքով»: Սակայն

հետաքրքիր է այն, որ ինչ տեղի ունեցաւ Հարաւային Կովկասում, դրանից զերծ մնաց Հիւսիսային Կովկասը: Այսինքն՝ հայ-թաթարական բախումները Հիւսիսային Կովկաս չթափանցեցին, եւ ինչպէս Սառիկեանն է գրում. «այս տեղերում ոչ մի հայի կամ թուրքի, ինչպէս ասում են քիթը չարնեց, ոչ էլ մի կոպեկի կորուստ եղաւ»[1]: Այս հանգամանքը Յակոբ քահանայ Սառիկեանը բացատրում է Հիւսիսային Կովկասի հայերի եւ թուրքերի խոհեմութեամբ, երբ վերջիններս չտրուեցին սադրանքներին եւ ամէն ինչ արեցին սադրանքներից խուսափելու եւ բախումների հնարաւորութիւնը կանխելու համար: Այդ նպատակով կարեւոր գործ կատարեցին հայերի եւ թուրքերի ներկայացուցիչներից ստեղծուած խառը յանձնաժողովները. «...որոնց պարտականութիւնն էր շրջել շարունակ մութ վայրերը, կոչ անել ժողովրդական զանգուածներին՝ չենթարկուել սադրանքի, իսկ որեւէ նկատուած կասկածելի դէպք բնում խեղդել»[2]:

Ազգամիջեան բախումների հրահրման փորձեր եղան նաեւ կովկասեան միւս ժողովուրդների շրջանում՝ մասնաւորապէս ինգուշների եւ օսերի: 1907 թուականին Հիւսիսային Կովկասի ինգուշների եւ օսերի միջեւ տեղի ունեցած արիւնալի միջադէպի ժամանակ էր, որ հերթական անգամ դրսեւորուեցին Յակոբ Սառիկեան դիւանագիտական եւ բանակցութիւններ վարելու ունակութիւնները, երբ վերջինս աչքի առաջ ունենալով հայ-թաթարական կռիւների դառը փորձը, «օսերի ու ինգուշների քուէով» մասնակցում է հաշտեցման գործընթացին՝ կանխելու համար երկու կովկասեան ժողովուրդների միջեւ սկսուած արիւնալի բախումների յետագայ ընթացքը:

Այսպիսով, Հիւսիսային Կովկասի հայկական շրջանակներն արեցին ամէն ինչ ոչ միայն օգնութիւն ցուցաբերելու հայրենակիցներին Հարաւային Կովկասում ընթացող արիւնալի կռիւների ժամանակ, այլեւ ջանքեր չխնայեցին բախումների հնարաւոր բռնկումը Հիւսիսային Կովկասում կանխելու համար: Այս ամէնում անփոխարինելի եւ ակտիւ դերակատարում ունեցաւ նաեւ Յակոբ քահանայ Սառիկեանը:

* * *

1907 թուականին, երբ արդէն ետեւում էր մնացել ռուսական առաջին յեղափոխութիւնն իր հետեւանքներով հանդերձ, Կովկասի

[1] Անդ. Ֆ. 1457, գ. 2, գ. 11, թ. 122:
[2] Անդ. Ֆ. 1457, գ. 2, գ. 11, թ. 123:

փոխարքայի պաշտօնում իշխան Գոլիցինին փոխարինում է, այսպէս ասած «հայասէր» Վորոնցով-Դաշկովը: Ցարիզմին անհրաժեշտ էր օգտակար հետեւութիւններ անել անցած յեղափոխական հուժկու ալիքից, յետագայում յեղափոխութիւնները կանխելու եւ ցարական ինքնակալութիւնը անսասան պահելու համար: Անհրաժեշտ էր առաջին հերթին ոչնչացնել յեղափոխական կուսակցութիւնները: Հայ յեղափոխական դաշնակցութիւնը յայտնուեց թիրախում: Վաւերագրերը վկայում են, որ դաշնակցութեան գոյութեամբ. «...խիստ մտահոգուած էր նոյն ինքն ամենազօր ռուսական Բիզմարկը-Ստոլիպինը-որ, շուրջ հինգ տարի, 1906 վերջերէն մինչեւ 1911-ի սեպտեմբերը, ռուս կայսրութեան միահեծան դիկտատորի պաշտօն ստանձնած, կախաղաններով ու գնդակահարումներով կը հալածէր յեղափոխական կուսակցութիւնները եւ կը խեղդէր ազատագրական շարժումը»[1]: Եւ ահա, Սառիկեանի բնութագրմամբ նորանշանակ «...աւելի խորամանկ, աւելի տակտով, աւելի վնասակար...» փոխարքայ Վորոնցով-Դաշկովը լծուեց այդ գործի իրականացմանը Կովկասում: Սկսուեց լայնատարած մի արշաւ հայ երիտասարդների՝ յատկապէս մտաւորականների դէմ: Տեղի ունեցան հարիւրաւոր մտաւորականների, ուսուցիչների, հասարակական գործիչների ձերբակալութիւններ: Սկիզբ առաւ դաշնակցութեան դէմ բացուած յայտնի դատական գործընթացը, որի ղեկավարումը յանձնարարուեց Նովոչերկասկի շրջանի դատական քննիչ Լժինին: Դաշնակցութիւնը մեղադրւում էր բռնութիւնների ճանապարհով վարչակարգի տապալման փորձի համար, ուստի ձերբակալուածներին մեղադրանք առաջադրուեց ցարական քրէական օրէնսգրքի 102-րդ յօդուածի յատկանիշներով: Այս յօդուածով մեղադրանք ներկայացուեց աւելի քան 150 գործիչների, որպէս, այսպէս կոչուած, «քաղաքական յանցագործների»: Քահանայ Սառիկեանին եւս մեղադրանք առաջադրուեց որպէս դաշնակցութեան անդամ: 1909 թուականի վերջին Վլադիկավկասի տեղական քննիչի եւ 1910 թուականի օգոստոսին արդէն անձամբ Լժինի կողմից հարցաքննութեան[2] ենթարկուելուց յետոյ Սառիկեանը ճանաչուեց մեղադրեալ, սակայն 5000

[1] Վարանդեան Մ., նշ. աշխ., էջ 520:
[2] ՀԱԱ, Ֆ. 1457, գ. 3, գ. 5, թթ. 3471-3473, 3813-3814: Յակոբ քահանայ Սառիկեանի հարցաքննութեան եւ դրա արդիւնքում կայացուած որոշման հայերէն թարգմանութիւնը տես Յարութիւնեան Ա., ՀՅ Դաշնակցութեան Մեծ դատավարութեան թղթածրարները. Հայ հոգեւորականների դատական գործերը, ՎԷՄ համահայկական հանդէս, Երեւան 2011, թիւ 2, էջ 195-199:

ռուբլի գրաւի դիմաց, որը հաւաքել էր քաղաքի հայ համայնքը, առժամանակ ազատ արձակուեց: Հարցաքննութեան ժամանակ Յակոբ քահանայ Սառիկեանը հրաժարւում է իրեն ներկայացուած մեղադրանքից, ժխտում է նաեւ իր՝ դաշնակցութեան անդամ լինելու հանգամանքը: Այս դատական գործընթացում ընդգրկուած լինելը պատճառ հանդիսացաւ, որ 1910 թուականին դեկտեմբերին Տէր Յակոբը կաթողիկոսի կողմից ժամանակաւորապէս ազատուի իր պաշտօններից՝ «մինչեւ նրա դատական գործի վերջանալը»: 1912 թուականի յունուարի 17-ին, շուրջ չորս ամեայ նախաքննութիւնից յետոյ, սկսուեց «դաշնակցութեան մեծ դատավարութիւնը»: Յակոբ Սառիկեանն այդ ժամանակ արդէն Պետերբուրգում էր եւ դատավարութեանը ներկայ էր որպէս մեղադրեալ: Նիստի ընթացքում նա սկսում է գրի առնել. «մեղադրեալների կարեւոր ցուցմունքները, վկաներից կարեւորների վկայութիւնները, դատախազի եւ դատապաշտպանների ճառերը եւ կատարուած կեղծիքները...»[1]: Ինչպէս արդէն նշել ենք, այդ ձեռագիր գրառումների բնագիրն այսօր պահպանւում է Հայաստանի ազգային արխիւում[2], որի հիման վրայ էլ Սառիկեանը յետագայում «կարեւոր լրացումներով» հանդերձ շարադրում է իր «Յիշողութիւնների»՝ դաշնակցութեան դատավարութեանը վերաբերող հատուածը[3]: Թէեւ թէ՛ ժամանակին եւ թէ՛ այսօր շատ է գրուել մեծ աղմուկ հանած այս դատավարութեան մասին, իսկ դատավարութեան քրէական գործը կազմում է տասնեակ հատորներ, այնուամենայնիւ այս գրառումները, որոնք կատարուել են անմիջապէս դատարանի դահլիճում, կարեւոր սկզբնաղբիւր են նիւթը եւ ժամանակաշրջանը ուսումնասիրելու համար եւ կարող են որոշակի ճշգրտումներ մտցնել տեղի ունեցած իրադարձութիւնների եւ իրողութիւնների ընթացքի համապատկերում:

Դաշնակցական գործիչների դատավարութիւնն ընթացաւ մինչեւ 1912 թուականի մարտ: Մարտի 18-ին հրապարակուեց դատավճիռը, որով Յակոբ քահանայ Սառիկեանի անունը շուրջ 90 արդարացուածների ցանկի մէջ էր: Մնացած մեղադրեալները դատապարտուեցին տաժանակիր աշխատանքի, տարբեր պատժաչափերով աքսորի եւ բանտարկութեան:

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 134:
[2] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 10:
[3] **Յակոբ Սառիկեան**, Յիշողութիւններ. 1878-1924, Երեւան, 2015, էջ 276-321:

Դատավճիռի հրապարակումից մի քանի օր անց Տէր Յակոբը ճանապարհուեց Վլադիկավկաս, որտեղ իրեն էր սպասում իր սիրելի ծուխը՝ բազմաթիւ չլուծուած խնդիրներով: Իսկ գալիքը մշուշոտ էր, լի նոր մարտահրաւէրներով ու փորձութիւններով, որոնց արդիւնաւէտ լուծման համար համայնքը միշտ էլ կարիք ունէր բանիմաց եւ խելացի, նախաձեռնող եւ կազմակերպող հոգեւորականի եւ ղեկավարի:

* * *

Մօտենում էր համաշխարհային պատերազմը: Պատերազմ, որն անդառնալի ծանր հետեւանքներ էր ունենալու հայ ժողովրդի համար. ցեղասպանութիւն, հայրենազրկում, հարիւր հազարաւոր գաղթականներ ողջ աշխարհում: Այդ առթիւ քահանայ Սառիկեանը գրում է. «Վրայ հասաւ 1914 թուականը՝ աշխարհասասան պատերազմի տարին: ... Հայ ցեղը եւս ընդհանուր ջրապտոյտից դուրս մնալու հնարաւորութիւն չունէր: Այսպիսի դէպքերում ինչ են մեզ նման ազգերը, եթէ ոչ մի գնդակ, որին ինչպէս ուզում խաղացնում են մեծ պետութիւնները»[1]: Առաջին աշխարհամարտի նախօրէին Բալկանեան առաջին պատերազմում Թուրքիայի պարտութիւնը հայութեան շրջանում սին յոյսեր էր առաջացրել հայկական հարցի լուծման կապակցութեամբ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցի եւ հայ հասարակական-քաղաքական շրջանակների նախաձեռնութեամբ հայկական հարցի վերաբացման այս փորձը հերթական անգամ իր լուծումը չէր ստանալու, իսկ համաշխարհային առաջին պատերազմի սկիզբը Թուրքիային կրկին հնարաւորութիւն էր տալու խոյս տալ տուած խոստումներից, աւելին՝ այն լաւ առիթ էր իրականացնելու հայկական հարցի լուծման սեփական տարբերակը՝ Արեւմտեան Հայաստանում հայերի ցեղասպանութիւնը:

1914 թուականի յուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) Գերմանիան պատերազմ յայտարարեց Ռուսաստանին: Սկսուեց առաջին համաշխարհային պատերազմը: Շուտով Անտանտի երկրների դէմ պատերազմի մէջ մտաւ նաեւ Օսմանեան կայսրութիւնը, որով Ռուսական կայսրութիւնը ստիպուած էր ռազմական գործողութիւնները վարել ցամաքային երկու ճակատներով՝ եւրոպական եւ կովկասեան: Առաջին աշխարհամարտի տարիներին հայերը զօրակոչուեցին իրենց բնակութեան երկրների բանակներ: Ի տարբերութիւն նախորդ դէպքերի, այս անգամ Օսմանեան կայսրութեան բանակ զո-

[1] Ե. Չարենցի անուան ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆոնդ, համար 4, թ. 79:

ռակոչուեցին նաեւ տասնեակ հազարաւոր թուրքահպատակ հայեր: Տասնեակ հազարաւոր հայեր զօրակոչուեցին նաեւ ռուսական բանակ ոչ միայն Արեւելեան Հայաստանից, այլ կայսրութեան այլ հայաբնակ բնակավայրերից: Առաջին աշխարհամարտի տարիներին, բացի կամաւորական ջոկատներում ընդգրկուած հայերից, 200-250 հազար հայեր պաշտօնապէս զօրակոչուեցին ռուսական բանակ[1]: 1914 թուականին Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. իր նամակներից մէկում, բացի կամաւորական ջոկատներում ընդգրկուած հայերը, նշում է ռուսական բանակ զօրակոչուած 60 հազար հայազգի զինուորների մասին[2]: Եւ դա միայն դեռեւս պատերազմի սկզբին: Եթէ հաշուի առնենք, որ այդ շրջանում Ռուսական կայսրութիւնում հայերի թիւը կազմում էր մօտ 2 մլն., ապա զօրակոչուած հայերի թիւը բաւականին խօսուն է: Որպէս կանոն, Արեւելեան Հայաստանից եւ ընդհանրապէս Կովկասից զօրակոչուած հայ զինուորները, հասկանալի պատճառներով, ռուսական իշխանութիւնների հրամանով ծառայութեան էին անցնում հիմնականում արեւմտեան ռազմաճակատներում: Հայկական շրջանակները որոշում են բռնկուած առաջին աշխարհամարտին իրենց մասնակցութիւնը բերել ռուսական բանակի կազմում՝ ստեղծելով կամաւորական ջոկատներ: Հայերն ակնկալում էին ռուսական բանակի օգնութեամբ ազատագրել Արեւմտեան Հայաստանը՝ յետագայում այնտեղ ինքնավարութիւն ձեռք բերելու ակնկալիքով: Յակոբ քահանայ Սառիկեանը թէ՛ իր յուշերում եւ թէ՛ «Հորիզոն» թերթում լոյս տեսած իր յօդուածներից մէկում համոզմունք է յայտնում, որ թուրքական «...տիրապետութիւնն վերջ տուողն անխուսափելիօրէն միայն Ռուսաստանը պէտք է լինի» եւ ապա շարունակում «...բաղդն ու պատմութիւնը հայ ազգի ճակատագիրն անխզելի կերպով կապել են Ռուսաստանի հետ»[3]: Սակայն, յուշագրութեան անմիջապէս յաջորդ էջում Սառիկեանը, արտայայտելով նախորդ ասածին որոշակի հակասական մտքեր, վկայում է, որ Ռուսաստանի՝ «Հայաստանն առանց հայերի» քաղաքականութիւնը «մազի չափ» անգամ չէր փոխուել եւ ընդհակառակը՝ նոյնիսկ «...կոպիտ արտայայտութիւններ է տուել ու շարունակում է տալ»[4]:

[1] Հայկական հարց. Հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 41:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 354, թ. 4, շրջերես:
[3] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 174:
[4] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 176:

Առաջին աշխարհամարտի ընթացքում Ռուսաստանի համար կարեւոր էր համարւում եւրոպական ճակատը, որտեղ որոշւում էր պատերազմի ելքը: Այդ պատճառով պատերազմի հէնց սկզբից ուժերը հիմնականում կենտրոնացւում են հէնց այդ ուղղութեան վրայ: Անգամ նախատեսւում էր Կովկասում կենտրոնացուած ռուսական զինուժի երկու երրորդը տեղափոխել այլ ռազմաճակատներ[1]: Այս պարագայում տասնեակ հազարաւոր հայեր ստիպուած էին լինելու կռուել հայրենիքից հեռու՝ օտար ափերում: Կովկասեան ճակատում հայերը, բացի ընդհանուր զօրակոչի հիմունքներով ռուսական բանակի տարբեր ստորաբաժանումներում ընդգրկուելը, մարտական գործողութիւններին մասնակցեցին պատերազմի հէնց սկզբից Հայոց ազգային բիւրոյի եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի զօրակցութեամբ կազմաւորուած հայկական կամաւորական ջոկատների միջոցով, որոնք իրենց քաջութեամբ ու մարտունակութեամբ կարեւոր դերակատարում ունեցան կովկասեան ճակատում ռուսական բանակի ձեռք բերած յաղթանակների հարցում: Առաջին աշխարհամարտին կովկասեան ճակատում հայերի մասնակցութեան եւ հայկական կամաւորական ջոկատների մասին գրուել է բազմիցս, առկայ են բազմաթիւ յուշագրութիւններ եւ աղբիւրագիտական արժէք ունեցող վկայութիւններ եւ փաստաթղթեր: Եթէ կովկասեան ճակատում հայերի մասնակցութեան հարցը հիմնականում լուսաբանուած է հայ պատմագիտութեան կողմից, ապա խնդիրը որոշակիօրէն բաց է մնում հայերի եւրոպական ճակատում մասնակցութեան եւ ունեցած դերակատարման մասով: Խնդրի գոյութիւնը հիմնականում պայմանաւորուած է արժանահաւատ եւ պաշտօնական աղբիւրների անհասանելիութեամբ կամ էլ երբեմն չգոյութեամբ: Առանձին գիտական հետազօտման չեն արժանացել ոչ միայն եւրոպական ճակատում հայազգի զինուորների եւ սպաների անցած մարտական ուղին ու դերակատարութիւնը, այլ հարիւրաւոր հայազգի ռազմական ճարտարագէտների, ռազմական բժիշկների, զինուորական հոգեւորականների եւ այլ մասնագիտութեան տէր մեր հայրենակիցների ծովածաւալ գործունէութիւնը:

Հրատարակութեան ներկայացուող Յակոբ քահանայ Սառիկեանի սոյն յուշագրութիւնը գալիս է որոշակիօրէն լրացնելու այդ բացը:

Առաջին աշխարհամարտի տարիներին Հայ Առաքելական Եկեղեցին փորձեց իր նպաստը բերել յաղթանակի գործին, ինչպէս

[1] Հայոց պատմութիւն, հատոր 3, գիրք 2, Երեւան, 2015, էջ 460:

նաեւ ձեռնամուխ եղաւ այդ օրհասական օրերին հայ ժողովրդի առաջ ծառացած խնդիրների լուծմանը[1]: Պատերազմի մեկնարկի հէնց առաջին օրերին՝ 1914 թուականի օգոստոսի 5-ին, ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցը կոնդակով դիմում է հայ հոգեւոր եւ աշխարհիկ հանրութեանը՝ կոչ անելով «նիւթապէս եւ բարոյապէս» աջակցել Ռուսաստանին յաղթանակի գործում եւ «...ոգեւորութեամբ եւ ազնուութեամբ կատարեն զպետական եւ զքաղաքացիական պարտականութիւնս...»[2]: Պատերազմի հէնց առաջին ամիսներին հայերով բնակեցուած Արեւմտեան Հայաստանի տարածքը դարձաւ ռազմական գործողութիւնների գլխաւոր թատերաբեմերից մէկը: Դրան զուգահեռ երիտթուրքերը յղացան եւ ձեռնամուխ եղան հայ ժողովրդի բնաջնջման գործին: Պատերազմական գործողութիւնների եւ օսմանեան ցեղասպան քաղաքականութեան արդիւնքում հարիւր հազարաւոր հայեր լքեցին սեփական բնակավայրերը՝ տեղափոխուելով Օսմանեան կայսրութեան հարեւան տարածքներ, ինչպէս նաեւ Արեւելեան Հայաստան եւ Կովկաս: Ողջ հայութեան գերխնդիրներից մէկը դարձաւ հարիւր հազարաւոր արեւմտահայ գաղթականներին օժանդակութեան հարցը: Բնականաբար, Հայ Առաքելական Եկեղեցին չէր կարող անմասն մնալ համազգային այս աղէտի դարմանման գործին եւ ստանձնեց արեւմտահայ գաղթականներին օժանդակութեան առաջնորդութիւնը: Այդ նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցի նախաձեռնութեամբ 1914 թուականին ստեղծուում է «Եղբայրական օգնութեան յանձնաժողովը»[3], որը կոչով դիմում է համայն հայութեանը՝ արեւմտահայութեանը օգնելու նպատակով[4]: Շուտով այս յանձնաժողովի տեղական մասնաճիւղեր են ստեղծուում հայաշատ զանազան քաղաքներում: Այս կառոյցը Հայոց Եկեղեցու առաջնորդութեամբ առաջին աշխարհամարտի տարիներին հսկայական աշխատանքներ է տանում հայ գաղթականների կեանքի ապահովման եւ օժանդակութեան հարցում[5]:

[1] Առաջին համաշխարհային պատերազմի տարիների Հայ Առաքելական Եկեղեցու գործունէութեան վերաբերեալ տես Ս. Կերտող, Հայ Եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Ս. Էջմիածին, 2003:

[2] Սուրբ Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանութիւնը, Ս. Էջմիածին, 2010, էջ 32-33:

[3] «Արարատ», Յունուար, 1915, էջ 3-5:

[4] Սուրբ Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանութիւնը, էջ 117-119:

[5] Սուրբ Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանութիւնը, էջ 585-687, նաեւ Ստեփան Կերտող, նշ. աշխ., էջ 115-182:

Ընթացող պատերազմի պայմաններում, բացի հայկական կամաւորական ջոկատներում ընդգրկուած հայերի, հազարաւոր հայեր կռուում էին ռուսական բանակի զանազան ստորաբաժանումներում եւ տարբեր ռազմաճակատներում: Ինչպէս նշուեց, որպէս կանոն՝ Արեւելեան Հայաստանից եւ ընդհանրապէս Կովկասից զօրակոչուած հայ զինուորները, հասկանալի պատճառներով, ռուսական իշխանութիւնների հրամանով ծառայութեան էին անցնում հիմնականում արեւմտեան ռազմաճակատներում: Ուստի անհրաժեշտութիւն էր առաջացել հոգալու տասնեակ հազարաւոր առաքելական հայ զինուորների հոգեւոր պահանջմունքները: Այդ իսկ պատճառով 1914 թուականի օգոստոսին Էջմիածնի Սինոդը դիմում է ռուսական բանակի գլխաւոր շտաբին, խնդրելով թոյլտուութիւն, գործող բանակ ուղարկելու հայ քահանաների՝ լուսաւորչական հաւատի հայ զինուորների հոգեւոր կարիքները հոգալու համար: Սինոդը միաժամանակ դիմում է վիճակային կոնսիստորիաներին՝ պահանջելով ներկայացնել այն քահանաների անունները, ովքեր կը ցանկանան կամաւոր մեկնել գործող բանակ[1]: Ռուսական բանակի գլխաւոր շտաբը թոյլատրում է հայ քահանաներին մեկնել գործող բանակ, յատկապէս այն վայրերը, որտեղ կան մեծ թուով հայազգի զինուորականներ թէ՛ կովկասեան եւ թէ՛ արեւմտեան ռազմաճակատներում: Հայ զինուորական քահանաները առաջինը գործուղում են Արեւմտեան ճակատ արդէն 1914 թուականի աշնանից, իսկ կովկասեան ճակատ վերջիններս անցան ծառայութեան 1915 թուականից: Հայոց Եկեղեցու բազմաթիւ հոգեւորականներ զանազան թեմերից ցանկութիւն են յայտնում կամաւոր մեկնել գործող բանակ որպէս զինուորական քահանաներ[2]: Քիչ չէին դէպքերը, երբ հոգեւորականները դիմում էին կաթողիկոսին՝ ռազմաճակատ «որպէս մարտիկ» մեկնելու թոյլտուութիւն ստանալու համար[3]: Նման ցանկութիւն յայտնած հոգեւորականները հիմնականում Հայոց Եկեղեցու Ռուսական կայսրութեան տարածքում գործող թեմերի ներկայացուցիչներն էին: Աստրախանի հայոց թեմի Վլադիկավկաս քաղաքի ծխատէր քահանայ Յակոբ Սառիկեանը այն քահանաների թւում էր, ովքեր ռազմաճակատ կամաւոր մեկնելու դիմում էին ներկայաց-

[1] Կերտող Ս., նշ. աշխ., էջ 191:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 513, թթ. 8-14:

[3] Անդ, ֆ. 57, ց. 2, գ. 491, թթ. 79-81:

րել: Ինչպէս Սառիկեանն է գրում, սկսուած պատերազմի պայմաններում. «հանդիսատեսի ու նամակներ-յօդուածներ ստացող գրողի դերում մնալ չէի կարող»[1] եւ ապա մէկ այլ տեղ խօսելով նոյն թեմայի շուրջ՝ շարունակում է. «Ապրել, զգալ էի ուզում պատերազմը: Խանասորը գլուխ էր բարձրացրել մէջս, ուզում էի անձամբ մասնակցել նրան՝ այս անգամ ոչ թէ զէնքով, այլ մխիթարող, սփոփող ու հաւատացնող խօսքով»[2]: Իսկապէս, ինչպէս կարող էր հայութեան գլխին մեծ աղէտ դարձած պատերազմի պայմաններում հանգիստ նստեր յիսունապետ Սառիկը: Վերը նշուած խօսքերը դիպուկ բնութագրում են այն հոգեվիճակը, որում գտնում էր ֆիդայի քահանան: Սառիկեանը Էջմիածնի սրբազան Սինոդին Վլադիկավկասից 1914 թ. սեպտեմբերի 30-ին ուղարկած գրութեան մէջ իր պատրաստակամութիւնն է յայտնում մեկնել ռազմաճակատ եւ կատարել իր հոգեւորականի պարտականութիւնը: Նա միաժամանակ ցանկութիւն է յայտնում մեկնել «Կովկասի սահմաններին կից գործող զօրամասերից մինը»[3]: Սակայն, բանակի գլխաւոր շտաբ 1914 թուականի հոկտեմբերի 17-ին գրութեամբ Մայր Աթոռից պահանջում է գործող բանակ ուղարկել մի լուսաւորչական քահանայ, որը շտապ պէտք է ուղեւորուի Բրեստ՝ Հարաւ-արեւմտեան ռազմաճակատ: Մայր Աթոռի ընտրութիւնը կանգնում է Վլադիկավկասի հոգեւոր հովիւ՝ Յակոբ քահանայ Սառիկեանի վրայ, եւ վերջինս նշանակւում է Հարաւ-արեւմտեան ռազմաճակատի զինուորական քահանայ[4]: Այդ առթիւ Տէր Յակոբն իր նոթատետրում գրում է. «Ցաւում էի, որ հեռու եմ ընկնում Կովկասեան ճակատից, սակայն մխիթարւում էի այն մտքով, թէ այնտեղ, եւրոպական սահմաններում, կարող եմ պիտանի լինել իմ հայրենակից զինուորներին, որոնք հեռու՝ հարազատներից ու մօտիկներից, զուրկ են մայրենի բարբառ լսելու, այդ բարբառով իրենց աղօթքը լսելու, գուցէ եւ իրենց վերջին կամքն արտայայտելու հնարաւորութիւնից»[5]: 1914 թուականի նոյեմբերի սկզբներին Յակոբ քահանայ Սառիկեանն արդէն Բրեստում էր: Իր Յիշատակարանում վերջինս, խօսելով արեւմտեան ռազմաճակատում իր հոգեւոր ծառայութեան ընթացքում այցելած քաղաքների

[1] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 174:
[2] Չարենցի անուան ԳԱԹ, Յ.Սառիկեանի ֆօնդ, համար 4, թ. 86 շրջերես:
[3] ՀԱԱ, Ֆ. 56, ց. 16, գ. 603, թ. 17:
[4] Անդ, ֆ. 57, ց. 16, գ. 603, թ. 22:
[5] Ե. Չարենցի անուան ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆօնդ, համար 3 բ, թ. 1:

Յակոբ քինյ Սառիկեանը դստեր՝ Սասունիկի հետ (1915 թ.):

Խանասորի արշաւանքի հրամանատարական կազմը: Ձախից աջ կանգնածները՝ Սեւքարեցի Սաքօ, Կոլեա Ասրիբէկեան, Յակոբ Սառիկեան, Յովսէփ Արղութեան-Իշխան, Վարդան Մեհրաբեան, Շատախցի Փոխիկ, Գալուստ Ալոյեան-Թորոս, Քրիստափոր Օհանեան:

մասին, առանձնացնում է չորս ուղղութիւններ. «I. Բրեստ Լիտովսկ–Իւանգորոդ–Կելցի–Պրաղլոյ–Սոկոլնիկ, II. Բրեստ-Լիտովսկ–Լուով–Ռուսակա, Ռովնօ–Եարոսլաւ–Դէմբրիցայ–Բադոմիսլ, III. Բրեստ-Լիտովսկ–Վարշաւայ–Սեդլեց, IV. Լիբլին–Խօլմ–Կիեւ–Լուով–Սամբոր–Պերեմիշլ գծերով, եղայ Բուլղարիայի ափերին»[1]:

Զինուորական քահանայ Սառիկեանը, գտնուելով, ռազմաճակատում, հասցնում է այցելել տասնեակ զօրամասեր եւ հիւանդանոցներ, որտեղ հնարաւոր էր գտնել հայ զինուորների եւ սպաների: Սառիկեանը հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում արեւմտեան ռազմաճակատում իրեն հանդիպած ռուսական բանակի զինուորականների, գեներալների եւ սպաների մասին: Վերջինս նկարագրում է նաեւ պատերազմի արեւմտեան թատերաբեմում՝ մասնաւորապէս Գալիցիայում ապրող ժողովուրդների՝ լեհեր, հրէաներ, ռուսիններ եւ այլն, վիճակը, նրանց՝ պատերազմող կողմերի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Հետաքրքիր են նաեւ Սառիկեանի յայտնած տեղեկութիւնները տեղի հայկական համայնքների մասին: Հաշուի առնելով, որ յատկապէս սակաւ են հայերի՝ առաջին աշխարհամարտին արեւմտեան ռազմաճակատում ունեցած մասնակցութեան վերաբերեալ աղբիւրները, խիստ արժէքաւոր են քահանայ Սառիկեանի յայտնած տեղեկութիւնները, այժմ միգուցէ մոռացութեան մատնուած, հայ զինուորների ու սպաների, զինուորական բժիշկների վերաբերեալ: Կարեւոր են նաեւ հայազգի զինուորականների քաջութեան եւ խիզախութեան մասին Սառիկեանի յիշատակումները: Այդ առումով, մասնաւորապէս, բնութագրական է Սառիկեանի զրոյցը զինուորական ստորաբաժանումներից մէկի հրամանատարի հետ, որն իր ենթակայութեան տակ ունէր հայազգի զինուորներ: Այդ հրամանատարը, խօսելով հայ զինուորների մասին, վերջիններիս մասին ասում է. «Շատ են սրտոտ ու ազնիւ»[2]:

Քահանայ Սառիկեանն իր օրագրութեան մէջ յաճախ է նկարագրում պատերազմի սահմռկեցուցիչ տեսարանները եւ իր բողոքի ձայնը բարձրացնում պատերազմի դէմ: «Երբեմն խօսք ու գրիչ անզօր են տեսածդ ու լսածդ նկարագրելու՝ այնքան սոսկալի ու քստմնելի են նոքա: Ես, որ խաղաղութեան, համերաշխութեան, աշխատանքի կողմնակից մարդ եմ, սոսկում եմ՝ տեսնելով երեկուայ առողջ, զուարթ, աշխատանքի մարդուն՝ այսօր գնդակից ջարդուած, շրապ-

[1] Անդ, համար 4, թ. 84:
[2] Անդ, համար 3ա, թ. 21:

նելից այրուած կամ «столбняк» վիճակում» [1]-,-պատերազմական տպաւորութիւնների տակ գրում է քահանայ Սառիկեանը:

1915 թուականի մարտին Սառիկեանը բուժուելու նպատակով վերադառնում է Վլադիկավկաս: Վերջինս Սրբազան Սինոդին յղած գրութեան մէջ յայտնում է, որ ռազմաճակատից բուժուելու նպատակով վերադարձել է Վլադիկավկաս եւ բուժում է քաղաքի զինուորական հիւանդանոցում: Նշում է, որ բուժումը պէտք է շարունակուի մինչեւ յունիսի 4-ը, որից յետոյ Սառիկեանը ցանկութիւն է յայտնում կրկին ռազմաբեմ վերադառնալ, հէնց որ առողջութիւնը թոյլ տա[2]: Չնայած բուժման կուրս անցնելուց յետոյ Սառիկեանը յունիսի սկզբներին պատրաստւում է մեկնել գործող բանակ, սակայն խնդրում է առաջիկայում այդ գործում իրեն փոխարինել մէկ այլ քահանայով: Իր այդ ցանկութիւնը Սառիկեանը հիմնաւորում է մի շարք պատճառներով, նախ այն, որ իրեն որպէս ծխական քահանայ փոխարինած Պօղոս քահանայ Մելիքեանը չի կարողանում արդիւնաւէտ կառավարելի ծուխը, քանի որ դա, իր խօսքերով, վերջինիս «ուժերից ու կարողութիւնից վեր է», յետոյ օգոստոսի 15-ից սկսում է ուսումնական տարին եւ իրեն՝ Սառիկեանին փոխարինող չկար որպէս ուսուցիչ՝ «երկու օրիորդաց գիմնազիաներում, կադէտների կորպուսում, ռէալական եւ ծխական դպրոցներում», իսկ որպէս հիմնական պատճառ նշում է իր եւ որդու առողջական վիճակը[3]: Այնուամենայնիւ, Սառիկեանը բուժման կուրսից յետոյ մեկնում է գործող բանակ, սակայն առողջական վիճակի կրկին վատթարացման պատճառով յունիսի վերջին նա կրկին վերադառնում է Վլադիկավկաս[4]: «Ռազմաբեմերը թողնելուս միակ պատճառը Գալիցեան մալարիայով վարակուելս էր»[5],- այսպէս է մեկնաբանում Սառիկեանն իր զինուորական քահանայի ծառայութիւնից հրաժարուելը:

Ընդհանուր առմամբ, Սառիկեանը ռազմաճակատում անցկացնում է շուրջ ութ ամիս: Վերջինիս Յիշատակարանում բերուած խօսքերը լաւագոյնս են բնութագրում քահանայ Սառիկեանի արեւմտեան ռազմաճակատում անցկացրած ութ ամիսները. «...եթէ քահանայ լինելս ինձ երբեւէ հոգեկան ու բարոյական բաւականութիւն է պատճառել, այդ ամէնից շատ եղել է այն 8 ամսում՝ հայրենիքից ու հարազատներից կտրուած 30 հազար հայ զինուորների[1] շրջանում ու նրանց հետ»[2]:

Յակոբ Սառիկեանի կատարած աշխատանքը գործող բանակում ռուսական զինուորական ղեկավարութեան կողմից գնահատւում է ըստ արժանւոյն, եւ հայ զինուորական քահանան պարգեւատրւում է Աննայի 3-րդ եւ Ստանիսլաւի 3-րդ աստիճանի շքանշաններով[3]:

* * *

1917 թուականի հոկտեմբերեան յայտնի իրադարձութիւններից յետոյ Ռուսական կայսրութեան ողջ տարածքում բռնկուեց քաղաքացիական պատերազմը: Ռուսական զօրքի նահանջի հետեւանքով օրհասական վիճակ էր ստեղծուել կովկասեան ռազմաճակատի ողջ երկայնքով: Հարիւր հազարաւոր հայ գաղթականներ, մազապուրծ թուրքական եաթաղանից, շարժւում էին դէպի Արեւելեան Հայաստան եւ Կովկաս, յուսալով այստեղ գտնել ապաստարան եւ կեանքի ապահովութիւն:

Բռնկուած քաղաքացիական պատերազմի պայմաններում Ռուսաստանի հայութեան դիրքորոշումը միմեանց դէմ կռուող կողմերի՝ բոլշեւիկների եւ սպիտակների նկատմամբ տարբեր էր՝ պայմանաւորուած իրադարձութիւնների զարգացումներով եւ տեղական իրողութիւններով: Շատ վայրերում էլ հայութիւնը փորձ էր անում ուղղակի պահպանել չէզոքութիւն: Յետագայում նորաստեղծ Հայաստանի հանրապետութիւնը եւս ջանքեր էր իրականացնում Ռուսաստանի հայութեանը հեռու պահել քաղաքացիական կռիւներից եւ պահպանել չէզոքութիւն: Սակայն, ստեղծուած բարդ իրավիճակում չէզոքութիւն պահպանելն երբեմն դառնում էր անհնար: Հայութեան կողմնորոշումները պատերազմող կողմերի հարցում պայմանաւորուած էր նաեւ վերջիններիս գաղափարական մօտեցումներով զանազան հարցերի նկատմամբ: Գաղտնիք չէ, որ բոլշեւիկները

[1] Անդ, համար 3ա, թ. 52, շրջերես:
[2] ՀԱԱ, Ֆ. 56, ց. 16, գ. 603, թ. 76:
[3] Անդ, Ֆ. 56, ց. 16, գ. 603, թ. 78, շրջերես:
[4] Անդ, Ֆ. 56, ց. 16, գ. 603, թ. 94:
[5] Անդ, Ֆ.1457, ց. 2, գ. 11, նաեւ Ե.Չարենցի անուան ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆոնդ, համար 3ա, թ. 84:

[1] Հաւանաբար, Յակոբ Սառիկեանը նկատի ունի, որ իր այցելած զօրամասերում եւ մարտական գործողութիւնների վայրերում այդ շրջանում ծառայել է 30 հազար հայ զինուոր: Նշենք, որ առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակ են զօրակոչուել ընդհանուր առմամբ 200-250 հազար հայեր:
[2] Ե. Չարենցի անուան ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆոնդ, համար 4, թ. 84:
[3] ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆոնդ, համար 3 ա, թ. 84:

դէմ էին մասնաւոր սեփականութեան գաղափարին, ինչպէս նաեւ ունէին իրենց առանձնայատուկ բացասական վերաբերմունքը ազգային կառոյցների նկատմամբ: Ուստի, դրանով պայմանաւորուած, յաճախ Ռուսաստանի հարաւի եւ Հիւսիսային Կովկասի տնտեսապէս ամուր դիրքեր գրաւող հայկական շրջանակները հարում էին հակաբոլշեւիկեան ուժերին: Սակայն քիչ չէին դէպքերը, երբ հայերը մեծախումբ ընդգրկւում էին բոլշեւիկների շարքերը՝ իրականացնելով ընդյատակեայ կազմակերպչական աշխատանք, ինչպէս նաեւ մասնակցութիւն ունենում զինուած գործողութիւններին[1]:

Քաղաքացիական պատերազմը ընդգրկել էր նաեւ Հիւսիսային Կովկասը: 1917-1918 թուականների ընթացքում Հիւսիսային Կովկասի տարածքում ձեւաւորւում էին զանազան բոլշեւիկեան պետական կազմաւորումներ, որոնք յաճախ մի քանի ամսուայ կեանք էին ունենում: Ռուսաստանի հարաւում ստեղծուել էին նաեւ հակախորհրդային կազմաւորումներ, որոնցից ամենակենսունակը գեներալ Ա. Դենիկինի գլխաւորած Կամաւորական բանակն էր: Դենիկինը նպատակ ունէր ստեղծել միասնական հակախորհրդային ճակատ Հարաւային Ռուսաստանում: Այդ նպատակով գլխաւոր հրամանատարութեանը կից ստեղծուեց «Յատուկ խորհրդակցութիւնը», որը պէտք է միաւորեր Ռուսաստանի հարաւի հակաբոլշեւիկեան եւ հակախորհրդային ուժերին[2]: Քաղաքացիական պատերազմի երկու կողմի համար էլ հետաքրքրութիւն էր ներկայացնում ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող Հիւսիսային Կովկասը: Քաղաքացիական պատերազմը Հիւսիսային Կովկասում ընթանում էր փոփոխական յաջողութիւններով: Թերեքեան շրջանն իր մայրաքաղաք Վլադիկավկասով պարբերաբար անցնում էր կամ բոլշեւիկների, կամ էլ սպիտակ գուարդիականների ձեռքը: Այսպէս, 1918 թուականի ամռանը մղուած մարտերի արդիւնքում բոլշեւիկներին յաջողւում է գրաւել Թերեքեան կազակների կողմից վերահսկուող Թերեքի շրջանն ու Վլադիկավկաս քաղաքը: Ստեղծւում է Թերեքեան խորհրդային հանրապետութիւնը: Սակայն բոլշեւիկեան պետական այս կազմաւորումը երկար կեանք չի ունենում: Ընդամէնը մէկ տարի յետոյ՝ 1919 թուականի փետրուարին, Դենիկինեան

[1] Ալեքսանեան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետութիւններում, Երեւան, 2014, թթ. 24-27:

[2] Петросян Г., Отношения Республики Армения с Россией (1918-1992 гг.), Ереван, 2012, с. 81-83.

կամաւորական բանակի զօրքերը գրաւում են Թերեքի շրջանը՝ իր կենտրոն Վլադիկավկասով:

1918 թուականի մայիսին իրենց անկախութիւնն են հռչակում նաեւ Հարաւային Կովկասի երեք հանրապետութիւնները: Այդ շրջանում Հիւսիսային Կովկասը ողողուած էր տասնեակ հազարաւոր հայ գաղթականներով: Այդ խառնակ ժամանակներում կրկին Տէր Յակոբը հանգիստ նստած չէր, նա ստանձնել էր Վլադիկավկասի հայոց ազգային կոմիտէի նախագահութիւնը[1]: Յակոբ Սառիկեանը, մինչ Վլադիկավկասում հայկական հիւպատոսութեան բացուելը, 1919 թ. մարտին նշանակւում է նաեւ Թերեքի շրջանում Հայաստանի հանրապետութեան կառավարութեան յատուկ լիազօր, որը պէտք է հիմնականում զբաղուէր Հիւսիսային Կովկասում եւ յատկապէս Թերեքի շրջանում գտնուող հազարաւոր հայ գաղթականների խնդիրներով: Հիւսիսային Կովկասի հայ գաղթականութեան հարցը դարձաւ քահանայ Սառիկեանին մտահոգող հիմնական խնդիրներից մէկը եւ վերջինս, իր գործունէութեան ողջ ընթացքում, այդ հարցը մշտապէս պահեց իր ուշադրութեան կենտրոնում: Որպէս Հայաստանի խնամատարութեան նախարարութեան ներկայացուցիչ, Հիւսիսային Կովկասում Սառիկեանը պաշտօնավարում է մինչեւ 1920 թ. հոկտեմբերի 1-ը[2]: Ի դէպ, այս պաշտօնին քահանայ Սառիկեանի թեկնածութիւնը առաջարկում է Ֆրանսիայի Վլադիկավկասի փոխհիւպատոս պարոն Դիարուան, որն «անձամբ էր ճանաչում Սառիկեանին»[3]: Ֆրանսիական հիւպատոսին յանձնարարուած էր «...թեթեւացնել հայ գաղթականների դրութիւնը»[4], ուստի վերջինս Հայաստանի կառավարութեան հետ բանակցութիւններ վարելու եւ գաղթականութեան կարիքներին արագ արձագանքելու նպատակով Վրաստանի հայկական դիւանագիտական ներկայացուցչութեանն առաջարկում է Վլադիկավկասում ունենալ Հայաստանի յատուկ լիազօր եւ այդ գործում յարմար է գտնում աշխատել քահանայ Սառիկեանի հետ: Շուտով Հայաստանի հանրապետութեան խնամատարութեան նախարարութիւնը տալիս է իր համաձայնութիւնը, որպէսզի Յակոբ Սառիկեանը նշանակուի Վլա-

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 210:

[2] Անդ, ֆ. 114, ց. 1, գ. 24, է. 23, շրջերես:

[3] Անդ, ֆ. 200, ց.1, գ. 246, թ. 11:

[4] Ն. տ.:

դիկավկասում Հայաստանի կառավարութեան յատուկ լիազօր[1]:

Նորաստեղծ Հայաստանի առաջին հանրապետութիւնը, իր գոյութեան կարճ ժամանակահատուածի ընթացքում, փորձում է վարել նաեւ ակտիւ արտաքին քաղաքականութիւն: Յարաբերութիւններ են հաստատւում նաեւ Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմաւորումների հետ[2]: Մասնաւորապէս Հայաստանի կողմից Ռուսական հակախորհրդային պետական կազմաւորումներին կից՝ ստեղծւում են դիւանագիտական ներկայացուցչութիւններ, ինչպէս նաեւ հիւպատոսութիւններ են ստեղծւում Հիւսիսային Կովկասի եւ Հարաւային Ռուսաստանի հայաշատ քաղաքներում, ինչպէս օրինակ՝ Ռոստովում, Հանքային Ջրերում, Վլադիկավկասում, Գրոզնիում, Արմաւիրում, Կիսլովոդսկում եւ այլ քաղաքներում: Հայաստանի հանրապետութեան կողմից նշանակուած հիւպատոսները, բացի դիւանագիտական առաքելութիւնից, պէտք է իրականացնէին նաեւ գործունէութիւն երկու կարեւոր ուղղութիւններով: Առաջինը դա հայ գաղթականութեան խնդիրն էր: Հիւպատոսները պէտք է տեղի հայ համայնքի, ինչպէս նաեւ այլ կառոյցների հետ համագործակցելով, հոգ տանէին հազարաւոր հայ գաղթականների սննդի եւ կեցութեան հարցերը, իսկ հնարաւորութեան դէպքում կազմակերպէին նրանց վերադարձը հայրենիք: Երկրորդ, հայկական հիւպատոսութիւնները պէտք է զբաղուէին պարէնի եւ այլ կենսամթերքների հայթայթմամբ եւ դրա տեղափոխմամբ Հայաստան[3], որի կարիք խիստ զգացւում էր գրեթէ ամբողջութեամբ շրջափակման մէջ յայտնուած հանրապետութիւնում:

1919 թ. օգոստոսի 28-ին Վլադիկավկասի Հայոց ազգային խորհուրդը բարձրացնում է Վլադիկավկասում Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ ունենալու հարցը եւ յանձն է առնում այդ ներկայացուցչութեան ծախսերը վերցնել իր վրայ[4]: Սակայն, տեղի համայնքը, հաւանաբար, այնքան էլ հարուստ չի եղել, քանի որ Սառիկեանն իր արտաքին գործերի նախարարութիւն ուղարկած

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 246, թ. 9:

[2] Պետրոսեան Գ., Հայաստանի հանրապետութեան յարաբերութիւնները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմաւորումների հետ (1918-1920 թթ.), Երեւան, 2006:

[3] Հայաստանից Թերեքի մարզում գնումների եւ Հայաստան տեղափոխելու համար ՀՀ Կառավարութեան ներկայացուցիչ էր նշանակուած Գրիգոր Չալխուշեանը: Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 342, թ. 2:

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 372, թ. 1:

գրութեան մէջ հաղորդում է, որ տեղի համայնքն ի վիճակի չէ օգնութիւն ցոյց տալու, որ անգամ անհրաժեշտ նիւթական միջոցների բացակայութեան պատճառով հնարաւոր է, որ համայնքը փակի տեղի հայկական եկեղեցական դպրոցը[1]: Յետագայում հիւպատոսութեան պահպանման ծախսերը ստանձնում է Հայաստանի հանրապետութիւնը:

1919 թ. հոկտեմբերի 15-ին հոգեւորական Յակոբ Սառիկեանը նշանակւում է Հայաստանի հիւպատոս Վլադիկավկասում[2]: Թերեքեան շրջանում՝ Վլադիկավկասում, Հայաստանի հանրապետութեան հիւպատոսութիւնն իր աշխատանքները պաշտօնապէս սկսում է 1919 թ. դեկտեմբերի 1-ից[3]: Թերեքեան շրջանի հայկական հիւպատոսութեան առջեւ ծառացած էին գրեթէ նոյն խնդիրները՝ ինչ Հիւսիսային Կովկասի միւս հայկական հիւպատոսութիւնների: Սակայն, պէտք է նշել, որ հայկական հիւպատոսութիւնների աշխատանքը յաճախ համակարգուած չէր, չէր գործում մշտական կապ Երեւանի հետ, եւ յաճախ տեղական հիւպատոսները առանձին հարցերի հետ կապուած առաջնորդւում էին սեփական որոշումներով: Յակոբ Սառիկեանը ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղարկած իր զեկուցագրերից մէկում բաւական դիպուկ է բնութագրում ստեղծուած իրավիճակը: Վերջինս դժգոհելով հիւպատոսական աշխատանքի արդիւնաւէտ կազմակերպման համար Երեւանից եկող անհրաժեշտ տեղեկատուութեան բացակայութիւնից, նշում է. «Ամէն մի ներկայացուցիչ (այսինքն՝ հիւպատոս-Է. Յ.) վարում է իրան անհատական քաղաքականութիւնը կամ աւելի ճիշտ՝ ոչ մի քաղաքականութիւն»[4]: Ստեղծուած այս խառնաշփոթ դրութիւնն էլ բերում էր նրան, որ Հիւսիսային Կովկասի առանձին վայրերում հայկական շրջանակները առանձին հարցերում իրականացնում էին երբեմն իրար հակասող գործունէութիւն:

Հիւսիսային Կովկասում էին գտնւում Ցեղասպանութիւնից մազապուրծ տասնեակ հազարաւոր հայերի: Ըստ Սառիկեանի տուեալների, Վլադիկավկասով անցան եւ Հիւսիսային Կովկասի քաղաքներում ապաստանեցին մօտ 100 հազար հայեր[5]: Պատմաբան

[1] Անդ, թ. 2-3:

[2] Անդ, թ. 4, նաեւ ֆ. 114, ց. 1, գ. 24, թ. 23:

[3] Անդ, ֆ. 114, ց. 1, գ. 24, թ. 7, 14-15:

[4] Անդ, ֆ. 200, ց.1, գ. 465, թ. 8:

[5] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 201:

Լէոն իր յայտնի «Անցեալից»-ում գրում է, որ հայ գաղթականների մեծ մասը գնացին Վլադիկավկաս եւ այնտեղ էլ կոտորուեցին ինգուշների կողմից[1]: Այս առթիւ Սառիկեանը տարակուսում է «Միթէ միշտ է այսպէս պատմութիւն գրում»[2]: Իրականում Սառիկեանը տեղի հայութեան ներկայացուցիչների հետ միասին ամէն ինչ անում է, որպէսզի գաղթական հայերը անվտանգ անցնեն ռազմավիրական ճանապարհը եւ հասնեն Հիւսիսային Կովկաս: Այդ մասին Սառիկեանը յետագայում հերքումով հանդէս է գալիս նաեւ «Խորհրդային Հայաստան» թերթում: Սառիկեանն ընդհանրապէս դատապարտում է Լէոյի «Անցեալից» աշխատութիւնը, այն համարելով հեղինակի սեփական ձեռքով գրուած «տապանագիր իր վրայ»:

Հիւսիսային Կովկասի գաղթականների մեծ մասը Արեւմտեան Հայաստանից էին, սակայն քիչ թիւ չէին կազմում Արեւելեան Հայաստանից՝ Կարսից, Շիրակից, Ղազախից եւ այլ վայրերից այստեղ տեղափոխուած հայերը: Հայ գաղթականների վիճակը օրեցօր դառնում էր օրհասական: Հիւսիսային Կովկասի հայ հասարակական-քաղաքական շրջանակները փորձում էին ելք գտնել ստեղծուած իրավիճակից: Գաղթականների հարցի լաւագոյն լուծումը հայկական շրջանակները տեսնում էին գաղթականներին կամ գոնէ նրանց մի մասին Հայաստան տեղափոխելու մէջ: Գաղթականների տեղափոխութիւնը կազմակերպելու նպատակով Հիւսիսային Կովկասում տեղի ունեցան մի շարք խորհրդակցութիւններ, համաժողովներ: Մասնաւորապէս 1919 փետրուարի 15-20-ը Թերեքի շրջանի հայութեան ներկայացուցիչների խորհրդաժողովի ժամանակ փորձ է արւում կազմակերպել հայութեան, այսպէս ասած, «Էւակուացիան» դէպի հայրենիք[3]: Անգամ այդ ծրագիրն իրականացնելու համար կատարւում է անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հաշուարկ, ստեղծւում է գործադիր մարմին[4]: Հայկական շրջանակներն յատկապէս շտապում էին ներգաղթի կազմակերպման հարցում, քանի որ Հիւսիսային Կովկասի ռուսական իշխանութիւնները ցանկութիւն ունէին մինչեւ 43 տարեկան հայ տղամարդկանց զօրակոչի ենթարկել եւ ուղարկել ռազմաճակատ: Ռուսական ռազմական վարչութեան պետ գեներալ Վեազմիտիլովի հրամանով Հիւսիսային

[1] Լէօ, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 372:
[2] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 199:
[3] Անդ, ֆ. 200, ց. 1, գ. 295, թ. 7, 11:
[4] Ն. տ., գ. 295, թ. 31-40:

Կովկասի 17-43 տարեկան տղամարդիկ պէտք է հեռանային հայրենիք եւ մտնէին հայկական զօրամասեր, իսկ եթէ մինչեւ 1920 թուականի մարտի 10-ը նրանք չեն լքել Հիւսիսային Կովկասը, ապա պէտք է զօրակոչուեն ռուսական բանակ[1]: Ինչպէս Սառիկեանն է գրում իր ՀՀ արտաքին գործերի նախարարութիւն ուղարկած զեկուցագրերից մէկում, զօրակոչի համար. «...Հայկական հանրապետութեան քաղաքացի լինելը հաշիւ չի առնւում»[2]: Հիւսիսային Կովկասում զինուորական ծառայութեան համար պիտանի հայ տղամարդկանց թիւը այդ ժամանակաշրջանում զգալի էր՝ 25-30 հազար[3]: Հայաստանի հանրապետութիւնը դիւանագիտական ջանքեր էր թափում հայերի կամաւորական բանակի շարքերում զօրակոչի հարցը կարգաւորելու համար[4]: Հայութեան տեղափոխումը հայրենիք մինչեւ 1920 թ. մարտի 10-ը սաստիկ ցրտերի, փոխադրամիջոցների, անհրաժեշտ դրամագլխի բացակայութեան եւ մի շարք քաղաքական հանգամանքներով պայմանաւորուած՝ ուղղակի անհնար էր դառնում իրագործել: Այդ հարցում յատկապէս լուրջ խոչընդոտ էին հանդիսանում Վրաստանի մենշեւիկ իշխանութիւնները, որոնք, զանազան պատճառաբանութիւններով, փակ էին պահում Ռազմավիրական ճանապարհը ոչ վրացիների համար, ուստի հայ գաղթականների վերադարձը Հայաստան դառնում էր անհնարին: Սառիկեանն իր «Յիշողութիւններ»-ում նկարագրում է վրացական կողմի, իր բնորոշմամբ՝ «հայակեր» քաղաքականութեան մի քանի օրինակներ:

Սակայն, ինչպէս յայտնի է, Հիւսիսային Կովկասի հայ գաղթականների զանգուածային ներգաղթ առաջին հանրապետութեան տարիներին չկազմակերպուեց, եւ նրանց հիմնական մասը մշտական բնակութեան հաստատուեց Հիւսիսային Կովկասի զանազան քաղաքներում ու գիւղերում, երբեմն հիմնելով նաեւ նոր բնակավայրեր:

Ընթացող քաղաքացիական պատերազմը Հիւսիսային Կովկասում սրել էր նաեւ ազգամիջեան յարաբերութիւնները: Յակոբ Սառիկեանի Հայաստան ուղարկած զեկուցագրերից պարզ է դառնում, որ Հիւսիսային Կովկասում գործում են ադրբեջանցի, թուրք, հրէայ,

[1] Ն. տ., գ. 295, թ. 4, նաեւ ց. 1, գ. 465, թ. 4, 7:
[2] Անդ, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 7:
[3] Ն. տ., գ. 295, թ. 4:
[4] Անդ, ֆ. 114, ց. 1, գ. 24, թ. 23

գերմանացի եւ անգամ ռուս գործակալներ[1]: Թուրք գործակալները նպատակ էին հետապնդում տեղական մահմեդական ժողովուրդներին տրամադրել քրիստոնեաների՝ յատկապէս հայերի դէմ: Վլադիկավկասի հայկական հիւպատոսութիւնը՝ ի դէմս Սառիկեանի, հսկայական ջանքեր ներդրեց ազգամիջեան բախումները Թերեքեան շրջանում կանխելու ուղղութեամբ: Նա նախ կարգաւորեց յարաբերութիւնները Հիւսիսային Կովկասի տեղական տեղական ժողովուրդների հետ: Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը հաւանութիւն է տալիս Սառիկեանի առաջարկին՝ յարաբերութիւններ հաստատել օսերի եւ ինգուշների ազգային խորհուրդների հետ, այդ առաջարկը համարելով «...ոչ միայն ընդունելի, այլեւ ցանկալի»[2]: Ստեղծուած համագործակցութիւնն ու փոխըմբռնումը տեղական մահմեդական ժողովուրդների ազգային կառոյցների հետ նպաստեց ապահովելու հայ գաղթականների անարգել մուտքը Հիւսիսային Կովկաս:

1920 թ. գարնանը Թերեքեան շրջանն անցնում է բոլշեւիկների ձեռքը: Կամաւորական բանակը՝ գեներալ Իւան Էրդելիի գլխաւորութեամբ, Վլադիկավկասը լքում է 1920 թ. մարտի 21-ին, իսկ մարտի 23-ին քաղաք են մտնում խորհրդային զօրքերը՝ Ս. Օրջոնիկիձէի գլխաւորութեամբ[3]: Արդէն 1920 թուականի նոյեմբերի 17-ին Վլադիկավկասում տեղի ունեցած Թերեքի ժողովուրդների համագումարում հռչակում է Լեռնային ինքնավար խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնը, որն ընդգրկում էր Հիւսիսային Կովկասի մեծ մասը[4]: Լեռնային հանրապետութիւնը գոյութիւն ունեցաւ մինչեւ 1924 թուականը, որից յետոյ դրա տարածքում արդէն որպէս ԽՍՀՄ տարածքային միաւորներ ձեւաւորուեցին Հիւսիս-Օսէթական, Ինգուշական եւ Չեչենական ինքնավար մարզերը:

Հիւսիսային Կովկասի խորհրդայնացումից յետոյ Վլադիկավկասի հայկական հիւպատոսութիւնը միակն էր, որ շարունակում էր իր գործունէութիւնը, իսկ Հիւսիսային Կովկասի միւս քաղաքներում նախկինում գոյութիւն ունեցած հայկական հիւպատոսութիւնները

[1] Անդ, ֆ.200, ց. 1, գ. 465, թ. 5:
[2] Ն. տ., թ. 10:
[3] Ն. տ.,, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 18:
[4] История Северо-Осетинской АССР с древнейших времен до наших дней, Владикавказ, 1959 г. с. 129.

փակում են, իսկ հիւպատոսները՝ ձերբակալւում[1]: Թերեւս Հիւսիսային Կովկասի հայկական հիւպատոսներից քահանայ Սառիկեանը միակն էր, որը չի ձերբակալւում: Աւելին, վերջինս որոշակի յարաբերութիւնների մէջ է մտնում բոլշեւիկների հետ: Շուտով Սառիկեանը Օրջոնիկիձէի առաջարկով 1920 թ. ապրիլին մեկնում է Երեւան հայկական կառավարութեանն առաջարկելու «...դուրս գալ իր այժմեան դիրքերից եւ բանակցութեան մէջ մտնի Մոսկուայի հետ»[2]: Սառիկեանը մեկնում է Երեւան եւ հրաւիրուած կառավարութեան յատուկ նիստում ներկայացնում իրավիճակը: Այս ամէնի արդիւնքում էլ ստեղծւում Լ. Շանթի պատուիրակութիւնը Մոսկուայի հետ բանակցելու համար: Շանթի պատուիրակութեան կազմում, բացի վերջինից, ընդգրկուած էին Հ. Տէրտէրեանը՝ «իբրեւ ռուսական համալսարանաւարտ» եւ Լ. Զառաֆեանը՝ «իբրեւ նախկին բանուոր»: Սկզբում Շանթը հրաժարւում է ղեկավարել պատուիրակութիւնը, իր «դիպլոմատ» չլինելու պատճառաբանութեամբ, սակայն յետոյ, այնուամենայնիւ, համաձայնում է: Ինչպէս գիտենք, այս պատուիրակութիւնը բաւականին անարդիւնաւէտ գործեց: Շանթի պատուիրակութեան եւ դրա ստեղծման գործում իր մասնակցութեան վերաբերեալ Յակոբ Սառիկեանը 1926 թուականին «Խորհրդային Հայաստան» թերթում զետեղած իր յօդուածում[3] յիշում է Շանթի խօսքերը, երբ նրանք պատուիրակութեան՝ Մոսկուայից վերադառնալու ճանապարհին հանդիպել էին Վլադիկավկասում. «Բոլշեւիկների հետ որեւէ բանակցութիւն վարելու կարիք չկայ, սրանք երկու ամսուայ կեանք հազիւ ունեն: Այսօր-վաղը փախչելու են: Սեւր-ահա մեր յոյսը», յետոյ Սառիկեանը շարունակում է. «Մեր խօսակցութիւնից ինձ համար պարզուեց, որ «Հին Աստուածներ»-ի շնորհալի հեղինակը բաւական անշնորհք քաղաքագէտ է եղել...»[4]: Շանթի պատուիրակութեան Մոսկովեան այցին յաջորդում է Մոսկուայի յատուկ ներ-

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 27-35:
[2] Ն. տ., ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 220:
[3] Սառիկեանի՝ Օրջոնիկիձէի հետ ունեցած հանդիպման, ինչպէս նաեւ Լ. Շանթի պատուիրակութեան ստեղծման եւ Մոսկուա մեկնելու մասին Յակոբ Սառիկեանը նկարագրում է «Խորհրդային Հայաստան» լրագրում տպագրուած «Նախկին հանրապետութեան պատգամաւորութիւնը Մոսկուայում. Մի էջ մօտիկ անցեալից» յօդուածում (Տես «Խորհրդային Հայաստան», 26 մարտի, 1926 թ.), որը արտատպուել է նաեւ Փարիզի «Երեւան» թերթում (Տես «Երեւան», 14 ապրիլի, 1926 թ.:)
[4] «Խորհրդային Հայաստան», 26 մարտի 1926 թ.:

կայացուցիչ Լեգրանի այցը Հայաստան, որից յետոյ հայ-ռուսական բանակցութիւնները տեղափոխւում են Երեւան:

Հիւսիսային Կովկասի խորհրդայնացումից յետոյ փակուեցին ոչ միայն հայկական հիւպատոսարանները, այլեւ արգելուեցին հայկական ազգային, բարեգործական եւ միս կազմակերպութիւնների գործունէութիւնը: Փոխարէնը՝ Վլադիկավկասում եւ Հիւսիսային Կովկասի այլ հայաշատ քաղաքներում իր բաժանմունքներն է սկսում հիմնել Հայկական գործերի կոմիսարիատը: Դեռեւս 1918 թուականի յունիսի 12-ի ՌԽՖՍՀ Ժողկոմխորհը Վ. Լենինի գլխաւորութեամբ ընդունել էր դեկրետ «Հայկական ազգային խորհուրդները, պաշտպանութեան խորհուրդները, ռազմայեղափոխական կոմիտէները եւ միւս բուրժուական կազմակերպութիւնները լուծարելու մասին»[1]: Լուծարուած կառոյցների գոյքը պէտք է անցնէր Հայկական գործերի կոմիսարիատին: Ահա առաջնորդուելով այս դեկրետով՝ Հիւսիսային Կովկասի հայկական զանազան հիմնարկութիւնների գոյքը, ունեցուածքը եւ դրամները իւրացուում են Հայկական գործերի կոմիսարիատի կողմից: Այդ գործին մեծապէս նպաստում են նաեւ Մոսկուայից Հիւսիսային Կովկաս տեղափոխուած հայ կոմունիստները[2]: Սակայն պէտք է արժանին մատուցել եւ նշել, որ Հայկական գործերի կոմիսարիատն իր կարճատեւ գոյութեան ընթացքում՝ 1917-1921 թուականներին, հսկայական աշխատանք իրականացրեց հայ գաղթականութեան խնդիրների լուծման ուղղութեամբ[3]: Սառիկեանը հայ կոմունիստներին մեղադրում է նաեւ հայկական հիւպատոսների ձերբակալութիւնները կազմակերպելու մեջ, ինչպէս նաեւ այն բանում, որ նրանք փորձում են հայ գաղթականներից զինական խմբեր կազմել եւ կարմիր բանակի կազմում ուղարկել Հայաստան, թէեւ այդ գործում վերջիններս. «..դեռեւս կատարեալ անյաջողութեան են հանդիպում»[4]:

Հետաքրքիր է, որ 1920 թուականի գարնանը Թերեքի շրջանի խորհրդայնացումից յետոյ իշխանութեան նոր մարմինները՝ ի

[1] Декреты Советской власти, том 3, Москва, 1964г., с. 15:
[2] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 28-29:
[3] Յովհաննիսեան Է., Հայկական գործերի կոմիսարիատի գաղթականութեան եւ սոցիալական ապահովութեան բաժնի գործունէութիւնից, (Հայ գաղթականութիւնը եւ Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ. Միջազգային գիտաժողովի զեկուցումներ), Երեւան, 2011, թթ. 64-68:
[4] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 28:

դէմս արտակարգ կոմիսար Օրջոնիկիձէի, պահանջեցին, որ հայ գաղթականները տասն օրուայ ընթացքում լքեն Թերեքը, աւելին՝ վերջինս արգելեց գաղթականներին տրամադրել որեւէ կարգի նպաստ[1]: Ուստի, հայ գաղթականների Հայաստան տեղափոխելու հարցը շարունակում էր մնալ հրատապ խնդիր հայկական շրջանակների համար: Յակոբ քահանայ Սառիկեանը եւս շարունակում է ուղիներ փնտրել այդ բարդ հարցը լուծելու համար: Սակայն դրա իրականացման համար առկայ էին բազմաթիւ խոչընդոտներ: Մասնաւորապէս գաղթականների հայրենիք վերադարձին լուրջ խոչընդոտ էին շարունակում ստեղծել վրացական իշխանութիւնները, որոնք փակ էին պահում Ռազմավիրական ճանապարհը: Այդ արարքը վրաց կառավարութիւնը բացատրում էր, Սառիկեանի բնորոշմամբ, «...մեծամասնականների մուտքը Վրաստան արգելելու եւ Տփխիս քաղաքը պարէնաւորման ու բնակարանային դժուարութիւնից ազատելու ցանկութեամբ»[2]: Սակայն, Սառիկեանը համոզուած էր, որ իրական պատճառն այլ է: «Նա *(իմա. Վրացական կառավարութիւնը - Է. Յ.)* լաւ է գիտակցում, որ այդ ներգաղթը կը բարձրացնէ մեր երկրի թէ՛ ռազմական, թէ՛ տնտեսական կարողութիւնը: Մասնաւոր՝ առաջինը: Սրա առաջն առնելու համար է, որ փակած է ռազմավիրական ճանապարհը»,- գրում է Սառիկեանն իր զեկուցագրերից մէկում, եւ ապա շարունակում,- «..պիտի շտապել բանալ վրացական սահմանը եւ հնարաւորութիւն տալ մեր թէ՛ նոր թէ՛ հին գաղթական հայութեանը Պետրոգրադից, Վլադիկավկաս, Ղրիմից մինչեւ Աստրախան հայրենիք վերադառնալ, ուր նա այդքան մեծ թափով ձգտում է»[3]: Այստեղ ուղղակի անհնար է չհամաձայնել Յակոբ Սառիկեանի հետ: Թէեւ 1920 թ. յուլիսի 31-ին վրաց իշխանութիւնները բացում են Ռազմավիրական ճանապարհը հայ գաղթականների համար, սակայն նիւթական միջոցների սղութեան պատճառով մինչեւ ձմեռ հնարաւոր է լինում Հայաստան տեղափոխել ընդամենը 4500 գաղթականների[4]:

1920 թ. յուլիսի 17-ին Յակոբ Սառիկեանը դիմում է ՀՀ արտաքին գործերի նախարարին եւ խնդրում «...ելնելով տեղական քաղաքական եւ պարէնաւորման պայմաններից եւ մի շարք ընտանեկան

[1] Ն. տ., թ. 34:
[2] Ն. տ., թ. 30:
[3] Ն. տ., թ. 31:
[4] Ն. տ., թ. 31:

պատճառներից...» իրեն ազատել Վլադիկավկասում հիւպատոսի պարտականութիւններից եւ իրեն փոխադրել Հայաստան կամ մէկ այլ տեղ որեւէ պաշտօնով[1]: Սառիկեանը յայտնում է նաեւ, որ պատրաստ է մինչեւ նոյն թուականի օգոստոսի վերջը մնալ հիւպատոսի պաշտօնում հայ գաղթականների «էւակուացիայի» հարցերով զբաղուելու համար: Նշենք, որ Սառիկեանի՝ 1920 թ յուլիսի 21-ին արտաքին գործերի նախարարին ուղղած գրութիւնից պարզ է դառնում, որ վերջինս մինչ հիւպատոսական պաշտօնից հրաժարուելը յուլիսի 12-ին դիմել է նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ իրեն քահանայական կոչումից ազատելու համար[2]: Դաշնակցական, հասարակական-քաղաքական գործիչ, նաեւ հոգեւորական Յակոբ Սառիկեանին, կարծես թէ, անհրաժեշտ էր հնարաւորինս արագ հրաժարուել այն բոլոր կարգավիճակներից եւ կոչումներից, որն իրեն կարող էր կապել դաշնակցութեան եւ եկեղեցու հետ: Հաւանաբար, այս ամէնը պայմանաւորուած էր բոլշեւիկների յաղթանակներով եւ տարածաշրջանի խորհրդայնացման իրական դարձող հեռանկարով:

Իր դիմումի համաձայն, 1920 թուականին օգոստոսին Յակոբ Սառիկեանին Վլադիկավկասում Հայաստանի հիւպատոսի պաշտօնում փոխարինում է Պ. Սարիբեկեանը, իսկ նոյեմբերի սկզբին այդ պաշտօնը ստանձնում է Պետրոս Յովհաննիսեանը, որը նաեւ Հայաստանի հանրապետութեան գաղթականական գործերի՝ լիազօրն էր Ռուսաստանում[3]:

1920 թուականի դեկտեմբերի 2-ին խորհրդայնացում է նաեւ Հայաստանը: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ երկրի նոր իշխանութիւնների կողմից առաջին հանրապետութեան կողմից նշանակուած եւ դիւանագիտական ծառայութեան մէջ գտնուող պաշտօնեաներին առաջարկում է մնալ տեղերում եւ շարունակել աշխատանքը մինչեւ նոր կարգադրութիւնը[4]: Սառիկեանի յուշերից պարզ է դառնում, որ Հայաստանի խորհրդայնացման շրջանում Վլադիկավկասի հիւպատոսի պարտականութիւնը, այնուամենայնիւ, դրուած է եղել իր վրայ, հաւանաբար դա պայմանաւորուած է եղել վերը նշուած առաջարկութեամբ: 1921 թուականի փետրուարին Երեւան գնալու ճանապարհին Բաքում Սառիկեանը հանդիպում է

[1] Ն. տ., թ. 27:
[2] Ն. տ., թ. 26:
[3] Ն. տ., թ. 39-41:
[4] Անդ, ֆ. 114, g. 1, գ. 24, թ. 5:

Խորհրդային Հայաստանի այդ ժամանակուայ արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բէկզադեանին եւ ներկայացնում է իր հրաժարականը[1]: Վերջինս չի ընդունում Սառիկեանի հրաժարականը եւ նրան նշանակում է Վլադիկավկասում Խորհրդային Հայաստանի փոխհիւպատոս[2], իսկ այդ ժամանակաշրջանում Վլադիկավկասում Խորհրդային Հայաստանի հիւպատոսն էր Ալագարդեանը[3]: 1921 թուականի սեպտեմբերին Խորհրդային Հայաստանի Վլադիկավկասի հիւպատոսութիւնը վերածւում է Լեռնային ինքնավար սովետական սոցիալիստական հանրապետութեանը կից ներկայացուցչութեան[4]: Հայաստանի ներկայացուցիչ է դառնում Ա. Վարդանեանը[5], իսկ վերջինիս տեղակալի պարտականութիւնը ստանձնում է Սառիկեանը: Այս ներկայացուցչութիւնը գործեց ընդամենը չորս ամիս: Հայաստանի ներկայացուցչութեան լուծարումից յետոյ Վլադիկավկասում շարունակում է գործել հայկական դպրոցը, որի ղեկավարումը վստահւում է Յակոբ Սառիկեանին[6]: Հայաստանի ներկայացուցչութեան լուծարումից յետոյ Յակոբ Սառիկեանը նշանակւում է նաեւ Լեռնային հանրապետութեան տարածքում հայ փախստականների գործերով ներկայացուցիչ[7]:

Թէեւ Հայաստանի Խորհրդայնացումից յետոյ բաւականին սերտացել էին Հայաստանի կրթամշակութային առնչութիւնները Խորհրդային Ռուսաստանի հարաւային շրջանների եւ Հիւսիսային Կովկասի հայահոծ քաղաքների հետ, եւ այդ շրջաններում բացւում էին հայկական դպրոցներ ու մշակութային հաստատութիւններ[8], այնուամենայնիւ հայապահպանութեան տեսակէտից օրհասական էր հայ գաղթականների Հայաստան տեղափոխելու հարցը, յատկապէս երբ վերջինների սոցիալ-տնտեսական կացութիւնը շարունակում էր մնալ օրհասական: Ուստի ներգաղթ կազմակերպելու ուղղութեամբ Սառիկեանը ջանքեր է իրականացնում նաեւ խորհրդային կարգերի հաստատումից յետոյ: Սառիկեանը Հայաստանի յեղկոմին առա-

[1] Անդ, ֆ. 1457, g. 2, գ. 11, թ. 224:
[2] Անդ, ֆ. 114, g. 1, գ. 4, թ. 49, թ. 59:
[3] Ն. տ., գ. 4, թ. 105, նաեւ g.1, գ. 24, թ. 9:
[4] Ն. տ., գ. 112, թ. 27:
[5] Ն. տ., գ. 4, թ. 195:
[6] Ն. տ., գ. 151, թ. 54, շրջերես:
[7] Ն. տ., գ. 125, թ. 48:
[8] Խաչատրեան Կ., Հայ-ռուսական յարաբերութիւնները 1920-1922 թուականներին, Երեւան, 2007, էջ 223-224:

ջարկում է՝ եթէ հնարաւոր չէ կազմակերպել հազարաւոր հայ գաղթականների ներգաղթը, գոնէ կազմակերպել հայ մասնագէտների, յատկապէս հայ բժիշկների ներգաղթը հայրենիք, որոնց կարիքը Հայաստանում խիստ զգացւում էր[1]: Նորաստեղծ Խորհրդային Հայաստանից սոցիալ-տնտեսական ծանր կացութեան պատճառով չէր կարող կազմակերպել Հիւսիսային Կովկասում գտնուող տասնեակ հազարաւոր հայ գաղթականներ ներգաղթը, թէեւ Սառիկեանին, ի պատասխան իր բարձրացրած այդ հարցի, խոստանում էին ապագայում Հայաստան տեղափոխել Հիւսիսային Կովկասի բոլոր գաղթականներին[2]: Իսկ Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նոր ժողկոմ Ա. Մռաւեանը Լեռնային Հանրապետութեան կառավարութեան նախագահ Ս. Տակուեին յայտնում էր, որ տնտեսական ծանր պայմանների հետեւանքով առայժմ հնարաւոր չէ կազմակերպել հայ գաղթականների ներգաղթը, ուստի խնդրում էր գոնէ մինչեւ 1922 թ. աշուն շարունակել հոգալ հանրապետութեան տարածքում գտնուող գաղթականների կարիքները, յոյս յայտնելով, որ 1922 թ. աշնանը Հայաստանը հնարաւորութիւն կունենայ Լեռնային հանրապետութեան տարածքում գտնուող հազարաւոր հայ գաղթականներին տեղափոխել Հայաստան[3]: Արդէն 1922 թուականի վերջին՝ դեկտեմբերի 30-ին ստեղծուեց ԽՍՀՄ-ը, որի մէջ ԱՍՖԽՀ կազմում ընդգրկուած մնաւ նաեւ Խորհրդային Հայաստանը: Մէկ միութենական պետութեան կազմում գտնուելու պայմաններում հայ գաղթականների հայրենիք վերադառնալու հարցը բոլշեւիկեան իշխանութիւնների համար, կարծես թէ, կորցնում էր իր արդիականութիւնն ու նպատակայարմարութիւնը: Հիւսիսային Կովկասի հայ գաղթականների Հայաստան տեղափոխելու հարցը լուծում չի ստանում նաեւ 1924 թուականին Յակոբ Սառիկեանի Մ.Կալինինի հետ ունեցած հանդիպումից յետոյ: Վերջինս առաջարկում է հայ գաղթականներին տեղափոխել Ղրիմ եւ Ուկրաինա: Սակայն, ստանալով Սառիկեանի բացասական պատասխանը այդ հարցի վերաբերեալ, խոստանում է մօտ ապագայում միջոցներ գտնել գաղթականներին Հայաստան տեղափոխելու համար: Սակայն այս խոստումը եւս չի իրականանում: Հայ գաղթականներին մնում էր յարմարուել ստեղծուած պայմաններին եւ մշտական բնակութեան անցնել Հիւսիսային Կովկասի եւ Ռուսաստանի հարաւի բնակավայրերում:

Այստեղ, թերեւս, հետաքրքիր կը լինի մէջ բերել Սառիկեանի յուշերից հատուած, որը ցոյց է տալիս հայ գաղթականների տրամադրութիւնները ներգաղթի վերաբերեալ: Երբ Սառիկեանը հաւաքում է հայ գաղթականների ներկայացուցիչների ժողով, պարզելու համար նրանց վերաբերմունքը Հայաստան վերադառնալու վերաբերեալ, պարզւում է, որ գաղթականները, կամ գոնէ նրանց մի մասը, ամենեին էլ ցանկութիւն չունեն վերաբնակուելու Հայաստանում: Հայաստան գնալու առաջարկը շատերը մերժում են. «Չենք գնալ, եթէ նոյնիսկ մեշօկներով ոսկի տալու լինեն մեզ այնտեղ: Քանի որ մեր հարեւանը նորէն տաճիկն է լինելու. քանի նա Ալեքսանդրապոլից միայն 7 վերստ է հեռու, այդպիսի Հայաստան մեզ պէտք չէ, չենք գնալ...»[1]:

* * *

1924 թուականին Յակոբ Սառիկեանը մշտական բնակութեան է տեղափոխւում Երեւան: Իր ընկերոջը՝ Յարութիւն Ճուղուրեանին գրած մի նամակում, Սառիկեանը գրում է, որ Վլադիկավկասում թողել է ամէն ինչ եւ Երեւան է տեղափոխուել յանուն նրա, որ իր երեխաները. «...ճանաչեն իրենց երկիրը, սիրեն իրենց ժողովրդին, աշխատեն նրա համար»[2]: Հայաստան տեղափոխուելու Սառիկեանի որոշմանը նպաստեց նաեւ 1924 թուականի մայիսին Մոսկուայում վերջինիս հանդիպումը Հայաստանի կոմկուսի այդ ժամանակուայ առաջին քարտուղար Աշոտ Յովհաննիսեանի հետ, որը եւս Սառիկեանին յորդորում է վերադառնալ Հայաստան:

Ընտանիքի հետ վերադառնալով Հայաստան՝ նախկին քահանայ Սառիկեանը սկզբում ստանձնում է Երեւանում գտնուող ինը մանկատների կառավարչի պաշտօնը: Սակայն, շուտով ստեղծուած մի շարք խոչընդոտների պատճառով 1926 թուականին հրաժարական է տալիս: Այնուհետեւ Սառիկեանն աշխատում է լուսժողկոմատի դիւանապետ, ապա հողժողկոմատի գիւղատնտեսութեան վարչութեան քարտուղար, որից յետոյ աշխատանքի է անցնում պատմութեան պետական թանգարանում որպէս պատմագիտութեան բաժնի վարիչ[3]: Միաժամանակ Սառիկեանը «Խորհրդային Հայաս-

[1] ՀԱԱ, Ֆ. 114, ց. 1, գ. 24, թ. 11:
[2] Ն. տ., գ. 21, թ. 51-52:
[3] Ն. տ., գ. 151, թ. 51:

[1] Անդ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 226:
[2] Բաղալեան Ա., նշ. աշխ., էջ 39:
[3] ԳԱԹ, Յակոբ Սառիկեանի ֆոնդ, համար 4, թթ. 136, 137 շրջերես, 147

տան» թերթի սրբագրիչն էր, որտեղից շուտով հեռացում է կենտկոմի առաջին քարտուղար Աշոտ Յովհաննիսեանի վերաբերեալ նիւթում թոյլ տուած «քաղաքական կոպիտ սխալի» համար: Աշխատանքին զուգահեռ Սառիկեանն երբեմն թղթակցում էր «Խորհրդային Հայաստան» թերթին:

1920-ական թուականների կէսերից ողջ Խորհրդային Միութեան տարածքում սկիզբ առաւ աննախադէպ հակակրօնական եւ հակաեկեղեցական պայքար: Այդ հակակրօնական պայքարի ակտիւ մասնակիցը եւ անմիջական կազմակերպողը դարձաւ «Մարտնչող անաստուածների միութիւն» հասարակական կազմակերպութիւնը[1], որը նպատակ էր դրել «...հետեւողական պայքար մղել հաւատացեալների գիտակցութեան միջից կրօնական մնացորդները վերացնելու համար»[2]: 1920-1930-ական թուականներին բոլշեւիկների հովանաւորութեամբ սկսեցին գործել նաեւ, այսպէս կոչուած, այլընտրանքային «նոր եկեղեցիներ»: Հայաստանում այդպիսին հանդիսանում էր «Ազատ եկեղեցական եղբայրութիւնը»[3]: Խորհրդային Հայաստանում սկիզբ առած այս քաղաքականութիւնը նոր փորձութիւն էր դառնալու նախկին քահանայ Յակոբ Սառիկեանի համար: Շուտով Հայկոմկուսի առաջին քարտուղար Ա. Յովհաննիսեանը Սառիկեանին առաջարկում է դառնալ նորաստեղծ, այսպէս կոչուած, Ազատ եկեղեցու համանուն «Ազատ եկեղեցի» ամսագրի խմբագիրը: Ստանձնել այդ պաշտօնը՝ նշանակում էր ընդգրկուել հակաեկեղեցական եւ հակաէջմիածնական կեղտոտ պայքարի մէջ, բայց միաժամանակ ապահովել սեփական բարեկեցութիւնը եւ բոլշեւիկ իշխանութիւնների բարեհաճութիւնը: Սառիկեանի նման բարձր բարոյական յատկանիշներով օժտուած անձը, որը տասնեակ տարիներ ծառայել էր Հայոց Եկեղեցուն ու ժողովրդին, չէր կարող գնալ այդ քայլին, ուստի վերջինս մերժում է առաջին քարտուղարի՝ շատերի համար գայթակղիչ եւ մի գուցէ պատուաբեր այդ առաջարկը: «Ես քահանայութիւնը չեմ թողել նրա համար, որ նորից զբաղուեմ կրօնական խնդիրներով»[1] - այսպէս է Սառիկեանը պատճառաբանում իր մերժումը: Հասկանալի է, որ մերժման իրական պատճառն այլ էր: Բնականաբար, այս մերժումը դուր չեկաւ կոմունիստ ղեկավարներին: Այդ մերժումը. «...ինձ վրայ թանկ նստեց»,- յիշում է Սառիկեանը: Դրան յաջորդեցին հալածանքները նախկին քահանայի նկատմամբ: Վերջինս հեռացում է աշխատանքից, ինչպէս նաեւ նրան արգելում են զբաղուել իր սիրած գործով՝ ուսուցչութեամբ: «Անձնական կեանքս շարունակ ծանրանում է, բարոյական տառապանքս մեծանում: Ինչ արժէք ունի այսպիսի կեանքը»[2] - 1926 թուականին կատարուած օրագրային այս յուսահատական գրառումը լաւագոյնս է բնութագրում Սառիկեանի սոցիալական եւ հոգեբանական վիճակն այդ ընթացքում: Նման յուսալքուած եւ հիասթափուած տրամադրութիւնների յաճախ ենք հանդիպում նաեւ Սառիկեանի յիշատակարանի միւս էջերում եւս: 1935 թուականին Սառիկեանը կենցաղային կարիքները եւ ընտանիքն պահելու համար վաճառում է անձնական գրադարանի մի մասը: Այդ առթիւ իր յիշատակարանում գրում է. «Այս օրը (դեկտեմբերի 6-է. Յ.) իմ կեանքի ծանր ու դառնագոյն օրերից մինը դարձաւ շնորհիւ իմ նիւթական ծանր դրութեան. ծախեցի գրադարանիս մի մասը»[3]:

Չնայած հալածանքներին եւ երկրում ստեղծուած քաղաքական մթնոլորտին, Սառիկեանը յաճախ է այցելում Էջմիածին, անգամ մի անգամ բժշկի հետ լինում է հիւանդ կաթողիկոսի մօտ, իսկ 1927 թուականի Նոր տարին դիմաւորում է Էջմիածնում եւ ապա իջեւանում է ապագայ կաթողիկոս Խորէն Մուրադբեկեանի մօտ: Խորհրդային Հայաստանում այդ ժամանակ իրականացուող հակակրօնական եւ հակաեկեղեցական քաղաքականութեան պայմաններում դա բաւականին համարձակ քայլ էր, որը կարող էր ճակատագրական լինել նախկին քահանայի համար: Այս ամէնը ցոյց է տալիս, որ թէեւ հանգամանքների բերումով Սառիկեանը հրաժարուել էր քահանայական կոչումից, բայց երբէք չէր հրաժարուել Հայ Առաքելական Եկեղեցուց

շրջերես:

[1] «Մարտնչող անաստուածների միութիւն» կամ «Անաստուած» հասարակական կազմակերպութիւնն իր բազմաթիւ մասնաճիւղերով ԽՍՀՄ-ում իր գործունէութիւնը սկսեց ծաւալել 1925թ. յունիսից, որի կորիզը կազմում էր 1922 թուականից հրատարակուող հակակրօնական «Բեզբոժնիկ» թերթի բարեկամների ընկերութիւնը: Իսկ 1928 թուականի մարտին ստեղծուեց հայկական «Անաստուածների միութիւնը»:

[2] Հրահանգ ՄԱՄ-ի քաղաքային եւ գիւղական բջիջների աշխատանքի մասին, Երեւան, 1938 թ., էջ 3:

[3] Յովհաննիսեան է., Մարտնչող անաստուածների միութեան գործունէութիւնը Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ., «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, յունուար, 2010, էջ 101:

[1] ԳԱԹ, Յ. Սառիկեանի ֆոնդ, համար 4, թ. 137:

[2] Անդ, թ. 144:

[3] Անդ, թ. 147 շրջերես:

եւ շարունակում էր իր մէջ կրել հոգեւորականի բարձր կոչումը:

Երեւանում ապրելու տարիներին Սառիկեանը լայն շփումներ է հաստատում հայ մտաւորականների հետ, որոնցից շատերի մասին յիշատակում է իր տարբեր յուշագրութիւններում: Հետաքրքրաշարժ է հոկտեմբերեան յեղափոխութեան եւ հայ մտաւորականների վերաբերեալ Սառիկեանի անդրադարձն իր գրուածքներից մէկում. «Մեծ հոկտեմբերը օրօրեց, խալխլեց, վերից վար, աջից ձախ վարեց մեր երկիրը, յետոյ էլ մեր մտաւորականութեանը: Նրանցից շատերը զտուեցին, մաքրուեցին ու բիւրեղացան, շատերն էլ ծախուեցին ու աղտոտեցին իրենց հոգին ու խիղճը»[1]: Յակոբ քահանայ Սառիկեանը վերջիններիս թւում էր:

1927-1935 թուականներին ընկած ժամանակահատուածում Սառիկեանն իր օրագրում նշումներ չի կատարում: «Իմ յիշատակարանի» վերջին մի քանի էջի գրառումները կատարուած են 1935-1940 թուականներին, որտեղ Սառիկեանը գրեթէ ոչինչ չի նշում տուեալ ժամանակաշրջանի եւ իր հետ պատահած իրադարձութիւնների մասին, այլ աւելի շատ պատմում է յայտնի մարդկանց մասին իր յուշերը եւ առանձին դրուագներ, օրինակ՝ Լենինի, Կիրովի, Լէոյի, Ղ. Աղայեանի, Երուանդ Շահազիզի եւ ուրիշների հետ իր ունեցած հանդիպումների եւ հետաքրքրաշարժ դէպքերի մասին:

Յետագայում, ինչպէս վկայում է արդէն Սառիկեանի աշակերտ՝ յայտնի գրականագէտ Է. Ջրբաշեանը, Սառիկեանին, այնուամենայնիւ, որոշ ժամանակ թոյլատրուել է զբաղուել մանկավարժութեամբ: Վերջինս 1935-1937 թուականներին հայոց լեզու եւ գրականութիւն է դասաւանդել Կոնդի Ա. Ս. Բուբնովի (Ռուսաստանի լուսաւորութեան ժողկոմ), ապա Շօթայ Ռուսթաւելու անունը կրող դպրոցի 5-7-րդ դասարաններում: Սակայն, Սառիկեանը, շուտով որպէս նախկին քահանայ, զրկւում է դասաւանդելու իրաւունքից: Էդ. Ջրբաշեանը, խօսելով Յակոբ Սառիկեանի դպրոցում աշխատել թոյլ չտալու մասին, յիշում է. «Չգիտեմ դա՞ էր պատճառը (այսինքն՝ Սառիկեանի նախկին քահանայ լինելը-Է.Յ.) թէ՞ հիւանդութիւնը, որը գնալով աւելի դժուարացնում էր ամէն օր Կոնդ բարձրանալուիջնելու գործը»[2]:

Այսպիսով, Հայաստան տեղափոխուելուց յետոյ Սառիկեանը, որը հիմնականում զբաղւում է գիտամանկավարժական գործունէու-

[1] Անդ, թ. 138 շրջերես:
[2] **Ջրբաշեան Էդ.**, նշ. աշխ., էջ 272:

Լուսանկար՝ նուիրուած Յակոբ Սառիկեանին Աւ. Իսահակեանի, Եղիշէ Չարենցի, Աղասի Վարդանեանի ընծայականով (01. 12. 1927 թ.)



թեամբ եւ լրագրութեամբ, թէեւ ենթարկւում է ճնշումների, որոնք հիմնականում ազդեցութիւն ունեցան վերջինիս սոցիալական-նիւթական կացութեան վրայ, սակայն նրան յաջողւում է փրկուել ստալինեան բռնաճնշումներից, աքսորից ու գնդակահարութիւնից, ինչը չի յաջողւում նախկին շատ այլ հոգեւորականների:

Երեւանում Յակոբ Սառիկեանն ապրել է նախկին Սպանդարեան (ներկայիս Արամի) փողոցի թիւ 84 տանը, որտեղ դեռ դպրոցական Ջրբաշեանը մի անգամ առիթ է ունեցել այցելելու: Իր սիրած գործից՝ ուսուցչութիւնից հեռանալուց յետոյ, որով զբաղուել է գրեթէ ողջ կեանքի ընթացքում, Սառիկեանը շարունակում է զբաղուել թարգմանութիւններով եւ հայացնում է տասնեակ գրքեր, որի մասին խօսել ենք վերը:

Յակոբ Սառիկեանը մահանում է Երեւանում 1945 թուականին, 73 տարեկան հասակում եւ յուղարկաւորւում է Երեւանի քաղաքային գերեզմանատանը:

* * *

Այսպիսով, այս հրատարակութիւնը նպատակ ունի հանրահռչակել Յակոբ քահանայ Սառիկեանի կողմից գրուած եւ պատմագիտական արժէք ներկայացնող հերթական աշխատութիւնը: Առաջին անգամ հրատարակութեան ներկայացուող սոյն յուշագրութիւն-օրագրութիւնը առաջին համաշխարհային պատերազմի արեւմտեան ռազմաճակատում ծաւալուած իրադարձութիւնների վերաբերեալ կարող է հանդիսանալ կարեւոր սկզբնաղբիւր ոչ միայն ժամանակաշրջանը ուսումնասիրելու եւ առանձին պատմական իրադարձութիւններ նորովի ներկայացնելու համար, այլեւ առաջին աշխարհամարտին հայերի մասնակցութեան հարցերը լուսաբանելու համար:

ԷԴԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ

ՈՒԹ ԱՄԻՍ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ[1]

(Յուշեր)

Ա.

1.

Հազար ինը հարիւր տասնուչորս թուի Հոկտեմբերի 30-ի երեկոյեան ժամի 4-ին հրաժեշտ տուի ինձ ճանապարհելու համար կայարան եկած հայ, ռուս, օս, հրէայ ու լեհ հոծ բազմութեանն ու մեկնեցի դէպի արեւմտեան ռազմաճակատ: Գնում էի Էջմիածնի Սինոդի կարգադրութեամբ:

Թիւրքիան նոր էր ռազմի դաշտ իջել՝ Գերմանիայի, Աւստրիայի ու Բուլղարիայի հետ զինակցած: Ցաւում էի, որ հեռու եմ ընկնում Կովկասեան ճակատից, սակայն մխիթարւում էի այն մտքով, թէ այնտեղ, եւրոպական սահմաններում, կարող եմ պիտանի լինել իմ հայրենակից զինուորներին, որոնք հեռու՝ հարազատներից ու մօտիկներից՝ զուրկ են մայրենի բարբառ լսելու, այդ բարբառով իրենց աղօթքը կարդալու, գուցէ եւ իրենց վերջին կամքն արտայայտելու հնարաւորութիւնից:

Յաջորդ օրն առաւօտեան ժամը 9-ին Նոր-Նախիջեւան եմ հասնում: Այստեղից գնացքը պիտի դուրս գար երեկոյեան ժամը 7-ին: Բաւական ժամանակ կար քաղաք անցնելու, բարեկամներիս հետ տեսնուելու: Եղայ «Գաղութ»-ի[2] խմբագրատանը, ուր բաւական երկար զրոյց ու վէճ ունեցայ թեր-

[1] Հեղինակն այս յուշերի ձեռագիր տարբերակում օգտագործում է *ռազմավայրեր* բառը, իսկ մեքենագիր տարբերակում նշուած է *ռազմաճակատներ* բառը:

[2] «Գաղութ» - գրական, հասարակական, քաղաքական շաբաթաթերթ: Լոյս է տեսել 1914-1916 թուականներին Նոր Նախիջեւանում: Թերթի խմբագիրներն են եղել Ա. Տօնբէյեանը, Ս. Մեսնիկեանը:

թի երիտասարդ խմբագիր Հ. Տ.-ի[1] հետ: Այդ օրերում պատերազմից բացի ուրիշ ինչի՞ մասին կարելի էր խօսել: Մի կէտում մենք համամիտ էինք՝ այս պատերազմի ընթացքում եւս մեզ խաբելու են, կրկնուելու են Ներսէս Աշտարակեցու օրերը[2]: Եղայ նաեւ Գրիգոր Զալխուշեանի[3] մօտ, խօսեցինք մօտ երկու ժամ: Այս մարդուն առաջին անգամն էի տեսնում, բայց մեծ համարում ունէի: Հեռացայ այն տպաւորութեամբ, թէ բնաւ արժանի չէ այն ժողովրդականութեանը, որ վայելում է հայ հասարակութիւնից, որ սա տարիներ շարունակ իր օգտին է ծառայացրել հայերիս հաւատն ու թոյլ կողմը: Նոյն կարծիքին էր նաեւ Ռոստովի ու Նոր-Նախիջեւանի հայ երիտասարդութեան մեծ մասը:

Նոյեմբերի 1-ի կէսօրին Կիեւումն եմ:

Սիրուն, մեծ ու համեմատաբար մաքուր քաղաք է Կիեւը՝ ընկած Դնեպր գետի վրայ: Տեսայ Ստոլիպինի[4] Ռուսաստանի մօտիկ անցեալի այդ փաստական դիկտատորի արձանը, մի անգամ էլ կարդացի նրա պատմական «Вам нужень великая потрясения, нам нужна Великая Россия»[1]: Կենդանի լինէր ու տեսնէր, թէ որքան էր սխալուած ինքը...

Տրամուայում ծանօթացայ մի երիտասարդ հայ բժշկի հետ՝ Ամատունի ազգանունով, որից իմացայ, թէ Կիեւում մօտ 100 տուն հայ, 300 հայ ուսանողներ կան, որոնցից 12 նորաւարտ բժիշկներ մի քանի օր առաջ ուղեւորուել են Կովկասեան ռազմաճակատ:

Այստեղ կամաց-կամաց պատերազմի հոտ եմ առնում, սկսում են երեւալ վիրաւոր սպաներ, անվերջ վազվզող գթութեան քոյրեր, լազարեթներ, դէպի ճակատ զօրք ու ռազմամթերք փոխադրող գնացքներ, գնացքներ, գնացքներ...

Կայարան եմ գնում: Գնացքի բ. կարգի վագոններում տեղ չկայ. կոմենդանտ[2] ինձ ա. կարգի վագոնում է տեղաւորում: Քիչ յետոյ նոյն կուպէն են մտնում մի երիտասարդ բժիշկ՝ շատ համակրելի դէմքով, մի գեներալ եւ ադմիրալ Բիրիլովը: Մեր խօսակցութեան նիւթը պատերազմն է: Գեներալն ու ադմիրալը հաշտութիւնը հնարաւոր են համարում «միայն Բերլինում»[3]: Բժիշկն իր տեսածների ու լսածների վրայ պնդում է, որ գերմանական զօրքը խստասիրտ է, անգութ, բայց քաջ ու սառնասիրտ: Սանիտարական գործը նրանցում համարւում է օրինակելի.

Վարշաւայի առաջին կռիւներից յետոյ,— ասում է նա,— միայն եօթ սպայ եւ 38 վիրաւոր զինուոր գտանք. մնացած մեռածները թաղուած էին, վիրաւորուածները՝ բոլորը ժողոված: Այլ են Աւստրիացիք: Որեւէ կռուից յետոյ նրանց վիրաւորները ժողովելուց յոգնում էինք:

---

[1] Հ. Տ. - Նկատի ունի «Գաղութ» շաբաթաթերթի առաջին խմբագիր Ա. Տօնբէյեանին: Յակոբ Սառիկեանի կողմից նշուած խմբագրի անուան Հ. սկզբնատառը, հաւանաբար, սխալմունք է:

[2] Նկատի ունի՝ 1826 - 1828 թուականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայկական հասարակական-քաղաքական շրջանակների ձգտումները՝ վերականգնել հայկական թագաւորութիւնը կամ առնուազն ստեղծել հայկական ինքնավարութիւն, չեն իրականանում, իսկ Ներսէս Աշտարակեցին, որն այդ գաղափարների կրողն էր եւ հետեւողականօրէն փորձում էր դրանք կեանքի կոչել, ուղարկւում է պատուաւոր աքսորի՝ նախ 1828 թուականին նշանակուելով Բեսարաբիայի, ապա 1830 թուականին նոր կազմաւորուած Բեսարաբիայի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ:

[3] Գրիգոր Զալխուշեան (1861-1931թթ.) - հասարակական գործիչ, պատմաբան, իրաւաբան: Եղել է Հայաստանի առաջին հանրապետութեան ներկայացուցիչը Դոնում, յետագայում հաստատուել է Կ. Պոլսում: Գ. Զալխուշեանը թղթակցել է ժամանակի մամուլին, հեղինակ է մի շարք պատմագիտական բնոյթի աշխատութիւնների:

[4] Պեստր Արկադեւիչ Ստոլիպին (1862-1911թթ.) - Ռուսական կայսրութեան պետական, քաղաքական գործիչ: Զբաղեցրել է մի շարք պետական պաշտօններ, այդ թւում՝ ներքին գործերի նախարարի եւ վարչապետի պաշտօնները, ղեկավարել է 1905-07 թուականների յեղափոխութեան ճնշումը: Պ. Ստոլիպինը յայտնի է իր նախաձեռնած ռեֆորմներով, որի նպատակն էր երկրում ամրապնդել ցարական իշխանութեան հիմքերը: Պ. Ստոլիպինի արձանը Կիեւում տեղադրուել է 1913 թուականին եւ հանուել է 1917 թուականի մարտին՝ փետրուարեան յեղափոխական իրադարձութիւններից յետոյ:

---

[1] Այս նախադասութիւնը Ռուսական կայսրութեան վարչապետ Պ. Ստոլիպինը արտասանել է 1907 թուականի մայիսի 10-ին՝ Պետական Դումայում գիւղացիութեան սեփականութեան իրաւունքի հետ կապուած ելոյթի ժամանակ:

[2] Կոմենդանտ - պարէտ:

[3] Նկատի ունի՝ Գերմանիայի հետ հաշտութեան կնքումը հնարաւոր է միայն վերջինիս լիակատար պարտութեան դէպքում:

Առաջին կարծիքնեբ, նոր աշխարհ... անչափ հետաքրքիր ինձ համար: Երկու օր է՝ Ուկրայինայումն եմ՝ Գոգոլների ու Շեւչենկոների հայրենիքում: Գեղեցիկ աշխարհ՝ իր անծայրածիր դաշտերով, կապուտակ երկնքով, հարուստ անտառներով, ապրումներով ու ձգտումներով... Հապա սրա արեւածագն ու արեւմուտքը՞... անսահմանօրէն լայն տափաստաններում փռուած գիւղե՞րն՝ իրենց դեռ հեռուից սպիտակին տուող կոկիկ տներով, բարձրագմբեթ եկեղեցիներով, քամաղացներով՝– ամբողջը կորած ծառ ու կանաչի մէջ: Բնութեան այս գեղեցկութիւնը լրացնում են 15-20 տարեկան գեղեցկուհիները, որոնք իրենց ազգային տարազով, որ այնքան սազում է նրանց, անհոգ խինդ ու կանչով պտուղներ, թխուածքներ, ծաղիկներ, հատապտուղներ, կաթ, ձու են առաջարկում ճամբորդներին...

Երկու օր է՝ Ուկրայինայումն եմ եւ լսածս համարեայ ամբողջ խօսակցութիւնը հրէաների մասին է.

Դաւաճան են, վաճառուող, մեր դիրքերի ու խրամատների տեղը նրանք են յայտնում գերմանացիներին. այդպէս վարուեցին Վարշաւայի մօտ, ուր խարոյկներով իմացրին մեր զօրքերի տեղը: Դրանց բոլորին պիտի ոչնչացնել,– զայրոյթով պնդում էր Բիրիւլովը:

Այս առթիւ ես խօսակցութիւն ունեցայ մի բանիմաց հրէայի հետ, որ Վարշաւայ էր գնում:

Այդ ի՞նչ է որ,– ասաց նա,– բանա՞կ էք գնում, այնտեղ աւելին կլսէք: Այդ բանում ամէնից շատ մեղաւոր են լեհերը, որոնք մեզ սեւացնելու, անուանարկելու համար ոչինչ չեն խնայում: Մենք պատճառ չունենք գերմանացոց կողմը պահելու. մենք յիմար չենք, որ չհասկանանք, թէ նրանք մեզ համար աւելի զօրեղ ու անձեռնտու մրցակիցներ են. մինչ դեռ Ռուսաստանում, ուր, ճիշտ է, մենք շատ իրաւազուրկ ենք, համարեա մրցակից չունենք– մանաւանդ առեւտրի ասպարէզում:

Որքան աւելի եմ առաջ գնում, այնքան այս բոլորի մասին աւելի եմ լսում- «դաւաճան հրէաներ», «զրպարտիչ լեհեր»: Այս հանգամանքն աւելի է լռեցրել հրէաներին, որոնք համարեա լցնում են վագոնները, սակայն միշտ լուռ են ու երկչոտ, միշտ զիջող՝ մեծին, փոքրին, մանաւանդ զինուորականներին: Դրան հակառակ՝ համարձակ ու ազատ են լեհերը: Նրանց ուրախ զրոյցն ու քրքիջը լցնում են վագոնները: Ամէնքն ու ամէն տեղ միայն լեհերէն են խօսում: Ձեզ հետ ռուսերէն խօսում են միայն այն ժամանակ, երբ համոզւում են, թէ այնպիսի երկրից էք, ուր կարող էիք լեհերէն չիմանալ: Առանձնապէս զիջող են դէպի կովկասցիք, մանաւանդ դէպի հայերը:

Ռուսական կուլտուրայի ազդեցութիւնն այս ժողովրդի վրայ շատ է թոյլ: Շատ ռուսներ իրենք կարծես լեհացել են, խօսում են լեհերէն: Մի քանի ռուս կանանց պատահեցի՝ ամուսնացած լեհերի հետ. կատարելապէս լեհացել, նոյնիսկ կրօնն են փոխել:

Այդ օրերում ամէնքի բերանում մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի[1] կոչն է՝ ուղղուած լեհերին[2]: Երեւում է, որ այդ կոչին չեն հաւատում, բայց եւ այնպէս. «իրենք ազատուելու են, յոշոտուած Լեհաստանը միանալու, ամբողջանալու, վերածնուելու է... »:

Վերջապէս Բրեստ Լիտովսկ եմ հասնում: Առաւօտեան ժամի 9-ն է: Գնում եմ քաղաք: Հիւրանոցից հիւրանոց ընկնելով, վերջապէս «Մետրոպոլ»-ում մի խղճուկ համար եմ վարձում ու շտապում դէպի «Ճակատի զօրքերի մթերման գլխաւոր պետի դիւանը» (*«Концелярия главного начальника снабр. армии фронта»*):

---

[1] Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչ (Կրտսեր) Ռոմանով (1856-1929 թթ.) - Նիկոլայ Երկրորդ կայսեր հօրեղբայրը, որն առաջին համաշխարհային պատերազմի առաջին տարիներին՝ 1914-1915 թուականներին, հանդիսացել է ռուսական զօրքերի գլխաւոր հրամանատարը:

[2] 1914 թուականի օգոստոսի 1(14)-ին առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական զօրքերի գլխաւոր հրամանատար Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը կոչով դիմում է լեհերին, որոնք բնակւում էին Ռուսական կայսրութեան, Աւստրոյ-Հունգարիայի եւ Գերմանիայի միջեւ բաժանուած Լեհաստանի տարածքներում: Այդ կոչով ռուսական իշխանութիւնները ձգտում էին անկախութեան ձգտող լեհերին պատերազմի պայմաններում գրաւել իրենց կողմը:

Ինձ ընդունում է նախ հերթական սպան, ապա պետը՝ գեներալ Զաբելինը[1], որ մի առողջակազմ, բարի ու գործնական մարդ է երեւում: Սա մի քանի անգամ եղել է Կովկասում, լաւ ճանաչում է հայերին: Ինձ ծանօթացնում է իր ստորադրեալների հետ: Բոլորն էլ զինուորականներ, որոնք հրաշալի տպաւորութիւն են թողնում: Սրանք՝ ուր, մեր կողմերի կոպիտ, օտարատեաց նահանգապետերը, գաւառապետերը, պրիստաւներն ու դիրեկտորներն՝ ուր: Կարծես նոյն ցեղից չլինեն:

Ճաշի ժամ է: Բոլորս հրաւիրւում ենք սեղանատուն: Ներկայ է նաեւ Զաբելինը: Ճաշը՝ երկու տեսակից, մաքուր է, համեստ ու սննդարար: Բոլորի հետաքրքրութեան առարկան Կովկասեան ճակատն ու կովկասցիների տրամադրութիւնն է: Բաւարարում եմ՝ որքան եւ ինչպէս կարողանում եմ: Երեկոյեան դէմ ինձ մօտ եկաւ մի զինուոր՝ Դանիէլ անունով: Նշանակուած էր ինձ մօտ ծառայելու՝ որպէս դենշչիկ[2]: Զինուոր է եղել դեռ Ռուս-Եապոնական պատերազմի ժամանակ:

Վաղուանից յիշատակարանս օրագրի ձեւ կը ստանայ:

2.

Նոյեմբերի 4-ին. օրուայ մեծ մասն անց եմ կացնում հիւանդանոցներում, որոնք ըստ մեծի մասին տեղաւորուած են դպրոցներում: Հիւանդանոցների են վերածուած համարեա բոլոր դպրոցները: Դա էլ պատերազմի հետեւանքներից մէկը:

Հայ զինուորներ եմ փնտռում: Գնում եմ նախկին տղայոց գիմնազիան: Ասել էին, որ այդտեղ կովկասցի զինուորներ կան: Ճիշտ որ, մի չեչէն եւ մի ռուս զինուորական էին այդտեղ: Օտարութեան մէջ մենք՝ իրար անծանօթներս, հին բարեկամների պէս ենք հանդիպում՝ սիրով ու կարօտով: Կրօնն ու ազգութիւնը լռում են, խօսում է մարդը: Կովկասի մասին են հարցնում սրանք: Նոյն հիւանդանոցի 7-րդ բարակում Տփխիսից եկած մի հրէայ զինուորի եմ պատահում: Հայախօս է: Խե՜ղճ տղայ, ուրախութիւնից արտասուեց: Այստեղ էր նաեւ Քիշինեւցի մի հայ բժիշկ՝ Բարխուդարեան ազգանունով: Հայերէն չգիտէր: Իբրեւ գթութեան քոյր աշխատում է այստեղ Թիֆլիզից եկած մի շատ համակրելի հայ աղջիկ՝ Մարտիրոսեան ազգանունով: Մի քանի այլ բարակներ եւս մտայ, խօսեցի շատ վիրաւորների հետ՝ մեծ մասը ռուսներ: Բոլորն էլ տանջուած են, յոգնած, եւ անիծում են այս անմիտ ու աննպատակ պատերազմը: *За что?, для кого?* – լսում ես ամէնքի բերանից:

Նոյեմբերի 5-ին. առաւօտեան թէյը նոր էինք վերջացրել. խօսում էի Դանիէլիս հետ, որ մի կողմից սեղանն էր ժողովում, միւս կողմից Ռուս-Եապոնական պատերազմից պատմում, գեներալ Ստեսսելին[1] անիծում – *жуликъ, обманщикъ*[2]!: Մին էլ յանկարծ մի սոսկալի դղրդիւն ցնցեց մեր հիւրանոցը, ողջ քաղաքը: Երկինքը՞ փլեց, թէ՞ Սանդարամետը[3] պայթեց: Մենք իրար հետեւից դուրս թռանք՝ նախ Դանիէլն, ապա ես: Ամէն կողմից քաղաքի ազգաբնակութիւնը սարսափահար դուրս է թափւում: Կանանց ու երեխաների սուգն ու շիւանը իրար են խառնուել: Ամէնքը դէպի ամրոցն են նայում, որ քաղաքից երեք վերստի[4] վրայ է եւ Ռուսաստանի արեւմտեան ամենաամուր բերդերից մէկն է: Նա ամբողջովին կորած է ծուխ ու փոշու մէջ:

– Թշնամին ափրոպլանից[5] ռումբ նետեց,– լսում է ամէն կողմից:

---

[1] Ալեքսանդր Զաբելին (1856-1933) - ռուսական բանակի գեներալ, եղել է ռազմաուսումնական հաստատութիւնների վարչութեան ղեկավարը, առաջին աշխարհամարտի սկզբում նշանակուել է Հարաւ-արեւմտեան ռազմաճակատի մատակարարման պետ, այնուհետեւ, կարճ ժամանակ անց, վերադարձել է իր նախկին պաշտօնին:

[2] Դենշչիկ - մինչ 1917 թուականը ռուսական բանակում սպաներին կամ բարձրաստիճան չինովնիկներին կցուած զինուոր՝ անձնական սպասարկման համար, որը վարձատրւում էր պետական միջոցների հաշուին:

[1] Անատոլի Միխայլովիչ Ստեսսել (1848-1915) - ռուսական բանակի գեներալ-լէյտենանտ, որը ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ եղել է Պորտ-Արտուր ամրոցի պարէտը, որը երկարատեւ պաշարումից յետոյ յանձնուել է ճապոնացիներին:

[2] *Жуликъ, обманщикъ* - խարդախ, խաբեբայ:

[3] *Սանդարամետ* - դժոխք, գեհէն:

[4] Վերստ - երկարութեան ռուսական հին չափի միաւոր, որը հաւասար է 1,06 կմ:

[5] 19-րդ դարի վերջերից-20-րդ դարի սկզբներից շատ երկրներ սկսեցին

Հազիւ ենք սենեակ մտնում, սկսւում է մի սոսկալի ու անկանոն թնդանօթաձգութիւն: Արդէն վիրաւորներ են կրում քաղաք: Թնդանօթաձգութիւնը շարունակւում է: Սենեակից պատերը ճեղքուածքներ են տալիս, գետինը դողում, ամէն կողմից պատուհանների ապակիներ է, որ ջարդուելով՝ փողոց են թափւում: Դանիէլը շուարած՝ անվերջ խաչակնքում է: Այլեւս սենեակում մնալը վտանգաւոր է: Գնում եմ շտաբ՝ եղելութիւնն իմանալու: Աւելի շուտ վախի զգացումն է, որ ինձ համեմատաբար ապահով տեղ է մղում: Ճանապարհին լեղապատառ խմբեր են, որ տան եղած-չեղածը շալակած, երեխաների թաթերից բռնած, դէպի շրջակայ գիւղերն են շտապում: Շտաբում եւս ապշած, շուարած են եւ ոչինչ չգիտեն, թէպէտ ամէն կերպ աշխատում են սառնասիրտ երեւալ: Ես այստեղ ինձ աւելի ապահով եմ զգում:

Վերջապէս ցերեկը ժամը 3-ին հեռախօսագիր ստացուեց, թէ ամրոցի քիմիական լաբորատորիան է պայթել, որից սկսել են պայթել նաեւ ռազմաճակատ ուղարկելու պատրաստած մի քանի հազար ռումբերն ու մեծաքանակ փամփուշտները: Յայտնում են նաեւ, թէ մի քանի հարիւր մարդկային զոհեր կան, որոնց թւում՝ 15 սպայ: Այս բանում եւս ուզում են անպատճառ մի «մատնիչ» հրէայի կամ անձնազոհ գերմանացու մատ տեսնել:

— Եթէ կրակը վառօդապահեստ հասնի,— ահաբեկուած յայտարարում է արտիլերիական գեներալը,— ամրոցի հետ քաղաքն էլ կը չքանայ երկրի երեսից: Սարսափը պատում է ինձ: Այս տողերը գրելիս ցերեկուայ ժամի 4-ն է, բայց դեռ պայթիւնները շարունակւում են: Յայտնում են, որ նման պայթիւն տեղի է ունեցել Կրակովում՝ երեք տարի առաջ:

Նոյեմբերի 6-ին. ամբողջ գիշերը պայթիւնները շարունակւում են. առաւօտուայ դէմ հատ ու կենտ դարձան, իսկ կէս օրին մօտ իսպառ դադարեցին: Ժամի ուղիղ 3-ին կարմիր-խաչի գլխաւոր լիազօր շտաբելմեյստեր Վէսմանի հետ աւտոյով ամրոց եմ գնում՝ ամէն ինչ աչքով տեսնելու: Մենք առաջին այցելուն ենք:

Մօտեցանք ամրոցի մեծ դռանն ու ներս մտանք: Ձախ կողմում մեր առաջ մի հրապարակ բացուեց, մի սոսկալի, մի դժոխք հրապարակ, որ ինձ նման անսովոր մարդուն միայն սոսկում ու սարսուռ կարող էր ազդել: Աջ ու ձախ, երբեմն հատ-հատ, երբեմն կոյտ-կոյտ թափուած են սնարեաղները[1]՝ ամբողջ, կոտրտուած, փշրուած: Ամբողջ գեղեցիկ ծառաստանը ջարդուած է, փշրուած, խանձուած, ճղնակոտոր: Կարծես սարսափելի կարկուտից յետոյ ենք անտառ մտել: Մեծ ու փոքր կամուրջների ամրակուռ երկաթէ կապանները, ձողերը տաշեղի պէս ծալուել, մի կողմ են նետուել...

Որքան աւելի ենք մօտենում պայթիւնի տեղին, տեսարանն այնքան աւելի է սարսռեցուցիչ դառնում: Կարծես տարերային մի ոյժ է այստեղ այնպիսի աւեր գործել, որից միայն կարկամել, քարանալ կարելի է: Հսկայական եւ ըստ երեւոյթին ամրակուռ սրահից միայն խղճուկ մնացորդներ են երեւում: Շինութեան տախտակէ մասից այստեղ-այնտեղ տաշեղներ են երեւում: Հարիւրաւոր, գուցէ եւ աւելի թնդանօթատար սայլերից անիւներ են մնացել՝ ըստ մեծի մասին ջարդուած ու կոտրատուած: Գլխաւոր պայթիւնի տեղում մի հսկայական ձագար է գոյացել՝ մօտ 5 արշին[2] խորութեամբ եւ 6-7 արշին տրամագծով:

Սակայն, ամէնից սոսկալին մարդկային մսակոյտերն են՝ այստեղ այնտեղ հասիլով ծածկած: Ահ ու դողով մօտենում ու կոյտերից մէկի հասիլը հետ եմ քաշում.— Ա՛հ, երանի չմօտենայի՝ սեւացած, խանձուած դիակներ, մի թեւ, մի ոտ, կողի կտոր, ջարդուած գանգեր, կոնք, ծնօտ, շատերի վրայ արիւնը սառած:

ծեւաւորել ռազմական օդուժ, որ լայնօրէն կիրառուեց նաեւ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Առաջինը սկսեցին օգտագործուել օդապարիկներ, աէրոստատներ, աէրոպլաններ, դիրիժաբլներ, այնուհետեւ նաեւ ռազմական ինքնաթիռների առաջին նմուշները:

[1] Սնարեաղ - արկ:

[2] Արշին - երկարութեան միաւոր, որը գործածութեան մէջ է եղել մինչեւ մետրական համակարգի ընդունումը: Տարբեր երկրներում արշինի չափը տարբեր է եղել՝ տատանուելով 65,2-112 սմ սահմաններում: Օրինակ, Ռուսաստանում 1 արշինը հաւասար էր 71,12 սանտիմետրի:

— Այստեղի բանուորուհիներն են, մօտ 400 հոգի, այսօր ամբողջ օրը կրում են,— ասում է պահապան զինուորը:

Գալիս է նաեւ Վենսմանը, որ գնացել էր կոմենդանտի մօտ: Սա էլ պատմում է, թէ երեկ, աղէտի առաջին օրը, պայթիւնների տակ մի խումբ գթութեան քոյրեր այստեղ վիրաւորների վէրքեր են եղել կապելիս: Քաղաքի հիւանդանոցներից են իրենց այստեղ գցել:

— Այս բոպէիս կերթամ եւ թագաւոր-կայսեր առաջ կը միջնորդեմ, որ սրանք Գէորգեւսկի խաչերով[1] պարգեւատրուեն. կը միջնորդեմ հեռագրով:

Այս մարդն ինձ բնաւ դուր չեկաւ:

Իմացայ, որ երեկ մի հայ եւս վիրաւորուել է եւ այժմ գտնւում է ա. հիւանդանոցում: Գնում եմ այնտեղ: Ճանապարհին վիրաւոր այրուած ու խանձուած ծառերի վրայ դեռ մարդկային փորոտիք, մարմնամասեր են երեւում...

Ճիշտ որ՝ ա. հիւանդանոցում պառկած էր Հին-Նախիջեւանցի (Մեսրոբակերտից) Դաստագիւլ Սամուէլեանի որդի Եղիան՝ 22 տարեկան, առաջին տարուայ զինուոր: Միամիտ կանգնած է եղել, գնդակը ծնկից ցած տարել է: Խնդրեց իմացնել իր Սմբատ եղբօրը: Իսկոյն նստայ ու գրեցի:

Պաշտօնական տուեալներով սպանուածների թիւը 600-ից անց է, ուրիշները հազարներով են հաշւում՝ մեծ մասը կանայք՝ եկած շրջակայ գիւղերից:

Երեկոյեան քաղաք եմ վերադառնում՝ ծանր գլխով ու հոգով:

3.

Նոյեմբերի 7-ին. այսօր անցկացրի հիւանդանոցներ շրջելով: Տեսածներից մէկն էր նաեւ Բայազէտցի Արմէնակը, որ զօրակոչուելուց առաջ Ստաւրոպոլում Լուսանկարչութեամբ է եղել պարապելիս: Սա բաւական կարդացած երիտասարդ էր եւ ինձ հետեւեալը պատմեց.

[1] Գէորգեւեան խաչ - Ռուսական կայսերական բանակի զինուորական պարգեւներից մէկը, որով հիմնականում պարգեւատրուել են ենթասպաներն ու շարքային զինուորները: Այն ունեցել է չորս աստիճան:

— Եղայ Լուովում, Պրժեմիշլում, մասնակցեցի 10-ից աւելի կռիւների: Սեպտեմբերի վերջերին մեզ հրամայեցին Իւանգորոդ դառնալ՝ հանգստանալու: Ուրախացանք. երկու ամիս շարունակ կռիւներից աչք չէինք բացել. շատ էինք յոգնել: Սակայն Իւանգորոդ հասնելուն պէս հրաման ստացանք Վիսլան անցնել: Միւս ափում թշնամին էր: Ո՜Յ... գերմանացոց հետ կռուելը շատ է դժուար: Այլ են աւստրիացիք: Լուովի մօտ մեր գնդի մի վաշտ կարողացաւ մօտ հազար աւստրիացի գերել, առանց մի գնդակ արձակելու: Գետն անցնելու համար մի շոգենաւ միայն ունէինք: Մի կերպ, հերթէ հերթ անցանք եւ դիրքեր շինելով ամրացանք: Սկսուեց հրացանաձգութիւնը, զուգընթաց էլ՝ մի սոսկալի անձրեւ: Երեք օր դիրքերից գլուխ հանել չկարողացանք: Ամբողջովին ջուր էինք, ջրի մէջ նստած: Վաշտի հրամանատարը, կապիտան Բոյկոն վախկոտի մէկը լինելով, շարունակ այստեղ-այնտեղ էր մտնում: Նրա այս տրամադրութիւնը մեզ էլ փոխանցուաւ, սկսեցինք վախենալ: Յանկարծ առաջին շարքի զինուորներից մէկը, չգիտեմ որտեղից առած, յայտնեց, որ պիտի նահանջենք: Մեզ էլ հէնց այդ էր պակաս. սկսեցինք փախչել: Չգիտեմ՝ ինչ կը լինէր վերջներս, եթէ յանկարծ առաջներս չգար դիւիզիայի պետը.

— Ո՞ւր էք փախչում,— կանչեց նա,— դուք արատաւորում էք ռուսական անունը, դեռ ոչ մի ռուս զինուոր ձեզ պէս չի վարուել. հետ դարձէք եւ մի անպատուէք ձեզ:

Սիրտ առանք ու հետ դարձանք: Մօտ մի ժամ կռուելուց յետոյ, տեսնենք գերմանացիք փախչում են: Վրայ տուինք: Շուտով գիւղը, որ նրանց ձեռքումն էր, մեր ձեռքն անցաւ: Այստեղ էլ ես ձեռքիցս վիրաւորուեցի, համոզուած եմ՝ մերոնց գնդակներից: Այսպիսի դէպքեր շատ են պատահում: Լուովի մօտ մեր երկու գնդերը քիչ էր մնում իրար ոչնչացնէին:

Կռիւը վերջացաւ մեր կատարեալ յաղթութեամբ, գերմանացոց պարտութեամբ ու փախուստով: Սակայն մեր գունդը 1700 հոգի կորցրեց՝ մեռած ու վիրաւոր: Այս կռիւը տեղի

ունեցաւ սեպտեմբերի 26-ից մինչեւ հոկտեմբերի 2-ը: Այժմ ես առողջանալու վրայ եմ եւ կերեւի շուտով դիրքեր կուղարկուեմ: Մտադիր եմ խնդրել, որ ինձ կովկասեան ճակատ փոխադրեն:

Այդպէս էլ եղաւ:

4.

Նոյեմբերի 8-9-ին. մեկնում եմ դ. զօրաբանակ (армия), ուր կովկասեան մասերն են ընկած: Բայց նախ պիտի Խօլմ գնամ՝ ներկայանալու Հարաւ-արեւմտեան ճակատի հրամանատար գեներալ Իւանովին[1], որն Ռուս-Եապոնական պատերազմի ժամանակ հերոսի անուն էր ձեռք բերել: 9-ին ցերեկուայ ժամը 4-ին Խօլմ հասայ: Կայարանից քաղաք գնալիս ինձ մի նոր եկեղեցի ցոյց տուին, որ կառուցւում էր Խօլմի նահանգը Ռուսաստանին միացնելու յիշատակին: Զարմանալի կառավարութիւն... կարծես իր հպատակներին միայն վիրաւորելու մասին է մտածում: Ակամայ յիշեցի Էջմիածնի քթի տակ ու Իգդիրում ռուսական եկեղեցիներ չինելու պատմութիւնը եւ հայերի յամառ դիմադրութիւնը:

Նահանգական քաղաք է Խօլմը, կեղտոտ եւ ծուռ ու մուռ փողոցներով, ընկած մի բլրի վրայ: Այստեղ է Իւանովի կայանը: Շտաբը տեղաւորուած է կաթոլիկաց եկեղեցուն կից գիմնազիայում: Այստեղ եւս դպրոցները փակ են:

Հերթական գեներալի սենեակումն եմ: Մի քանի րոպէից յետոյ դուրս է գալիս ինքը Իւանովը: Մինչ այդ ես դիտում եմ շուրջս. համեստ կահաւորութիւն, մի հասարակ փայտէ սեղան, մի քանի նոյնպիսի աթոռներ, պատին Պրժեմիշլի յատակագիծ-քարտէզը:

Ահա եւ Իւանովը— կարճահասակ, մեծ մօրուքով, ակնոցների տակից երեւում են նրա սուր ու մանրիկ աչքերը: Ներկայանում եմ:

[1] Նիկոլայ Իւանով (1851-1919) - ռուսական բանակի գեներալ, մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին, առաջին աշխարհամարտի տարիներին՝ 1914-1916 թուականներին, եղել է Հարաւ-արեւմտեան ճակատի հրամանատարը:

— Շատ ուրախ եմ,— պատասխանում է նա քաղաքավարի կերպով. ցանկանում եմ Ձեզ կատարեալ յաջողութիւն. կովկասցիներից, յատկապէս հայ զինուորներից ես շատ գոհ եմ: Իսկոյն կը կարգադրեմ, որ Ձեզ ամէն տեսակ դիւրութիւն տրուի. այժմ ինձ ներեցէք, շատ եմ զբաղուած:

Մենք բաժանուեցինք: Զարմացած էի այն պարզութեամբ ու գործնականութեամբ, որ նկատեցի Իւանովի շտաբում. ամէն ինչ արագ էր ու կտրուկ:

Հերթական գեներալից իմացայ դ. զօրաբանակի տեղի ու նրան հասնելու ճանապարհը: Վերադարձայ կայարան: Պարզուեց, որ գիշերն այդտեղ եմ մնալու: Մինչեւ լոյս զինուորական գնացքներ էին, որ գալիս անցնում էին: Զինուորներն ուրախ են, աշխոյժ ու հանգիստ: Շարունակ երգում, պարում, զուարճանում են. բայց այդ բոլորի մէջ տխուր շեշտ ու թախիծ էլ կայ:

5.

Նոյեմբերի 11-ին. առաւօտեան ժամի 11-ին ճանապարհւում եմ դէպի Իւանգորոդ: Ճանապարհս Լիւբլինի վրայով է: Պատերազմը յայտարարելուն պէս աւստրիացիք մինչեւ այստեղ են հասել: Տրաւնիկ ու Կրասնիկ կայարանների մօտ մեծ կռիւներ են տեղի ունեցել: Այդ բոլորին լուռ վկաներ մնացել են քանդուած ու այրուած տներ, պատերի մնացորդներ: Այստեղ ռուսները ոչ միայն կանգնեցրել են հակառակորդի առաջխաղացումը, այլեւ փառաւոր ջարդ տալով՝ յետ են մղել նրան:

Երեկոյեան հասայ Իւանգորոդ, ուր եւ գիշերեցի:

Նոյեմբերի 12-ին. առաւօտեան վաղ ճանապարհուեցի Իւանգորոդ ամրոցը, որ համանուն կայարանից երկու վերստի վրայ է: Ինձ ընկերացաւ մի գիւղական վարժուհի՝ Բադոմի շրջանից. Օդեսայից էր, չքաւոր ռուս ընտանիքից: Դպրոցը փակուել է, տուն է վերադառնում՝ տանջուելով այն մտքից, թէ ինչո՞վ է ապրեցնելու պառաւ մօրը: Լիւբլինի, Կելեցի, Բադոմի, Խօլմի ու Վարշաւայի նահանգների բոլոր

դպրոցները փակ են, շէնքերը գրաւուած, ուսուցիչների մեծ մասը զօրակոչուած:

Ամրոցում, որի կոմենդանտը նոյնպէս գերմանական ծագում ունի, ինչպէս եւ Բրեստինը, ինձ շատ սիրալիր կերպով ընդունեց միակ հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Լազինսկին, որ հետս պտտեց բոլոր բարակները: Ինձ շատ զարմացրեց ամրոցի հսկողութեան կատարեալ թուլութիւնը. ո՞վ եւ ե՞րբ ուզի, կարող է մտնել եւ դուրս գալ: Չեմ զարմանալ, եթէ մի օր էլ այստեղի պայթիւնի մասին լսեմ:

Վիսլան այստեղ շատ է խաղաղ, լայն ու գեղեցիկ:

Վերադառնալով կայարան, իմացայ, որ ապրանքատար գնացք է մեկնում դէպի Կելեց՝ ռազմամթերքով: Ուրիշ գնացքներ չկան: Դիմեցի գլխաւորին, որ մի երիտասարդ, համալսարանաւարտ ազատամիտ սպայ էր: Նա հէնց իր վագոնում տեղ տուաւ ինձ:

Ճանապարհը դէպի Կելեց միանգամայն ուկրայինական է.— ընդարձակ տափարակ, մեծ մասն անտառածածկ, շուրջը լեհական ու ուկրայինական գիւղեր, արգաւանդ դաշտեր: Հեռուից երեւում են Կարպատների փէշերը:. Կանգ ենք առնում Գարբատկա կայարանում, որտեղ շատ տաք կռիւներ են տեղի ունեցել: Ռուսների դէմ ճակատած են եղել աւստրիացիք՝ գերմանական թագաժառանգի գլխաւորութեամբ: Մերոնք մեծ դժուարութեամբ են հանել հակառակորդին դիրքերից. նա նահանջելիս այրել է կայարանը ու պայթեցրել ջրամբարը: Լրագրերում կարդացել էի, թէ նա այստեղից շատ աղջիկներ էլ է տարել հետը, սակայն իմ հետաքրքրութիւնը ու բազմաթիւ հարց ու փորձը գիւղացիներից այդ չհաստատեցին: Զափազանց զուսպ ու կարգին են եղել, մանաւանդ գերմանացիք:

Նոյեմբերի 13-ին. հասնում ենք Սկարժիսկոյ՝ Իւանգորոդից 90 վերստ հեռու: Մեծ կայարան է: Հանգոյցային (*узловая*), բայց ամբողջապէս այրուած, արհեստանոցները, դէպոներն ու ռելսերը[1] պայթեցրած: Այստեղ գերմանացիք

[1] Ռելսեր - երկաթգծեր:

են եղել, որոնք դուրս են քշուել հոկտեմբերի 17-ին: Գնում եմ գիւղը՝ տեղեկութիւններ ժողովելու հակառակորդի վերաբերմունքի մասին: Մտնում եմ մի խանութ, որ գերմանացոց ժամանակը բեստորան է եղել, խօսեցնում եմ շատ գիւղացիների: Պարզւում է, որ գերմանացիք առանց վճարելու ոչինչ չեն վերցրել, բայց տարել են ամէն ինչ:

Այստեղից մինչեւ Կելեց՝ 25 վերստ,ամբողջ ճանապարհը աւերուած է, կամուրջներն ու ռելսերը պայթեցրած, հեռագիրը ոչնչացրած: Աջ ու ձախ թափուած են կտրտած հեռագրասիւներ, կուտակուած հեռագրալարեր, պիրոկսիլինով[1] փշրած կամուրջներ ու ռելսեր... Թշնամին ոչինչ չի խնայել՝ իր նահանջը դիւրացնելու եւ հակառակորդի առաջխաղացումը ձախողելու համար: Ամէն ինչ նորոգւում է ռուսական դանդաղկոտութեամբ: Ամբողջ ճանապարհը բռնուած է զօրք, ռազմամթերք ու վիրաւորներ տեղափոխող գնացքներով, որոնք առաջ են շարժւում մեծ զգուշութեամբ ու դանդաղութեամբ: Երկաթուղու պակասը լրացնում են աւտոմոբիլային վաշտերը: Բայց ի՞նչ են այս բոլորը եղած հսկայական պահանջի հանդէպ: Նոր ես տեսնում մեր երկաթուղացանցի խղճուկ լինելը:

Նոյեմբերի 14-ին. առաւօտեան 9-ին Կելեցումն եմ: Ապշել կարելի է: Անթիւ, անհամար վիրաւորներ թափուած են պլատֆորմի վրայ: Գթութեան քոյրերը զբաղուած դէմքերով աջ ու ձախ են վազվզում: Վիրաւորների սիրտ կտրտող հառաչանքից բացի ոչինչ չի լսւում. միայն զինուորականներ են. կատարեալ զօրանոց է. կատարեալ ռազմադաշտն ես զգում այստեղ: Դատարկուող գնացքները անմիջապէս լցւում են վիրաւորներով: Տեսնելով այս բոլորը՝ ես իմ հոգու ամբողջ ուժով անիծում եմ պատերազմն էլ, նրա սկզբնապատճառներին էլ: Ե՞րբ պիտի վերանայ մարդկութեան այս պատուհասը:

[1] Պիրոկսիլին - քիմիական նիւթ, որն օգտագործուել է հրետանային արկերի մէջ ուժեղ պայթիւն ստանալու համար:

6.

Կառք եմ վերցնում ու շտապում քաղաք, կոմենդանտի մօտ: Գորեցի հայ էր՝ Նազարբեկեան ազգանունով: Սա ինձ տեղ տուաւ հէնց իր բնակարանում: Մի փոքր հանգստանալուց յետոյ, գնում եմ շրջելու քաղաքի 7 հիւանդանոցները: Ինձ ցոյց են տալիս այն կամուրջը, ուր մի քանի օր առաջ 7 հրէաներ են կախուել՝ իբր թէ լրտեսութեան համար: Քաղաքում հանդիպեցի իմ դպրոցական ընկեր Ալեքսանդր Մելիքեանին, որ Թ. զօրաբանակի գլխաւոր ինտենդանտի[1] պաշտօն ունէր:

Այդ գիշեր մնացի Նազարբեկեանի մօտ: Գիշերուայ ժամը 11-ին 3000 գերիներ բերուեցին, որոնցից 30 սպայ՝ աւստրիացիներ ու գերմանացիներ: Այս երկու ցեղերը միասին լինել չէին ուզում: Այս հանգամանքն ինձ եւ զարմացրեց եւ հետաքրքրեց, բայց պարզել չկարողացայ: Նազարբեկեանը հարց ու փորձեց ու ցուցակագրեց նախ աւստրիացի, ապա գերմանացի սպաներին: Նա դարձաւ գերմանացիներին.

— Շատ էք յոգնած. կարեկցում եմ ձեզ.

— Վերջացրէք ձեր պաշտօնական անելիքը,— առանձին հպարտութեամբ պատասխանեց գերմանացիներից մէկը,— եւ ցոյց տուէք, թէ ուր պիտի գնանք:

Խօսում էր իւնկերական Գերմանիան, որ դէպի ռուսն ու ռուսականը արհամարհանքից բացի ուրիշ ոչինչ չէր զգում:

Նոյեմբերի 16-ին. առաջին հոգսս է՝ գտնել ինձ հետաքրքրող Կովկասեան զօրամասը, որ այստեղից 85 վերստի վրայ է: Այս բանում ինձ շատ օգնեց Նազարբեկեանը: Բաւական դժուարութիւններից յետոյ իրերս եւ դենշչիկիս ուղարկեցի ապրանքատար աւտոմոբիլով, իսկ ինքս գնացի մարդատարով: Մեր առաջիկայ իջեւանը Նագլովիցէ գիւղն է՝ 49 վերստի վրայ: Ամբողջ ճանապարհը հիանալի խճուղի է՝ եզրաւորուած եղեւնիներով, ֆիջիներով: Ժամի 8-ին հասայ Նագլովիցէ, ուր սպասում էր Դանիէլս եւ իջեւանեցի էտապի[2] կոմենդանտ Լ. Պ. Վասիլեւսկու մօտ, որ մի պատուական երիտասարդ էր՝ Բագւում ծառայած: Սա ապրում էր մի լեհ ընտանիքում: Այդ ընտանիքը ունէր երկու սենեակ, որոնցից մէկը յատկացրել էր Վասիլեւսկուն, իսկ միւսում ինքը՝ 10 ռուս զինուորների հետ մէկ տեղ: Կարճ հանգստից յետոյ փողոցներն ընկայ՝ հիւանդանոցները այցելելու: Նոր էի սենեակ դարձել, երբ սենեակ մտաւ տեղի գլխաւոր բժիշկը եւ յայտնեց, թէ ճակատից հէնց նոր 300 վիրաւորներ են բերուել, որոնց տեղաւորելու համար հիւանդանոցներում ոչ մի ազատ անկիւն չկայ: Կոմենդանտը մոլորուեց ու բժշկի հետ դուրս եկաւ տեղ փնտրելու, ես էլ ընկերացայ:

Այն, ինչ որ տեսայ, կուզէի երբէք չտեսնել: Գիւղի ամենամեծ փողոցը լցուած էր լեհական ֆուրմանկաներով[1]՝ 2-ական վիրաւորներով: Մինը կանչում է. «վայ, մեռայ, ոտս», միւսը թէ՝ «Աստուած, հոգիս առ, ես ցաւին չեմ կարող դիմանալ», երրորդը՝ «այրուեցի, փորս»: Մէկ էլ մեզ են մօտենում ֆուրմանկաների տէրերից ոմանք,— «մեր հիւանդը մեռնում է», «մեր հիւանդը մեռաւ» եւ այլ նման յայտարարութիւններով: Խե՛ղճ բժիշկ, գլուխը կորցրած, չգիտէ ինչ անի: Ոչ մի ազատ տեղ չգտնելով, կոմենդանտը հրամայեց, որ բնակարաններում տեղաւորուած զօրամասերը՝ դաշտ դուրս գան գիշերելու, իսկ իրենց տեղերը վիրաւորներին զիջեն: Սա միակ ելքն էր:

7.

Նագլաւիցին առաջին լեհական գիւղն էր, որը տեսնում էի մօտիկից: Մօտ 100 տուն բնակիչ ունէր. կոկիկ է ու մաքուր: Տները համարեայ բոլորն էլ ընկած են ճանապարհի երկարութեամբ՝ ճիշտ այնպէս, ինչպէս Շուէդիայում, Դանիայում, Հոլանդիայում, Նորուէգիայում եւ այլն: Բնակարանները մաքուր են, անհրաժեշտ յարմարութիւններով: Սենեակների յատակները ամէնուրեք տախտակ, պատերն սպիտակացրած, պատուհաններն աւելի մեծ, քան Ուկրայինայում: Սեղան, աթոռ, մահճակալ, պահարան, ափսէներ, սալֆետ[2], բաժակ,

---

[1] Ինտենդանտ - բանակի մատակարար:

[2] Էտապ - այստեղ՝ զօրահանգրուան:

[1] Ֆուրմանկա - փոքրիկ ֆուրգուն, կառք:

[2] Սալֆետ - անձեռոցիկ:

դանակ, սամովար — անհրաժեշտություն ու պահանջ են լեհ գիւղացու համար: Անկողինները մաքուր են, սաւաններով ու փափուկ բարձերով: Ներսում պլիտայ: Անկիւններից մէկը լիքն է սրբերի պատկերներով՝ առաւելապէս Տիրամօր: Այդ իկոնները շատ են տարածուած նոյնիսկ դաշտերում՝ ճանապարհների խաչաձեւման կէտերում: Լեհը, մանաւանդ գիւղացին, շատ է կրօնաւոր ու մոլեռանդ: Կաթոլիկ հոգեւորականութիւնն ըստ ամենայնի իր ճիրաններում է պահում նրան:

Ժողովուրդը հագնւում է բաւական մաքուր ու գեղեցիկ, մանաւանդ ջահելները, որ բաւական ազատ են պահում իրենց: Սրանք օտարներից քաշուել ու կուչ ու ձիգ անել չգիտեն: Խիստ ընդունուած է հասակաւորների ձեռքը համբուրելը:

Ուտում են լաւ: Սագ ու կարտոֆիլ շատ են սիրում: Տաք կերակուր ամէն օր ու ամէնքն ունեն:

Նոյեմբերի 16-ին. այսօր մօտ երկու ժամ էլ գիւղն ու հիւանդանոցները շրջագայելուց յետոյ, ժամի 9-ին շարունակում եմ ճանապարհս՝ այս անգամ արդէն ֆուրմանկայով: Օրն ամպոտ էր, մօտակայ սարերը նօթոտ, բլուրները կորած մառախուղի մէջ: Մին էլ յանկարծ՝ գ՛ռռ, գ՛ռռ — մի խուլ որոտ: Թնդանօթներն են. առաջին անգամն եմ լսում, սարսուռ ու վախ զգացի: Ո՞ւր եմ գնում,— անցաւ մտքովս, սակայն միայն մի վայրկեան: Հետզհետէ ընտելացայ որոտին, որ գնալով սաստկանում էր:

Ճանապարհը լիքն էր բացառապէս զինուորներով: Կարծես մեծ քաղաքի մեծ բանուկ փողոց լինի՝ առանց կանանց ու երեխաների, եթէ չհաշուենք գթութեան քոյրերին, որոնք այնքա՜ն շատ են:

Գնում ու գնում են՝ ամէն տեսակ աւտոմոբիլներ, սայլեր, ֆուրմանկաներ, հետեւակ ու հեծեալ զօրքեր, ու զօրքեր... Երբեմն էլ դիմացներս են գալիս կապտաւուն վերարկուներով աւստրիական գերիներ՝ յոգնած, դանդաղ:

Վրաս ճնշող տպաւորութիւն թողեց մի ռուս զինուոր, որ ճանապարհի եզրին նստած, ծոյլ-ծոյլ մի բան էր ծամում:

— Բարեւ, հայրենակից,— ասում եմ.

— Բարեւ,— բոլորովին անտարբեր կերպով պատասխանում է նա.

— Ինչո՞ւ ես մենակ, եւ ո՞ւր ես գնում:

— Գնում եմ մեռնելու, այդպէս է հրամայուած.

— Ի՞նչպէս.

— Հէնց այնպէս, վիրաւորուած էի, մի ամիս պառկեցի, իբր թէ բժշկուեցի, հիմա էլ հրամայել են, որ գնամ մեռնեմ, ինչու՝ չգիտեմ, պատերազմ է: Ես էլ գնում եմ իմ զօրամասս գտնելու, որից յետոյ երեւի մի տեղ կը սպանուեմ, այս աշխարհից կազատուեմ:

Աշխարհը նրա համար մութն էր, կեանքը՝ դժոխք: Իմ մխիթարանքին ու քաջալերանքին, նա միայն մի պատասխան տուաւ.

— Միեւնոյն է, մեր կեանքն էլ մի բան չի, ես մահից չեմ վախենում, ցաւում եմ միայն կնոջս ու երեխաներիս համար, անտէր կը մնան...

Ժամի երկուսին հասայ Շչեկոտինոյ: Այստեղ լեհերի հետ հրէաներ էլ են ապրում: Մօտ երկու ժամ մնացի. 100-ի չափ զինուորներ կան, Ղարաբաղից, Երեւանից, մի հոգի էլ Դիլիջանից — այստեղ են Գ. զօրամասի (корпусъ) հացթուխարանները, ուր գլխաւորապէս հայեր են ծառայում: Իմ գալու լուրը կայծակի արագութեամբ տարածուեց: Իսկոյն շրջապատուեցի համաերկրացիներով, որոնք հարցեր է, որ թափում էին գլխիս: Հետաքրքրողը Կովկասեան ճակատն էր: Այստեղ երկար մնալը ծրագրիս մէջ չէր մտնում: Երկու ժամից յետոյ, ճանապարհս շարունակեցի, խոստանալով վերադարձիս մնալ:

Թնդանօթները շարունակում են որոտալ. սայլերը ճռնչում, մարդիկ քայլում են՝ լուռ, գլխակոր, յոգնած, մտազբաղ. վի՜շտ, վի՜շտ, վի՜շտ՝ անսահման ու անփարատ...

8.

Տասնուչորս վերստ գնալուց յետոյ, երեկոյեան ժամի 6-ին հասայ Պրաղլոյ՝ գ. զօրամասի շտաբը, որ տեղաւորուած էր մի հարուստ հրէայի կալուածում: Աւստրիական Գալիցիայումն եմ: Ինձ ընդունեց կոմենդանտը եւ մի սենեակ յատկացրեց, ուր եթէ շուն կապէին, կը սատկէր՝ այնքան ցուրտ էր: Կէս ժամ հազիւ անցած, հրաւիրուեցի սեղանատուն՝ թէյի: Սեղանատանն էլ ներկայացայ զօրամասի հրամանատար Իրմանին, որ պատերազմի սկզբից Իրմանով է դարձել:

Մենք Վլադիկավկազի ծանօթներ ենք: Նա շատ է ուրախանում եւ պատրաստակամութիւն է յայտնում «ըստ ամենայնի օգնել ինձ»:

Նստում ենք թէյի: Զրոյցի առարկան Կովկասի ճակատն է: Զէ՞ որ բոլորն էլ կովկասցիներ են: Շատ են ուզում իմանալ, թէ երկրում ի՞նչ են խօսում իրենց մասին: Խեղճերը արտաքին աշխարհից կտրուած՝ չգիտեն, թէ ի՞նչ է կատարւում դուրսը: Նրանց հետաքրքրութիւնը հիմք ունի՝ Լիւբլինի մօտ հրաշքներ են գործել, Վարշաւայի մօտ 8 օր մինչեւ գօտի Վիսլայում կանգնած են կռուել ու ռուսական զէնքի յաջողութիւնն ապահովել:

— Ձեր քաջութիւնների մասին,— ասում եմ,— ամէնքը գիտեն. ձեզ գովում է ամբողջ Ռուսաստանը. ձեզնով պարծենում է Կովկասը:

— Բայց գիտէ՞ք, որ կորպուսումս այժմ միայն 16,000 հոգի է մնացել,— հանգիստ պատասխանում է Իրմանովը,— պատերազմի հէնց առաջին օրից կռուի մէջ եմ, այժմ էլ հրաման եմ ստացել անմիջապէս դէպի հիւսիս՝ Զենստոխով մեկնել, անշուշտ դարձեալ որեւէ ծանր գործ կատարելու:

Աւստրիացիների մասին խօսելիս հրամանատարն աւելացնում է.

— Գիտէ՞ք, մեր մամուլը նրանց մասին շատ թիւր կարծիքի է. երեւի դուք եւս: Նրանք շատ յամառ ու դիմացկուն կռուողներ են եւ գերմանացիներից պակաս վտանգաւոր չեն:

— Այդ դէպքում, ընդմիջում եմ ես, ինչո՞վ բացատրել նրանց այնքան հեշտ ու մեծ քանակութեամբ գերի ընկնելը:

— Հէնց սխալն էլ դրանումն է, նրանք բնաւ հեշտութեամբ չեն գերւում: Սլաւոն տարրերն՝ այո, սակայն վենգերներն[1] ուղղակի առիւծներ են: Այ, հէնց այստեղ, մեր դիրքերում, տեղներից չարժել չեն կարողանում, իսկ երբ դրութիւնը անյուսալի է դառնում ու կռուելը՝ անմտութիւն, ի հարկէ գերի կընկնեն: Եւ դուք կարծում էք՝ միայն նրա՞նք են գերի գնում: Որքան առաջ գնաք, այնքան աւելի յաճախ կլսէք մերոնց գերի գնալու մասին, որի դէմ Ձեզ եւս կը խնդրէի՝ որքան կարելի է լռել:

Ներս մտաւ մի երիտասարդ սպայ ու յայտարարեց.—

— Պարոններ, Պետական Դումայի անդամ Պուրիշկեւիչը[2] մեզ համար մի կտոր սապոն[3] է նուէր ուղարկել:

Իմ հարց ու փորձից պարզուեց, որ այդ օտարակեր «հայրենասէրը» պատերազմի սկզբից այս երկրորդ անգամն է, ինչ այցելում է բանակները՝ նուէրներով: Զինուորների համար նոյնիսկ մի հայրենասիրական երգ էլ է յօրինել՝ լի հայհոյանքով գերմանացիների հասցէին: Այդ գոհարը ձեռքս չընկաւ:

Նոյեմբերի 17-ին. այսօր կոզակները մի գերմանական ակրոպլան գերեցին: Միջի օդաչուն ու տեխնիկը չուզելով ողջ ողջ կոզակների ձեռքն ընկնել, ատրճանակներով, յետոյ էլ «ատամներով» կռուի են բռնւում կոզակների հետ: Մենամարտը վերջանում է կոզակներից մէկի եւ երկու գերմանացիների սպանութեամբ:

— Սա դէմ է պատերազմական էթիկային,— թէյի ժամանակ ասաց ինձ Իրմանը,— ես հրամայեցի նրանց զինուորական

[1] Վենգերներ - հունգարներ:

[2] Վլադիմիր Պուրիշկեւիչ (1870-1920) - ռուս քաղաքական գործիչ, մոնարխիստ, ունեցել է պահպանողական հայեացքներ: Եղել է Պետական Դումայի անդամ: Առաջին աշխարհամարտի տարիներին իր նախաձեռնութեամբ կազմակերպել է սանիտարական գնացք, որը ղեկավարել է անձամբ:

[3] Սապոն - օճառ:

պատուով չթաղել: Մեր ձեռքն ընկնելը նրանք անպատուութիւն են համարել:

9.

Յայտնեցին, որ ամբողջ զօրամասը դիրքերից դուրս եկած հանգստանում է, իսկ երեկոյեան պիտի ճանապարհուի Զենստոխով: Յարմար առիթ էր միւսներին տեսնելու: Շտապեցի՝ Իրմանի ինձ տրամադրած աւտոմոբիլով: Գնում եմ Սակոլնիկի գիւղը, ուր Ապշերոնեան գունդն էր, որ եկել էր Վլադիկավկազից: Գիւղ մտնելուն պէս տեսայ Յովհաննէս Յովսէփեանին, որ արդէն քաջի անուն էր հանել: Զանցած 10-15 րոպէ, ինձ շրջապատում են բազմաթիւ ծանօթ զինուորականներ, որոնց թւում Կլասովսկի, Կոստիւրին, բժիշկ Ս. Մամուլեան, Խաչ. Արարատեան, բժիշկ Բալեան, Վէսելովսկի, Յովսէփեան եւ այլն: Ընդհանուր խօսակցութեան առարկան դարձեալ Կովկասեան ռազմաթիմը դարձաւ: Շաբաթներով, երբեմն էլ ամիսներով լրագրի, նամակի երես չեն տեսնում: Հարցերի հերթն ինձ հասաւ: Պատմում են իրենց գնդի քաջագործութիւններից, դիրքերի կեանքից, խրամատների զրկանքներից:

– Երբ հրացան չենք արձակում,– ասում է Յովսէփեանը,– նստած մեր վրայի միջատներն ենք քերում, կամ գոմշի նման քսւում ենք պատերին ու քարերին:

– Օրերով հացի երես չենք տեսնում,– աւելացնում է Կրասովսկին:

– Տասնուհինգ օր է՝ վրայիս կոճակները չեմ արձակել,– վրայ բերեց արտիլերիայի պետ Արարատեանը:

– Զուր են աւստրիացոց վախկոտ ու հեշտ անձնատուր եղող համարում,– պնդեց խմբի պետ Վէսելովսկին,– նրանք շատ են յամառ ու դիմացկուն, մանաւանդ՝ լաւ կռուող: Մենք տանում ենք միայն մեր թուով եւ ռուս զինուորի չարքաշութեամբ: Իմ գունդը հինգ անգամ լրացման է ենթարկուել՝ ընդամենը երեք ամսուայ ընթացքում: Կօշիկ չունենք մանաւանդ այժմ, երբ խիստ ցրտեր են, եւ զինուորները ստիպուած

են լինում 15-20 օրով խրամատներից դուրս չգալ: Շատերի ոտները բառի բուն նշանակութեամբ սառել են, չգիտեմ ի՞նչ անել:

Ակամայ շատախօս էինք դարձել: Խեղճերի սրտում այնքան բան էր կուտակուել, որ չգիտէին ինչից սկսել, ինչով վերջացնել: Երկու ժամից աւելի խօսեցինք, եւ այդ ժամերը 5 րոպէի պէս անցան:

Մեզ իմացրին, որ մնացած զինուորները դպրոցում մեզ են սպասում: Բոլորս ուղեւորուեցինք դէպի դպրոց, որ մի կոկիկ ու գեղեցիկ շէնք էր, թեք լանջի վրայ: Այստեղ ամբողջ դիւիզիայի հայերից մեզ սպասում էին ընդամէնը... վեց հոգի... մինչ դեռ միայն Ապշերոնեան գնդում ես 300 հայ զինուոր եմ ճանապարհել: Մնացածները կամ կոտորուել, կամ վիրաւորուել, կամ գերի են ընկել:

Ականջումս շարունակ հնչում են Վէսելովսկու խօսքերը, թէ «իմ գունդը 5 անգամ լրացման է ենթարկուել»:

Պէտք էր շտապել: Հակառակորդի կողմից յարձակում էր սպասուում:

Զինուորների հետ էլ մէկ ժամ անցնելուց յետոյ, նորից վերադարձայ Պրաղլոյ:

10.

Նոյեմբերի 18-ին. առաւօտեան ժամի 8-ին ճանապարհ ընկայ դէպի Շչեկոտինո՝ լեհ հայրենասէր Կոստիւշկոյի[1] ծննդավայրը, ուր սպասում են ինձ: Դիրքերը դողում են որոտից. աւտոմոբիլս սլանում է, եղանակը հրաշալի է, մերոնք նահանջի են պատրաստուում, վերում սաւառնող գերմանական օդաչուները ռուսական դիրքերն են դիտում:

Հասայ Շչեկոտինո, ուր խոլերայի մի քանի դէպքեր են տեղի ունեցել: Գնում եմ կաթոլիկների եկեղեցի՝ այնտեղ ժամերգութիւն կատարելու թոյլտուութիւն խնդրելու: Մտնում

[1] Տադէուշ Կոստիւշկոյ (1746-1817) - լեհ ռազմական, քաղաքական գործիչ, ղեկավարել է 1794 թուականի լեհական ապստամբութիւնը, մասնակցել է նաեւ Ամերիկայի անկախութեան պատերազմին:

եմ եկեղեցի ու մնում եմ զարմացած. կատարեալ հայկական չէնք՝ միջնադարեան ոճով կառուցած: Հետաքրքրւում եւ իմանում եմ, որ գիւղի բնակիչների մեծ մասը հայեր են եղել՝ Անիից գաղթած: Այս բոպէիս էլ, այդտեղ Աբրամովիչներ, Պողոսովիչներ եւ այլ հայկական ծագում ունեցող ընտանիքներ կան:

Ինչ խօսք, որ կաթոլիկ քահանան ինձ մերժեց.

– Իրաւունք չունեմ եկեղեցին հերետիկոսներին զիջելու:

Մնում էր բացօթեան, որին արդէն ընտելացել էի: Այդ բանում ինձ շատ օգնեց Գ. Ի. Շաւգուլադէէն՝ այդտեղի զօրամասի հրամանատարը: Մեր հաւաքոյթը մօտ չորս ժամ տեւեց: Ներկայ էր նաեւ Շաւգուլադէէն, որ շատ գոհ էր հայ զինուորներից:

– Մէկ-մէկ կոպտութիւն են անում,– ասում է նա,– բայց շատ են սրտոտ ու ազնիւ: Կացо[1], Կովկասում այդպէս չէին, այստեղ փոխուել են:

Հայ տղաներն էլ Շաւգուլադէէից են շատ գոհ.

– Մեր հօր պէս է խնամում ու պահում:

Այստեղ էի, որ նահանջի հրաման ստացուեց: Ես շարժուեցի դէպի Կելց: Ճանապարհին ականատես եղայ Անդրէյեւոյի հսկայական պահեստների հրդեհներին՝ հակառակորդի ձեռքը չգցելու համար:

Մեր զօրքը փախչում էր:

Նոյեմբերի 19-ին. այսօր նորից եմ շրջում Կելեցի 15 հիւանդանոցները, իսկ երեկոյեան ժամի 9-ին դուրս եկայ դէպի Իւանգորոդ: Նոյն գնացքի երեք վագոններով վերադառնում է «գթութեան քոյր» մեծ իշխանուհի Ելիզաւէտա Ֆէօդորովնան[2] իր շքախմբով: Այդ շքախմբից է նաեւ գնդապետ Բեթ-

[1] Կացо - վրացերէնից թարգմանաբար նշանակում է մարդ, այստեղ օգտագործուած է որպէս դիմելաձեւ:

[2] Մեծ իշխանուհի Ելիզաւէտա Ֆէօդորովնա (1864-1918) - Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երրորդի եղբօր՝ Սերգեյ Ալեքսանդրովիչի կինը: Զբաղուել է բարեգործութեամբ: Դեռեւս ռուս-ճապոնական պատերազմի տարիներին ստեղծել է պատերազմից տուժածների աջակցութեան յատուկ կոմիտէ: Իր կողմից ստեղծած կանանց բարեգործական կառոյցի

խուդովը, ազգով հայ, բայց ոչ մի բառ հայերէն չգիտէ: Սա շտապում է Պետերբուրգ՝ յաջողեցնելու, որ իրեն կառավարիչ նշանակեն Տաճկաստանից խլուած գաւառների: Մի զինուորական ագենտ մեզ պատմում է, թէ ինչպէս Կելեցի մեծ կամրջի վրայ, մի քանի օր առաջ մի հրէայ բարձրաստիճան հոգեւորական կախեցին, գերմանացոց օգտին լրտեսութիւն կատարած լինելու համար:

Նոյեմբերի 20-ին Ռադոմ քաղաքումն եմ: Միակ տեղն է, որ թշնամին ձեռք չի տուել, թէպէտ ամբողջ վեց շաբաթ նստել է այստեղ: Այստեղ են եղել նրանց հիւանդանոցները, այստեղ է պառկել գերմանական կրոնպրինց[1]՝ ճակատի հրամանատարը, որ վիրաւորուել է այստեղից 35 վերստի վրայ գտնուող Կոզինիցի 9-օրեայ կռիւներում: Այստեղ NN 19, 39, 89, 42, 43, 46, 32 եւ 228 պահեստի բատալեոնները[2], որոնցում բաւական թուով հայեր կան՝ Երեւանի նահանգի Նոր-Բայազետի գաւառից:

Տեղական ազգաբնակչութիւնը շատ է գոհ գերմանացիներից՝ նրանց կորրեկտութեան համար:

Նոյեմբերի 21-ին, որոշել էի Բրեստ վերադառնալ Լիւբլինի վրայով, բայց պէտք է կարճ կտրել. գնում եմ Լուովի վրայով: Այստեղ էլ պատահեցի երկու հայերի՝ Գարեգին Մարգարեանին՝ Դարալագեազից եւ Արտաշէս Բաստրմաջեանին՝ ճեմարանաւարտ: Այստեղ գ. կարգի բուֆետ են պահում: Առաջինը չէ, որ մեր երկրի հազարաւոր վերստեր հեռու ընկած այս վայրերում մերոնք բուֆետներ, պօղուալներ՝ խմիչքատներ, են պահում, իրենց ֆիրմաները մկրտած «Արարատ», «Արաքս», «Վասպուրական», «Անի» եւ այլն անուններով: Այս ասպարէզում առանձնապէս փայլում են հին-նախիջեւանցիք:

Նոյն օրը երեկոյեան հասայ Բրեստ-Լիտովսկ:

միջոցով, նաեւ որպէս գթութեան քոյր աջակցութիւն է ցուցաբերել առաջին համաշխարհային պատերազմից տուժածներին:

[1] Կրոնպրինց - Կայսերական Գերմանիայում գահի ժառանգորդի տիտղոսը:

[2] Բատալեոն - գումարտակ:

11.

ՎԻՐԱՒՈՐ ԶԻՆՈՒՈՐԻ ՊԱՏՄԱԾԸ.

Բրեստի N 7 հիւանդանոցում առիթ ունեցայ խօսելու մի վիրաւոր ռուս զինուորի հետ՝ Կիեւի նահանգից, որ մի կենսուրախ երիտասարդ էր եւ պատմեց հետեւեալը.

– Հոկտեմբերի 14-էր, Իւանգորոդի կռիւներում սաստիկ յոգնել էինք: Թշնամին յամառ էր, նրա կրակն անխնայ, երկու կողմերի զոհերին թիւ չկար, տեղ-տեղ դիակները կոյտեր էին կազմում: Յանկարծ կէսգիշերին հրաման եկաւ՝ թշնամու դիրք-բլուրները խլել: Մենք գրոհ տուինք: Թշնամին մեզ ուղղակի հնձում էր, բայց եւ այնպէս բլուրները գրաւեցինք: Դրանով կռիւը չդադարեց: Երեւում էր, որ հակառակորդը ուզում էր կորցրածը հետ խլել: Նոր էինք բլուր հասել, զգացի, որ ոտքից վիրաւորուել եմ ու ընկայ: Մի ֆելդշեր մօտեցաւ ու վէրքս կապեց: Մի փոքր անց՝ թեւից էլ վիրաւորուեցի, բայց այս անգամ կապող չեղաւ: Մի կերպ ինքս փաթաթեցի: Այնուհետեւ ի՞նչ պատահեց – չգիտեմ: Ուշքս կորցրել էի: Երբ սթափուեցի, մենակ էի, մերոնք նահանջել էին: Ֆելդշերն էլ էր գլուխն ազատել: Ի՞նչ արած, կեանքը քաղցր է:

Այս անգամ աւստրիական սանիտարները մօտեցան ու ինձ վերցրին:

Ես մենակ չէի: Մեզ տարան մի գիւղական խրճիթ: Ճանապարհին բոլորիս կողոպտեցին՝ հանեցին կօշիկներս, ֆուֆայկաս[1], բաշլուղս[2], թաշկինակիս ծայրում կապած միակ ռուբլիս: Մեզ՝ ռուսներիս, առանձին պառկեցրին, ի հարկէ կողոպտուելու մասին ոչինչ չասեցինք. զոհ էինք, որ կենդանի ենք: Շուտով մօտեցան նրանց բժիշկներն ու մեր վէրքերը կապեցին. սուրճ, գինի, իսկ երրորդ օրը նաեւ բուլեօն տուին: Այսպէս չորս օր: Հինգերորդ օրը աւստրիացիք համարեայ չքնեցին. շարունակ խօսում, վազվզում էին. լսում էր նաեւ ձիերի դոփիւնը. «կամ նահանջում են, կամ պատրաստւում են մեզ մորթոտելու»– մտածում էի ես: Սխալ չէի: Առաւօտեան մեզ մօտ մտաւ մեր լեհ տանտէրն ու ասեց. «Ուրախացէք, աւստրիացիք փախան, ձերոնք են մօտենում»: Հազիւ մի ժամ անց, լսուեց մերոնց ձիերի խրխինջը: Մի կերպ ուժերս հաւաքեցի տեղիցս ելայ, դուռը բաց արի ու ձայն տուի: Վրայ հասան մեր սանիտարները:

Գերութիւնից ազատուեցինք:

12.

Ուղիղ 14 օր տեւեց իմ այս առաջին պտոյտը: Կտրեցի անցայ Խօլմի, Լիւբլինի, Բագոմի ու Կելեցի նահանգները. եղայ նաեւ աւստրիական Գալիցիայում: Շա՛տ են գեղեցիկ, մանաւանդ Կելեցի նահանգը, որ հարուստ է մշակուած դաշտերով, շամի անտառներով: Այն ժամանակ, երբ առաջին երեք նահանգները հարթ են ու տափարակ, այստեղ շարունակ մեծ ու փոքր բլուրների ես հանդիպում: Զգում ես Կարպատների շունչն ու մօտիկութիւնը՝ մանաւանդ հարաւում ու արեւմուտքում:

Գլխաւոր ազգաբնակութիւնը լեհերն են, երկրորդ տեղը բռնում են հրէաները, այնուհետեւ՝ ռուսները: Ամէն տեղ ու քայլափոխում զգում ես առաջինների ոյժն ու ազդեցութիւնը: Համարեայ ռուս ու հրէայ չկայ, որ լեհերէն չիմանայ: Խառն ամուսնութիւնները կատարւում են կաթոլիկ ծէսով, դրանց տան խօսակցական լեզուն անպայման լեհերէնն է: Լեհն ռուսի վրայ բարձրից է նայում եւ գտնում է, որ նրանից սովորելու բան չունի: Սա պատասխան է ռուսական օտարատեաց քաղաքականութեանը: Պատերազմը կարծես մեղմել է այդ ատելութիւնը:

Զափազանց ծանր է հրէաների դրութիւնը: Սրանց հալածում են ռուսները, ատում են լեհերը: Ռուս կառավարութիւնը որոշ քաղաքական նկատառումներով հրէաների բնակութեան վայր Լեհաստանն է դարձրել, ուր սրանք քայլ առ քայլ տնտեսական խոշոր նուաճումներ են անում, ձեռք են

[1] Ֆուֆայկա - գործվի տաք շապիկ:

[2] Բաշլուղ - հաստ կտորից (շալից, մահուդից) գլխի ծածկոց՝ վեղարի նման եւ երկար սուր ծայրերով:

գցում գիւղական հողերը, կալուածատէրերի ստացուածքը, քաղաքներում՝ տները, բանկերը, խոշոր ձեռնարկութիւններն ու գործարանները: Այս հանգամանքը սաստիկ ջղայնացնում է լեհերին, որոնք իրենց ազգային ձգտումների իրականացման խոշոր խոչընդոտ հրէաներին են համարում: Վագոններում տեսել եմ, թէ ինչպէս լեհը հրաժարուել է հրէայի նստած տեղում նստել, կամ նրա թէյամանից թէյ ընդունել: Հրէաները կարծես նախազգալով իրենց գլխին գալիքը լեհական տիրապետութեան օրով, ամէն կերպ աշխատում են խանգարել լեհերի ազատագրումը: Ո՛ւր ոտք դնէք, ո՛ր լեհի հետ խօսէք, միայն այն կլսէք թէ՝ հրէաները դաւաճանում են ռուսներին, ծախուած են գերմանացոց: Գեներալ Զաբելինի օգնական գեներալ Ելսներն[1] ինձ ասում էր. «Ես պատերազմական հեռագրեր կարդալու ժամանակ չունեմ. տանից դուրս գալուն պէս հրէաների երեսին եմ նայում. եթէ նրանք տխուր են, ուրեմն մեր գործերը լաւ են, եւ ընդհակառակն: Երեւի թէ պատերազմից յետոյ հրէաներին լաւ վիճակ չի սպասում: Այդ նրանք լաւ են զգում, ուստի ամէն տեղ ճարահատուած լուռ են, ծայրայեղօրէն քծնող»:

Այս ճանապարհորդութեան ժամանակ որքան նկատեցի, ամէնից շատ լեհ գիւղացիութիւնն է տուժել: Թէ աւստրիացիք, թէ գերմանացիք, թէ ռուսները նրանցից են վերցրել ձի, սայլ, տանու կենդանիներ, խոտ, գարի եւ այլ: Իսկ հրէան, որ ըստ մեծի մասի քաղաքաբնակ է, այս կոռ ու բէգեարին քիչ է մասնակցել:

Մեր թերթերը, նոյնիսկ ազատամիտները, գերմանացիներին գաղանութիւններ ու վայրենութիւններ շատ են վերագրում: Սուտ է: Ես շատ հետաքրքրուեցի, շատ տեղ ոտքս կախ գցեցի, հարց ու փորձ արի, սակայն առեւանգման, թալանի ոչ մի դէպք չիմացայ:

[1] Եւգենի Էլսներ (1867—1930) - ռուսական բանակի գեներալ, առաջին աշխարհամարտի առաջին տարիներին եղել է Հարաւ-արեւմտեան ճակատի մատակարարման պետի օգնականը, իսկ 1916 թուականից հանդիսացել է նոյն ռազմաճակատի մատակարարման պետը:

Պատերազմի չորրորդ ամիսն է դեռ, սակայն մեր զօրքերի մէջ յոգնածութիւնն ամէն տեղ ակնյայտնի է: Այդ է պատճառը, որ նրանք հեշտ են գերի ընկնում: Նոյնիսկ սպաներից շատերն այս պատերազմում ոչ մի իմաստ չեն տեսնում:

Չի կարելի մոռանալ մարդկանց մի դաս, որ շարունակ վազվզում ու «մտահոգուած է»: Սրանք կարծես միշտ զբաղուած են, սակայն իրօք ոչինչ չեն անում, այլ միայն գնացքներ, վագոններ ու աւտոմոբիլներ են զբաղեցնում: Զրիակերներ են, որոնք ուղղակի գուարճանում են վտանգի վայրերից շատ հեռու: Դրանք ազնուականներ, ունեւորներ, ազդեցիկներ են, որոնք ամէնից շատ պիտի վարձատրուեն ու կուրծքները զարդարեն: Սրանց դուք կհանդիպէք մեծ քաղաքների առաջնակարգ հիւրանոցներում, ճաշարաններում, յարմարաւոր գնացքներում եւ աւտոմոբիլներում, սակայն Նագլովիցի, Շչեկատինոյի ու Սակոլնիկոյի նման տեղերում սրանց հոտը չկայ:

Նոյեմբերի 22-26 անց եմ կացնում Բրեստում: Մօտս եկան մի խումբ զինուորներ՝ Ղարսի, Ալեքսանդրապոլի շրջաններից: Զրոյցի ժամանակ նրանց տուի «Հորիզոն»-ի[1] մի քանի համար: Զինուորներից մէկը, որ անգրագէտ էր, թերթը ձեռքն առաւ, ասելով.

— Երկու տարի է՝ հայերէն թուղթ չեմ տեսել. կարդալ չգիտեմ, գոնէ ձեռքս առնեմ:

Երկար անթարթ նայելուց յետոյ յանկարծ լացակումեց, լրագիրը ցած դրեց ու ասաց.

— Զէ, մեր տանից խաբար չես բերել, գնա՛, հեռացի՛ր:

Մօտս եկաւ նաեւ վիրաւոր Եղիյա Մանուելեանի եղբայրը, որը եկել էր Բաքուից՝ իմ նամակով: Ինձ յաջողուեց հիւանդին Բաքու տեղափոխել տալ:

[1] «Հորիզոն» - հասարակական-քաղաքական, տնտեսական եւ գրական օրաթերթ: Հանդիսացել է ՀՅԴ պաշտօնաթերթը: Լոյս է տեսել 1909-1918 թուականներին Թիֆլիսում:

Բ.

Նոյեմբերի 30-ին. կիրակի:– Այսօր անց կացրի հիւանդանոցում. N 3-ում տեսայ Զենստոխովից նոր եկած 3 վիրաւոր հայերի՝ մինը Նոր-Նախիջեւանի Թօփտի գիւղից՝ կնոջ, 3 երեխի տէր, երկրորդը Գանձակի մօտիկ գիւղերից, իսկ երրորդը իմ ուսուցիչ Տէր Եղնիկ Երզնկեանի եղբօր որդին՝ Հմայեակ Երզնկեանը, որին վճռեցի մօտս առնել որպէս սպասաւոր ու նոյն օրն եւ եթ դիմեցի գեներալ Ելսներին, որ խոստացաւ հարկաւորը տնօրինել: Նոյն օրը երեկոյեան ժամը 11-ին Կովելի ու Կիեւի վրայով ճանապարհուեցի դէպի Լուով-Գալիցիայ: Գիշերուայ ժ-4-ին հասայ Կովել: Սա իմ II ճանապարհորդութիւնն է:

Կովելում մնացի մինչեւ ժամի 8-ը: Այս ժամին ճանապարհ ընկայ դէպի Սարնի: Նոյն գնացքով բաւական թուով աւստրիական գերիներ էին տանում: Ամէն տեղ ռուս ժողովուրդը կորրեկտ, տեղ-տեղ նոյնիսկ սիրալիր ու կարեկից վերաբերմունք ունէր դէպի իր այդ երեկուայ թշնամիները: Սրանք այնքան աղօտ գաղափար ունէին Ռուսաստանի մասին, որ մէկը նոյնիսկ այսպիսի միամիտ բան ասաց.

– Մեզ դիտմամբ դէս ու դէն են տանում, յետ ու առաջ են պտտեցնում: Այլապէս այսքան մեծ երկիր լինել չի կարող.

– Խեղճե՛ր,– մտածում էի ես,– դեռ ո՞ւր է՛ք...

Գիշերը վագոնում անց կացրի, պատահմամբ Հանդիպեցի Վլադիկավկազի կադետների կորպուսի բժիշկ Շուլգինի հետ: Խօսում էինք պատերազմից, Վլադիկավկազից:

Դեկտեմբերի 4-ին. հինգշաբթի:– Առաւօտեան ժամի 8-ին հասայ Կիեւ եւ իջեւանեցի «Ռիմ» հիւրանոցում: Առաջին հոգս եղաւ հեռագրել տուն եւ հարցնել մերոնց առողջութեան մասին: Պատասխանն ինձ հանգստացրեց:

Բնորոշ էր իմ հանդիպումը եւ խօսակցութիւնը մի հրէայ բժշկի հետ: Ականջիս ցաւով դիմում եմ սրան, որի հասցէն վերցրի տեղական «Կիեւլիանին»[1] թերթից: Առաջին տպաւորութիւնս շատ էր աննպաստ: Երկրորդ այցիս հարցնում եմ.

– Բժիշկ, թոյլ տուէք հարցնել՝ ռո՞ւս էք, թէ՞ հրէայ.

– Լեհ եմ,– լինում է պատասխանը: Այնուհետեւ անմիջապէս խօսք է բանում 1905 թ. դէպքերի, հայ-թուրքական ընդհարումների, կառավարութեան պրովոկացիայի մասին, խօսում է նաեւ տաճկահայերի «Դարաւոր տրագեդիայի» մասին եւ ինձ համար չափազանց հաճելի կարծիքներ է յայտնում՝ մեղադրելով «շէյթանին»[2]:

Ես դառնում եմ հրէայ-լեհական յարաբերութիւններին, յայտնում եմ տպաւորութիւններս ու կարծիքս այդ մասին եւ աւելացնում եմ.

– Բժիշկ, այդ չափազանց լարուած յարաբերութիւններում, մանաւանդ հրէաների բռնած իբր թէ դաւաճան, ռուսատեաց ընթացքի մասին տարածուած լուրերում թոյլ տուէք ասել, որ ես որոշ չափով մեղադրում եմ ձեզ՝ լեհերիդ: Ճիշտ է, հրէան շահասէր է, գուցէ եւ որոշ չափով իրաւունք ունէիք սրանց ձեզ հարստահարող անուանելու, սակայն վերջին ծանր մեղադրանքի համար պիտի ասեմ, որ որքան հետաքրքրուեցի, իսկ շատ եմ հետաքրքրուել, ես լուրջ հիմքեր չգտայ: Ընդունում եմ, որ անհատ շահասէրներ կարող է եղած լինել, բայց այդպիսի բացառութիւններն ընդհանրացնել եւ համարեայ օրէնքից դուրս դնել մի ժողովուրդ, ոչ ոք իրաւունք չունի: Հրէաներն այդ բոլորի հեղինակ ձեզ՝ լեհերիդ են համարում:

– Կանգնեցէք, – կտրեց խօսքս բժիշկը– ես հրէայ եմ, ես իմ ազգութիւնը դիտմամբ թաքցրի: Մենք ամէն բան կը տա-

[1] «Կիեւլիանին» - ռուսալեզու մասնաւոր թերթ, որը լոյս է տեսել Կիեւ քաղաքում 1864-1919 թուականներին:

[2] Շեյթան - սատանայ, մահմեդական դիցաբանութեան մէջ չար ոգի, դեւ: Այստեղ Սառիկեանի զրուցակիցը նկատի ունի հայկական ջարդերի կազմակերպիչներին:

նենք, սակայն աւտօնոմ կամ անկախ Լեհաստան՝ երբէք: Ես այդ ընդգծում եմ:

Այստեղ բժիշկի աչքերը տարօրինակ փայլ առան, բռունցքը սեղմուեց, նկատւում էր, որ նա ջղայնանում է: Նա շարունակեց.

– Ռուսաստանը մէկ պիտի լինի: Այստեղ Լեհական ոչինչ լինել չի կարող: Մենք չենք թողնիլ, չենք էլ տայ: Լեհացիներից ոմանք մի քանի անգամ հրէայ ռաւուինի[1] շոր են հագել ու կրակել ռուս կոզակների ու զօրքի վրայ: Սա մենք ապացուցել ու գերագոյն հրամանատարին ենք հասցրել: Թող աշխարհն իմանայ նրանց ստոր արարքները: Յաջորդ այցելութիւններիս ժամանակ նա կամաց-կամաց իր գերմանասիրութիւնը երեւցրեց:

– Սուտ է – ասաց նա – թէ գերմանացիք դաժան են, խիստ, թէ նրանք առած ապրանքի համար չեն վճարում: Ռուսները Պետերբուրգը Պետրոգրադ դարձրին – ողորմելիներ... Թէ կարող են, թող պալատն ազատեն գերմանական ազդեցութիւնից: Զմեռային պալատում Վիլհելմի ոգին ու կամքն են թագաւորում: Ռուսներն աշխատում են Գալիցիայումն ամրանալ: Ի զուր. նրանց այդտեղ ոչ ոք ոչինչ չի տալ: Վերջապէս, դուք գիտէք, որ գերմանացիք Վարշաւայից միայն 9 վերստ են հեռու եւ այսօր վաղը վերցնելու են նրան:

Այստեղ նա անսպասելի կերպով յայտնութիւն արած մարդու պէս կանգ առաւ, աչքերը չռեց, դէմքը բերկրանքով փայլեց: Փորձեց հայ-վրացական յարաբերութիւնների մասին եւս խօսել:

– Ամենահաստատ աղբիւրից Ձեզ ասում եմ, որ կառավարութիւնը Կովկասում հող է պատրաստում կովկասեան ճակատում պարտուելու դէպքում մեղքը հայերի վրայ գցելու ու հայկական ջարդ առաջ բերել:

Նա չմոռացաւ յիշել, որ հրէաները Գերմանիայում կատարելապէս ազատ են, որ հրէաները միայն այնտեղ կարող են բաւարարել իրենց ուսման ծարաւը, որ հրէայ բարեկամներ

[1] Հրէայ հոգեւորական:

ունի Վիլհելմը, որ ինքն ամէն տարի 1-2 ամսով միայն Գերմանիայումն է հանգստանում եւ այլն:

Ամսոյս 6-ին տեղիս դերասանական խումբը սահմանել էր «артисты войнам»[1]: Դուրսը հանգանակութիւն էր՝ ժողովում էին դրամ, շոր, ծխախոտ: Ամբողջ ազգաբնակութիւնը դուրսն էր, ամէն մինն շտապում էր իր լուման տալու: Կիեւը շատ է առատաձեռն, 2 օր առաջ էլ բելգիացիների օգտին է 37.000 ռ. ժողովել, ամսոյս 10-ին էլ կազմելու է «Киев–Сербии»[2] օր: Մի ուրիշ խումբ էլ ծննդեան նուէրներ է ժողովում զինուորների օգտին:

Գալ Կիեւ եւ չտեսնել Լաւրան՝[3] չէր կարելի: Գնացի, եղայ ստորերկրեայ այրերում ու սրահներում, տեսայ սեղանատունը, տպարանը, թանգարանը. տեսայ այրերում հանգչող դամբարանները, որոնց թւում նաեւ летописец Нестор–ին[4]: Անկախ նրանց կրօնական աշխարհայեացքից, ակամայ պատկառանք ես զգում դէպի այդ անձնաւորութիւնները, որոնք կամքի ոյժ, խոր հաւատ են ունեցել ճգնելու այդ անլոյս, անարեւ այրերում՝ յանուն իրենց ոգեւորող մի գաղափարի:

Այստեղ էլ թագաւորողը կեղծն էր, չինծուն, շահասիրականը, անփոյթն ու անմաքուրը: Տասնեակներով մարդիկ ապրում են այս վանքում, ուտում, պարարտանում, սակայն ի՞նչ են տալիս նրանք իրենց շրջապատին – ոչինչ եւ ոչինչ: Ե՞րբ պիտի վերանան այս վանքերը – կեղծիքի, ծուլութեան,

[1] Նկատի ունի դերասանների կողմից կազմակերպուած բարեգործական միջոցառում:

[2] Նկատի ունի Սերբիային աջակցելու նպատակով Կիեւում կազմակերպուած բարեգործական միջոցառում:

[3] Լաւրայ - մայրավանք, նկատի ունի Կիեւ-Պեչորեան մայրավանքը, որը հանդիսանում է ռուս ուղղափառ եկեղեցու ամենահին ու կարեւոր նշանակութիւն ունեցող վանքերից մէկը: Այն հիմնադրուել է 1051 թուականին Կիեւեան Ռուսիայի իշխան Եարոսլաւ Իմաստունի օրօք:

[4] Տարեգիր Նեստոր (1056—1114) - Եղել է յայտնի տարեգիր, հեղինակել է «Անցած տարիների պատմութիւն» աշխատութիւնը, որը հանդիսանում է կարեւոր սկզբնաղբիւր հին սլաւոնների պատմութեան ուսումնասիրման համար: Նեստորը եղել Կիեւ-Պեչորեան վանքի վանական, վերջինիս դամբարանը եւս գտնւում է այդ վանքում:

զեղխութեան ու չարիքի այս բները, ուր նահատակների ոսկորներն են անլուր շահագործման ենթարկւում: Զուր չէ ասուած, թէ. «Այս ժողովուրդը շրթունքներով է միայն ինձ պաշտում, սրտով շատ հեռու է ինձանից...»:

Տեսայ նաեւ Ս. Վլադիմիրի արձանը, համալսարանն, ինստիտուտը, Դնեպրը – սիրուն, համընթաց ու խաղաղ...

Կիեւը ինձ վրայ շատ լաւ տպաւորութիւն թողեց – վերին աստիճանի մաքուր, կոկիկ ու գեղեցիկ: Ծառազարդ է՝ ընկած բլուրների ու ձորակների վրայ: Ասում են՝ գարնանն ու ամառը մի հսկայական պարտէզի է վերածւում: Մօտ 450.000 բնակիչ ունի, 100-ի չափ հիւանդանոցներ է պահում:

Ամսոյս 10-ի երեկոյեան 8 ժ.40 րոպէին հրաժեշտ տուի ինձ ճանապարհելու եկած ուսանողներին ու ճանապարհուեցի դէպի Լուով:

Դեկտեմբերի 11-ին. հինգշաբթի:– Այսօր առաւօտեան արթնացանք Վոլինի նահանգում ժամի 9-ին «Բրոդրի» կայարանումն ենք՝ սահմանագլխում: Այստեղ թողնում ենք գնացքն ու նստում «узкоколейка»՝ նման մեր Հանքային ջրերի ամաբային գնացքներին: Սրանք աւելի կոկիկ են ու սիրուն: Գնացք ենք նստել ու սպասում ենք: Անցնում է 1, 2, 3 ժամ– յոգնում ենք: Ինչո՞ւ են ուշանում, ինչո՞ւ սպասում... Ախ, ռուսական դանդաղկոտութիւն: Արդեօք այս ժողովուրդն էլ շտապել կը սովորի՞: Կարծես պատերազմական դրութիւն չեն ապրում:

Հէնց սահմանագլխից գետինը ծածկուած է ձիւնի թեթեւ սաւանով, որ գնալով աւելի է հաստանում, բայց ոչ մի տեղ, մօտ մի վերշոկից[1] չի անցնում: Սօսիի ու կաղնու անտառները եզրաւորում են ճանապարհը, որի երկու կողմում ընկած են սիրուն ու մշակուած դաշտեր, ցորենի արդէն կանաչած արտեր, որոնք մէջ ընդ մէջ կտրւում են ճահճուտներով, սիրուն ջրանցքներով: Գիւղական ճանապարհները լայն են ու ծառազարդ: Յիշում եմ Սուրմալուի ու Սարդարապատի

[1] Վերշոկ - ռուսական հին երկարութեան չափի միաւոր, հաւասար է մօտ 4,4 սմ-ի:

գաշտերը: Այստեղ այնտեղ երեւում են ռուսական խաչերով գերեզմանները ու խրամատները: Բոլոր կամուրջների վրայ պահակներ կան: Սրանք էլ այսպէս են իրենց պարտքը կատարում՝ մենակ ու զուրկ: Ամէնուրեք ռուսինների[1] ու նիատների գիւղեր են՝ իսկ եւ իսկ Մոլորոսիական: Նոյն տները, նոյն եղէգնի խոտի, թիթեղի ծածկը, տան առաջ նոյն պարտէզը: Գիւղացիք նոյն հագուստն ունեն, նոյն դէմքը, նոյն լեզուն: Յաճախ ես մոռանում, թէ աւստրիական նորանուաճ երկրում ես: Դաշտերում նոյն ռուսական ձիաքարշ սայլն է: Տարբերութիւնը նրանումն է, որ այստեղ տները աւելի բարձր են, կոկիկ ու մաքուր:

Բացի տեսածս հատ ու կենտ գերեզմաններից ու խրամատներից ուրիշ ոչինչ չի յիշեցնում, թէ այստեղ մի քանի ամիս առաջ ահեղ կռիւներ են տեղի ունեցել: Ամէն ինչ արագ կերպով նորոգւում եւ կարգի է բերւում:

Այս գծի վրայ է մեծ ու գեղեցիկ «Կրասնոյի» կայարանը: Այստեղ իշխողը լեհերէնն ու լեհացիք են: Հետզհետէ անտառապատ բլուրներն ու ձիւնը շատանում են: Ուղիղ ժամի 2-ին մտնում ենք Լուովի հոյակապ, գեղեցիկ, ծածկուած վոկզալը: Դահլիճներն իրենց բոլոր յարմարութիւններով ստորերկրեայ են, ուր իջնում ենք 25-ի չափ սանդուղքներով: Կոմենդանտի դիւանը, ծանր վիրաւորներին ընդունելու սենեակներն ու ճաշարանը վերի յարկն են կազմում: Ճակատի կողմից շէնքը երկյարկանի է: Հետս դեռ Վլադիկավկազից մի քանի արկղ ծխախոտ էի բերել՝ նուէր քաղաքացիներից զինուորներին բաժանելու, որոնց մի մասը ապշերոնցիներին տուի, իսկ միւս մասը այստեղ բերի: Այդ արկղները պահ եմ տալիս կայարանում, իսկ ինքս շտապում եմ քաղաք՝ հիւրանոց վարձելու: Նկատւում է, որ կառապաններն այնքան հաճոյքով չեն մատուցում (подают) ռուսներին, նրանց թւում նաեւ ինձ: Վերջապէս քաղաքումն եմ՝ «Մետրոպոլ» հիւրա-

[1] Ռուսիններ - արեւմտասլաւոնական ճիւղին պատկանող ժողովուրդ, որը ներկայում բնակւում է Արեւմտեան Ուկրայինայում, Հունգարիայում, Լեհաստանի հարաւ-արեւելեան եւ Ռումինիայի հիւսիս-արեւմտեան հատուածներում:

նոցում, որի պահողը հրէայ է: Մոռացայ ասել, որ «Բրոդրի»-ում իմացայ, որ այստեղ բաւական հայեր կան, խոստացայ վերադարձիս այցելել:

Հիւրանոցում կարճ հանգստանալուց յետոյ շրջեցի «կարմիր խաչի» Զերնիգովի, Ռեազանի եւ Գաուֆմանեան հիւանդանոցները, պատահեցի հայ բժիշկ Վալերեանոս Քալանթարեանին՝ վիրաւոր, Աստրախանցի եւ 4 չեչենների, որոնք նոյնպէս հիւանդ էին եւ ինձ տեսնելով, թէպէտ անտես-անճանաչ, բայց շատ ուրախացան: Խոստացայ սրանց մասին յայտնել մեր մօլլային (շտաբում): Երեկոյեան 9 եւ կէսին վերադարձայ տուն՝ սաստիկ յոգնած: Դանիէլը թէյ էր պատրաստել, խմեցի ու պառկեցի:

Դուրս եմ գալիս: Փողոցում պատահում եմ մի քանի հայ վաճառականների՝ եկած Գանձակի ու Հին-Նախիջեւանի շրջաններից: Մաշկելու, դիզելու են եկել. «գործի են շտապում»:

Ժամի 12-ին Իոսիֆ Թէոդորովիչ եպիսկոպոսի մօտ եմ: Սրբազանն ինձ դիմաւորում է իր դահլիճի դրանը: Գրկախառնւում, համբուրւում է հետս եւ ցաւ է յայտնում որ «օրմիանսկի նէ գովորու, նէ բագումէու»: Ուրախութիւն է յայտնում, որ հայ հոգեւորականի է տեսնում: Հարց ու փորձ է անում Էջմիածնից, կովկասահայերից: Աւելացնում է, որ վաղուց ուզում է Էջմիածինը տեսնել եւ յոյս ունի, որ կը տեսնի:

Խօսում ենք պատերազմի մասին, որ նրա կարծիքով 2-3 ամսից վերջանալու է, «որովհետեւ Անգլիան ու Ֆրանսիան իրանց նպատակին հասան. Անգլիան գերմանական գաղութներն ու Եգիպտոսը իւրացնելով, Ֆրանսիան՝ Ելզաս-Լորենը[1] եւ Ալժիրը: Ռուսաստանի մասին քաղաքագիտօրէն լռում է: Այդ ժամանակ ներս են մտնում եկեղեցու դեկանը[2], հայախօս ու խորամանկ մի հայ՝ Կուտիից եւ քարտուղար քահանան, մի

[1] Ելզաս-Լորեն, այսինքն՝ Էլզաս եւ Լոթարինգիա-պատմական տարածքներ ներկայիս Ֆրանսիայի հիւսիս-արեւելքում, որը մշտապէս կռուախնձոր է հանդիսացել գերմանացիների եւ ֆրանսիացիների միջեւ:

[2] Դեկան - այս դէպքում՝ կաթոլիկ եկեղեցիներում վանքի կառավարիչ կամ վանահօր օգնական:

բաւական համակրելի երիտասարդ, որի հէնց առաջին խօսքը լինում է. «օրմիան, նօ օրմիանսկի նէ բագումէու»: Այնուհետեւ սրբազանը յայտնում է, թէ Լուովի շրջանում մօտ 400 տուն հայ կայ՝ լեզուն կորցրած: Դրանցից են «Պողոսովիչ», «Աբրամովիչ» բաւական հարուստ հայերը, որոնք հայերէնը մոռացել են, իսկ դեկանը, որ մեր մէջ երբեմն թարգմանի դեր է կատարում, աւելացնում է.

— Գիտէ՞ք, ժողովուրդ մը, որ ընկած է հսկայ ծովի մէջ, ինքն ալ փոքր է, կուլ պիտի երթայ:

— Ոչինչ չունեմ, բայց այդ ժողովուրդը պարտաւոր է իր ինքնուրոյն գոյութեան, իր կուլտուրայի մասին մտածել. իսկ թէ ի՞նչ կասեն բնութիւնն ու պատմական պայմաններն, այդ արդէն մեր գործը չէ:

— Այո՛, շիտակ է. բայց ի՞նչ ընելու ենք.

Մեր խօսակցութիւնը փակուեց:

Այնուհետեւ չորս միասին իջնում ենք հայ եկեղեցին դիտելու: Բակն եմ մտնում եւ... զարմանք. հայկական մի եկեղեցի՝ սրբատաշ քարից, նուրբ քանդակներով— Ճիշտ Անիի ոճով: Ներսից հարուստ է արնամենտներով[1]: Երեւում է, որ սկզբում եկեղեցին փոքր է եղել, կաթոլիկները մեծացրել են: Այս րոպէիս էլ երեւում են աւազանը, սեղանի տեղը, որոնց վրայ կաթոլիկ կղերը շատ են աշխատել՝ ոչնչացնելու: Սրբազանը յայտնում է, որ ինքը ցանկանում է նախկինը վերականգնել, ի դէպ եկեղեցու ներսում, աջակողմեան պատի վրայ, սեղանից ոչ հեռու՝ Մելքիսեդեկ կաթուղիկոսի արտաքանդակ պատկերն է՝ մարմարեայ, զգեստով: Լեհահայերի ոչնչացման պատմութիւնը գալիս անցնում է աչքիս առաջից՝ Նիկոլ, կաթոլիկ պրոպագանդա[2], ժողովրդի դիմադրութիւն, Մելքիսեդեկ[3], անթաղ մեռելներ, անկնունք երեխաներ, չկատարուած պսակներ, լեհական կուլտուրա...

[1] Արնամենտ - զարդաքանդակ:

[2] Պրոպագանդա - քարոզչութիւն:

[3] Մելքիսեդեկ կաթուղիկոսի Մելիքսեդեկ Գառնեցի (1590-1629) - Ամենայն Հայոց կաթողիկոս, եղել է աթոռակից Դաւիթ Դ. Վաղարշապատցի կաթողիկոսին: Վերջիններիս կառավարման տարիներին տիրող թող-

Դուրս ենք գալիս բակը: Թէ սրահում, թէ եկեղեցու հիւսիսային պատի մէջ բաւական թուով խաչքարեր կան, ինչպէս նաեւ գերեզմանաքարեր, հայերէն ու լեհերէն արձանագրութեամբ: Մէկի վրայ կարդում եմ. «Այս է տապան հանգուցեալին դստերն Բան Սուսանին յանգեաւ թ. ՌՀԲ ապրիլ ԺԷ»: Երկրորդի վրայ «Անդրէաս Զախնովիչ ՌԺԱՅ. ոծ մէկին»: Իսկ երբ միայնակ անցնում եմ հարաւային կողմը, այստեղ ցաւելով նկատում եմ, թէ ինչպէս բակը սալայատակելիս, չեն խնայել նաեւ հայերէն խաչքարերը:

Վերադարձանք կրկին եպիսկոպոսի մօտ: Նա ցոյց տուեց իր կաբինէտը, որ մի մեծ սենեակ էր, պատերի երեսով պահարաններ՝ լի գրքերով: Զորս տեղ գրասեղան դրած, ուր պահանջի ու կարիքի համաձայն էլ պարապելու է նստում: Այս կաթոլիկ հայը, որ ամբողջ Լեհաստանում լաւ քարոզչի եւ քաղաքագէտի հռչակ ունի եւ Ֆրանց Յովսէփ կայսեր[1] մօտ բարեկամն է համարւում: Սրան յաճախ են Վարշաւայ հրաւիրում՝ քարոզելու:

Դեկտեմբերի 13-ին շաբաթ:– Այսօր եղայ էտապի կոմենդանտի մօտ: Պահեստի բատալեոններում 37 հայ զինուոր գտայ: Սրանց ի մի ժողովեցի, եւ որովհետեւ յարմար բնակարան չկայ, սրանց էլ շտապում են զօրամասեր ուղարկել, զօրանոցի սենեակներից մէկը դատարկել տուի, այդտեղ տարայ, խօսեցի, յորդորեցի: Այստեղ մի խումբ վրացի զինուորներ ներկայացան ինձ ու խնդրեցին միջնորդել, որ թոյլ տրուի իրենց Կովկասեան ճակատ գնալ: Յանձն առայ ու դիմում ուղարկեցի Զաբելինին: Այստեղ պատահեցի նաեւ 7 լեզգիների՝ հիւանդ, յուսահատ ու հիւծուած: Երկու ամիս է՝ «լեզու չիմանալու պատճառով քաղցած ու անտէր դեգերում

տուութեան եւ անտարբերութեան հետեւանքով Լեհաստանի մեծաթիւ հայկական համայնքին պարտադրուել է կաթոլիկութիւն, որից յետոյ վերջիններս աստիճանաբար կորցրել են ազգային ինքնութիւնը՝ ձուլուելով լեհերին:

[1] Ֆրանց Իոսիֆ (Եօզեֆ) Առաջին (1830-1916) - Աւստրիայի կայսրը, 1867 թուականից Աւստրոյ-Հունգարիայի միացեալ թագաւորութեան կայսրը, Հաբսբուրգների տոհմից, թագաւորել է 1848-1916 թուականներին:

են»: Սրանց տարայ նախ կոմենդանտի, ապա բժիշկի մօտ: Բոլորին էլ տեղաւորել տուի հիւանդանոցում: Ազատել տուի ծառայութիւնից նաեւ Նուխու գաւառից Մէջիս գիւղացի Գէորգ Ղազարեանին: Խօսք տուաւ անպատճառ Կովկասեան ֆրոնտ գնալ: Հազիւ թէ:

Դեկտեմբերի 14-ին. կիրակի:– Առաւօտեան ժամի 8-ն է: Վաղուց կազմ ու պատրաստ սպասում եմ կառքի՝ կայարան գնալու, սակայն կառք չկայ: Իրերս վերցնում ենք ես, Դանիէլը, մի ոստիկան՝ մինչեւ տրամուայ: Լեհ կառապանները մեզ, ռուսներիս այնքան էլ հաճոյքով չեն սպասարկում, նոյնիսկ փախչում են մեզանից: Կայարանումն եմ: Այն գնացքը, որ պիտի դուրս գար ժամի 9-ին, դուրս է գալիս ուղիղ 10 ժամ 20 րոպէին: Ապրանքատար ագտոտ վագոններ են: Վերջին միայն 4-րդ մի վագոն են կպցնում, ուր տեղաւորւում ենք՝ մի գնդապետ, Մոսկուայի համալսարանի 36 նորաւարտ բժիշկներ, որոնց թւում Բերբերեան ազգանունով մի հայ:

Ճանապարհն ամբողջովին ձիւնոտ է, անտառոտ՝ ուր Լուովցիների ամառանոցներն են ընկած: Սկսում են մեծ ու փոքր բլուրներ երեւալ: Երեւում են նաեւ Կարպատների հեռաւոր փէշերը: Ամէնուրեք շամի, շամի ու շամի է: Ժամի 1-ին հասնում ենք Ժողկայ գիւղը, որ ամբողջապէս քանդած ու աւերուած է: Գնացքն ամբողջ գիշերը կանգնում է ճանապարհին: Խաւարումն ենք նստած, մոմ անգամ չեն տալիս: Լաւ է, որ մերոնցից ոմանք մոմեր ունէին:

Զնկատեցի՝ որտեղ եւ ի՞նչպէս մեր վագոնն ընկան բաւական տեսօք երկու լեհուհիներ: 25-27 տարեկան, կոկետկայ ու շատախօս: Սրանց հետեւից էլ 2-3 ռուս օֆիցերներ[1]: Շուտով պարզուեց մեզ համար, որ սրանք լրտեսներ են: Օրիորդներին հետապնդող օֆիցերների թուին միացաւ նաեւ մեզ հետ գնացող 55-60 տարեկան գնդապետը՝ Ազովսկի գնդից: Երբ հասանք Բաւայ-Ռուսսկայ, օրիորդները չքուել էին: Հասակով աւելի երիտասարդ բժիշկներն արգահատանքով էին

[1] Օֆիցերներ - սպաներ:

նայում իրենց զինուորական ընկերների վրայ՝ նրանց անվայել վարքի ու բերանբացութեան համար:

Դեկտեմբերի 15-ին– երկուշաբթի: Այսօր առաւօտեան վաղ հասանք Բաւայ-Բուոսկայ՝ 67 վերստ Լուովից: Լուովը վերցուել է երկու կողմից՝ Բադկոյ-Դմիտրեան[1] այստեղից, Բուսիլովը[2] Կրասնոյի կողմից: Փոքրիկ քաղաք է, որի կայարանն ամբողջապէս այրուած է: Ինդենդանտային[3] հսկայական պահեստներ են: Կիեւից եկած մի ռուս մի ինչ-որ շինութեան վերին յարկում մի բուֆետ է պահում, որտեղ թէեւ թանկ գնով, բայց եւ այնպէս ուտելու բան ենք գտնում:

Այստեղ սպասեցինք մինչեւ ժամի 12-ը: Այստեղ պատահմամբ ծանօթանում եմ գանձակեցի Աւետիս Տէր-Յովհաննիսեանի հետ, որ Գալիցիայի փոստ-հեռագրական վարչութեան կառավարչի օգնականն է: Այստեղ է նաեւ Խարկովի համալսարանի ուսանող «յայտնի» Սաղաթէլ Յարութիւնեանը, որն այժմ բժիշկ է: Սա ամէն կերպ աշխատում է իրեն արդարացնել, մեղքն ամբողջովին հրէայ ուսանողների վրայ գցելով, որոնց ինքն «օրգանապէս տանել չի կարողանում»:

Դեկտեմբերի 16-ին:– երեքշաբթի:– Մինչեւ Եարոսլաւլ 87 վերստ է, որ մենք կտրում ենք ուղիղ 32 ժամում: Այսօր առաւօտեան ժամի 9-ին հասանք Լոբաչով՝ Պերեմիշլի դիմաց: Բերդի թնդանոթների որոտը պարզ լսում էինք: Այս շրջանը եւս մեծ կռիւների վայրեր են: Այստեղ բնութիւնը փոխւում է,– աւելի տաք է, ձիւն չկայ, անտառներ՝ նոյնպէս: Երբեմն ճահիճներ են երեւում: Առաւօտեան ժամի 7-ին վագոնի դուռը բաց եմ անում թէ չէ, ինձ շրջապատում են մի խումբ ռուսին կանայք, երեխաներ ու օրիորդներ– նիհար, գունատ, մարած աչքերով: Կարծես ինքը մահն է նայում նրանց աչքերի միջից: Ձեռքները դողդողալով ու վախկոտ կերպով պարզած «խլիբ» են խնդրում:

– Հաց չունինք, սովից մեռնում ենք, հաց տուէք:

Փողից հրաժարւում են:

Երեկոյեան ժամի 5-ին մօտ հասանք «Պոդսանոկ» կայարանը, որից մէկ ու կէս վերստի վրայ Սան գետն է, այն գետը, ուր այնքան ահռելի կռիւներ տեղի ունեցան, այնքան մարդկային արիւն հոսեց: Սա Վիսլայի ճիւղն է: Սանի վրայ է կառաղի կռիւների օբյեկտ կամուրջը, որը աւստրիացիք նահանջելիս պայթեցրել են, իսկ ռուսները տախտակով կարկատել են: Ես եւ 3 բժիշկ առաջ ենք անցնում կամուրջը դիտելու մինչեւ գնացքի գալ մեզ հասնելը: Ահա եւ նա կամուրջը՝ 170 սաժեն[1] երկարութեամբ: Յիշեցի Արաքսի կամուրջը՝ Մարգարայի մօտ: Կամուրջի ձախ թեւից մօտ 50 սաժեն պոկուել, գետին է ընկել: Այսքանն էլ կարկատած է այնքան, որ գնացքներն անցնեն, սակայն առանց շոգեկառքի, հետեւից հրելով: Շոգեկառքը կամուրջ չի բարձրանում, այստեղ մարդիկ են առաջ շարժում:

Կամրջի կողերն ամբողջովին խրամատներ ու տրանշէյներ[2] են լարացանցներով: Այստեղ ամէնից սոսկալին գայլափոսերն են (волчья яма)[3], որոնց իբրեւ կռուի տեխնիքական մի-

[1] Ռադկոյ Դիմիտրեւ (1859-1918) - բուլղարական ծագմամբ ռուսական բանակի գեներալ, մասնակցել է առաջին եւ երկրորդ բալկանեան պատերազմներին, ակտիւ մասնակցութիւն է ունեցել նաեւ առաջին աշխարհամարտի արեւմտեան ռազմաճակատում՝ յատկապէս Գալիցիայի համար մղուող մարտերին:

[2] Ալեքսեյ Բրուսիլով (1853-1926) - ռուսական եւ խորհրդային բանակների գեներալ, ռազմական մանկավարժ: Ակտիւ մասնակցութիւն է ունեցել առաջին աշխարհամարտի տարիներին արեւմտեան ռազմաճակատում մղուած ռազմական գործողութիւններին, 1916 թուականից հանդիսացել է Հարաւ-արեւմտեան ռազմաճակատի գլխաւոր հրամանատարը: 1916 թուականին յաջող ռազմական օպերացիայի շնորհիւ իր ղեկավարած զօրքը ճեղքել է աւստրիական զօրահրամանատար Իոսիֆ Ֆերդինանդի կողմից ղեկավարուող զօրագիծը եւ առաջ է շարժուել 65 կմ: Այս ռազմական օպերացիան պատմութեան մէջ մտել է որպէս «Բրուսիլովեան ճեղքում» անունով:

[3] Ինդենդատ - համբարակ:

[1] Սաժեն - ռուսական հին երկարութեան չափի միաւոր, որ հաւասար է 2,134 մետրի:

[2] Պաշտպանական նշանակություն ունեցող խրամափոսեր:

[3] Գայլափոսերը դրանք յատուկ փորուած փոսեր էլ.ն, որոնք ունէին 1.70մ խորութիւն, որոնց մէջ տեղադրւում էին սրածայր մետաղաձողեր: Այս փոսերը սովորաբար պատրաստում էին շախմատաձեւ եւ խնամքով թաքցուում էին: Նման փորուածքներն օգտագործուել են որսորդութեան

ջոց աւելի քան տմարդի են ու դատապարտելի: Ո՛Յ, մարդն իր ոսոխին ոչնչացնելու համար կատարեալ գազան է...

Այս տեսարաններն ինձ համար նորութիւններ են. ես անցնում եմ մեծ հետաքրքրութեամբ, զարմանքով ու խորին զայրոյթով: Սակայն ի՞նչ արժէ իմ, կամ ինձ նմանների զայրոյթը:

Դիմացներս 1-2 վերստի վրայ է Եարոսլաւլը: Եկաւ եւ մեր գնացքը: Նստեցինք: Զմոռանամ ասել, որ ջուր չունենալու պատճառով ամբողջ օրը չենք լուացուել:

Դեկտեմբերի 17-ին. չորեքշաբթի: Առաւօտեան ժամի 7-ին Զաշով ենք հասնում: Գիշերն ինձ համար անտանելի է անցնում՝ համարեայ չեմ քնում: Առաւօտեան վաղ քաղաք եմ ուղեւորւում՝ 8-րդ զօրաբանակի շտաբը: Բանից դուրս է գալիս, որ շտաբը պատրաստւում է Կրասնոյ անցնելու: Սա լաւ նշան չէ: Հերթապահ գեներալ կոմս Հէյտենը[1] ինձ առաջարկում է մի օր էլ սպասել եւ միանալ իրենց այն խմբին, որ մեկնելու է վաղը:

Իջնում եմ մի հիւրանոցում, ուր համարեայ ոչինչ չկայ: Այստեղ զարմանքով ու սոսկումով եմ իմանում, որ այդ կողմերում հացի ֆունտը[2] արժէ մէկ ռուբլի... լուցկի, սապոն չկայ: Մի կերպ թէյ խմելուց յետոյ ընկնում եմ հիւանդանոցները, սակայն ոչ մի հայի չեմ պատահում: Լսում եմ, որ տիֆով հիւանդների բաժնում մի հայ կայ, գնում եմ, դուրս է գալիս վրացի: Միայն 273-րդ հիւանդանոցում 2 հայ բժիշկների եմ պատահում՝ Օթարեան եւ Զմշկեան, որոնք ինձ հաւատացնում են, թէ 8-րդ զօրաբանակում հայեր չկան: Նոյնն են պնդում այդ զօրաբանակից եկողները, տեղիս 13 հիւան-

նպատակով, սակայն դրանք դեռեւս հնագոյն ժամանակներից օգտագործուել են նաեւ ռազմական գործում, որը մեծ վնասներ է հասցրել թշնամու զօրքին: Նման գայլափոսեր լայնօրէն կիրառուել են առաջին աշխարհամարտի տարիներին:

[1] Կոմս Դմիտրի Հէյտեն (1862-1926) - ռուսական բանակի գլխաւոր շտաբի գնդապետ, հասարակական-քաղաքական գործիչ, առաջին աշխարհամարտի տարիներին ծառայել է արեւմտեան ռազմաճակատում, եղել է 8-րդ բանակի շտաբի հերթապահ գեներալը:

[2] Ֆունտ - ռուսական հին ծանրութեան չափի միաւոր, հաւասար է 409,5 գրամի:

դանոցների գթութեան քոյրերը, իրազեկ պաշտօնեաները: Վճռում եմ գնալ 3-րդ զօրաբանակ, որ Ռադկոյ-Դմիտրեւի հրամանատարութեան տակ է եւ գտնւում է Ռադոմիսլում: Մօտս գտնուող նուէրների կապոցը յանձնում եմ Վենտրաուբէ-ին՝ բաժանելու 8-րդ զօրաբանակի դիրքերում գտնուող զինուորներին, իսկ ինքս պատրաստւում եմ գնալու Դէմբիցայ-Զասով-Ռադոմիսլ: Գիշերում եմ այստեղ:

Դեկտեմբերի 18-ին. հինգշաբթի: Դէպի Տարնով է գնում մի յատուկ գնացք, որով Խարկովի բիրժային կոմիտեը ծննդեան նուէրներ է ուղարկում զօրքին: Տանում են բաժանելու յատուկ ներկայացուցիչներ: Ես մի կերպ տեղ եմ գտնում սրանց վագոնում: Հետս եկող բոլոր բժիշկներն այստեղից ցրւում են դէպի իրենց պաշտօնավայրերը, մեծ մասն 8-րդ զօրաբանակ: Բոլորը գոհ են, երջանիկ, աշխատելու բուռն ցանկութեամբ լցուած: Բոլորն շտապում են... Վագոնում 16-րդ Ուլանական գնդի մի քանի օֆիցերներ կան: Նրանցից մէկը տփխիսեցի հայ է, Վարդան Նիկ. Զալինեան, որ այստեղ Վլադիմիր է դառել: Ծանօթանում ենք.

— Հայերէն խօսո՞ւմ էք,— հարցնում եմ:

— Ոչ,— լինում է պատասխանը:

Այս հարց ու պատասխանը զարմացնում է միւս օֆիցերներին.

— Ի՞նչպէս, հարցնում է նրանցից մէկը. մարդ իր մայրենի լեզուն չիմանա՞յ. դա աններելի, անթոյլատրելի է, это дико!. Վարդան Վլադիմիրիչս իրան բաւական անյարմար է զգում, մի քիչ էլ կարմրում, լեզուն ծամծմում է...

Զալովից դէպի արեւմուտք բնակչութիւնը հետզհետէ խտանում է. հողն աւելի արգաւանդ ու ջրովի, պտղատու այգիներն աւելի շատ են, գիւղերն աւելի կանոնաւոր են, տները գեղեցիկ ու հարուստ:

Երանի թէ մեր Նախիջեւանը, Երեւանը, Ալեքսանդրապոլը, Գանձակն այսպէս լինեն: Ըստ ամենայնի երեւում է, որ այս շրջանի ազգաբնակչութիւնն աւելի բարեկեցիկ է քան Եարոսլաւլի շրջանում: Պատերազմի հետքեր չկան: Այս մա-

սերում թնդանոթներ չեն երեւացել: Ոչ մի մուրող ձեռք...

Երեկոյեան ժամի 4-ին հասնում ենք Դէմբիցայ: Սա ռուսական վերջին կէտն է: Յաջորդ կայարանը Տարնովն է, որ հակառակորդի ձեռքին է: Ամբողջ քաղաքում մի կենդանի շունչ չի մնացել. բոլորը փախել են: Այստեղ-այնտեղ միայն զինուորականներ են երեւում: Գնում ենք դէպի էտապի կոմենդանտը՝ նախ 3-րդ զօրաբանակի տեղն իմանալու, ապա փոխադրական միջոց խնդրելու: Իմանում ենք, որ շտաբը հէնց Ռադոմիայ աւանում է, իսկ ձի չունի: Մարդիկ է ուղարկում շրջակայ գիւղերից սայլեր հանելու: Մնում էր այստեղ գիշերել: Մեզ առաջնորդում են մի մեծ բնակարան, որի ճակատին գրած է «պ.պ.օֆիցերների համար»: Ներս ենք մտնում: Մի բաւական գեղեցիկ ու երկյարկանի տուն է՝ այժմ անտէր մնացած: Ներսում ոչինչ չկայ: Տան պահապանը մի հասարակ զինուոր է: Նախկին շքեղ տան յատակը ծածկուած է բառի բուն նշանակութեամբ մի մատնաչափ կեղտով: Հազիւ է նկատւում, որ յատակը պարկետ է: Ես եւ երիտասարդ ինժեներ Իւանուշկինը, որն ի դէպ ասած, ինձնից չի հեռանում, մտնում ենք մի սենեակ: Այստեղ դրուած է մի սեղան, մի պահարան, մի երկաթէ քաշարան եւ մի ծաղկաման՝ արդէն թօշնած ծաղիկներով: Պատից կախուած են Փրկչի պսակապատ գլխանկարը եւ Ֆրանց-Իոսիֆի ու իր ամուսնու պատկերները[1]: Մերունու կայսեր նկարը կարծես դիտմամբ են թողել՝ ականատես լինելու իր քայքայուող ու փթած կայսրութեան մի մասի՝ Գալիցիայի աւերմանը: Հարեւան սենեակում, ազգով չերնոգորեց մի ռուս պաշտօնեայ հարցաքննում է 40-ի չափ աւստրիական գերի օֆիցերների: Լուովից մինչեւ այստեղ առնուազն 10.000 գերիների ենք պատահել՝ բոլորն էլ յոգնած, տառապած ու թեթեւ հագնուած, մանաւանդ անպաշտպան են սրանց ոտները: Լեհերին ու ռուսիններին երդուեցնելուց յետոյ ազատ են արձակում, իսկ վենգերներին, որոնք թուով դեռ շատ քիչ են, պահում,

[1] Էլիզաբեթ Բաւարացի (1837-1898) - բաւարացի արքայադուստր, Աւստրիայի կայսր Ֆրանց Եօզեֆ Առաջինի կինը, որը 1854 թ. վերջինիս հետ ամուսնութիւնից յետոյ դառնում է Աւստրիայի կայսրուհին:

քշում դէպի երկրի ներսերը: Սպաներին, ինչ ազգից էլ լինեն, չեն արձակում: Սրանցից մէկը՝ ազգով ռուսին, մեր սենեակն է գալիս: Հրաւիրում ենք նստել: Սովորական հարց ու բարեւից յետոյ հարցնում ենք.

— Ձեզ որտե՞ղ գերեցին.

— Տարնովի մօտ.

— Ասացէք, ի՞նչպէս է զգում իրեն Աւստրիան՝ պաշարի կողմից:

— Ո՜Յ... շատ լաւ, չհաւատաք՝ եթէ հակառակն ասեն: Նոյնիսկ Պերեմիշլը բաւական պաշար ունի՝ ամէն տեսակի:

— Ի՞նչպէս է, որ աւստրիական գերիների թիւն այնքան շատ է. մեղմ կերպով հարցնում ենք:

— Կարծում էք՝ ձերը պակա՞ս է: Մեր գերի ընկնելը հասկանալի է: Մանաւանդ մենք ռուսիներս կռուել չենք ուզում, թէ ես, թէ հայրս երկար ժամանակ բանտարկուած ենք եղել՝ իբրեւ Մոսկոֆիլներ[1], իբրեւ Կաչկովսկու հետեւողներ[2], որ տարիներ շարունակ քարոզել է, թէ մեր փրկութիւնը Ռուսաստանին միանալու մէջ է: Այս բոպէին էլ Վենգրական բանտերը լիքն են մոսկոֆիլներով, որոնք ռուսների դէմ կռուել չեն ուզում: Ես, ինձ նման շատ շատերը, ուղղակի սպասում էինք, թէ ե՞րբ պիտի մօտենանք ռուսներին, որ անձնատուր լինենք: Եւ այժմ շատ ուրախ ենք, որ վերջապէս մեր ցանկութիւնը կատարուեց: Բայց, այ ձերոնցից գերի ընկնելը մեզ ուղղակի զարմացնում է:

— Ձեր կարծիքով՝ ինչ ոյժ են ներկայացնում գերմանացիները.

— Նրանց հետ զգոյշ եղէք, նրանք շատ են ուժեղ եւ դեռ շատ երկար կը կռուեն:

— Իսկ դիրքերում ուտելու պաշար շա՞տ ունէք:

— Որքան կուզէք, դիրքերում նոյնիսկ սամովարներ ունենք: Իսկ տաք կերակուր— համարեայ միշտ:

[1] Նկատի ունի՝ որպէս ռուսամէտներ, ռուսական կողմնորոշում ունեցողներ:

[2] Միխայիլ Կաչկովսկի (1802-1882) - հասարակական գործիչ, բարեգործ, հրապարակախօս եւ իրաւաբան: 1861 թ. վերջինս Լուովում հիմնել է «Խօսք» թերթը, որով տարածել է իր գաղափարները:

– Ձեր զօրքերում տարափոխիկ հիւանդութիւններ չկա՞ն:
–Բնաւ: Մեր սանիտարական գործը շատ լաւ է դրուած:
– Դուք ի՞նչ չին[1] ունէք:
– Ես լէյտենանտ եմ:

Յանկարծ հարեւան սենեակում դաշնամուր է հնչում: Ապշում ենք: Հաւատալներս չի գալիս: Այդ ձայնին վաղուց էինք կարօտել: Բայց դա իրողութիւն էր: Տէրերը թողել էին նաեւ դաշնամուրը, որի վրայ մեր սպաներից մէկը «Հայրենիքի կարօտն» էր նուագում: Ասում են՝ գործիքը շատ է հաւանել եւ ուզում է կնոջ համար ուղարկել: Այստեղ-այնտեղ բացիկներ ու ձեռնարկներ են երեւում: Երեւում է՝ այս տանը նկարողներ եւս եղել են: Կարտօնի[2] վրայ նկարած էր աղօթող աղջկայ մի սիրուն գլուխ, տակին էլ լեհերէն գրած էր–®®Նկարեց Մարին»՝ 14 տարեկան: Ես շատ հաւանեցի այս նկարը: Առհասարակ այս տունն ինձ մտքերի մէջ ձգեց, վերցրի այդ նկարն ու հետեւում գրեցի «Բարի Մարիա, երբ անփորձ վերադառնաս այս տունը, իսկ այդ աղօթելով ցանկանում եմ, գիտցի՛ր քո այս սիրուն գործը ընկել է մի հայ քահանայի ձեռք՝ եկած Արարատ սարի մօտերքից: Սովորած կլինիս: Այդ հայ քահանան սրտով ցանկանում է, որ դու անփորձ մնաս, լաւ մարդ դառնաս, եւ քո հոգու ամբողջ ուժով բողոքես ու կռուես պատերազմի դէմ, որ աւերել է քո Դէմբիցան, ձեր տունը, եւ քեզ ու միլիոնաւոր մարդկանց գաղթական է դարձրել: Ես էլ եմ այդ մասին աղօթում: Գրածս հայերէն է՝ armianska: Օրհնում եմ քեզ»: Ստորագրեցի «Հայ քահանայ–քսէոնզ»[3]:

Ձնայելով, որ արդէն գիշերուայ 11 ժամն է, սակայն եկող աւստրիացի գերիներին թիւ չկայ: Մեր դիմացի հրապարակը լեփ լեցուն է:

Դեկտեմբերի 1-ին. ուրբաթ: Առաւօտեան ես եւ Իւան Ֆէօդորովիչը (Իւանուշկին) դուրս ենք գալիս եւ քաղաքը դիտելու եւ մի քանի անհրաժեշտ գնումներ կատարելու՝ հաց, մոմ, միս... Մի փոքր առաջ ենք գնում՝ ոչ մի շունչ: Դատարկ ու աւեր: Տպաւորութիւնը շատ է ծանր. կարծես ամէն տեղից մահն ինքն է մեզ նայում հազարաւոր աչքերով: Հէնց այդ ժամանակ էլ թնդանօթի ձայներ են հասնում մեզ, որ գնալով սաստկանում են: Շատ մօտիկում թնդանօթային մենամարտ է: Մենք սիրտ չենք անում առաջ գնալ, վախենում ու թեքւում ենք դէպի կայարան՝ այնտեղ մի բան գտնելու: Սակայն այստեղ էլ՝ ոչ ոք ու ոչինչ: Միայն օֆիցերներ ու զինուորներ են, որոնք դաշտում կրակ են արել, կերակուր են պատրաստում: Վերադառնում ենք սենեակ, ուր մեր դենշչիկները, ինչ որ ձեռքներն է ընկել, վառարանն են լցրել, սենեակը տաքացրել ու թէյ պատրաստել: Արածները վայրենութիւն է, բայց մենք գոհ ենք՝ չէ՞ որ չենք մրսելու: Կերակուր ենք ուտում զինուորների պղնձից դաշտում պատրաստուած, որ մեզ այնքան համեղ է թւում. այստեղ մենք վերջնականապէս համոզուեցինք, որ մոմի, շաքարի, սապոնի մասին մտածելն աւելորդ է, ինչպէս նաեւ հացի՝ շուկայից. կրկին կոմենդանտին ենք դիմում: Դարձեալ ձի չկայ, ուրեմն դարձեալ այդտեղ պիտի մնանք գիշերելու: Իսկ անիծուած թնդանօթները շարունակում են որոտալ, հա որոտալ:

Յանկարծ մեզ յայտնում են, թէ փոստային սայլեր են գնում Ռադոմիայ: Դիմում ենք գլխաւորին՝ մեզ եւս ընդունելու: Սիրով համաձայնւում է: Ժամի 3 եւ երեք քառորդին ճանապարհ ենք ընկնում: Մէկ ժամից յետոյ կտրում ենք Սանոկ վտակը, ուր բաւական խոշոր կռիւներ տեղի ունեցան: Ճանապարհը սաստիկ ցեխ է, ձիերը հազիւ են շարժւում: Հետզհետէ բարձրանում ենք, նոյնիսկ մի փոքրիկ լեռնացք ենք կտրում: Ճանապարհներին անվերջ խրամատներ, տրանշէյներ, գայլափոսեր, կոտրտած ու թափթփած սայլեր ու սատկող ձիաներ, երամներով ագռաւներ, ագռաւներ, ագռաւներ՝ խոշոր, պարարտ, փայլուն... տեղ տեղ էլ կարտոֆիլի չժողոված արտեր... դատարկ աւերած գիւղեր:

Ախ, եթէ նկարիչ լինէի...

[1] Չին - այստեղ՝ զինուորական կոչում:
[2] Կարտոն - ստուարաթուղթ:
[3] Քսէոնզ - լեհերէն քահանայ:

Ահագին դժուարութեամբ ժամի 8-ին յոգնած, տանջուած հասանք Լիբուրգս գիւղը:

Մեղմ անձրեւ է մաղում, պարզւում է, որ 4 եւ մէկ քառորդ ժամում 10 վ. ճանապարհ հազիւ ենք անցել: Մի այդքան էլ ունինք գնալու: Առաջ գնալն անկարելի էր, վճռում ենք այդտեղ էլ գիշերել:

Գերագոյն հրամանատարի կարգադրութիւնն է այսպիսի դէպքերում ու տեղերում ոտին (գիւղապետին) դիմել: Կանգնած խորհրդակցում ենք, իսկ 40-50 քայլի վրայ գիւղացիք մեզ են նայում՝ երկչոտ: Վճռեցինք մի հրացանաւոր զինուոր ուղարկել ոտի հետեւից: Զինուորի շարժուելն ու գիւղացիների փախչելը մէկ եղաւ: Բայց եւ այնպէս մեր մոսկուիչ զինուորն առաջ գնաց: Կէս ժամից աւելի սպասեցինք, ոչ ոք չերեւաց: Ձիերը ցրտից դողում են, մեր վիճակը լաւերից չէ: Հէնց այդ ժամանակ մեզ մօտեցաւ մի ծերունի, ի հարկէ ուղարկուած էր, եւ յայտնեց, թէ գիւղի ծայրին ուսումնարան կայ, ուր 2 ռուս օֆիցերներ են ապրում: Ուրախացանք ու շտապեցինք: Ճիշտ որ մի բաւական սիրուն շէնք էր դպրոցը: Դուռը ծեծեցինք: Դուրս եկաւ մի տիկին՝ ուսուցչի կինը, եւ յայտնեց, որ եթէ 2 վերստ էլ գնանք, աւելի յարմար գիւղ կը հասնենք, իսկ իրենց ուսումնարանը ցուրտ է: Պարզ էր, որ մեզ գլխից հեռացնում էր, անհաճոյ հիւրեր էինք: Սակայն մենք յայտնեցինք, որ ցուրտը մեզ ոչինչ չի անիլ, միայն թէ ծածկի տակ լինենք: Հէնց այդ ժամանակ եկաւ ուսուցիչը, որ երբ համոզուեց, թէ մենք իրենցից ձեռք քաշողը չենք, ակամայ ներս թողեց: Մտանք դասարան՝ մի մեծ ու լուսաւոր սենեակ, ուր ամէն տեղ մարդկային կղկղանք էր սառած:

Սա ռուս զինուորի գործն է. եկել, գիշերել են եւ կարիքի դէպքում նեղութիւն չեն կրել գոնէ դուրս գնալ:

Ճիշտ էր ասում Վիշնեւսկին, այդպէս էր ուսուցչի ազգանունը, ռուս զինուորն ուր ոտք է դրել, իր աղտոտութիւնն էլ շուրջն է փռել: Աղտոտութեան վրայ սաստիկ ցուրտն էլ աւելացնենք: Նստարաններն իրար վրայ թափթփած, երկար, անյարմար: Պատերից կախուած էին զանազան սրբերի, ֆրանց Իոսիֆի եւ լեհական թագաւորների պատկերներ: Այս դպրոցում Վիշնեւսկին 36 տարի ծառայել է: Մենք նստած խօսում ենք: Երեւում է ուսուցչի կատարեալ անբարեացակամութիւնը: Մեր դրամով, հաց, ձու, սասիսկիներ[1], թռչնեղէն ենք ուզում: Միայն «չկայ» ենք լսում նրանից: Խօսակցութեան ընթացքում կամաց կամաց եփունջիս հետ է գնում, ու փարաջաս բացւում.

— Դուք քահանայ է՞ք— զարմացած հարցնում է նա.

— Այո, պատասխանում եմ.— հայ քսէոնզ եմ.

— Հայ քսէո՞նզ... Ելեն, Ելեն— կանչում է կնոջն ու իր 13 տարեկան աղջկան, պանը[2] հայ քսէոնզ է,- ասում է ու ծանօթացնում մեզ:

Նրանք եւ զարմանում են եւ անչափ ուրախանում: Վերաբերմունքն իսկոյն փոխւում է, ինձ խնդրում են իրենց սենեակը՝ տաք, կոկիկ, սիրուն կահաւորուած, եփող սամովարը սեղանի վրայ: Հարցեր է, որ թափւում են գլխիս՝ ո՞վ եմ, որտեղի՞ց եմ գալիս, ի՞նչ ունեմ, ինձ կանչե՞լ են, թէ ինքս եմ եկել եւ այլն: Վերջն էլ խնդրում են, որ հէնց իրենց մօտ գիշերեմ: Հրաւիրում եմ նաեւ իմ 3 ընկերներին, այդտեղ ապրող ռուս եւ գերմանացի անասնաբոյժներին, յայտնում են, որ ամէն ինչ կայ՝ ձու, սագ, բադ, սասիսկի. հաց եւ այլն, ինչ ուզենք: Շրջապատում ենք թէյի սեղանը, որ 1 ժամից յետոյ ծածկւում է մեր ուզած բոլոր ուտելիքներով: Ստեղծւում է մի տաքուկ, հաճելի ընտանեկան սեղան, որ տանից դուրս գալուս, որից չէի տեսել: Նա հոգում է նաեւ մեր զինուորների մասին: Ուտելիք պատրաստելու համար իսկոյն մի կին է հրաւիրում: Աղջիկը՝ Կրակովի գիմնազիայի աշակերտուհի, նոյնպէս մասնակցում է մեր խօսակցութեանը:

Իմ քսէոնզ լինելն այնքան օգնեց մեզ, պակաս չօգնեց նաեւ հայ լինելս:

Ուսուցչից մենք իմացանք, որ այդ գիւղն ունի 200 տուն,

[1] Սասիսկիներ - նրբերշիկներ:

[2] Պան - լեհական (նաեւ մինչեղափոխական շրջանի ուկրայինական ու բելոռուսական) ազնուական: Յարգական դիմելաձեւ, պարոն:

որից 15 տունը հրէաներ են: Հրէաները բոլորն էլ առեւտրականներ, վաշխառուներ են:

Լեհերը պարապում են երկրագործութեամբ ու պարտիզպանութեամբ, ստանում են կարտոֆիլ, ցորեն, գարի, վարսակ, մեծ քանակութեամբ բալ, նաեւ տանձ ու խնձոր: Կարտոֆիլից օղի էլ են քաշում:

Դպրոցը վեցամեայ է՝ 240 երեխաներով, ուսումը պարտադիր է, առարկաներն են– լեհերէն, կրօն, թուաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, նկարչութիւն, երգեցողութիւն, բնագիտութիւն, ձեռարուեստ, գիմնաստիկա[1], դասատուներն են գիւղի քսէոնզը, Վիշնեւսկին եւ 2 ուսուցիչներ:

Դպրոցի վրայ ծախսում են տարեկան մօտ 4000 կրօն (մի կրօնը= 40 կոպեկի): Ներկայ ուսումնական տարում արեւմտեան Գալիցիայում ոչ մի դպրոց չի բացուել, իսկ Լուովի շրջանում միայն մի քանի տարրական դպրոցներում պարապմունքներ կան: Մեր տան տէրը սեպտեմբերից ռոճիկ չի ստացել:

Ձենք կարող չխօսել ներկայ պատերազմից.

– Ասացէք, խնդրեմ,– դառնում եմ ես Վիշնեւսկուն– կարդացի՞ք լեհերին ուղղած մեծ իշխանի կոչը.

– Ինչպէս չէ:

– Ի՞նչպէս վերաբերուեցիք լեհերդ:

– Լաւ կը լինի– ասացին լեհերը:

– Դուք ինձ չէք պատասխանում, դիպլոմատութիւն[2] էք անում, եթէ ինձ չէք հաւատում աւելի լաւ է լռենք, իսկ եթէ հաւատում էք մի հոգեւորականի, որ ձեզ հետ պոլիտիկայ[3] չի բանացնում, պարզ ասացէք– ի՞նչպէս վերաբերուեցիք– հաւատով, թէ թերահաւատութեամբ:

Վիշնեւսկին կանգ առաւ, մի րոպէ մտածեց ու որոտաց.

[1] Գիմնաստիկա - մարմնամարզութիւն:
[2] Դիպլոմատություն - դիվանագիտութիւն:
[3] Պոլիտիկա - քաղաքականութիւն:

– Ի՞նչպէս կարող էինք հաւատալ: Մոռացա՞ք Մուրաւեւսկի օրերը[1], չգիտէ՞ք, որ Լեհաստանից մինչեւ Սիբիր մեր լաւագոյն հայրենակիցների արիւնով է ծածկուած: Ցրանց Իոսիֆը՝ մեր սիրելի կեսարը, մեզ աչքի լոյսի պէս է սիրում: Իսկ եթէ Աստուած. այդպէս է կամեցել, որ մեր երկիրն այժմ Ռուսաստանին անցնի, ի՞նչ կարող ենք անել: Սակայն Լեհաստանը չի լռիլ, մինչեւ ազատ ու միացած չլինի, եւ մենք դրան կը հասնենք: ԱՄ. անարդար բան չի ուզիլ:

Այդ ժամանակ երկու բժիշկներն ինձ հրաւիրեցին իրենց սենեակը եւ տուին Կրակովում լոյս տեսնող «Piast» լրագրի[2] N 25-ը, որի Carcki ubiccanki[3] առաջնորդողի հայերէն բառացի թարգմանութիւնն եմ բերում.

«Ցարական խոստումները». Ռուսական զօրքերի հրամանատարը՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը, հրատարակել է մի հրովարտակ՝ լեհերին ուղղուած, որի վրայ մենք մեր ուշադրութիւնը չէինք դարձնիլ, եթէ չլինէր նրա լկտի բովանդակութիւնը: Մեծ իշխան Նիկոլայն այդ հրովարտակում հանդէս է եկել որպէս լեհացիների «Ազատարար» եւ այն էլ ոչ միայն այն լեհերի, որոնք ապրում են Ռուսաստանի սահմաններում, այլ եւ այն լեհերի, որոնք ապրում են Աւստրիայում ու Գերմանիայում: Նա իր հրովարտակում յայտարարում է, թէ ռուսական զօրքը լեհացիների համար Ռուսաստանի հետ միացման երջանիկ համբաւն է բերում, խոստանում է սահմանների ոչնչացում, որոնք լեհական ժողովրդին բաժան-բաժան են անում: Այլ եւ առաջ է բերում լեհերի յաղթանակը Գրունուալդի[4] մօտ, սին եւ կեղծ կարեկցութեամբ վերյիշելով

[1] Նկատի ունի 1863-1864 թթ. լեհական հակառուսական ապստամբութիւնը, որը դաժանօրէն ճնշում է ռուս ռազմաքաղաքական գործիչ Միխայիլ Մուրաւեւի (1769-1866) կողմից:
[2] «Piast» - լեհական շաբաթաթերթը հրապարակուել է 1913-1939 թթ. եւ 1945-1949 թթ. Կրակովում:
[3] Լեհերէնից թարգմանաբար նշանակում է ցարական հրովարտակ:
[4] 1409-1411 թթ. «Մեծ պատերազմի» ընթացքում 1410 թ. Գրունուալդի ճակատամարտում լեհ-լիտուական զօրքերը վստահ յաղթանակ տարան Տեւտոնական ասպետների դէմ, ինչն էլ հնարաւորութիւն տուեց ընդլայնել պետութեան սահմանները հիւսիսում:

թէ մէկ ու կէս դար առաջ Լեհաստանի կենդանի մարմինը մաս մաս յօշոտուեց:

Հարիւր յիսուն տարի շարունակ Ռուսաստանը եղել է մեր դահիճը, 150 տարի շարունակ նա մեզ ամէն քայլափոխում լլկել, զրկել է ամէն բանից, բարոյալքել է ժողովրդին, լլկել ու անարգել է նրա հոգին, եւ ցարից ու մեծ իշխանից ոչ մէկի մտքով չի անցել՝ եղբայրական միութեան ձեռք մեկնել դէպի լեհացիները: Զկայ մի տաժանավայր, որտեղ երբեւէ եղած չլինեն լեհերը: Ամբողջ ճանապարհը՝ Վարշաւայից սկսած մինչեւ Սիբիրի ստեպները[1], մինչեւ ասիական Մայր ցամաքի ցուրտ ծայրերը թրջուած է լեհական դատի նահատակների արիւն-արցունքով: Իսկ այժմ, երբ Ռուսաստանին անխուսափելի ջախջախումն է սպասում, ցարական պալատում յիշել են, թէ լեհացիք եւս մեծ ու կենդանի ժողովրդի պէս բան են, եւ դիմում են մեզ՝ եղբայրական միութեան կոչով: Այդպիսի լկտիութեան կարող է ընդունակ լինել միայն արիւնարբու ցարը իր ազգականներով: 150 տարի շարունակ ցարերը չարչարել, նահատակել են լեհացիներին՝ խլելով նրանցից գրեթէ ապրելու իրաւունք, իսկ այժմ յանկարծ, երբ նեղն են ընկել, ձեռքերը մեզ են մեկնել... խոստումներով:

Շատ լաւ ենք յիշում ցարական բարեկամութիւնները, դեռ չափազանց կենդանի ենք պահում մեր յիշողութեան մէջ բարբարոսական ճնշումները, սպանութիւնները, կալուածքների բռնագրաւումները՝ 1863 եւ 1905 թուականներին[2], մեր աչքերի առաջ չափազանց կենդանի են այն հարիւրաւոր կախաղանները, որոնց վրայ կախել են մեր ժողովրդի ազնուագոյն զաւակներին, չափազանց կենդանի են հնչում մեր ականջներում այն շղթաների զրնգոցը, որ կրել, քաշ են տուել լեհական դատի տասնեակ հազարաւոր նահատակները ռուսական մտրակով դէպի Սիբիր քշուելիս:

Այս բոլորը չափազանց կենդանի են, որ թոյլ տանք մեզ մեծ իշխան Նիկոլայի թակարդն ընկնել: Մենք մեր սեփական կաշուի վրայ փորձել ենք Ռուսաստանի բարբարոսութիւնները: Մենք, որ դարերից ի վեր եղել ենք եւրոպական կուլտուրայի եւ քաղաքակրթութեան առաջապահներ, որ դարերից ի վեր այդ քաղաքակրթութեան պահպանութեան գործում կուրծք ենք դէմ տուել, մինչեւ վերջը կռուել ենք այդ կուլտուրան ցարական բարբարոսութեան դէմ պաշտպանելու համար, շատ լաւ գիտենք, թէ ինչ պիտի մտածենք ցարական խոստումների մասին: Գիտենք շատ լաւ, եթէ անհրաժեշտութիւն չլինէր, եթէ չլինէր պարտուելու երկիւղը մոսկալները[1] ոչ թէ հրովարտակով կը գային մեզ մօտ, այլ հուր ու սրով: Նրանք այն ժամանակ են խոստանում, երբ վախենում են, իսկ երբ նրանց գործը լաւ է գնում, մոռանում են իրենց խոստումները, իսկ ով դրանց մասին յիշեցնում է նրանց, այդպիսիներին կապկպում են շղթաներով, որովհետեւ ցարիզմն ստրկութեան ու մտրակի իշխանութիւն է, դա նրա էութիւնն է, առանց որի նա գոյութիւն ունենալ չէր կարող:

Դրա համար է, որ մեծ իշխան Նիկոլայի հրովարտակը Լեհաստանում ընդունուել է ծիծաղով: Մենք մեր երկրում այդ կոչին պատասխանեցինք շատ ուժգին կերպով— Լեգէոններ կազմակերպելով, որոնք կռուի են նետուում մոսկալների դէմ: Մեր պատասխանն այդ կոչին ընդհանրապէս հակիրճ կերպով է հնչում՝ զարկ մոսկալին, որովհետեւ նա է Լեհաստանի ամենամեծ թշնամին, զարկ մոսկալին եւ վրէժ առ վերջապէս այն բոլոր անարդարութիւնների, չարչարանքների ու հալածանքների համար, որոնք մէկ ու կէս դարի ընթացքում կրել ենք ցարիզմից:

Ահա մեր պատասխանը ցարիզմի խոստումներին»:

[1] Ստեպ - տափաստան:

[2] Նկատի ունի 1863-1864 թթ. լեհական ապստամբութիւնը ցարական իշխանութիւնների դէմ, որը նպատակ ունէր վերականգնելու Լեհաստանի՝ Ռեչ Պոսպոլիտայի, անկախութիւնը, եւ 1905-1907 թթ. հակացարական յեղափոխական իրադարձութիւնները, որոնք տեղի ունեցան նաեւ Լեհաստանի տարածքում: Երկու դէպքում էլ դրանք ճնշուել են, իսկ կազմակերպիչներն ու մասնակիցները ենթարկուել բռնութիւնների:

[1] Մոսկալ - պատմականօրէն այդպէս էին անուանում միջին դարերում գոյութիւն ունեցած Մոսկովեան մեծ իշխանութեան բնակիչներին: Այստեղ նկատի ունի ռուսներին ընդհանրապէս:

Այնուհետեւ ռուս բժիշկներն ինձ մի քանի քստմնելի դէպքեր են պատմում մեր զինուորների արարքներից.

– Հինգ զինուոր, պատմում են նրանք, այստեղ մօտիկ մի տան մէջ բռնել ու հերթով բռնաբարել են 14 տարեկան մի հրէուհու, որ այժմ հիւանդ պառկած է: Մի ծերունի հրէայից էլ փող են պահանջել ու չբաւարարուելով, կնոջ աչքերի առաջ սպանել են խեղճին՝ հէնց իրենց օֆիցերների ներկայութեամբ:

Ականջներիս դժուարանում եմ հաւատել, սակայն պատմողը ռուս է, ինքն էլ պաշտօնեայ:

Մենք դուրս ենք գալիս ընդհանուր սենեակ, ուր վերոյիշեալ երկու փաստն էլ հաստատում է ուսուցիչը, աւելացնելով.

– Այդպէս էլ պէտք էր այդ ժիդերին[1]:

Մենք գրոյց ենք անում մինչեւ ուշ գիշեր: Այս երեկոն ինձ համար շատ լաւ է անցնում: Մօտ երկու ամիս է՝ ընտանիքում չեմ եղած: Ժամի 1-ին շնորհակալութիւն յայտնելով մեր հիւրասէր տանտէրերին, գնում ենք քնելու: Թէ ուսուցիչը, թէ իր կինն ու աղջիկն ինձ՝ քէոնդիս, նորից են խնդրում իրենց սենեակում գիշերելու, սակայն շնորհակալութիւն յայտնելով անցնում եմ մեր ցուրտ ու դիամաթ[2] սենեակը, ուր մեր զինուորների բոլոր ջանքերը, մի կերպ սենեակը տաքացնել, զուր է անցել: Նոյն սենեակում քնած են նաեւ 5 աւստրիական գերի օֆիցերներ:

Դեկտեմբերի 20-ին. կիրակի:– Առաւօտեան թէյը դարձեալ Վիշնեւսկու մօտ խմելուց, շնորհակալութիւն յայտնելուց եւ լի ու լի բաւարարելուց (որից նա յամառօրէն հրաժարւում էր) յետոյ շարունակում ենք մեր ճանապարհը: Կէս օրին մօտ հասնում ենք լեհական Засов փոքրիկ ու կոկ քաղաքին, որ կռիւներից զերծ է մնացել: Մեր ճանապարհը եզրաւորուած է եղեւնիներով ու շամի ծառերով, իսկ քաղաքի մօտ նաեւ պտղատու ծառերով: Որքա՜ն շատ աղիւսի գործարաններ կան այստեղ: Այստեղից մինչեւ մեր նպատակակէտը 6 վերստ է՝ չափազանց խիստ ազգաբնակութեամբ: Արարատեան դաշտն եմ յիշում: Երեւում է, որ ժողովուրդն այստեղ աւելի բարեկեցիկ է ու կուլտուրական: Քաղաքից դուրս, դաշտում, ուր ճանապարհներ են կտրում իրար, ուղեցոյց սիւներ կան՝ վրան հարկաւոր մակագրութեամբ, որոնք ցոյց են տալիս գիւղի անունները, ուղղութիւնը եւ հեռաւորութիւնը: Ճանապարհները բոլորն էլ լայն են, խճած եւ ծառազարդ: Վերջապէս ժամի 1-ին Ռադամիսլ ենք հասնում՝ դատարկուած, այրուած, աւերուած մի քաղաք: Վա՜յ նրան, ով փախել է տանից, միայն 4 պատերն են մնացել, նոյնիսկ պատուհանների ու դռների շրջանակները, յատակների տախտակները կոտրտել, ջարդել, այրել են: Տներ ենք մտնում 4-5 սենեակից, երեւում է, որ կռուից առաջ այստեղ խաղաղ, ծաղկած կեանք է եղել, նոյնիսկ սիրուն, ծաղկազարդ ծաղկանոցներով. սակայն այսօր... որքան աւերիչ է ռուս զինուորը: Սենեակները մարդկային աղբով լի, ծառերը կտրտած, կոտրտած մարգերի հետքն անգամ չկայ: Ինչ որ փայտեղէն է՝ փշրած, ջարդած, այրած, ջարդոտած են նոյնիսկ զանազան մետաղէ իրեր՝ ջրհան, ծորակ, դռնափակեր, կողպէքներ եւ այլն: Ամբողջ քաղաքը զինուորական բանակի տպաւորութիւն է թողնում, անվերջ աբոզներ[1], զինուորներ, աջ ու ձախ սլացող ձիաւորներ, աւտոմոբիլներ՝ բոլորն էլ արագ, շտապով, մտազբաղ, մի բան որոնող, ականջները սրած: Կողմնակի պատահական մարդիկ հազիւ են երեւում, այն էլ վախվխելով, ամէն մի զինուորից ու ստուերից քաշուող, կեղծ ժպիտը երեսին, ամէն րոպէ պատրաստ գլխարկ հանելու, մինչեւ գօտկատեղ խոնարհուելու: Այսպէս են մանաւանդ հրէաները:

Ես դիմում եմ կոմենդանտին. 50 տարեկանից վեր մի գնդապետ էր՝ պարթեւ հասակով, ներկած մազերով: Ընդունում է ըստ սովորականի սիրալիր: Մենք համարեայ անմի-

[1] Նկատի ունի հրէաներին:
[2] Դիամաթ - սառնամանիք:

[1] Աբոզ - գումակ:

ջապէս անցնում ենք պատերազմին: Գնդապետը շատ վատատեսներից է, չափազանց յոգնած.

— Բոլորս սաստիկ յոգնած ու տրորուած ենք, իսկ մեր հակառակորդը... ո՛յ. Նա դեռ շատ է ուժեղ... մեր զինուորները շատ են յոգնած. հնար եղածին պէս գերի են մնում: Շատ ցաւալի երեւոյթ. բայց փաստ է: Ոչ մի ձեւով այդ չարիքի հետ չենք կարողանում կռուել: Գիտէ՞ք ռուս զինուորը լացող է դարձել...

Ժամը 12 եւ կէսին միասին գնացինք ճաշելու: Նա նախապէս կարգադրեց, որ ինձ համար սենեակ պատրաստեն: Սեղանատանը մօտ 50 զինուորականներ են: Ափսոս-Ռադկոյ-Դմիտրեւը՝ Բալկանեան պատերազմի հերոսը, չկայ, նրան շտապ կանչել են կայան: Այս 50 հոգու մեծ մասը փափկասուններ են: Առհասարակ ազդեցիկների ու ծագումաւորների տղաները կարողացել են սարքուել կամ շտաբներում, կամ թիկունքում կամ Կարմիր-խաչում: Այս հանգամանքը մեծ դժգոհութիւն է առաջացնում միւսների եւ յատկապէս զինուորների մէջ:

Ճաշը համեստ է, մաքուր, համեղ: Վերջում թէյ են տալիս աւստրիական շաքարով, որ բաւական անհամ է, 5 կտորը մի բաժակ չի քաղցրացնում:

Ճաշից յետոյ ներկայանում եմ հերթական գեներալին: Այստեղ համոզւում եմ, որ այս կողմերը գալը բոլորովին աննպատակ էր, որովհետեւ այստեղ հայեր չկան, եթէ լինէին էլ ոչինչ չէի կարող անել, որովհետեւ ամէնուրեք տաք կռիւներ են, ոչ դիրքերից է հնարաւոր զինուոր կանչել, ոչ էլ կարելի է դիրքերը գնալ, որովհետեւ չգիտեն, թէ ով որտեղ է: Գնում եմ դարձեալ հիւանդանոցները, դիմում եմ բժշկայսանիտարական մարմնին: Խոստանում են յաջորդ առաւօտը տեղեկութիւն տալ:

Գնում եմ սենեակս, ուր միայն ծխախեղդ կարելի էր լինել: Վառարանը ծխել էր: Խեղճ ժանդարմը, որին պատուիրուած էր սենեակը պատրաստել՝ գլուխը կորցրած դէս ու դէն էր ընկել խողովակները մաքրող գտնելու, բայց որտեղի՞ց: Ես

նրան ճանապարհ եմ դնում եւ դիմում մի պրիմիտիւ[1] միջոցի, այն է՝ վառարանը լաւ վառում ու պատուհան բաց թողնում: Պատերը այս ձեւով տաքանում, ու երբ ծուխը դադարում է, ամէն ինչ փակում ենք ու մի կերպ տեղաւորւում:

— Այս էլ քեզ պատերազմ,— ասում է Դանիէլը ու կոլոլւում: Մութն ընկնելուն պէս դուրս ենք գալիս մոմ, «մթերքներ» գտնելու, սակայն դատարկաձեռն ենք վերադառնում, որովհետեւ ոչինչ չկայ՝ ոչ մոմ, ոչ հաց, ոչ շաքար. զինուորներին տրուող սեւ հացի ֆունտն արժէ 35 կոպեկ՝ այդ էլ ձեռք չի ընկնում: Սակայն ձեռք ընկածը շատ համեղ է թւում:

Այս տանն էլ նոյն կեղտն ու ապականութիւնը: Շքեղ տան խոհանոցը ուղղակի արտաքնոց է դարձել: Եւ այս բանը հազիւ 10 սաժեն Բադկոյ-Դմիտրեւի եւ նրա շտաբի պետի բնակարանից: Ներքին յարկի սենեակներում ձիաներ են կապել:

Դեկտեմբերի 21-ին. երկուշաբթի:— Առաւօտեան ժամի 9-ն է: Գնում եմ սանիտարական բաժին: Գլխաւոր բժշկի օգնականը Կիեւցի բարի ծերունի ինձ ընդունեց իր սենեակում, հիւրասիրեց թէյով եւ հետեւեալ տեղեկութիւնները տուաւ. Դէմբիցիայումն են՝ 355, 365, 117 հիւանդանոցները (եղել եմ) Շլուցենում, Տարնովում՝ 358, 367, Պիլզոնում՝ 363, Եսլիոնում՝ 364, Դումբերաուում՝ 366, Զարնաուում՝ 368 (եղել եմ), Լիսագորում՝ 370, Լիւբաչովում՝ 143, 109 եւ 150 (եղել եմ), Լանցուտում՝ 111 (եղել եմ), Տարնոբժեգում՝ 287, 241, 120, Ռժեշովում՝ 126 (եղել եմ), Մելեցում՝ 227 եւ 185 (եղել եմ), Պրժեւորսկում՝ 278 (եղել եմ): Սրանցից մի քանիսը դեռ չեն գործում (не развернуты), մի քանիսներում էլ եղել եմ, մնում են շատ քչերն, այն էլ ըստ մեծի մասին ճանապարհիս վրայ: Մնում է կողմ միայն Տարնովոյ, այնտեղ կռուի ուժեղ վայր է, գնալ չեմ կարող:

Ժամի 3-ի աւտոմոբիլով մնացած հիւանդանոցներն եմ անցնում, ուր ոչ մի հայ չեմ տեսնում: Երեկոյեան ժամի 9-ին արդէն Դէմբիցայումն եմ: Անցածս ճանապարհը ուղղակի

[1] Պրիմիտիվ - պարզագոյն:

հրաշալի էր: Այն չէր, որով գնացել էի: Անմիջապէս գնացք եմ ընկնում՝ մի ցուրտ ու կեղտոտ ապրանքատար վագոն: Մօտ 20 հոգի ենք: Ամէն մէկս կուչ ենք եկել մեր իրերի վրայ: Նստած ենք խաւարում եւ այնուամենայնիւ գոհ ենք, որ այդտեղից հեռանում ենք:

Դեկտեմբերի 22-ին. երեքշաբթի: Այսօր տրամադրութիւնները մի փոքր փոխուեց: Մեր գնացքին ինչ-որ ապրանքատար վագոն կցեցին, ուր 2 սպայ եւ 15 զինուորներ կային: Սրանք վառարան ունէին, ինձ տեսնելուն պէս իրենց մօտ խնդրեցին: Սիրով ու շնորհակալութեամբ ընդունեցի հրաւէրը: Այս գիշեր 5 ժամ կարողացայ քնել:

Դեկտեմբերի 23-ին. չորեքշաբթի: Առաւօտեան ժամի 7-ին հասանք Ռաւայ-Ռուսկայ՝ քաղցած, ծարաւ: Բուֆետ ընկանք, ուր հաց, կալբաս[1] ու վիտչինա[2] գտանք. թէյ էլ կար ու կար, լաւ կշտացանք: Ես այս անգամ միայն նկատեցի, որ մօտիկ անտառն այստեղ տեղի ունեցած ահեղ թնդանօթային կրակից համարեայ հնձուել է: Հրէշաւոր «չեմոդանները»[3] հսկայական ծառերը մկրատել, կիսել են:

Այստեղ-այնտեղ երկար կանգնելուց յետոյ, վերջապէս երեկոյեան ժամ 7-ին Լուով ենք հասնում: Մեզ կանգնեցնում են կայարանից բաւական հեռու, ուր ոչ բեռնակիր կայ, ոչ ճանապարհ: Դանիէլս ու ես իրերս առած վագոնից վագոն թռչելով, երբեմն էլ վագոնների տակով կուզիկուզ անելով ու երկաթուղու վարչութեան կողերը օրհնելով հասնում ենք կառքին ու քաղաք շտապում: Իջնում եմ «Բրեստոլ»ում՝ քաղաքի առաջին փողոցի վրայ: Հազիւ եմ սենեակս տաքացնում, երբ ինձ համար պարզւում է, թէ այստեղ չպիտի կարողանամ գիշերել, որովհետեւ ռուս օֆիցերների մի խումբ փողոցային աղջիկներ հաւաքած մի անպատկառ օրգիա է սարքել:

Կանչում եմ հիւրանոցի տիրոջն ու խնդրում, որ այդ ամէնին վերջ տայ:

[1] Կալբաս - երշիկ:
[2] Վիտչինայ - խոզի ապխտած միս:
[3] Հրէշաւոր «չեմոդաններ» - նկատի ունի թնդանօթների արկերը:

— Ինչ էք ասում, ո՞վ կարող է օֆիցերներին բան ասել, քէֆին դիպչել:

Իսկ երբ իմանում է, որ ես էլ զինուորական մարդ եմ, ներողութիւն խնդրելով դուրս է գալիս ու կէս ժամից յետոյ վերադառնում ու յայտնում, թէ մի այլ հիւրանոցում սենեակ կայ, ուր ոչ ոք չի խանգարիլ:

Խեղճ մարդ... Ես փոխադրւում եմ այնտեղ, որ «Բրեստոլ»ի բաժանմունքն է: Սակայն՝ այստեղ էլ նոյնը: Եւ այսպէս անվերջ: Ռուս օֆիցերն իր հետ այս երկիրն ամէնից առաջ օղի ու պոռնիկ աղջիկ է բերել...

Դեկտեմբերի 24-ին. հինգշաբթի: Հարկաւոր է տեղական գարնիզոնի հայ զինուորներին տեսնել, եթէ միայն կան: Թոյլ տալը Գալիցիայի գեներալ-նահանգապետ Բոբրինսկուց[1] է կախուած: Գնում եմ դէպի նա:

Բոբրինսկին ապրում է այն տանը, ուր ապրելիս է եղել աւստրիական Գալիցիայի փոխարքան: Կոմսը սիրով է ընդունում եւ շնորհաւորում է կովկասեան զօրաբանակի յաջողութիւնները Սարիղամիշի մօտ[2]: Ես ոչինչ չգիտեմ: Տասն օրից աւել է լրագրի երես չեմ տեսել, իսկ այսօրուայ առաւօտեան թերթերում ոչինչ չկար: Ինձ կարդալու են տալիս կոմսի անունով ստացած հեռագրերը: Կարդում եմ: Ինձ պաշարում են եւ ուրախութիւն եւ սարսափ: Ուրեմն թուրքերն Արդահան, Սարիղամիշ են հասել: Ուրեմն սահմանակից հայ գիւղերը նրանց վայրագութիւնների՞ն են ենթարկուել:

Նահանգապետի հետ պայմանաւորւում ենք ժամերգութիւն կատարել կոմենդանտատոյում: Ես դուրս եմ գալիս եւ ուղեւորւում դէպի կոմենդանտատուն, հարկաւոր կար-

[1] Գէորգի Բոբրինսկի (1863-1928) - ռուս ռազմական գործիչ, գեներալ, 1914-1915 թթ. եղել է Գալիցիայ նահանգի գեներալ-նահանգապետ:
[2] Առաջին աշխարհամարտի ժամանակ Կովկասեան ճակատում ռուսական բանակի եւ օսմանեան բանակի միջեւ տեղի ունեցած ամենամեծ ռազմական բախումներից մէկը: Ռազմական գործողութիւնները ընթացել է 1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչեւ 1915 յունուարի 5-ը: Էնուեր փաշայի գլխաւորած 90 հազարանոց թուրքական բանակը խայտառակ պարտութիւն է կրում՝ տալով 78 հազար զոհ:

գաղրութիւններ անում ու տուն գալիս: Խոնաւ ու անձրեւոտ եղանակ է: Նստում ու յիշատակարանս գրում եմ:

Երեկոյեան դէմ սենեակս է մտնում հիւրանոցի ծառան՝ վառարանը վառելու: Գրելուց յոգնած նրա հետ խօսակցութեան մէջ եմ մտնում: Նա ռուսին է, աչքաբաց, «աշխարհատես»: Խօսում է միայն լեհերէն, որ ես մօտաւորապէս հասկանում եմ.

– Ասա խնդրեմ– դառնում եմ ես,– աւստրիացոց ժամանակ էլ այսպէս կեղտոտ էր ձեր հիւրանոցը.

– Ի՞նչ էք ասում,– պատասխանում է նա,– նրանց ժամանակ ես ամէն օր մոմով ու պարաֆինով էի սրբում, պատուհանները բանում, փոշին մաքրում էի, ամէն տեղ տաք էր, կանոնաւոր ու մաքուր՝ հայելու նման:

– Իսկ այժմ ինչո՞ւ այդպէս չէ.

– Ա՞յժմ... այժմ այդպէս չի կարելի պահել: Դուք ձերոնց չէ՞ք ճանաչում.– ում ասէք ներս են բերում, ինչ ասէք անում են: Խմում, հարբում, բղաւում, երգում, կուում, կրակում են, նոյնիսկ աղտոտում են: Հիւրանոցները վատ «բարիշնաներով»[1] լցրել են: Եւ ո՞վ կարող է այդ աղջիկներին բան ասել: Դրանց համա՞ր մաքրենք: Միեւնոյն է, մի ժամից յետոյ դարձեալ կեղտոտ կը լինի: Ծխում, մնացորդը յատակին են ձգում: Ամէն տեղ թքամաններ ունենք, դրանք թքում են՝ ուր հասնում է, նոյնիսկ բազմոցների վրայ: Մենք էլ ամէն ինչ հաւաքել, միայն փայտեղէնն ենք թողել: Դրանց համար այդքանն էլ շատ է:

– Ի՞նչպէս կուզէիր, աւստրիացիք նորից գա՞ն, թէ՞ ռուսները մնան.

– Այդ էլ Աստծու գործն է, ինչպէս նա կը կամենայ:

Ես չկարողացայ նրան ասել տալ, թէ ինքն ի՞նչպէս կուզէր. սակայն պարզ էր...

Դեկտեմբերի 25-ին. ուրբաթ:– Առաւօտեան ժամի 10-ին փողոց եմ դուրս գալիս: Ռուսական ծննդեան տօնի պատճառով խանութները փակ են: Ոստիկանը ստիպում է դրօշակներ

[1] Այստեղ ի նկատի ունի անբարոյ կանանց:

կախել: Սկսում են Լիւդուիկ թագաւորի փողոցի մի ծայրից. սակայն մինչեւ երեկոյ միւս ծայրին չեն հասնում: Փողոցով բաւական մեծ թուով գերիներ են տանում՝ ուժեղ պահակով շրջապատուած: 5-10 րոպէից յետոյ երաժշտութեամբ անցնում է մի ռուսական վաշտ: Ուշադրութիւն եմ դարձնում տեղացիների վրայ: Ոչ ոք ոչ կանգնում է, ոչ նրանց նայում: Ոչ մի ուշադրութիւն, ոչ մի հետաքրքրութիւն: Ուզում եմ դէմքերին մի բան կարդալ, չի յաջողւում: Կատարելապէս անտարբեր են:

Ժամը 3-ին կոմենդանտատունումն եմ: Կոմսի հրամանով կոմենդանտն ամէն ինչ պատրաստել է վայելուչ կերպով: Հաւաքւում են 32 հայ զինուորներ, որոնք առաջին անգամ չեն եղել: Սրանք Ղարաբաղցիներ են, Զանգեզուրից, Ղազախից ու Նուխուց: Կան նաեւ Լոռեցիներ ու Երեւանցիներ: Մենք իրարից բաժանւում ենք ժամը 6-ին:

Դեկտեմբերի 26-ին. շաբաթ:– Առաւօտեան ժամի 9 –10 րոպէին թողնում եմ Լուովը, որ Գալիցիայի մայրաքաղաքն է, որ իր արտաքինով ու կեանքով առնուազն Կիեւն է յիշեցնում, որ հարուստ է 5-7 յարկանի շինութիւններով, կաթոլիկական շքեղ ու նրբաճաշակ կոստեօլներով, բազմաթիւ «պլաց»-ներով[1] ու ծառուղիներով, շքեղ պարտէզներով, իր ազգի անցեալ փառքը յիշեցնող անձանց ու արքաների՝ Լիւդովիկի, Կազիմիրի[2], Միցկեւիչի[3], Կոստիւշկայի եւ այլ հասարակական գործիչների արձաններով, ուր այժմ միայն զինուորականի շպորն ու սուինն է երեւում, ուր բազմաթիւ դպրոցներ կան, սակայն այժմ փակ՝ բացի մի քանի տարրականներից, ուր բոլոր բանկերն ու հասարակական հիմնարկներն փակ են, ուր փոքր ի շատէ ապահով մարդիկ ձգել են տուն ու տեղ, գնացել են, ուր այժմ ամէն ինչ անխնամութեան է մատնուած, որի շնորհիւ ամէն տեղ ցեխի ու աղբի

[1] Պլաց - հրապարակ:

[2] Յան Կազիմիր Երկրորդ (1609-1672) - Լեհաստանի թագաւոր եւ Լիտուայի Մեծ իշխան Վազայ արքայատոհմից, թագաւորել է 1648-1668 թթ.:

[3] Ադամ Միցկեւիչ (1798-1855) - լեհ գրող, հրապարակախօս, լեհական ազգային շարժման գործիչներից մէկը:

կոյտերն ու փողոցներում գոյացած փոսերն ու լճակներն են առաջդ կարում, ուր բացարձակ թշնամանք ես նկատում դէպի ռուսն ու ռուսաստանցին՝ այն աստիճան, որ նոյնիսկ կառապանը չի ուզում քեզ տանել, եթէ օգնութեան չի գալիս ոստիկանը կամ զինուորականի կակարդը:

Տպաւորութիւններս լրացրած լինելու համար, չմոռանամ ասել, որ այդ ճանապարհորդութեանս ամբողջ ընթացքում գնացքները շարան-շարան զինուորներ է, որ տանում են պակասած շարքերը լրացնելու եւ վիրաւորներ ու հիւանդներ՝ Լուովի, Բաւայ-Բուսկայի ու Սոկոլի վրայով դէպի Ռուսաստան ճանապարհելու: Երգ ու գարմոշկայի հետ անվերջ անէծքը եւս անպակաս է: Երբեմն խօսք ու գրիչ անզօր են տեսածդ ու լսածդ նկարագրելու՝ այնքան սոսկալի ու քստմնելի են նոքա: Ես, որ խաղաղութեան, համերաշխութեան, աշխատանքի կողմնակից մարդ եմ, սոսկում եմ՝ տեսնելով երեկուայ առողջ, զուարթ, աշխատանքի մարդուն՝ այսօր գնդակից ջարդուած, շրապնելից[1] այրուած կամ «столбняк»[2] վիճակում: Այս վերջիններս ով գիտէ սարսափի ինչ բոպէի ազդեցութեան տակ քարացել, մնացել են, կարծես ուղղակի ոչինչ չեն գիտակցում, կարծես զրկուած են ջղերից ու մկաններից:

Ի՞նչպէս չանիծես պատերազմն ու սրանց հեղինակներին...

Գալիցիայի ազգաբնակութիւնը բաղկացած է լեհերից, հրէաներից, ռուսներից, ուկրայինցիներից: Լեհացիք՝ երկրի նախկին տէրերը, փռուած են ամբողջ Գալիցիայում: Ձեռքիս տակ վիճակագրական տեղեկութիւններ չունեմ, այսպիսի արագ շարժումների ժամանակ հնարաւորութիւն էլ չկայ

[1] Շրապնել - հրետանու արկի տեսակ, որը նախատեսուած է թշնամու կենդանի ուժի ոչնչացման համար: Այդպէս է կոչւում բրիտանական բանակի սպայ Հենրի Շրապնելի (1761—1842) անունով, որը հանդիսանում է նման տիպի առաջին արկերի ստեղծողը:

[2] «Столбняк» - Փայտացում, պրկախտ, կարկամախտ, մարդու հիւանդութիւն, որը բնորոշւում է ծանր ջղաձգութիւններով՝ պայմանաւորուած նեարդային համակարգի ախտահարմամբ: Սակայն այս դէպքում հեղինակը, կարծես թէ, այս բառով բնորոշում է ոչ թէ այդ տերմինով յայտնի հիւանդութիւնը, այլ պատերազմի սարսափների ականատես որոշ զինուորների քարացած, փայտացած վիճակը:

որեւէ ճշտած բան տալու, ուստի հասկանալի է, որ տպաւորութիւններս էլ անցորդի են լինելու եւ թռուցիկ, սակայն ամէն ջանք գործ եմ դրել գրածներս ու լսածներս ըստ հնարաւորին ստուգելու: Այսքանը բաւական է համոզուելու, որ երկրի կուլտուրական տէրերը լեհերն են: Ամէն տեղ իշխողը լեհերն են: Նոր տիրապետումից յետոյ միայն սկսել են ռուսական թերթեր լոյս տեսնել, որոնք, սակայն, աւելի շուտ պատերազմական տեղեկութիւններ են: Երբեմն-երբեմն երեխաները փողոցներով անց են կացնում ռուսական օրացոյցներ, ռուսական ցուցակներով մի քանի խանութներ են երեւում՝ թէյատներ, «Столовая» կամ «овощ. вещ.» վերատառութեամբ: Սրանց պահողները ըստ մեծի մասին Կիեւից կամ Օդեսայից եկած հրէաներ են: Լեհերը գիւղերում բացառապէս երկրագործներ ու պարտիզպաններ են: Շատ է տարածուած կարտոֆիլի մշակութիւնը, որից մեծ բերք են ստանում եւ յաճախ հէնց արտերումն էլ պահում են յատուկ փոսերում: Անցեալում մեծ քանակութեամբ կարտոֆիլ են արտահանել դէպի Գերմանիայ ու Վենգրիա[1]: Ներկայումս այդ շուկաների փակ լինելու պատճառով ծախւում է փութը 15-16 կոպեկով: Ամբողջ ազգաբնակութեան գլխաւոր ուտելիքը ներկայումս կարտոֆիլն է:

Զափազանց կրօնամոլ են, եկեղեցասէր, աւելի՝ քան ռուսական Լեհաստանում: Կղերը սրանց հոգիների կատարեալ տէրն ու տնօրէնն է: Տուն չկայ, որ ճակատին կրօնական պատկեր չունենայ: Գիւղ չկայ, որ հսկայական խաչերով ու կրօնական արձաններով զարդարուած չլինի: Ճանապարհների խաչաձեւուող տեղերում ամէն տեղ կրօնական, յատկապէս Տիրամօր արձան է կանգնած:

Ռուսներին «վայրենի» անունն են տալիս ու չեն սիրում:

Հրէաները երկրի տնտեսական տէրերն են: Զարմանալի է, որ սրանց հետ չեն կարողանում մրցել լեհերը: Սրանք ամէն տեղ առեւտրով են պարապում: Աւստրիական տիրապետութեան տակ սրանք ամէն տեսակ արտօնութիւններ վայելել

[1] Վենգրիա - Հունգարիա:

են, տեղ են ունեցել զօրքում, դատարաններում, դպրոցներում եւ այլն: Լեհ ազնուականների ու կալուածատէրերի ունեցած-չունեցածը հետզհետէ սրանց ձեռքն են անցնում:

Պարզ է, որ սրանք չեն կարող ցանկալի համարել ռուսական տիրապետութիւնը ու չեն էլ ցանկանում:

Ռուսիններն ու ուկրայինացիք երկրի համեմատաբար խեղճ մասն են: Ապրում են գլխաւորապէս գիւղերում: Կորցրել են իրենց կրօնը, դաւանում են կաթոլիկութիւն (*униаты*)[1], թէպէտ յունադաւաներ եւս կան: Խօսում են լեհերէն, երբեմն մոլորուսերենի հետ խառը: Մոլորուս զինուորները սրանց հեշտ են հասկանում: Սրանց մի մասը կողմնակից է ռուսական տիրապետութեան, իսկ միւսը տարուած է Ուկրայինայի վերածնունդի ու ազատութեան գաղափարով, միանգամայն դէմ է ռուսներին:

Տգէտ են եւ անկուլտուր: Կարպատների ստորոտում, Բոխնիայի շրջանում գիւղեր կան, ուր մարդիկ գետնափորներում են ապրում, անասունների հետ միասին: Սրանք տան ծուխը դռնով են բաց թողնում: Նոյնիսկ մեր գիւղերի երդիկներից դուրկ են:

Բացառապէս երկրագործներ են:

Յայտնի է Գալիցիայի նաֆթը Կարպատների ստորոտներում, որն ասում են Բագուի նաֆթից աւելի մաքուր է ու սպիտակ: Վերջին ռուսական տեղական երկաթուղիների վարչութիւնը որոշել է, քարածուխ չստանալու պատճառով, նաֆթն իբրեւ վառելիք գործ ածել երկաթուղիներում:

Որքա՜ն շատ է մթերքների պակաս զգացւում, իսկ պատերազմը նա է տանելու, ում ջղերն ամուր են, բաւական էլ մթերքներով ապահովուած: Մենք շատ շուտ ենք պակաս զգում:

[1] Ունիատ, կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիների միաւորման կողմնակիցներ՝ Հռոմի պապի գլխաւորութեամբ: Ունիայի կողմնակիցներն ընդունում են 1569 թ. Բրեստում ստորագրուած ակտը, որով Ռեչ Պոսպոլիտայի տարածքում կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիները միաւորւում էին: Այս ակտի ստորագրումից յետոյ պայքարը ուղղափառների եւ ունիատների միջեւ աւելի սրուեց:

Որքան կարողացայ նկատել, Գալիցիայի միջին մասերը շատ են ճահճոտ ու վատառողջ: Գիւղեր կան՝ ամբողջովին ճահիճներով շրջապատուած: Այդպէս չէ, սակայն, Արեւմտեան մասում, Կարպատների մօտ, ուր ճահիճներն իսպառ չքանում են, հողը սեւ է եւ արգաւանդ, շամուտները հարուստ են եւ ընդարձակ: Ո՛Յ... մալարիա՛յ... Սոսկում եմ...

Շատ տեղ անթաղ դիակներ կան՝ մանաւանդ աւստրիացիներից՝ թէ՛ մարդկանց, թէ՛ կենդանիների, մանաւանդ՝ ձիաների, շատ տեղ ջրերն ու ճահիճները լիքն են դիակներով, շատ տեղ մեռելները թաղուած են շտապելով ու երես: Այս դրութեան հետեւանք են այնպիսի հիւանդութիւններ, ինչպէս տիֆն է՝ ցանաւոր ու ստամոքսային, խօլերա եւ այլն, որոնք աւեր են գործում նոյնիսկ զօրքի մէջ, իսկ գիւղերում, ուր աղքատութիւնն ու սովը չոքել են ազգաբնակութեան վզին ու հնձում են: Իսկ թէ ի՞նչ կը լինի գարնանը՝ օրերը տաքանալուն պէս, Ա՜Ծ. գիտէ:

Այսօր Բրոդիյում ժամի 5-8 շրջեցի այստեղի NN 161, 162, 381, 382, 252, 110, 359, 295 եւ 173 հիւանդանոցները: Վերջինս բացառապէս տիֆաւորների է: Միայն 2 վիրաւոր հայ գտայ՝ մէկը Ղազախի Բերդ գիւղից, թեթեւ, միւսը՝ Ղարսի շրջանի Խաբ գիւղից՝ Եգոր Կաքմազեան, ծանր եւ անյոյս վիճակում: Մօտ 30-ի չափ զինուորներ էլ կային, որոնք հիւանդանոցներում գրագրի, հսկիչի, ֆելդշերի, խոհարարի պարտականութիւններ են կատարում:

Սարքուել են...

Երեկոյեան ժամի 9-ին ճանապարհուեցի դէպի Կովել, իսկ գիշերուայ 3-ին՝ Կովելից Բրեստ: Բրեստ հասնելով, զինուորներին բաժանելու համար հագուստ ու գրքեր ստացայ Анна Агофомкина-ից՝ Վլադիկավկազից, Մ. Մալխասեանից՝ Բագուից, Խորէն քահանայ Մնացականեանից եւ Կիեւից:

Գ.

Դեկտեմբերի 31-ից մինչեւ 1915 թ. յունուարի 17-ը.

Նպատակ ունենալով Ծնունդն ու Զրօրհնէքը երեխաներիս ու ծխիս հետ անցկացնել, այլ եւ մօտիկից ծանօթանալ այն ամէնի հետ, ինչ որ կատարւում էր Կովկասեան ֆրոնտում, թոյլտուութիւն ստացայ ու դեկտ. 31-ին ճանապարհուեցի դէպի Վլադիկավկազ: Յաջորդ օրն առաւ. ժամի 7-ին Կիեւումն էի: Նոր տարուայ առթիւ բոլոր խանութները փակ էին: Պատահեցի երկու հայ ուսանողների: Սրանք իրար իմաց տուին եւ ժամի 2-ին արդէն 12 հոգի էին՝ Ղարաբաղցի եւ Գանձակեցի, բոլորն էլ հայավարի տղաներ, օրուայ խնդիրներն ապրող: Ճաշելու գնացինք ուսանողական ճաշարան: Սրանց հետ անցրի մինչեւ ժամի 5-ը: Կիեւում թողի իր կնոջ մօտ Դանիէլիս, որ ի դէպ մի հրաշալի տղայ էր, հին զինուոր, Ռուս-Եապոնական պատերազմին մասնակցած, բաւական գիտակից ու դէպքերն առողջ բնազդով կշռադատող, ամէն բան «слушаюсь» ասողներից չէր, սիրում էր իր հայրենիքը՝ Մոլորուսիան[1], բարեկամ չէր զինուորական ձեւականութիւնների, չէր հաւատում մեծերին, «Эх, продают матушку Россию»,-բացականչում էր սրտնեղած բոպէներին:

Յունուարի 4-ի առաւօտեան ժամի 4-ին տանն էի, երեխաներիս մօտ:

Վլադիկավկազում բաւարար աշխատանք էր կատարուել՝ ժողովել էին 8000 ռուբլի. որոշել էին հասցնել 16000-ի: Այլ եւ բաւականաչափ տաք հագուստ: Կանանց ու օրիորդների խումբը 300 հայ կամաւորների համար տաք շորեր էին կարել եւ ուղարկել Տփխիս: Ծննդեան գիշերը յատկապէս գաղթականների համար գանձանակ շրջեցրի եկեղեցում: Ժողովուեց

[1] Մոլորուսիայ - Ռուսական կայսրութեան պատմական շրջաններից, որն իր մէջ ընդգրկում է Դնեպր գետի միջին հոսանքի տարածքները:

1000 ռուբլի: Գաղթականների հոսանքը ծայր էր առել Տաճկաստանից եւ Պարսկաստանից:

Ազատ ժամերիս այցելում էի քաղաքի հիւանդանոցների հայ վիրաւորներին: Շատ աղտոտ պայմաններում ու հայերից մոռացած Միանիկի հիւանդանոցի 2 հայ վիրաւորներին: Արուեց՝ ինչ պէտք էր:

Ցաւելով իմացայ, որ հայ-վրացական յարաբերութիւնները Կովկասում աւելի են սրուել: Ի՞նչ են ուզում մեզանից մեր հարեւան վրացիք: Կարծես մենք ստացանք, իրենք մնացին:

Թէ՛ հայ, թէ՛ ռուս, թէ՛ վրացի վիրաւորներից իմացայ, որ տաճիկներն անողոք են դէպի հայերն ու կոզակները, եւ համեմատաբար մեղմ՝ դէպի ռուս եւ վրացի զինուորները, այնպէս որ յաճախ հայ վիրաւորներն ու գերիներն ստիպուած են եղել վրացի ձեւանալու: Հայ զինուորները սաստիկ դժգոհ էին իրենց կորպուսի հրամանատար գեներալ Բերխմանից[1], որը «գերմանացի գոլով» իրենց ուղղակի կոտորել է տալիս: Մի անգամ 5 գունդ գրոհի է ուղարկել 2 կորպուսի վրայ: 5 գնդից մի քանի հարիւր հոգի հազիւ են ազատուել: Քննութիւն է կատարուել, Բերխմանը պաշտօնից հեռացուել է:

Դժգոհ էին նաեւ մեր կամաւորները. «Մենք աչքի փուշ ենք, մեզ շարունակ ամենավտանգաւոր տեղերն են ուղարկում»: Ակամայ ուզում եմ հաւատալ, թէ ինչպէս գերմանական ոսկին, նոյնպէս եւ «Армения без армян» գաղափարը իրենց ցածր գործն են տեսնում:

Զմոռանամ պատմել հետեւեալ դէպքը, որ Եկատէրինոսլաւի ճանապարհին պատմեց ինձ մի յոյն՝ Վասիլիատինը: Գալիցիական Սամբորից 50 վերստ դէպի Կարպատները մի գիւղ կայ՝ Պիստրիցայ անունով: Բնակիչներն ունիատներ են, ազգով մոլորուս: Սրանց քահանան վերին աստիճանի ռուսասէր մարդ է: Սրա դռները գիշեր-ցերեկ բաց են իւրաքան-

[1] Գէորգի Բերխման (1854-1929) - ռուսական բանակի գեներալ, առաջին աշխարհամարտի սկզբում ղեկավարել է կովկասեան երկրորդ բանակային կորպուսը, մասնակցել է Սարիղամիշի ճակատամարտին, յետագայում տեղափոխուել է արեւմտեան ռազմաճակատ:

չիւր ռուս զինուորի առաջ: Գալիս, իջնում, ուտում, խմում, հեռանում ու գնում են՝ առանց կոպեկ վճարելու: Եւ քահանան գոհ է, որ կարողանում է գոնէ այսպիսով պիտանի լինել իր սիրած ռուսական բանակին: Սրա մօտ է ապրում իր այրի քոյրն՝ իր 13 տարեկան աղջկայ հետ միասին: Վերջինս շատ կայտառ ու սիրուն է: Ես քահանայի մօտ յաճախ էի լինում: Նոյնպէս հիւրասիրւում էի:

Մի օր քահանայի մօտ ընկան Китиновский գնդի обозная команда-ի[1] պրապորշչիկները՝ Սաբուրդայ եւ Ցաղակ, կիսահարբած դրութեամբ եւ լիառատ հիւրասիրուելուց յետոյ ընկան քահանայի վրայ ու սկսան մահու սպառնալիքով փող պահանջել: Քահանան փախաւ, ազատուեց: Գազաններն ընկան 13 տարեկան աղջկայ վրայ՝ բռնաբարելու: Ոչ խեղճ մօր աղեկտուր պաղատանքը, ոչ իմ միջնորդութիւնը չօգնեց: Այդ ժամանակ ես յայտնեցի իմ ով լինելս եւ սպառնացի ամէն ինչ յայտնել մեր գնդի պետին: Նրանք քաշուեցին ու հեռացան: Մենք հանգստացանք: Պէտք էր տեսնել, թէ խեղճ մայրն ինչպէս էր գրկել աղջկանն ու անվերջ համբուրում: Ես էլ չկարողացայ ինձ զսպել ու արտասուեցի: Իսկ աղջիկը չէր հասկանում, թէ ինչ էր պատահել: Փնտռեցինք ու քահանային գտանք: Խեղճն ուղղակի շշմել ու չէր կարողանում հաւատալ, թէ սրանք այն ռուսներից են, որոնց մասին ինքն այնքան երազել է:

Գազանների գնալով մենք կարծում էինք ազատուեցինք փորձանքից, սակայն սխալուեցինք: Երեկոյեան նոր էինք թէյի նստել, մէկ էլ... ատրճանակի տրաքոցներ: Քահանայի ծանօթ զինուորներից մինը ներս ընկաւ ու գոչեց.

– Տէր հայր, գլուխդ ազատիր, այսօրուայ պրապորշչիկներն են գալիս՝ բոլորովին հարբած ու կատաղած: Ես աւելի վախեցայ ու հակառակ կողմից դուրս թռայ: Նոյնն արաւ քահանան՝ հետն առած քրոջ աղջկանը: Ազատուեցինք: Ես մտայ տանից ոչ այնքան հեռու գտնուող խոտի դէզի մէջ ու մնացի մինչեւ լուսաբաց: Ուր գնացին քահանան ու քոյրն

[1] Նկատի ունի՝ զօրքի գումակի:

աղջկանով՝ մինչեւ այսօր էլ չգիտեմ: Հաստատ գիտեմ, որ «օֆիցերների» ձեռքը չընկան: Այս վերջիններն այստեղ ամբողջ գիշեր ուտել-խմելուց յետոյ, ինչպէս սրանց դենշչիկ կոզակները պատմեցին, տան թանկարժէք իրերը 2 մեշոկ[1] լցրած, քաշուեցին– նախօրօք տան մէջ ամէն ինչ կոտրտելով ու ջարդելով: Ոտնատակ էին տուել նոյնիսկ икона-ն: Ես վախից քար կտրած, նրանց դենշչիկների օգնութեամբ տունս հասայ եւ իսկոյն ամէն ինչ պատմեցի մեր գնդապետին.

– Чудак[2]! պատասխանեց գնդապետը,– չգիտես 13 տարեկանի ամբողջ հրապոյրը:

Բայց եւ այնպէս խոստացաւ քննութիւն նշանակել եւ խիստ պատժել: Ինձ դեռ չեն խօսեցրել: Ասում են՝ քահանան կիսախելագար վիճակի մէջ է: Այժմ 2 օրով գնում եմ Օդեսայ, կը վերադառնամ եւ ամէն ինչ կը պատմեմ քննիչին: Ուզում եմ հաւատալ, թէ չարագործները արժանի պատիժ կը ստանան:

[1] Մեշոկ - պարկ:
[2] Чудак - տարօրինակ մարդ:

Դ.

Յունուարի 18-ին: Երեկոյեան ժամի 7-ին ճանապարհ ընկայ դէպի Բրեստ, 19-ին Ռոստովումն էի: Եօթ ժամ կար մինչեւ գնացքի այստեղից մեկնելը: Որոշեցի օգտուել այդ մի քանի ազատ ժամերից ու գնալ Նոր-Նախիջեւան՝ տեսնուելու Գրիգոր Զալխուշեանի ու տեղական յաջորդ Գէորգ Վարդապետի հետ: Առաջինի հետ տեսնուելուս գլխաւոր պատճառն այն էր, որ նա հեռանում էր «Մշակ»-ից[1] եւ իր այդ հեռանալուն դէմոնստրատիւ[2] ընոյթ տալու համար հեռագրական կոչեր էր ուղարկել զանազան տեղեր, ի միջի այլոց նաեւ Վլադիկավկազ՝ բողոքելու «Մշակ»-ի դէմ: Այն, ինչ որ Զալխուշեանը նոր էր խոստովանում «Մշակ»-ի մասին, ես դեռ 1903 թուին եմ գրել «Մշակ»-ին յանձին Ա. Քալանթարի[3] ու յարաբերութիւններս կտրել նրանից: Այս դէպքում ինձ առանձնապէս վրդովողն այն էր, որ այս ծանր օրերին, երբ այնքան անհրաժեշտ է մեր հասարակական խաւերի համերաշխ գործակցութիւնը, Զալխուշեանն, իր հեռանալուն շուք ու փայլ տալու սնափառ դիտաւորութեամբ, վեր էր կացել ջուր պղտորելու: Ես ուզում էի տեսնուել այդ պարոնի հետ եւ իմ վերաբերմունքը յայտնել նրան: Սակայն, ափսոս, տանը չգտայ:

Գէորգ վարդապետի մօտ անցրի մինչեւ երեկոյեան 9 եւ կէսը: Պարզ է, որ մեր խօսակցութեան գլխաւոր նիւթը պատերազմն էր: Խօսեցինք նաեւ հոգեւոր հաստատութիւնների մասին... Սակայն չերկարենք...

[1] «Մշակ» - հասարակական-քաղաքական, գրական օրաթերթ: Հրատարակուել է 1872-1921 թուականներին Թիֆլիսում: «Մշակ»-ի հիմնադիրը եւ առաջին խմբագիրը եղել է Գրիգոր Արծրունին, այնուհետեւ՝ Ալեքսանդր Քալանթարը, Համբարձում Առաքելեանը, Լէոն, Տիգրան Հախումեանը: «Մշակ»-ը կարեւոր դերակատարում է ունեցել հայ ազատամիտ հասարակական-քաղաքական մտքի ձեւաւորման հարցում:

[2] Դեմոնստրատիւ - ցուցադրական:

[3] Ալեքսանդր Քալանթար (1855-1913) - հասարակական-քաղաքական եւ գրական գործիչ: Ալեքսանդր Քալանթար եղել է նաեւ յայտնի անասնաբոյծ: 1883 թուականից մինչեւ կեանքի վերջը եղել է «Մշակ» թերթի խմբագիրը:

Յունուարի 22-ին ես արդէն Լիւբլին քաղաքումն էի: Այդտեղ էր փոխադրուել մեր հիմնարկը:

Չեմ կարող չպատմել գնացքում պատահած հետեւեալ դէպքը, որ խիստ բնորոշ է լեհ-հրէական յարաբերութիւնների տեսակէտից:

Կիեւից դուրս գալիս նստած էի վագոնի մի բաժանմունքում (отделение), ուր գտնւում էր նաեւ 30-35 տարեկան լեհուհի, բաւական ինտելեգենտ, գիմնազիայի մի ուսուցիչ եւ վերջինիս բժիշկ ուսանող սպան: Մեր դիմացի փոքրիկ միտեղանի նստարանի վրայ, պատուհանի առաջ նստած էր մի բաւական վայելուչ հագնուած հրէայ վաճառական: Իմ 3 հարեւանները սաստիկ հրէատեաց էին: Այդ բանը նրանք արտայայտում էին հրէային բաւական լսելի բեպլիկներով: Թէ սրանց վարմունքը, թէ հրէայի լուռ մնալն ինձ զարմացնում ու ճնշում էր:

Ուզեցինք թէյ խմել: Լեհուհին մի փոքրիկ թէյաման ունէր, որ կարելի էր թէյ դցել, ջրի համար թէյնիկ չունէինք: Ուսուցիչը հրէայից խնդրեց: Նա ոչ միայն տուաւ, այլ եւ գնացքը կանգ առնելուն պէս թէյամանն առաւ, իջաւ վագոնից, գնաց եռացրած ջուր բերեց ու դրաւ մեր առաջ: Այս բոլորը նա կատարեց լուռ ու մունջ, առանց մի խօսք ասելու: Հոգացողը տիկինն էր: Նա իր բաժակը լցրեց ու դրաւ իմ առաջ: Ես, ի հարկէ, հրաժարուեցի՝ յօգուտ տիկնոջ: Սակայն նա առանց քաշուելու բարձրաձայն յայտարարեց.

— Ես ջհուդի թէյամանի թէյը չեմ խմիլ.

Ես զարմացայ: Հրէան լուռ էր: Թէյը վերջացաւ: Ինձ հիւրասիրողներն ամէն ինչ ժողովեցին, մնացին միայն 2 թէյնիկները: Այդ ժամանակ միայն ուսուցիչը դարձաւ դէպի հրէան՝ այն էլ բաւական սառը, կոպիտ կերպով.

— Է՛յ, ջհուդ, եթէ ուզում ես. վերցրու, խմիր. բաւական թէյ կայ մնացած:

Եթէ նա այդպէս վարուէր մի կովկասցու հետ, անշուշտ 2 թէյամաններն էլ կընկնէին նրա գլխին, սակայն Իսրայէլի

հեզ զաւակն առանց վիրաւորուելու առաւ մեր թէյի մնացորդն ու խմեց:

Լիւբլին հասնելուն պէս Դիւան գնացի՝ սենեակ ստանալու:

Բաւական նամակներ ունէի այդտեղ: Պարզուեց, որ Դերբենդի մի խումբ երիտասարդներ..... իմ լրագրական կոչին, 2-ական օրինակ «Արեւ»[1] ու «Հորիզոն» էին յատկացրել մեր զինուորներին, իսկ Կազի-Իւրդի ուսուցիչ Ար. Սար. Թաւարբէգեանը՝ մի կապոց գրքեր: Դերբենտի կանանց խումբն էլ 200 զոյգ տաք գուլպաներ էր ուղարկել: Այս վերջինները հէնց այսօր բաժանեցի ճակատ գնացող զինուորներին:

Յունուարի 24-ին. շաբաթ: Այսօր ինձ լաւ չեմ զգում: Դուրս եմ գալիս շրջելու տեղիս հիւանդանոցները, սկսում եմ Քաղաքային Լազարեթից: Երրորդ պալատում Գետաբեկցի մի վիրաւորի եմ հանդիպում՝ Սարգիս Մկրտումեան: Պարզամիտ, անգրագէտ գիւղացի է: Գիւղը յիշելիս բացականչում է. «Ախ, էն գիւթանի ակօսին մատաղ, եարաբ մըն էլ արժանանալ բտեմ»: Ջերմ կերպով ցանկանում է կովկասեան սահմաններում լինել, «անօրէնի» հետ կռուել.

– Ախր մեր դուշման ընդի ա, ինձ ո՞ւր են բերել ըստի:

Լսեցի, որ 2 օր առաջ Տամբովից այստեղ 150 հայ տղաներ են բերել: Հասցէն վերցրի ու շտապեցի այնտեղ: Տղայի ասածը իրողութիւն էր, սակայն զինուորները վարժութեան էին գնացել: Երեկոյեան ժամը 5-ին ուղղակի դրանց կոմանդիր[2] Մանիեւի մօտ եմ գնում, որ իմ բաղդից օս է դուրս գալիս՝ Վլադիկավկազից: Երկուսս էլ շատ ենք ուրախանում: Մօտիս հայերէն գրքերը սրա միջոցով անարգել բաժանում եմ հայ տղաներին: «Անարգել» եմ ասում, որովհետեւ գրքեր բաժանելը շատ դժուար է թոյլ տրւում: Անհրաժեշտ է գլխաւոր հրամանատարի թոյլտուութիւնը, որն ի հարկէ հայերէն գրքերից շատ բան չէր հասկանալ ու կարող էր ձգձգել: Բայց

[1] «Արեւ» - գրական, հասարակական-քաղաքական օրաթերթ, լոյս է տեսել Բաքւում 1914-1918 թուականներին:

[2] Կոմանդիր - հրամանատար:

կարող էր եւ վստահել ինձ ու թոյլ տալ՝ իմ պատասխանատուութեամբ: Յամենայն դէպս բանը հեշտի կապուեց:

Մոռացայ ասել, որ այսօր կէս օրին ներկայացայ Զաբելինին փոխարինող գեներալ Մաւրինին[1], որ հետաքրքրուեց իմ անցեալ գործունէութեամբ: Պառաւի մէկն է: Որտեղի՞ց են գտնում այսպիսիներին...

Յունուարի 25-ին. կիրակի: Այսօր կարդացի ու ստորագրեցի զօրքերի ընդհանուր հրամանատար Իւանովի հեռագրական կարգադրութիւնը, որով յայտնելով, թէ զինուորներից ոմանք փոքրոգութեամբ լքում կամ գերի են ընկնում, այլ եւ զօրքերի մէջ անցանկալի տարրեր են երեւում՝ իրենց վնասարար պրոպագանդաներով, հրաւիրում էր արթուն կերպով հսկել ու յանցաւորներին իսկոյն ձերբակալել ու դատի տալ: Քահանաներին էլ պատուէր էր տրւում յաճախ երեւալ զօրամասերում եւ ոչ միայն աղօթել, այլ եւ հոգեշահ ու հայրենասիրական զրոյցներ ունենալ:

Յունուարի 26-ից 29-ը՝ երկուշաբթիից-հինգշաբթի: Պահեստի բատալիոնների մեծից հրաման ունէի այցելել 14-րդ եւ 18-րդ բատալիոնների հայերին: Այս օրերն անց կացրի բացառապէս 14-րդ-ի 5-րդ բատալիոնում, 150-ի չափ զինուորների մէջ: Միւսներում հայեր չկան: Եղածներն էլ Գանձակի նահանգի անցեալ տարուայ նորակոչներ են: Սրանց մէջ մի ուսուցիչ կայ՝ Մինաս Հովասափեան, որին տղաները շատ են յարգում ու լսում: Բոլորը միասին խնդրեցին միջնորդել, որ իրենց կովկասեան ճակատ ուղարկեն: Բացատրեցի դրա անկարելիութիւնը եւ աշխատեցի հասկացնել, որ այս ճակատում եւս թշնամի ունենք՝ դա Գերմանիան է:

Զինուորների մէջ 2 ծանր հիւանդներ կային, մինը շատ կակազ, միւսը բոլորովին համր: Ինձ զարմացրեց նրանց զինուորակոչի ենթարկուելը: Պարզուեց, որ մի կողմից անտէրութեան, միւս կողմից մեր գիւղական քեռխուաների կաշա-

[1] Ալեքսեյ Մաւրին - ռուսական բանակի գեներալ, առաջին աշխարհամարտի սկզբում ծառայել է Կովկասեան ճակատում, այնուհետեւ 1915-1916 թ. նշանակուել է Հարաւ-արեւմտեան ռազմաճակատի մատակարարման պետ:

ռակերութեան զոհեր են: Իսկոյն դիմում արի, սրանց խպառ ազատելու եւ տուն վերադարձնելու: Բժշկական քննութիւն եւ հսկողութիւն նշանակուեց՝ համոզուելու, թէ սիմուլեանտներ[1] չե՞ն արդեօք: Խնդրեցի, որ ուսուցիչ Մինասին էլ ինձ տան՝ որպէս տիրացու:

Այսօր եւ եթ հեռագրուեց Կիեւի զինուորական շտաբի պետին:

Այս օրերում աշխատեցի իրաւունք ձեռք բերել այցելելու նաեւ Հիւսիս-արեւմտեան ճակատի զօրքերին: Խնդիրս յարգելով, հեռագրեցին Սեղլեց, գեներալ Դանիլովին[2]: Պատասխան եկաւ, թէ գլխաւոր կայանը իմ այցելութեանը դէմ չէ: Մտադիր եմ ամբողջ փետրուարն այդ շրջանում անց կացնել:

Էջ.

Փետրուարի 3-ին. չորեքշաբթի:— Վարշաւայումն եմ: Այսօր դուրս եկայ թէ քաղաքը դիտելու, թէ հիւանդանոցներն այցելելու: Նոր էի հիւրանոցից մի փոքր հեռացել, տեսնեմ մի ոտքից-գլուխ ֆրանտ[3] հագնուած երիտասարդ եւրոպական գլխարկը հանած, բարեւում է ինձ: Զարմացայ: Ո՞վ կարող է լինել այս անծանօթ աշխարհում: Պարզուեց, որ այն հիւրանոցի սպասաւորն է, որ իջեւանել եմ, որն երեկ երեկոյեան ինձ սպասաւորում էր: Այսօր նա ազատ է, պճնուել ու դուրս է եկել: Այսօր նա իրեն բոլորովին ազատ է զգում, բոլորին

[1] Սիմուլյանտ - կեղծ ձեւացնող:
[2] Եուրի Դանիլով (1866-1937) - ռուսական բանակի գեներալ, առաջին աշխարհամարտի սկզբում ծառայութեան է եղել գերագոյն հրամանատար Նիկոլայ Նիկոլաեւիչի շտաբում, այնուհետեւ զինուորական պաշտօններ է զբաղեցրել արեւմտեան ռազմաճակատում:
[3] **Ֆրանտ** - պճնամոլ, մոդայիկ հագնուած:

հաւասար: Եւ որքան քաղաքավարի են նրանք սպասաւորելիս՝ միշտ զգոյշ, պատրաստակամ, մաքուր, սիրալիր: Այդպէս են թէ՛ տղամարդիկ, թէ՛ կանայք: Միաժամանակ իրենց արժանաւորութիւնը պահող:

Եղայ Ուլաղդովսկայայ հիւանդանոցում, տեսայ 7 վիրաւոր, որոնց թւում նաեւ բժիշկ Քոչարեանին՝ Շուշուց, եւ 12 զինուոր, որոնք ծառայում էին հիւանդանոցում: Սրանք բոլորն էլ Ղարսեցիներ են: Իմացայ, որ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը՝ գլխաւոր հրամանատարը, կամ աւելի ճիշտ գերագոյն հրամանատարը հրամայել է պատերազմական վայրերից 18 կէտերից բոլոր հրէաներին տեղահան անել, որպէս լրտեսների եւ քշել դէպի Վարշաւայ: Քսան հազարի չափ հրէաներ ոտքով, սայլով, երկաթուղով ապաստան են գտել Վարշաւայում: Կասկածում էի, կարծում էի սա հոյ լեհերի հնարածն է: Հիւանդանոցից նոր էի հիւրանոց եկել, ուր միանգամայն անսպասելի կերպով պատահեցի բժիշկ Վաղարշակ Տէր-Գրիգորեանին՝ էջմիածնեցի: Հին բարեկամներ էինք: Երկուսս էլ անչափ ուրախացանք: Սա եւս հաստատեց այս փաստը, աւելացնելով թէ՝ ճիշտ որ հրէաներից մեծ քանակութեամբ լրտեսներ կան: Վաղարշակը հէնց նոր էր վերադարձել դիրքերից, ուր ծառայում է ծանր թնդանօթային մասում: Ծայրայեղ ջղայնացած էր, յոգնած, ջարդուած:

— Լուրջ կերպով վախենում եմ, որ ինձնում խելագարութիւն է սկսւում.— շարունակ կրկնում էր նա: Թող սա քեզ չզարմացնի, ծանր թնդանօթների վրայ աշխատողներից շատերն են ջղային ցնցումների ենթարկւում, խելագարւում:

Որոշում եմ նախքան Վարշաւան դիտելը, գնալ Սեղլեց՝ ճակատի գլխաւոր շտաբը:

Փետրուարի 5-ին. հինգշաբթի:— Այսօր ժամի 4-ին ուղեւորուեցի դէպի Սեղլեց: Նոր էի վագոնում տեղաւորուել: Մեր բաժանմունքում նստած ենք 8 հոգի, որոնցից 1-ը կին է, լեհուհի: Սովորական զրոյց է սկսւում: Երբ խօսակիցներս լսում են իմ հայ լինելը, յանկարծ լեհուհին տեղից վեր է թռչում.

– Հա՞յ էք, ես շատ ուրախ եմ, իմ պապերը եւս հայ են եղել, ես շատ եմ սիրում հայերին: Ասում է, գալիս, նստում կողքիս ու հարցեր է, որ թափում է գլխիս:

Առհասարակ իմ ամբողջ տպաւորութիւնների ժամանակ ես նկատեցի, որ հայերն այստեղ լաւ անուն ունեն ու յարգուած են: Կերեւի թէ միակ երկիրն է այս տեսակէտից:

Ինչպէս հասանք Սեղլեց՝ ես էլ չնկատեցի, ժամի 7-ին այնտեղ էինք:

Տէր Աստուած... այսքան էլ կեղտոտ ու գարշելի քաղա՞ք: Փողոցներում ուղղակի գարշահոտութիւն է, կեղտոտ, պատառոտուած հագուստով մուրացկանները թիւ չունեն, եւ ի զարմանս իմ՝ մեծ մասը հրէաներ: Հրէայ մուրացկան կեանքումս առաջին անգամն էի տեսնում: Իսկ հիւրանոցները... Երեւանի «խան» կոչուած պանդոկներն[1] իրենց մաքրութեամբ ու կանոնաւորութեամբ հազար անգամ բարձր են սրանից:

Հէնց կայարանից մի հրէայ մակլեր[2] ինձ առաջնորդեց դէպի քաղաքի «լաւագոյն» հիւրանոցներից մէկը: Սենեակ վախվխելով մտայ, ի հարկէ դենչէիկս հետս էր: Հրէան շարունակ մեզ հանգստացնում էր: Հազիւ իրերս ցած էի դրել, նա դարձաւ ինձ՝ ծոծրակը քորելով.

– Իսկ աղջիկ... չէի՞ք ուզիլ, մի գեղեցկուհի այրի.

– Բարեկամ, ասում եմ,– գոնէ հագուստս ձեզ իրաւունք չպիտի տար այդպիսի հարցով դիմելու ինձ:

– Ներեցէք,– ասում է շփոթուած մակլերը,- բայց այստեղ եկողները համարեայ բոլորն են ուզում:

Տեսնելով, թէ ուր եմ ընկել եւ կողոպտուելուց վախենալով, թողնում եմ «առաջնակարգ» հիւրանոցն ու դուրս գալիս: Մեզ յաջողւում է հարեւան տներից մէկում մի ռուս ընտանիքում սենեակ ստանալ: Ես չեմ քաշւում տանտիրոջս պատմելու սիրալիր մակլերի առաջարկութեան մասին:

[1] Այդպէս էին կոչւում երեւանեան պանդոկներն ու գինետները, որտեղ սովորաբար այցելում էին հասարակ խաւի ներկայացուցիչները:

[2] Մակլեր - միջնորդ, որը մասնագիտացած է որոշակի բնագաւառում, յաճախ նաեւ կաւատ:

– Այստեղ բոլոր հիւրանոցներն այդպէս են– բացատրում է նա: Ձեզ առաջնորդողը հիւրանոցի տիրուհու եղբայրն է, իսկ «գեղեցկուհին» իր հարազատ աղջիկն է:

Փետրուարի 6-ին. ուրբաթ: Այսօր առաւօտեան ժամը 8-ին ներկայացայ զօրաճակատի դիւանի պետ գնդապետ Բակլոնովին ու ինձ հարկաւոր թղթեր ստանալուց յետոյ, վերադարձայ Վարշաւայ՝ Կովկասեան 2-րդ կորպուս գնալու, ուր բաւական շատ հայեր կան: Սակայն, որոշեցի 2-3 օր մնալ այդտեղ՝ թէ հանգստանալու, թէ գաղութի հետ մօտիկից ծանօթանալու:

Փետրուարի 7, 8. շաբաթ, կիրակի: Վարշաւայի հայ գաղութը բաղկացած է 12 ընտանիքից եւ 23 ուսանողից: Առաջինները Վրաստանից, Գանձակից, Երեւանի նահանգից ու Ախալցխայից են: Դրանցից են բժիշկ Հայրապետեանը, որին այնքան էլ չեն սիրում, պոստային վարչութեան պետի օգնական Ղալամքարեանը: Միւսներն առեւտրականներ են՝ բաւական լաւ հարստութեան ու դիրքի տէր: Համարեայ բոլորի տներում եղայ: Բոլորն էլ, բացառութեամբ մէկի, ազգային-հասարակական կեանքից հեռու, օտարացած, լեհացման ճանապարհին են: Ոչ մի երեխայի չպատահեցի հայախօս: Բացառութիւնն կազմողը ագուլիսեցի Երղուլեան ընտանիքն է, որ մեծ ջանք է թափում մայրենի լեզուն պահելու: Հետեւում են մեր գրականութեանը, ծանօթ են հայ կեանքին, ստանում են «Հորիզոն», «Մշակ»: Ունեն հայերէն գրքերի բաւական հարուստ գրադարան: Առհասարակ լաւ վաճառականների անուն ունեն: Մտորում են սեփական քահանայ ու աղօթատուն ունենալու մասին: Այդ նպատակով նոյնիսկ մի գումար էլ են ժողովել: Բայց որովհետեւ իրենցից ոչ ոք ժամանակ չի ունեցել դրանով զբաղուելու, ուստի դիմել են Ներսէս քահանայ Հերթեւցեանի օգնութեանը, որը նրանց հաւատն ի չարն է գործ արել ու ձեռն ընկած գումարը իւրացրել:

Ուսանողութիւնը շատ է ցրուած ու թոյլ եւ անկարող է տեղական կեանքի վրայ ազդելու: Ներկայումս 23 հոգուց միայն 5-6 հոգի են մնացել:

Գեղեցիկ է Վարշաւան, հարուստ, մաքուր: Իր յատկութիւններով նա Ռուսաստանի առաջին քաղաքներից է, եթէ չասենք առաջինը: Այստեղ պարզ երեւում է լեհ ժողովրդի քաղաքակրթութեան ոյժն ու կորովը: Ուր գնաս՝ թատրոն, սինեմատոգրաֆ[1], գրադարան, ընթերցարան, գրավաճառանոց, եկեղեցի, սրճարան, թէյարան: Բազմաթիւ են մանաւանդ թէյարաններն ու ճաշարանները: Վարշաւցին դուրսն է ապրում, շատ շատերն աւելի նպատակայարմար են համարում ընտանիքով դուրսը ճաշել, դուրսը թէյ խմել, այնքան արժան է այդ տեղերում կեանքը: Յաճախ ձեզ ճաշի են հրաւիրում այսինչ ճաշարանը, թէյի՝ այնինչ սրճարանը: Ամէն տեղ ձեզ լսում ու պատասխանում են միայն եւ միայն լեհերէն: Ռուսական կուլտուրան անզօր է այստեղ որեւէ կերպ ազդելու: Ռուսից միայն վախենում են, նրան ատելով ատում են:

Լեհն աչքի է ընկնում իր մաքրութեամբ, ճշտապահութեամբ, շովինիզմի հասնող հայրենասիրութեամբ, աշխատասիրութեամբ ու պճնասիրութեամբ: Այս վերջին հանգամանքը նրան ուղղակի քայքայում է: Սրանց տները, կալուածները, հողերը, գործարանները կամաց կամաց հրէաների ձեռքն է անցնում, եւ հեռու չէ այն օրը, երբ Վարշաւայի ու նրա շրջանի տէրերը հրէաները կը դառնան, եթէ մի որեւէ հրաշք չպատահի կամ որեւէ արհեստական հանգամանք սրա առաջը չառնի:

Քաղաքն ընկած է Վիսլայի վրայ եւ 3 մեծ կամուրջ ունի, որոնցից նորագոյնը՝ Նիկոլաեւսկին, աշխարհի մեծ ու սիրուն կամուրջներից է: Յայտնի են նաեւ քաղաքային թատրոնը, ռուսական մայր տաճարը, պետական բանկը, լեհական ու գերմանական մայր եկեղեցիները, Ույազդովսկի պարկը եւ այլն: Գեղեցիկ ու մաքուր այգիներում (քաղաքային) լեհ երեխաները խաղում են Կոպերնիկի[2], Միցկեւիչի արձանների շուրջը: Այստեղ է նաեւ Պասկեւիչի[3] եւ այլոց արձան-

[1] Սենեմատոգրաֆ - կինոթատրոն:

[2] Նիկոլայ Կոպերնիկոս (1473-1543) - լեհ աստղագէտ, մաթեմատիկոս, մեխանիկ:

[3] Իւան Պասկեւիչ (1782-1856) - ռազմաքաղաքական գործիչ, գեներալ-

ները: Չնայած պատերազմական վիճակին, այնուամենայնիւ քաղաքն այնքան մաքուր է, որ դժուարանում ես փողոցում թէկուզ լուցկի վայր գցել: Ամէն քայլափոխում թքամաններ են դրուած: Օրինակելի են նաեւ քաղաքացիները: Երեկ երեկոյ Долная փողոցում 3 ռումբ են նետել գերմանացիք: Ես տեսայ ռումբերի ընկած տեղն, ասացին՝ վնասներ չեն պատճառել: Վարշաւայի գրաւումն գերմանացոց համար պատուոյ խնդիր է դարձել, նրանք մօտենում են 3 կողմից... եւ... անշուշտ կը վերցնեն:

Փետրուարի 9, 10. երկուշաբթի եւ երեքշաբթի: Վարշաւայում ինձ ասացին, որ քաղաքից 11-15 վերստի վրայ մօտ 500 հայ զինուորներ կան, բոլորն էլ փոներում աշխատողներ: Հետս առայ Մինասին ու շտապեցի այնտեղ: Ամբողջ ճանապարհը Վիսլայի ափով էր: Հացթուխական կոմանդաները[1] տեղաւորուած են մեծ կալուածատէրերից մէկի կալուածքում (усадьба)՝ ամբողջապէս շամուտում: Առհասարակ այդ կալուածքներն ընկած են երբեմն տասնեակ վերստեր տարածուող շամիի (сосна) անտառներում եւ իրանցից մի մի միջնադարեան ֆէօդալի դղեակ են ներկայացնում, այն տարբերութեամբ միայն, որ ռազմական պաշտպանութեան համար չեն յարմարեցրած: Անտառում ընկած է ազնուականի շքեղ ու ամէն տեսակ յարմարութիւններով կահաւորուած բնակարանը: Բակում գոմը, կառքերի տեղը, հաւանոցը, մառանը եւ այլն: Շուրջն ընկած են նրան սպասաւորող, նրա համար աշխատող գիւղացիների խրճիթները: Անտառներն զբօսանքի, որսի, գետ եղած տեղը նաեւ նաւակով զբօսնելու ու լողանալու բոլոր յարմարութիւններն ունեն: Ի հարկէ, պատերազմը դրանց բոլորին քաղաք կամ Փարիզ է փախցրել: Այդ կալուածքներն այժմ դատարկ են ու զինուորական կարիքների յատկացրած:

ֆելդմարշալ, մասնակցել է մի շարք պատերազմների, 1826-1828 թթ. ռուս - պարսկական պատերազմի ժամանակ հանդիսացել է ռուսական զօրքերի հրամանատար: 1870 թ. Վարշաւայում Ալեքսանդր Երկրորդ կայսեր ներկայութեամբ հանդիսաւորապէս բացում է վերջինիս արձանը Վարշաւայում:

[1] Կոմանդա - խումբ, միավորում:

Հէնց այսպիսի կալուածներից մէկումն են ընկած 2-րդ կորպուսի 74, 75, 89 եւ 99 հացթուխական կոմանդաները, որոնցում 471 հայ զինուորներ կային: Սրանք բոլորն էլ պահեստի զինուորներ էին՝ բացառապէս Գանձակի, Բագուի եւ Երեւանի նահանգներից:

Փետրուարի 11-14. չորեքշաբթիից-շաբաթ:– Ամսի 11-ի երեկոյեան ժամի 12-ին Կովբելի կայարանից ճանապարհ ընկայ 2-րդ զօրաբանակը, որ գտնւում է Բգուրայի դիրքերում: Գնացքը կանգ առաւ Սուխաչեւի նախավերջին Տէրեսի կայարանում: Այնտեղից մինչեւ Սուխաչեւ միայն 12 վերստ է: Սուխաչեւը գաւառական քաղաք էր՝ 35-40 հազար բնակչով, որն այժմ միայն աւերակների կոյտ է ներկայացնում: Կանգուն մնացել են միայն 6-8 տուն: Բնակչութիւնը գլխովին փախել է: Մնացել է միայն 80 տարեկան մի ծերունի, որ չի ուզում հեռանալ իր ծննդավայրից եւ ապրում է մի նկուղում: Սրան երբեմն կերակրում են մեր զինուորները: Քաղաքն ռուսաց ձեռքին է, բայց միշտ կրակի տակ է գերմանական դիրքերից, որոնք միայն 2 վերստ են հեռու:

Իմ գալու մասին յայտնում է կորպուսի շտաբի կայարանի կոմենդանտը՝ դաշտային հեռախօսով: Այնտեղից կառք են ուղարկում: Շտաբը հեռու է միայն 4-5 վերստ: Մինչեւ կառքի գալը հետաքրքրւում եմ տեղի կեանքով: Իմանում եմ, որ նախորդ Բլոնէ կայարանում, ուր դիշերն անց եմ կացրել, պետ. դումայի անդամ Պուրիշկեւիչը Перевязачно-Питательный[1] պունկտ է պահում Կարմիր խաչի անունով եւ մասնաւոր նուէրներով: Ինքն էլ մի քանի անգամ այս շտաբներն է եկել՝ բեռնաւորուած ընծաներով: Կառքը եկաւ: Ճանապարհւում եմ: Ճանապարհն անցնում է այս կողմերին յատուկ հրաշալի անտառի կողքով, որ այժմ անխնայ կոտորում, թափում են... խրամատների համար: Նայում եմ եւ ցաւ եմ զգում: Մեր ճանապարհին հանդիպում են մի ֆուլվարկ[2] եւ гасподский двор[3]:

[1] Վիրակապարան եւ սննդի կէտ:
[2] Ֆուլվարկ - փոքրիկ ագարակատուն, կալուածատուն:
[3] Կալուածատիրական տարածք:

Հողերն ու այս աննման անտառները կալուածատիրական են, որոնց յղփացած տէրերն ո՞վ գիտէ, թէ որտե՞ղ են: Խեղճ գիւղացին է միայն, որ իր մէջքով տանում է ահաւոր պատերազմի ամբողջ սարսափը: Եւ ինչպէս հաշտ են ապրում սոքա մեր զինուորների հետ... յաճախ մի յարկի տակ:

Հողը սեւ է, արգաւանդ ու մշակուած: Տեղ-տեղ երեւում են կարտոֆիլի ու բուրակի[1] հորեր: Պատահում են եւ դեռ չհանուած կարտոֆիլի ցանքեր: Այս շրջաններում յաճախ կրկնուող ընդհարումներն ու ճակատներն ստիպել են գիւղացոց հողի մէջ թողնել իրենց գոյութեան գլխաւոր աղբիւրը՝ կարտոֆիլը:

Շտաբը տեղաւորուած է մի փոքրիկ անտառակում: Հրամանատար է նշանակուած իմ բարեկամ թուրք գեներալ Մախմենդարովը, որ ինձ ընդունում է մեծ սիրով: Նրա նշանակուած իր նոր պաշտօնում ընդամէնը 4 օր է, հետն էլ Գէորգեւսկի խաչի 3-րդ աստիճան է ստացել: Սրանից առաջ հրամանատար էր գեներալ Միշչենսկուն[2], որ Եապոնական պատերազմի ժամանակ հերոսի անուն վաստակեց: Նա այժմ դատի է տրուած մի անզգոյշ յարձակման համար: «Սակայն, ըստ քննութեան գեներալ Պանտելէեւի[3] եւ իմ խորին համոզմունքով,– ասում է Մախմենդարովը,- նա իր պարտքը հերոսաբար է կատարել: Այդպէս էլ հեռագրել ենք թագաւոր կայսեր»:

Ճաշում եմ իրեն՝ գեներալի մօտ: Կառք ու 4 կոզակ են գալիս, եւ ես նրանց ուղեկցութեամբ (գեներալի կարգադրութեամբ՝ 2-ը առջեւից, 2-ը հետեւից) ճանապարհւում եմ դէպի Վրացական, Երեւանեան, Գուրիայեան, Սուրամի եւ

[1] Բուրակ - ճակնդեղ:
[2] Պաւել Միշչենկոյ (1853-1919) - ռուսական բանակի գեներալ, մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին, առաջին աշխարհամարտի տարիներին ծառայութեան է եղել արեւմտեան ռազմաճակատում:
[3] Ալեքսանդր Պանտելէեւ (1838-1919) - ռուսական բանակի գեներալ, առաջին աշխարհամարտի ժամանակ ղեկավարել է 1914 թ. օգոստոսին Արեւելեան Պրուսիայում գեներալ Սամսոնովի 2-րդ բանակի պարտութեան հանգամանքները քննող յանձնաժողովը:

Փոթիի գնդերը, որոնք փռուած են դիրքերում: Այս պատյաս տեւում է 2 օր: Հանդիպում եմ մօտ 120 հայ զինուորների, որոնց թւում սպաներ Քեշլիշեանին, Ոսկանեանին, Ունջեանին եւ իմ աշակերտական ընկեր Գրիգոր Տէր-Գրիգորեանին:

Շարունակ որոտում են թնդանօթները, վերեւում սաւառնում են այերոպլանները երկու կողմից, ճանապարհներին այստեղ-այնտեղ եղբայրական գերեզմաններ են: Խեղճեր, ձեր սիրելիների փայփայած ծաղիկներ, որտեղ բացուեցիք եւ... ուր թառամեցիք... Հանգիստ ձեր անտես, անճանաչ ոսկորներին... Բզուրայի կռիւներն են լափել սրանց: Բզուրայ... հետն էլ Ռաւայ... համեմատաբար փոքրիկ գետեր են սրանք, անուն հանեցին այս պատերազմի ընթացքում: Մինն եւ այն ճանապարհներից, որտեղով գերմանացիք փորձում են Վարշաւայ մտնել: Վեց ամիս աւելի է 2 ախոյեաններ այստեղ դիրք բռնած, մորթոտում են իրար: Երկու կողմից մօտ 80.000 միայն սպանուած է եղել, եւ կողմերը չեն կարողացել մի քայլ անգամ առաջ շարժուել: Տպաւորութիւնն այստեղ շատ է ծանր եւ ճնշող: Տեղական ազգաբնակութիւնը բոլորովին քայքայուել, չքաւորութեան է հասել: Կոժուշկի, Պիասկի, Բերլիցայ եւ Օրլիցէ գիւղերում կազմակերպուած Питательный կայեաններից է, որ այս ազգաբնակութիւնը սնունդ է ստանում: Յաճախ դաշտերում շների ենք պատահում՝ միայնակ, թափառական, զզզուած: Միայն ագռաւներն են կուշտ, խոշոր ու խմբերով:

Այստեղ այնպիսի գունդ կայ, որ պատերազմի սկզբում 60 հայ է եղել, այժմ 35 հոգի է մնացել:

Անտէր, անտիրական, աննպատակ մեռելներ...

Փետրուարի 13-14-ի գիշերը գերմանական այերոպլանները արշաւանք գործեցին դէպի Վարշաւայ: Ճանապարհին 6 ռումբ են նետում Տէրեսին, 6-ը Բլունէ, 7 հատ էլ Վարշաւայ: Առաջին 2-ում ռումբերն ընկել են դաշտում եւ ոչ մի վնաս չեն տուել, իսկ Վարշաւայի վրայ գցածներից 4-ը ընկել են Վիսլայ, 1-ը դաշտ, 1-ը մի այգի, միայն մէկն է վայր ընկել Крузая եւ Гожая փողոցների անկիւնում, ուր 1 եւ կէս արշին

երկարութեամբ եւ կէս արշին խորութեամբ փշացրել էր մայթը եւ կոտրտել մօտակայ տների ապակիները, մի քանի խանութների երկաթէ դռներն ու ցուցանակները: Մարդկային զոհեր, բարեբախտաբար, չեն եղել:

Փետրուարի 15-ին. կիրակի: Գրոդնիի, Լոմժայի, Պրասնիշի ու Պլոնսկի ուղղութեամբ տեղի ունեցած կռիւների սկզբնական ծանր տպաւորութիւնը կամաց-կամաց անցնում է: Գերմանացոց յանկարծական ներխուժումը մի բոպէ վարշաւացիներին մտածել տուաւ, թէ այս անգամ Վարշաւան կընկնի, մանաւանդ որ դա գերման զէնքի համար պատուոյ խնդիր էր: Դրան նպաստեց մանաւանդ այն հանգամանքը, որ երկաթուղային վարչութիւնը հրաժարուեց Վիլնայի գծով ապրանք ընդունել ու տոմսակ ծախել: Սրան պակաս չնպաստեց Օսովեց ամրոցի ռմբակոծումը: Սակայն, մի կողմից Վիլնայի գծով ընդհատուած աշխատանքի վերականգնումը, միւս կողմից դէպի հիւսիս գցուած հսկայական զօրքը խաղաղացրին մտքերը, նորից գերակշռեց այն հաւատը, թէ Վարշաւան չեն տալ:

Միջանկեալ պիտի ասեմ, որ դեռ Բրեստում եղածս ժամանակ Забелин-ն ինձ ասաց, որ կայանում Իւանովն այն կարծիքի է եղել, թէ պիտի Վարշաւան տալ, ճակատը սեղմել եւ փոքրացնել ու այնպէս դիմադրել, սակայն մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը լսել չուզեց դրա մասին: Ես միանգամայն համամիտ եմ Իւանովի հետ: Մեր ֆրոնտը շատ է ձգուած. դա մեր գործը շատ է դժուարացնում:

Վարշաւան լեփ լեցուն է փախստական լեհերով, որոնք վաղուց եկել ու դեռ շարունակում են գալ կռիւների հին ու նոր վայրերից: Քիչ չեն նաեւ տեղահան արուած հրէաները: Կազմակերպուած է լայն հասարակական օգնութիւն: Բացի պետական մեծագումար նպաստներից քաղաքի զանազան մասերում հասարակական «խոհանոցներ» են գործում, որտեղից օրական հազարաւոր ընտանիքներ ձրի սնունդ են ստանում:

Զմոռանամ պատմել հետեւեալ բնորոշ եւ ուշագրաւ դէպքը.

Գրուզինսկի գնդի մի հայ զինուոր, իր պատմելով, խիստ դողացնում է Բզուրայի էն տաք կռիւների ժամանակ: Բժիշկը նրան խինին է նշանակում: Տղան 2 բաժին միանգամից է ընդունում, թմրում ու քնում է: Ուշքի է գալիս, երբ գունդն արդէն հեռացած է լինում: Իսկ թշնամու թնդանօթները որոտում հա որոտում են: Նա փնտռելով ու չգտնելով իր գունդը, գալիս է Վարշաւայ, ներկայանում կոմենդանտին ու խնդրում նրա կարգադրութիւնը: Վերջինս զինուորին ուղարկում է իր գունդը: Այստեղ նրան համարում են փախած ու զինուորական դատի են տալիս, տղային հրացանագրկութիւն էր սպառնում: Ես իմացայ ու դիմեցի գնդի պետին: Նա ինձ լսեց, առաւ կազմած արձանագրութիւնը, պատռեց՝ ասելով. «Չեմ կարող չկատարել հոգեւոր հովուի միջնորդութիւնը, երբ նա հաւատացնում է, թէ զինուորը ոչ թէ փախել, այլ մոլորուել է»:

Փետրուարի16-18-ին. երկուշաբթիից-չորեքշաբթի: Առաջին 2 օրը գերմանական այերոպլանները շատ եռանդի եկան: Կիեւի հրաշալի եղանակի պատճառով: Մանաւանդ, որ մեծ զօրաշարժ էր կատարւում Վարշաւայի վրայով: Ամսի 17-ին ձգած ռումբն անհետեւանք անցաւ, իսկ 18-ին, որ ընկել էր Վիեննայի վակզալի դիմացի հրապարակը, սպանեց 2 բանուոր, իսկ մի զինուոր ու մի կին էլ ծանր վիրաւորուեցին:

Չորեքշաբթի դուրս եկայ Վարշաւայից ու նոյն օրը հասայ Լիւբլին: Ճանապարհելու էին եկել տեղական փոքրիկ դաղութի համարեայ բոլոր անդամները:

Փետրուարի 19-22-ին. հինգշաբթիից-կիրակի: Այս օրերն անց կացրի Լիւբլինում, որն ի դէպ շատ կոկիկ ու գեղեցիկ քաղաք է: Եղայ «Կարմիր խաչի» եւ 319-րդ հիւանդանոցում, ուր 3 զինուոր եւ մի բժիշկ տեսայ (Բալեան): Դէս ու դէն մի քանի նամակ գրեցի, հարկաւոր պատրաստութիւններ տեսայ ու 22-ի երեկոյեան ժամի 11-ին ճանապարհուեցի նորից դէպի Լուով:

Յաջորդ առաւօտը ժամի 3-ին հասայ Կովել: Զօրքերի մեծ տեղափոխութիւն է, ճանապարհները շատ դժուար ու ձանձրալի: Օրական միայն մի մարդատար գնացք կայ, որ երթեւեկում է երբեմն օրական 5-10 ժամ ուշացումներով, այն էլ մինչեւ «բողազը»[1] լեցուն: Շատ անգամ կայարաններում նստելու տեղ չի լինում եւ ստիպուած ես լինում ժամերով կանգնած մնալ: Բաւական մեծ հաճոյք՝ մանաւանդ գիշերը, երբ քունդ տանում է: Սնունդ եւ այլ յարմարութիւններ համարեայ չկան:

Փետրուարի 23-ին. երկուշաբթի:– Այստեղ մնացինք մինչեւ ժամի 12-ը: Դուրս եկանք Բրոդի գնացող գնացքով: Կտրում ենք Վոլինի նահանգը – հարուստ ու արգաւանդ հողերով, հսկայական անտառներով: Ժամի 4-ին Զդալբունովը, որտեղ պիտի սպասենք մինչեւ յաջորդ օրուայ առաւօտը: Աշխատում եմ մօտակայ հիւանդանոցներից կամ մասնաւոր տներից մէկում, ինչ գնով ուզում է լինի, մի սենեակ վարձել գիշերելու, սակայն տեղ չկայ: Նորից եմ դառնում կայարան ու անկարող լինելով դիմանալ անքնութեանը, յեփունջին փռում եմ հէնց յատակին ու պառկում:

Շուրջս ցեխ է, ծխախոտի մնացորդներ, անվերջ անց ու դարձ՝ ի՞նչպէս քնէի: Ժամի 3-ից նորից ոտի վրայ եմ: Վերջապէս առաւօտեան ժամի 8-ին այստեղից էլ ենք ճանապարհւում:

Ճանապարհին հետեւեալն են պատմում.

Բովնոյ քաղաքի ոստիկան հսկիչը խուզարկում է մի հարուստ հրէայի եւ զգուշութեամբ նրա իրերի մէջ ինչ-որ տաճկերէն կոչեր դնելով, գործը ծածկելու համար 15000 ռ. կաշառք է պահանջում: Հրէան դիմում է իր ծանօթ Դէմեռովին, որը Կիեւի գեներալ նահանգապետի փեսան է եւ գործը բաց անում: Ներկայումս Բովնոյ-ի նահանգական դատարանում քննւում է այդ գործը: Հսկիչը ձերբակալուած է:

Ժամի 10-ին հասնում ենք Բրոդի՝ աւստրիական նախկին սահմանագծային քաղաքը, որը սահմանագծից 5 վերս-

[1] Բողազ - կոկորդ:

տի վրայ է գտնուում: Այստեղ պիտի ուզկոկոլեյկայ գնացք նստենք, նաեւ պիտի ստուգուեն մեր թղթերը: Այս բոլորը տեւում է 2 ժամ: Ժամի 12-ին շարժուում ենք՝ այս անգամ արդէն աւստրիական վագոններով, որոնք մերոնց նման պառկելու, գիշերելու յարմարութիւններ չունեն: Ճանապարհի 2 կողմում՝ մինչեւ «Կրասնոյի», ճահիճներ ու անտառներ են: Ամբողջ ճանապարհին հսկայական աշխատանքներ են կատարուում, ճանապարհ են շինում, որ յարմարացնեն ռուսական գնացքներին, որոնք ամենաուշը 2 ամսից յետոյ հասնելու են մինչեւ Գալիցիայի մայրաքաղաքը՝ Լուով: Ժամի 1-ին հասանք Կրասնոյի, ուր օգոստոսեան ահեղ ճակատամարտը միացած Ռաւայ-Ռուսկայ-ի կռիւների հետ, վճռեց Լուովի բաղդը: Ռուզսկի[1] եւ Բաղկոյ-Դմիտրեւ՝ ահա այդ կռիւների 2 հերոս գեներալները: Այստեղ դեռ մինչեւ օրս էլ երեւում են խրամատներ, եղբայրական գերեզմաններ, գերեզմաններ, գերեզմաններ... ու անխօս վկաներ ահեղ ճակատամարտերի, մարդկային ագահութեան:

Մոռացայ յիշել, որ Բրոդիում մինչեւ օրս էլ մնում են մեր կոզակների ձեռքով աւերած ու հրդեհած բազմաթիւ տներ, որտեղից «կրակել են հրէաները կոզակների վրայ»...

Կրասնոյիից դուրս գալիս ծանօթանում եմ մի շտաբի կապիտանի հետ, որը մի վիրաւոր ու գերի ընկած ռուսին սպայ է.

– Վէրքս ծանր է, բայց հաւատացէք, հէնց այն գիտակցութիւնը, թէ այդ վէրքն ստացել եմ ռուս զինուորի գնդակից, ինձ ուժ է ներշնչում տոկալու եւ ցաւին դիմանալու:

Ժամի 2-ին Լուով եմ հասնում եւ իջնում եմ «Մետրոպոլ» հիւրանոցում: Աստուած, հիւրանոց համարի, ցուրտ, աղտոտ, հոտած, մկնառատ՝ մեր խաներից էլ վատ: Փոքր ի շատէ շնորհքով հիւրանոցները բռնել են անհամար հարկաւոր ու անհարկաւոր, անձնուէր ու բաղտախնդիր զինուորականները: Իրերս տեղաւորելուն պէս, իմանում եմ, որ Գալիցիայի գեներալ նահանգապետը հրատարակել է հետեւեալ պարտադիր կարգադրութիւնը.

Պարտադիր որոշում.

Համաձայն հարաւ-արեւմտեան ճակատի զօրաբանակների գլխաւոր պետի հրամանի, ի նկատի ունենալով վերջերս յաճախակի կրկնուող շպիոնաժը[1] հրէաների կողմից, Գալիցիայի զինուորական գեներալ գուբերնատորը, ղեկավարուելով զինուորական դրութեան մէջ յայտարարուած տեղերին վերաբերող օրէնքի 1, 2 եւ 3 կէտերով, կարգադրեց.

Հրէական ծագում ունեցողներին արգելել մուտքը Գալիցիայ.

Հրէական ծագում ունեցողներին արգելւում է Գալիցիայի մի մասից միւսն անցնել.

Այս որոշման մէջ մեղանչողները վարչական կարգով կենթարկուեն 3000 ռ. տուգանքի կամ մինչեւ 3 ամիս բանտարկութեան.

Այս կարգադրութեան իրագործումը դրւում է Լուովի գրադանաչալնիկի[2], Գալիցիայի նահանգապետերի եւ այն գաւառների պետերի վրայ, որոնք չեն մտնում նահանգների սահմանների մէջ:

Լուով, 13 փետրուարի 1915 թ.

Գալիցիայի զինուորական գեներալ-գուբերնատոր գեներալ-լեյտենանտ կոմս Բոբրինսկի:

Գործով գնում եմ գրադանաչալնիկի մօտ, սա ինձ պատմում է, թէ ինչպէս տեղական 12 ունեւոր հրէայ վաճառականներ, հաւատացած, որ ուր որ է՝ աւստրիացիք պիտի վերադառնան, նրանց զօրքի համար ուտեստի ահագին պաշար են պատրաստել ու գաղտնի պահել: Ինքն իմացել, խուզարկել, յայտնաբերել ու բոլորը գրաւել է: Հրէաները զինուորական դատի են տրուել: Դատի հետեւանքի մասին նա ոչինչ չասաց:

[1] Նիկոլայ Ռուզսկիյ (1854-1918) - ռուսական բանակի գեներալ, մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, առաջին աշխարհամարտի տարիներին ստանձնել է սկզբում Հարաւ-արեւմտեան ռազմաճակատի, ապա՝ Հիւսիսային ռազմաճակատի բանակների հրամանատարութիւնը:

[1] Շպիոնաժ - լրտեսութիւն:

[2] Գրադանաչալնիկ - քաղաքապետ:

Փետրուարի 25-ին. չորեքշաբթի:– Առաջին գործս եղաւ անցնել հիւանդանոցները: Այսօր մինչեւ ճաշ այցելեցի 4 հիւանդանոց: Միայն մի հիւանդ հայ գտայ՝ Ջալալ-Ողլեցի Նահապետ Գրիգորեանն էր դա: Հիւանդանոցներից գնացի գեներալ Եարիգինի մօտ՝ «Ելիտա» հիւրանոցում: Լիբլինից յատուկ յանձնարարութիւն ունէի սրան: Սրա պարտականութիւնն էր ամբողջ ճակատի ռազմատեղերում թափուած ու մնացած զէնքերը ժողովել, որ մասնաւոր ձեռքեր չանցնեն ու շահագործման աղբիւր չդառնան: Այս նպատակով նա իր տրամադրութեան տակ բազմաթիւ պաշտօնեաներ ունի, որոնք ցրուած ամէն տեղ, հրացանի փամփուշտներ, սնարեաղներ են ժողովում:

– Իմ արածն այդ ուղղութեամբ այնքան քիչ է,– ասաց գեներալը,– որ մնալս այստեղ աննպատակ է: Ես այստեղ կը մնամ շատ-շատ մինչեւ մարտի 10-ը:

Այնինչ մասնաւոր մարդիկ որքան ասես գնում ու վաճառում էին:

Նոյն օրը ես դիմեցի հայ կաթոլիկների քահանայ Դաւիդովիչին՝ խնդրելով, որ թոյլ տայ հայոց եկեղեցում հայ զինուորներին հաղորդելու:

– Չեմ կրնար: Հռովմէն խիստ կարգադրութիւն ունեմ՝ հեռու մնալ ազանկ բաներէ: Ամէն տեղ աւստրիական լրտեսներ կան, որոնք ուր հարկն է լուր կու տան:

Դաւիդովիչի մօտ ես մնացի մօտ 1 ժամ, սրանից իմացայ, որ հէնց ներկայում Լուովի շրջակայքում մօտ 400 տուն հայ կաթոլիկներ կան, որոնց մէջ ունեւոր կալուածատէրեր եւս կան: Բոլորն էլ լեզուն կորցրել են, բայց զգում են իրենց հայ լինելը:

– Բայց ազգային հեչ բան չկայ մէջերնին,– աւելացնում է նա: Ինքը Դաւիդովիչը նոյնպէս քիչ է հետաքրքրւում առհասարակ հայկական հարցով ու հայ ժողովրդով: Նա աւելի շուտ մի նեղ-սիրտ կրօնաւոր է, քան հայ մարդ: Իմ հարցին, թէ՝

– Հայր Դաւիդովիչ, ասացէք ո՞ր տիրապետութիւնը Ձեզ համար աւելի հաճելի կը լինէր՝ Ռուսակա՞նը, թէ՞ Աւստրիականը, նա պատասխանեց.

– Էհ, դժուար է մէկին հարկադրել, որ նա իր սովորութիւնները փոխէ, մանաւանդ որ ռուսները կաթոլիկութիւնը կը հալածեն:

Փետրուարի 26-ին. հինգշաբթի: Գլխաւոր գործս հիւանդանոցներն են: Կարմիր խաչի Իւերուկի միութեան հիւանդանոցում, ուր գլխաւոր բժիշկը հայ է՝ Օգսենտ Բաբասիդեան, ես գտնում եմ 3 զինուոր՝ Մանաս Մարտիրոսեանին՝ Ջիգրաշէնցի, Սաւադ Թունեանցին՝ Ղարաղշլաղեցին եւ Յակոբ Մարտիրոսեանին՝ Որքեանդ գիւղացի: Սաւադը կարիճի մէկն է երեւում: Սրանց բոլորի մօտ էլ լրագիր եմ թողնում:

Այսօր Բուքովինայի կողմից 40-ի չափ հրէաներ քաղաք բերին՝ զինուորներով շրջապատուած: Մէջները կանայք եւս կային: Մեղադրւում են «գաղտնի հեռախօս պահելում»: Երեկոյեան դէմ բաւական թուով հայ վաճառականների պատահեցի՝ Բագուից, Վորոնեժից, Գանձակից: Սրանք էլ էին դժգոհ հրէաներից:

Փետրուարի 27-ին. ուրբաթ: Գնում եմ էտապի կոմենդանտի մօտ՝ հայ զինուորների տեղ իմանալու: Ոչ ոք չկայ: Որսս պարապ անցաւ:

Փետրուարի 28-ին. շաբաթ:– Այլեւս այստեղ անելիք չունենալով, պատրաստւում եմ գնալ 8-րդ զօրաբանակը, որի շտաբը Սամբոր քաղաքն է: Գնացքը դուրս է գալիս գիշերուայ ժամի 12-ին: Ես ժամի 10-ից վագոնումն եմ: 12-ին վագոնը լեփ լեցուն է, բայց դեռ գալիս ու գալիս են՝ մեծ մասը զինուորներ: Ոչ միայն նստելու, կանգնելու անգամ տեղ չկայ: Խեղդւում ենք: Ամէն մէկը ամուր կպել է իր տեղին: Շարժւում ենք գիշերուայ ժամի 4-ին:

Մարտի 1-ին, կիրակի: Ճանապարհն անտառոտ է, որքան աւելի ենք մօտենում Սամբորին, այնքան այդ անտառն աւելի է թփուտանում: Տեղ-տեղ ճանապարհներ էլ են երեւում: Զուգընթաց մի ծառազարդ խճուղի է՝ ամբողջապէս սայլերով բռնուած: Հանդիպող գիւղերից երեխաներ են դուրս թափւում՝ «կոպի՛կ, կոպի՛կ» աղաղակներով: Նրանք կիսամերկ են,

ոտաբոբիկ, վոիտ, գդգդած մազերով: Ճիշտ մեր գաղթականների նման:

Մեր վագոնում վերջ ի վերջոյ միայն սպաներ են մնում: Բոլորն էլ գոհ են, ինքնավստահ, վերջնական յաղթանակի հաւատով լցուած: Պրժեմիշլից նոր վերադարձած մի սպայ պատմում է, թէ ինչպէս 6 օր առաջ ամրոցից թռած մի աէրոպլանից ծրարներ են գցել՝ նամակներով: Այդ նամակներից ամրոցի վիճակը յուսահատական է երեւում: Երկրորդ օրն էլ մի ուրիշն են իջեցրել, որ 9 փութ կոնսերվ էր եղել ամրոց տանելիս: Բերդի վիճակը ծանր է, անկումը մօտալուտ՝ եթէ միայն սպայի ասածները ճիշտ են:

90 վերստ ճանապարհը կտրում ենք 11 ժամում եւ ցերեկուայ ժամի 3-ին հասնում ենք Սամբոր: Մեղմ անձրեւ է, փողոցներում սոսկալի ցեխ: Կառք կամ թէկուզ սայլ չկայ: Մինասի հետ իրերն առած դուրս ենք գալիս կայարանից: Մինչեւ տեղ հասնելը բառի բուն նշանակութեամբ ցեխակոլոլ ենք լինում: Ոչ մի հիւրանոցում տեղ չկայ: Ստիպուած Մինասին իրերով թողնում եմ «Ռոյալ» հիւրանոցի նախասենեակում, ինքս դիմում եմ գաւառապետին: Ինձ տեղ են տալիս «Իմպերիալ» հիւրանոցում: Մութն է արդէն, խոնաւ, ցեխ: Ինքս էլ յոգնած եմ: Երեկոյեան ժամի 8-ին փողոց եմ դուրս գալիս: Շարժուելն անկարելի է: Հսկայական զօրաշարժ է: Պերեմիշլը հեռու չէ այստեղից:

Մարտի 2-ին. երկուշաբթի: Շտապում եմ 8-րդ զօրաբանակի շտաբը: Հրամանատարն է գեներալ Բրուսիլովը, շտաբի պետը կոմս Գեյդենը, գլխաւոր բժիշկը Պանքգուլիձեւը: Նախ վերջինիս մօտ եմ մտնում: Վրացական ծագում ունի: Կինը հայ է: Տփխիսեցի Անտոն Սօլոմոնովիչ Ղորղանեանի քոյրը: Սրա մօտ պաշտօն ունի բժիշկ Սմբատ Եղեազարեանը՝ պրոֆեսոր Սողոմոն Եղեազարեանի սանն ու եղբօրորդին, որ մի աչալուրջ ու համակրելի երիտասարդ է երեւում: Սրանից էլ ստացայ զօրաբանակի հիւանդանոցների ցուցակը:

Կոմս Գեյդենն ինձ առաջնորդեց Բրուսիլովի մօտ, որը մի բարձրահասակ, նիհար ու խոհուն դէմքով ծերունի էր: Սա

վերին աստիճանի քաղաքավարի ու սիրալիր կերպով ընդունեց ինձ: Ուրախացաւ, որ հայ զինուորներն եւս հոգեւոր մխիթարութիւն ստանալու հնարաւորութիւնն ունեն: Հաստատեց աւստրիական աերոպլանի դէպքը եւ աւելացրեց.

– Հաւանօրէն մօտ օրերս յարձակում նշանակութիւն ունեցող դէպքեր տեղի կունենան:

Աւելացրեց նաեւ, որ իր տեղեկութիւնների համաձայն Կարպատներից դենը, աւստրիական զօրքերից բացի, կենտրոնացած են նաեւ 7 գերմանական գնդեր, որոնք հրաման ունեն՝ ինչպէս էլ լինի ճեղքել ռուսական շղթան եւ օգնութեան հասնել ամրոցին: Ասաց եւ այն, որ այդ ծրագիրը կասեցնելու պարտքն իր վրայ է դրուած:

Այստեղից ես գնացի N 480 շարժական դաշտային հիւանդանոցը, որի կառավարիչը մի պատուական հայ երիտասարդ պրապորշչիկ է՝ Գէորգ Սարգսեան Ենգիբարեան: Սա անցեալում Ջուլֆայի փոխադարձ վարկի ընկերութեան վարիչն է եղել: Նոյն հիւանդանոցի թէ՛ բժիշկները, թէ՛ քահանան կովկասցի են, վրացիներ են Տփխիսից, Քութայիսից: Բոլորն էլ ապրում են միասին, մի փախած հրէայ բժշկի բաւական շքեղ բնակարանում, ուր ամէն ինչ մնացել է, նոյնիսկ բաժակ, դանակ, գդալ, պատառաքաղ: Ենգիբարեանն ինձ շրջեցրեց ամբողջ հիւանդանոցում, ուր ես պատահեցի նաեւ Երեւանցի բժիշկ Ալեքսանդր Տէր-Միքայէլեանին, որ այժմ Վիլենսկի գնդումն է, թոքախտով բռնուած: Մեծ եղաւ իմ զարմանքը, երբ դեղատանը պատերից կախած տեսայ Ս. Էջմիածնի ու Անիի մի քանի աւերակների նկարները: Ինձ այնպէս թուաց, թէ Գէորգն է բերել, սակայն պարզուեց, որ այդ շէնքը նախկին գիմնազիայինն է, այդ պատկերները բերել է գիմնազիայի վարչութիւնը՝ իր դպրոցի մօտ 40 հայ աշակերտներին իրենց ազգային ճարտարապետութեան մասին գաղափար տալու նպատակով: Զարմացած էի մնացել: Չէ՞ որ մենք սովորել ենք տեսնելու, թէ ինչպէս են խեղդում, թաղում, ինչ որ ազգային է (ի հարկէ բացի ռուսներից):

Շատ էր հաճելի Կարպատների ստորոտներում տեսնել այդքան սիրելի վայրերի նկարները:

Այդ օրը ճաշն անց կացրի «զեմլեակ»-ներիս[1] հետ: Կատարեալ կովկասեան ճաշ – չխրթմա ու խորոված, որ պատրաստել էր Գէորգը, գինի, երգ (Ծիծեռնակ, Մրաւալժամիեր[2] եւ այլն), լեզգինկա եւ այլ պարեր:

Շատ էր հաճելի...

Նոյն օրը Կաուֆմանեան միութեան հիւանդանոցում ես պատահեցի պրապորշչիկ Վահան Տէր-Առաքելեանին՝ նախկին ճեմարանական, նոր միայն վիրաւորուած ու այստեղ բերուած: Սրա մօտ անց կացրի մօտ 2 ժամ: Հաճելի էր զրուցել հայկական անց ու դարձին լաւ ծանօթ, նրանով հետաքրքրուող հայ սպայի հետ:

Մարտի 3-ին. երեքշաբթի: Շրջում եմ մնացած բոլոր հիւանդանոցները, ուր միայն 4 հոգու եմ պատահում: Այդտեղից գնում եմ հացթուխարան: Այստեղ 14 հայ զինուորներ կան: Տեսնւում եմ սրանց մեծաւորի հետ եւ խնդրում, որ յաջորդ օրն այդ զինուորներին ինձ մօտ ուղարկէ՝ հաղորդուելու: Նա իսկոյն հրամայում է «հայերին բաղնիս ուղարկել, նրանց համար յաջորդ օրը պասուայ խորտիկ պատրաստել ու նշանակուած ժամին նրանց ինձ մօտ ուղարկել»: Ինձ էլ իր սեփական կառքով ուղարկեց բնակարանս:

Այստեղից ես նորից գնացի շտաբ, ուր պատահաբար 18 հայ սպաների պատահեցի: Սրանք դիրքերից էին կանչուել՝ հրահանգներ ստանալու: Անընդհատ կռիւները, շարունակ խրամատներում մնալը սրանց կատարելապէս վայրենացրել էր: Նստել կանգնելը կարծես մոռացել էին: Հէնց իրենք էին ասում.

– Կատարելապէս վայրենացել ենք, շաբաթներով ոչ շոր ենք փոխում, ոչ մաքրւում, ոչ նոյնիսկ լուացւում կամ սանրւում:

[1] Զեմլեակ - հայրենակից:
[2] Վրացական երգ:

Դուրս եմ գալիս քաղաք: Պերեմիշլից եկող ռմբակոծութիւնը սարսռեցնող, սոսկալի է: Ասում են բերդի պաշարման օրից նման թնդանօթաձգութիւն դեռ չի եղել: Բերդից հեռու ենք ընդամէնը 17 վերստ: Այն կարծիքի են, թէ գրոհը Կարպատներից անխուսափելի է: Այսօր մի անգամ եւս եղայ Ենգիբարեանի ու Տէր-Առաքելեանի մօտ: Երկուսն էլ իրենց պաշտօնումը պարտաճանաչ ու ազնիւ, բայց կովկասեան դէպքերն ապրում են իրենց ամբողջ էութեամբ:

Երեկոյեան ինձ մօտ եկաւ հիւրանոցի հաշուապահը՝ հաշիւ ներկայացնելու: Նրանից իմացայ, որ մի քանի ռուս սպաներ նոյնիսկ սեղանի դդալ, դանակ, պատառաքաղ են գողացել: Իմ ամբողջ շրջագայութեանս մասին օֆիցերների ձեռքով կատարուած գողութիւնների ու թալանների (դաշնամուրներ, կահ-կարասիք, վարագոյրներ) մասին յաճախ եմ լսել:

Մարտի 5-ին. հինգշաբթի: Այստեղ այլեւս անելիք չունեմ: Մնում է՝ կամ գնալ դէպի Խիրով, Ուստրժիկի, Սանոկ կամ վերադառնալ կրկին Լուով: Այսօր որովհետեւ թնդանօթաձգութիւնն աւելի է սաստկացել, որոշում եմ դառնալ Լուով: Գնում եմ շտաբ, որտեղ ինձ յայտնում են, թէ խոշորագոյն դէպքեր են սպասւում, թշնամին որոշել է, ինչ գնով էլ լինի, պաշար հասցնել պաշարուած բերդին: Նոյնը պնդեց նաեւ գեներալ Բրուսիլովն, աւելացնելով, որ Կարպատների զօրքերին մօտենալն անկարելի է, որովհետեւ նրանք «անընդհատ կռիւներ են ապրում»:

Միւս կողմից էլ ամրոցն ուղղակի հեծում է: Որոտը շատ է ահռելի: Շտաբում այն համոզմունքն ու վախը կայ, թէ հակառակորդն այսօր առաջին անգամ եապոնական թնդանօթներ է գործի դրել:

Ժամի 11-ին դուրս եմ գալիս եւ 5-ին հասնում եմ Լուով: Դարձեալ նոյն հիւրանոցային ցաւը: Ոչ մի տեղ ազատ համար չկայ: Ամէն տեղ նոյնը՝ բռնուած են, տեղ չկայ: Համարների մեծ մասը կանայք են գրաւում, «օֆիցերների» կանայք:

– Այնպիսի օֆիցերի– ասում է հիւրանոցներից մէկի տէրը– որ 2-3 կին է պահում:

Մի կերպ մի սենեակ եմ վարձում ու գիշերում: Վա՜յ այդ գիշերելուն՝ ցուրտ, խոնաւ, մկնառատ:

Մարտի 6-ին. ուրբաթ:— Առաւօտեան ժամի 9-ին այստեղից դուրս եկայ եւ հազիւ ամսի 8-ի առ. ժամի 11-ին հասայ Լիւբլին: Ճանապարհի անյարմարութիւններից ու վատ սնունդից առողջութիւնս բոլորովին քայքայուել է: Անկողին եմ ընկնում:

Մարտի 9-ին. հինգշաբթի: Այսօր առաւօտեան ժամի 9-ին իմացայ Պերեմիշլի անկումն ու բնաւ չզարմացայ: Միակ զարմանալին այն էր, որ ամրոցում այնքան մեծաքանակ զօրք է եղել՝ 80 000:

Այսօր մի կերպ ոտքի ելայ ու շտաբ գնացի՝ ռոճիկս ու նամակներս ստանալու: Հիւանդ եմ, կարօտ կանոնաւոր բժշկութեան: Թոյլտուութիւն եմ ստանում մէկ ամսով տուն գնալու: Հէնց այսօր էլ իմացայ, որ Կովկասից 800 հայ զինուորներ են եկել: Շտաբում ստուգում եմ, ճիշտ է դուրս գալիս: Սրանց շտապ կարգով Եարոսլաւլ են ուղարկում: Մէկ ամբողջ օր սրանց հետ եմ անց կացնում:

Այդ զինուորները եկել են Ղարսից, Դարալագեազից, Գանձակի շրջաններից: Այս երկու օրն էլ սրանցից չբաժանուեցի:

Այդ օրն շտաբի կարգադրութեամբ լուսանկարեցին ռուս, հայ, կաթոլիկ եւ բողոքական հոգեւորականներիս՝ միասին: Ռուս քահանան չուզեց, որ մահմեդական մօլլան եւս մեզ հետ նկարուի: Սրան միացաւ նաեւ կաթոլիկ Զուալեանսկին:

Նոյն օրը երեկոյեան հետս առնելով Մինասին ու Դանիէլին, ճանապարհ ընկայ դէպի Վլադիկավկազ:

Մարտի 12-ին. հինգշաբթի: Երեկոյեան ժամի 7-ին հասայ Կիեւ: Մէկ ժամից յետոյ Կովկաս գնացող գնացքն է մեկնում, բայց ես այնքան թոյլ եմ, որ անկարող եմ առաջ գնալ: Որոշում եմ մի օր այդտեղ հանգստանալ:

Մարտի 13-ին. ուրբաթ: Համարեայ ամբողջ օրս դուրսն անց կացրի, տեսնուեցի մի քանի ուսանողների ու քահանայ Մնացականեանի հետ, իսկ երեկոյեան ժամի 8 եւ կէսին ճանապարհուեցի դէպի Ռոստով, ուր հասայ 14-ի երեկոյեան ժամի 12-ին: Շատ թոյլ եմ: Վճռեցի մի օր էլ այստեղ հանգստանալ:

Մարտի 15-ին. կիրակի: Գնում եմ Նախիջեւան՝ Գրիգոր Զալխուշեանի մօտ: Խօսում ենք ամբողջ 2 ժամ՝ մեր մամուլի ներկայ խնդիրների, կամաւորների, Էջմիածնի, հայկական հարցի մասին:

— Մշակն ընկաւ,— ասում է Զալխուշեանը,— նրան ձգեց Համբարձումը[1], 4 տարի շարունակ նա ինձ մաշեց, շահագործեց, Արծրունու[2] «Մշակ»-ից ոչինչ չթողեց: Նա ինձ ստիպեց թողնել «Մշակ»-ն ու անցնել «Հորիզոն»-ին:

— Բայց թոյլ տուէք նկատել,— ասում եմ ես— որ Դուք «Հորիզոն»-ում եւս երկար չէք մնալ: Նա ձախակողմեան թերթ է, դասակարգային գունաւորումով, իսկ դուք, որքան գիտեմ, դասակարգայնութիւն չէք ընդունում:

— Շատ ճիշտ է: Ինձ համար գոյութիւն ունի միայն հայ ազգ, ուրիշ ոչինչ: Հէնց դրա համար էլ մեզ հարկաւոր է մի անկուսակցական թերթ, որի շուրջը խմբուել կարողանանք: Այո, ես «Հորիզոն»-ում չեմ մնալ: Մօտերքումս Թիֆլիզում էի, տեսնուեցի այդ թերթի խմբագիրների հետ: Նրանք չթաքցրին, որ ինձ միայն հանդուրժում են, այն էլ միայն առ այժմ:

— Բայց ինչ էլ լինէր — պատասխանում եմ,— ձեր հեռագրական դիմումները «Մշակ»-ի նկատմամբ, ըստ ձեր խօսքերի, այնքան կարեւոր է ու խորհրդաւոր մեր հասարակութեան համար, ինձ համար անսպասելի էր ու շատ զարմացայ:

— Եւ դէ համբերութիւնս այստեղ հասաւ,— ասաց Զալխուշեանը՝ ցոյց տալով կոկորդը:

---

[1] Համբարձում Առաքելեան (1865-1918) - լրագրող, գրող, հասարակական գործիչ, Հայ գաղթականների օգնութեան կոմիտէի (1915) եւ Հայ Ժողովրդական կուսակցութեան հիմնադիր: 1892 թուականին Գրիգոր Արծրունու մահուանից յետոյ դարձել է «Մշակի» խմբագիրը՝ Ալեքսանդր Քալանթարի հետ միասին:

[2] Գրիգոր Արծրունի (1845-1892) - 1872-1921 թթ. եղել է Թիֆլիսում լոյս տեսած յայտնի «Մշակ» թերթի հիմնադիրը եւ առաջին խմբագիրը:

Դառնալով կամաւորներին, նա ասաց.

– Թէ՛ ես, թէ՛ Ռուսաստանի մեր միւս պատգամաւորները գնում էինք փետրուարի 15-ի ժողովին այն հաստատ որոշումով, որ յայտնենք, թէ հայ ազգը պարտաւոր չէ աւելորդ արիւն եւս տալու: Բայց երբ ծանօթացանք նրանց կոչման ու կատարած դերի հետ բուն հայրենիքում, այն էլ բուն աղբիւրից՝ Անդրանիկից[1] ու Քեռուց[2], մեր տրամադրութիւնն այնքան բարձրացաւ, այնքան ոգեւորուեցինք, որ վճռեցինք ոչ միայն կառավարութեան դէմ չառարկել, այլ եւ նրանց թիւը կրկնապատկել:

Մօտ 2 ժամի չափ խօսակցութիւնից յետոյ ես բաժանուեցի: Հարկաւոր էր շտապել:

Նոյն երեկոյեան ժամի 4-ին դուրս եկայ եւ յաջորդ օրը 12 եւ կէսին հասայ տուն:

Մնացի Վլադիկավկազում մինչեւ մայիսի վերջը:

Կրկին ճանապարհ ընկայ դէպի գործող բանակ: Կիեւում հարկադրուած եղայ կրկին 2 օր պառկել, իսկ յունիսի 20-ին արդէն Բովնոյումն էի, գլխաւոր շտաբում:

Այս անգամ դրութիւնը բոլորովին այլ պատկեր էր ներկայացնում՝ խուճապ, խուճապ, խուճապ... Նախկին տեսածներս սրա հետ համեմատել չեմ կարողանում: Գալիցիական նահանջը ամօթալի փախուստի բնոյթ է կրում, ընդհանուր տրամադրութիւնը չափազանց ընկած է: Շտաբում կատարեալ յուսահատութիւն է, իսկ նահանջող զօրքի մէջ կատարեալ կատաղութիւն ու զայրոյթ է նկատւում ու լսւում դէպի իրենց մեծաւորները:

– *Продала нас немцы*– լսւում է ամէն տեղ: Նոյնիսկ թագուհու գերմանական ծագումն է շօշափւում: Զինուորներն իրար պատմում են զանազան գեներալների ու գնդապետների մասին, որոնց «իր ձեռքով սպանել է մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը՝ կաշառուած լինելու կամ երկչոտ կերպով փախչելու համար»: Շտաբում խօսում են, փրփրում, թէ ինչպէս այդպիսի գեներալներից մինն նախագծով իր գլխի գալիքը, սուր է բարձրացրել մեծ իշխանի վրայ, սակայն վերջինիս թիկնապահ կոզակը տեղն ու տեղն է թողել նրան:

Եթէ կայ մէկը, որ անպայման հեղինակութիւն ու կշիռ ունի, դա Նիկոլայ Նիկոլայեւիչն է: Խօսւում է նոյնիսկ նրան գահ բարձրացնելու մասին:

Գալիցիայի ամօթապարտ նահանջի (աւելի ճիշտ փախուստի) ժամանակ անասելի կողոպուտի է ենթարկուել Լուովը: Բովնոյի շրջակայքում բազմաթիւ պրիստաւներ, գորոդովոյներ, ոստիկանապետներ ձերբակալուեցին անհամար իրերով: Բերել են՝ ինչ ձեռներն է ընկել՝ սնդուկներով իրեր, աւտոմոբիլներ, կահ-կարասիք, նոյնիսկ կանայք ու աղջիկներ. մի խօսքով, ինչ աչքները տեսել, ձեռքները հասել է: Բերածները վաճառում են չնչին գներով: Նունիսկ ինձ մի ձի առաջարկեցին:

Ձերբակալուած է նաեւ Լուովի քաղաքապետը, որի բերած կողոպուտը վագոններով են հաշւում:

Ի դէպ, Խօլմից այստեղ է եկել նաեւ գեներալ Իւանովն իր շտաբով:

Լուովից ամսոյս 6-ին դուրս եկած եւ երեկ տեղ հասած բանիմաց մի հայ ականատես, որի անունը տալ անյարմար է, հետեւեալը պատմեց.

– Գալիցիան ետ խլեցին գերմանացիք: Այդտեղ դեր են խաղում 3 հանգամանք. նախ՝ գերմանական արտիլերիայի եւ ընդհանրապէս ասած՝ տեխնիկայի հսկայական գերազանցութիւնը եւ ռուսների ռազմապաշար չունենալը: Ի՞նչ անի խեղճ ռուս զինուորը, որը խրամատում նստած սպասում է, թէ երբ պիտի ընկերներից մէկն ընկնի, որ նրա զէնքն ինքը վերցնի: Եղած զէնքն էլ թոյլ է գերմանականից: Բոլորովին

[1] Անդրանիկ Օզանեան (1865-1927) - զօրահրամանատար, ֆիդայապետ, ազգային հասարակական-քաղաքական գործիչ, կարեւոր դերակատարում է ունեցել հայ ժողովրդի մղած ազգային ազատագրական պայքարում

[2] Արշակ Գաւաֆեան (Քեռի, 1858-1916) - հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի: Եղել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ղեկավարել է Հայ կամաւորական չորրորդ գունդը, մասնակցել է Սարիղամիշի ճակատամարտին:

այլ էր, երբ մեր գործը աւստրիացոց հետ եր: Վախը քիչ էր, ոչ նրանց զէնքերն էին մերոնցից լաւ, ոչ զինուորները: Ի դէպ պիտի ասեմ, որ ռուս զինուորն իր տոկունութեամբ ու համբերատարութեամբ նմանը չունի: Ես շրջել եմ նաեւ ամբողջ Եւրոպան: Մեծ գործ են կատարում նաեւ օդանաւերը: Միայն բազուեդկայ[1] չէ, որ կատարում են նրանք: Իրենց ձգած ռումբերով նրանք ահագին չփոթութիւն են առաջ բերում թէ՛ զօրքի, թէ՛ ազգաբնակութեան մէջ:

Երկրորդ, մի քանի տեղերում ռուսական զօրքի մեծաւորներ՝ ծագումով գերմանացի, ուղղակի դաւաճանեցին: Տարիներ շարունակ Վիլհելմեան Գերմանիան այդ ուղղութեամբ շատ բան է արել: Պերեմիշլն այդքան շուտ չէր ընկնիլ, եթէ այդ հանգամանքը չլինէր: Այդ շատ լաւ յայտնի է մեծ իշխան հրամանատարին, որն ասում է 2-3 հոգու սրախողխող է արել:

Զարմանալի է: Ռուսական սահմանային ամրոցների մեծ մասի հրամանատարները գերմանական ծագում ունեն:

Երրորդ, ռուս օֆիցերութիւնն իր կոչման բարձրութեան վրայ չդտնուեց: Ի հարկէ, աննման բացառութիւններ կան, բայց դոքա շատ են սակաւաթիւ: Դրանց մեծ մասը արտօնեալ դասի զաւակներ են՝ մօր խնամած, որոնք վախկոտ լինելուց բացի, ծայրայեղ անբարոյական էլ են: Շատ տեղ գործի ղեկավարութիւնը պրապորշչիկներին ու օֆիցերներին թողած, իրենք գլուխ են պահում թիկունքում: Կինը սրանց համար ամէն ինչ է եւ զօրքի հետեւից ի թիւս այլ անհրաժեշտութիւնների քաշ են տալիս ահագին քանակութեամբ կանայք, որոնք ի դէպ՝ նաեւ լրտեսներ են: Բաւական է, որ որեւէ զօրամաս կանգ է առնում մի տեղ, իսկոյն զինուորներ են գցում լեհական ու հրէական գիւղերը՝ դրամով ու սպառնալիքով կանայք տանելու: Պատրաստակամ կանանց թիւն էլ հո քիչ չէ: Ծախում են իրենց թէ՛ սովից, թէ՛ վախից հարկադրուած:

[1] Բազուեդկա - հետախուզութիւն:

Եթէ ես հրամանատար լինէի, վերջացրեց իր խօսքը իմ բանիմաց ու իրազեկ խօսակիցը, զօրքի մէջ ոչ մի գերմանական ու հրէական ծագում ունեցող զինուոր, զինուորական չէի պահիլ: Զօրքից պատկառելի հեռաւորութեան կը պահէի նաեւ կանանց: Գիտէ՞ք, մեր աւտոմոբիլներն այլեւս իրենց անունով չեն կոչւում, այլ «քոյրատար», «կնատար» եւ այս հանգամանքը հո չի վրիպում զինուորների աչքից, որոնք սկսել են ատել իրենց մեծաւորներին: Իսկ սա... շատ վտանգաւոր հանգամանք է...

Յունիսի 22-ին, մի ռուս զինուոր պատմեց հետեւեալը. կէսօր էր, որ մեր NN 13, 14, 15 եւ 16 գնդերը հասան Կրասնիկ: Նիկոլայ Նիկոլայեւիչը սրանց երկաթէ գնդեր էր անուանել: Բայց ի՞նչ օգուտ ունէր մեր երկաթէ լինելը, քանի որ մեր խրամատները անպատրաստ էին, ինքներս յոգնած, կրակելու էլ ոչինչ չունէինք, իսկ մեր օֆիցերները բոլորովին տղայ էին ու անփորձ: Մեր պակասը լրացնում էին դատարկաձեռն մարդկանցով, այն յուսով, թէ սպանուած ընկերոջից կամ գերի ընկած թշնամուց զէնք կը վերցնեն: Շոգը սաստիկ նեղում էր ու անողոք ու հետապնդող թշնամին մեզ կանգնելու, շունչ քաշելու ժամանակ չէր տալիս: Մենք փախչում էինք ամօթապարտ, ճանապարհին թալանելով սայլ, ձի, պաշար, թնդանօթ, զէնք, երբեմն նոյնիսկ հագուստ:

— Էհ, ծախուած էր Գալիցիան, մենք ոչինչ անել չէինք կարող:

Այսպէս վերջացրեց խօսակիցս իր դառը գանգատը:

Եւ սա... դեռ պատերազմի 11-րդ ամիսն է...

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՌՆԻԿԵԱՆ
Ե. Չարենցի անուան ԳԱԹ, Յակոբ Սառնիկեանի ֆոնդ, համար 3 ա,բ,գ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յակոբ քահանայ Սառիկեան: Հոգեւորական, հասարակական-քաղաքական գործիչ, ֆիդայի, դիւանագէտ, մտաւորական (Կեանքի ուղին եւ յուշերը) 7

Յուշեր

Ութ ամիս մեծ պատերազմի արեւմտեան ռազմաճակատներում 51

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՌԻԿԵԱՆ

ՈՒԹ ԱՄԻՍ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՅՐԵՐՈՒՄ (ՅՈՒՇԵՐ)

Հրատարակութեան պատրաստեց՝
Էդգար Յովհաննիսեանը

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ – 2018

Հրատարակչական բաժնի տնօրէն՝ Տ. Արարատ քահանայ Պօղոսեան

Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Գէորգ եպս. Սարոյեան,
Զաքարիա Ծ. վրդ. Բաղումեան,
Գարեգին վրդ. Համբարձումեան,
Ա. Մադոյեան,
Գ. Տէր-Վարդանեան

Սրբագրիչ՝ Նանա Գրիգորեան
Էջադրումը՝ Ղեւոնդ աւ. քինյ. Մայիլեանի

Թուղթ՝ օֆսէթ 80 գր., չափսը՝ 60x84 1/16,
ծաւալը՝ 152+3 ներդիր էջ, տպաքանակը՝ 300:

ISBN 978-9939-59-195-7

9 789939 591957

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

8(092)
Ա-21
Հշ

... Գնում էի Էջմիածնի Սինոդի կարգադրութեամբ:

Ցաւում էի, որ հեռու եմ ընկնում Կովկասեան ճակատից, սակայն մխիթարւում էի այն մտքով, թէ այնտեղ, եւրոպական սահմաններում, կարող եմ պիտանի լինել իմ հայրենակից զինուորներին, որոնք հեռու՝ հարազատներից ու մօտիկներից՝ գուրկ են մայրենի բարբառ լսելու, այդ բարբառով իրենց աղօթքը կարդալու, գուցէ և իրենց վերջին կամքն արտայայտելու հնարաւորութիւնից:

Տ. Յակոբ քահանայ Սառիկեան